

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Իրավաբանական ՀԱՐՑՆԵՐ

ISSN 1829-4030

3 (21)

ԵՐԵՎԱՆ - 2020

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

3 (21)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2020

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

Ավագյան Ա. Ա.

Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)

Ավետիսյան Հ. Գ.

Ավետիսյան Յու. Ս.

Գասպարյան Ս. Ք.

Բայրամյան Հ. Ս.

Բարդակչյան Գ. (ԱՄՆ)

Դեդեյան Ժ. (Ֆրանսիա)

Դրոստ-Աբգարյան Ա. Գ.
(Գերմանիա)

Ջաքարյան Ս. Ա.

Հայրունի Ա. Ն.

Ղարիբյան Ա. Ա.

Մարգարյան Հ. Գ.

Մելքոնյան Ռ. Հ.

Մինասյան Է. Գ.

Մուրադյան Ս. Պ.

Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)

Սայադով Ս. Մ. (Ռուսաստան)

Տազեյան Ա. (Լիբանան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

Avagyan A.

Avetisyan H.

Avetisyan L. (Deputy editor-
in-chief)

Avetisyan Y.

Bardakchian G. (USA)

Bayramyan H.

Dakessian A. (Lebanon)

Dedeyan G. (France)

Drost-Abgaryan A. (Germany)

Gasparyan S.

Gharibyan A.

Hayruni A.

Margaryan H.

Melkonyan R.

Minasyan E.

Muradyan S.

Poghosyan V. (Executive
Secretary)

Sayadov S. (Russia)

Zakaryan S.

АРАМ СИМОНЯН,
АЛЕКСАНДР САФАРЯН

О НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНОМ СОТРУДНИЧЕСТВЕ МЕЖДУ АРМЕНИЕЙ И КАЗАХСТАНОМ: РЕАЛИИ И ПЕРСПЕКТИВЫ

Посвящается 175-летию великого
казахского поэта Абая Кунанбаева

Ключевые слова – Армения, Казахстан, конференция, сотрудничество, казахская литература, культура, публикация, университет, факультет, преподаватели, студенты

В 2020 г. в Казахстане и во многих странах мира проходят юбилейные мероприятия, посвященные 175-летию основоположника новой казахской литературы Абая Кунанбаева. В данной публикации мы постараемся представить как краткий отчет о фундаментальных изданиях и литературных чтениях, приуроченных к славному юбилею великого сына казахского народа – Абая в Армении, так и другие реальные достижения плодотворного сотрудничества между университетами и научными центрами Армении и Казахстана, раскрыть наиболее существенные тенденции и перспективные направления дальнейшего взаимодействия деятелей науки и культуры двух стран.

Известно, что армяно-казахские многовековые культурные связи получили новый импульс развития после провозглашения независимости Арменией и Казахстаном¹. В 2010 г. в Астане между двумя государствами было подписано

¹ Об армяно-казахских культурных (в частности – научно-образовательных) связях в новейший период см. **Сафарян А., Атаев А.**, К вопросу о сотрудничестве между Арменией и Казахстаном // «21-й ВЕК», 2014, № 4, с. 69-79, <https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-o-sotrudnichestve-mezhdu-armeniy-i-kazahstanom>, **Симонян А., Сафарян А.**, Об изучении вопросов тюркской филологии в Армении // Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики, международная научно-практическая конференция, Казань, 15-16 мая 2015 года, с. 244-249, **Сафарян А., Адилбаев Ж.**, Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном // «Вестник Евразийского национального университета имени Л. Н. Гумилева» (Научный журнал), 2016, № 1, с. 113-118, **Адилбаев Ж., Сафарян А., Восканян В.**, О преподавании восточных языков в Ереванском государственном университете // Тюркский мир и исламская цивилизация: проблемы языка, литературы, истории и религии, IX международная тюркологическая конференция 13-14 апреля 2018, К(П)ФУ, Казань, 2018, с. 422-425. Армянские тюркологи и османисты неоднократно выступали с научными докладами и публикациями на разных языках о Ходже Ахмете Ясави и других классиках арабоязычной, персоязычной и тюркоязычной суфийской литературы, об истории культуры тюркоязычных народов. См., в частности, **Safaryan A., Melikyan G.**, Apology of Sufism in Divan by Yunus Emre, XXVIth International Congress of Asian and North African Studies, Book of Abstracts of ICANAS –2000, Montreal, Canada, 2000, p. 60, **Safaryan A.**, On the History of Turkish Feminism // “Iran and the Caucasus”, Vol. 11.1, Brill, Leiden-Boston, 2007, p. 141-152, **Safaryan A., Melkonyan R.**, Investigations of Prominent Turkmen Thinker – Sufi Nejmeddin Kubra in Armenia // Nejmeddin Kubra and Spiritual – Cultural World of Orient, Asgabat-Dashoguz, 2008, p. 184 -185, **Safaryan A., Sahakyan L.**, On “Adaptation” of Traditional Images in the Works of Eastern Christian and Islamic Poets // Abstracts of the World Philosophy Day Congress,

соглашение о сотрудничестве в сфере науки и образования, которое создало новую правовую базу для дальнейшего развития сотрудничества. В августе того же года состоялся первый в истории визит делегации Евразийского национального университета имени Л. Н. Гумилева в Армению, в ходе которого между ректорами двух университетов был подписан меморандум о научном и образовательном сотрудничестве. Действующий ныне договор между Ереванским государственным университетом и Национальным университетом им. Л. Н. Гумилева в Астане (Нур-Султане) предусматривает научно-образовательное сотрудничество в самых разных направлениях (в частности, взаимное командирование преподавателей и студентов, консультирование армянскими востоковедами-источниковедами казахстанских студентов и докторантов, специализирующихся в области армянографичных кыпчакоязычных манускриптов и др.). За прошедшее десятилетие были проведены знаменательные мероприятия, в числе которых: Дни ЕГУ в ЕНУ, Дни ЕНУ в Ереване; конференции, посвященные идеям евразийства, проблемам армяно-казахских отношений, 550-летию Казахского ханства (2015 г.); фестиваль казахских фильмов в Армении (2017 г.); мастер-классы, посвященные творческому наследию Абая и других классиков казахской литературы; встречи с современными литераторами Казахстана. За последние годы около семидесяти студентов ЕНУ прошли стажировку или мастер-классы в ЕГУ по различным направлениям и специальностям: тюркология, международные отношения, религиоведение, химия, география, биология и др.

В 2010 г. в Ереване был открыт первый на Южном Кавказе Центр казахского языка, истории и культуры Казахстана, оснащенный новейшей компьютерной техникой и богатой библиотекой, на факультете востоковедения ЕГУ началось преподавание казахского языка преподавателями ЕНУ им. Л. Н. Гумилева и дипломатами Посольства Казахстана в Армении. В Центре периодически проводятся литературные чтения и другие мероприятия с участием казахских деятелей культуры, Центр традиционно посещают правительственные и парламентские делегации из Казахстана, представители творческих союзов и СМИ разных стран. Аспирантка кафедры тюркологии ЕГУ Шушаник Хачатрян, специализирующаяся в области казахской литературы и, в частности, изучения творчества М. Ауэзова и Абая, опубликовала ряд научно-популярных статей в Армении и Казахстане¹, за что в 2019 г. была удостоена ордена «Достык» II степени указом

Tehran, Iran, 2010, p. 249, **Մարգարյան Ա., Մելիքյան Գ., Մաֆարյան Ա.**, Բարիի՝ Երևանի Մերսոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանում պահվող № 321 ձեռագիրը // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 2012, թիվ 2-3, էջ 442-446, **Адилбаев Ж., Сафарян А., Погосян Н.**, Незабываемые страницы истории изучения и популяризации творческого наследия великого узбекского поэта и гуманиста Алишера Навои в Армении и в Казахстане // Творческое наследие Алишера Навои и современность. Сборник докладов международной научной конференции, Москва, 2018, с. 8-11, **Симонян А., Сафарян А.**, Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2019, թիվ 1, էջ 226-235.

¹ См., в частности, **Хачатрян Ш. А.**, Основные тематические особенности рассказов и пьес Мухтара Ауэзова // Материалы VIII Международной конференции «Наука и образование – 2014», Астана, 2014, с. 113-1116, *ее же*: Любовная тема в романе Мухтара Ауэзова «Путь Абая» // Язык и общество: диалог культур и традиций, Иркутск, 2012, с. 249-252, *ее же*: Қазақәдебиеті мен мәдениетін оқытатын армян кызы // “Ұлан” балалар мен жасөспірімдердің республикалық газеті, Аста-

Президента Казахстана Касыма-Жомарта Токаева (№ 374, 04. 08. 2020), а также «Медалью им. Шакарима» Государственного университета имени Шакарима (г. Семей, Казахстан).

В юбилейном 2020 году было принято решение о присвоении имени великого Абая упомянутому Центру казахского языка, истории и культуры Казахстана, который на протяжении 10 лет осуществляет важную миссию по пропаганде казахской культуры и развитию армяно-казахского культурно-гуманитарного сотрудничества.

* * *

Примечательно, что в 1950-1960-е гг. видными армянскими исследователями – в последующем академиками АН Армянской ССР Л. С. Хачикяном и С. С. Аревшатяном – была поставлена задача изучения армяно-кыпчакских рукописей как историками, так и филологами, и уже в 1962 г. во всеоюзном лингвистическом журнале было опубликовано краткое научное сообщение О. С. Еганяна о манускрипте Матенадарана № 2267 (писаря Лусика, 1581 г.)¹, тем самым автор и руководство Матенадарана хотели привлечь казахских и татарских специалистов к сотрудничеству, ибо очевидно, что комплексное исследование текстов армянографичных кыпчакоязычных рукописей требует как знания тюркских (кыпчакских и огузских), древнеармянского и среднеармянского языков, фонетических особенностей диалектов, а также медиевистических и источниковедческих фундаментальных знаний (на протяжении почти всего XX века императив изучения армянографичных кыпчакоязычных памятников письменности подчеркивали известные тюркологи В. А. Гордлевский, Т. И. Грунин, Э. В. Севортян, Н. А. Баскаков, М. Р. Кочар и др.²). Армянские специалисты разделяли точку зрения известного исследователя проблематики армянографичных кыпчакоязычных рукописей Ярослава Дашкевича и в соответствующих изданиях последовательно аргументировали тезис о том, что среди лингвистических и «экстра-

на, 2016, № 14, *ее же*: Тарихы мол казак халкын құрметтеймін // “Еуразия университети” газетасы, Астана, 2014, № 10-11, б. 10, **Խաչատրյան Շ.**, Մուխթար Աուեգովի ստեղծագործությունների թեմատիկ առանձնահատկությունները // ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2014, 1 (1), Հասարակական գիտություններ, էջ 98-102, *նույնի՝* Կերպարների զարգացման առանձնահատկությունները Մուխթար Աուեգովի «Դժվար տարիներ» վիպակում // ԵՊՀ ՈւԳԸ հոդվածների ժողովածու, 2016, 1.5 (15), Հասարակական գիտություններ, էջ 45-49, *նույնի՝* Մուխթար Աուեգովի «Ենիկ և Քեբեք» և «Քարագյոզ» պիեսների համեմատական վերլուծություն // «Մերձավոր Արևելք» (հոդվածների ժողովածու), հ. 11-12, Երևան, 2017, էջ 253-262, **Khachatryan Sh. Adilbayev Zh.**, Political and Cultural-Humanitarian Aspects of Cooperation between Armenia and Kazakhstan at the Present Stage // “Public Administration and Civil Service” (International Scientific-Analytical Journal), 2017, № 2, p. 105-109, *նույնի՝* Մ. Աուեգովի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների շուրջ // «Արևելագիտության հարցեր», 2018, թիվ 14, էջ 299-314, **Khachatryan Sh.**, The Conception of Love (Comparing Some Works by Abai Qunanbaiuly and Magtymguly Pyragy) // Science, Technology and Innovative Technologies in the Prosperous Epoch of the Powerful State // International Scientific Conference Materials, III, Ashgabad, 2020, p. 213.

¹ **Еганян О. С.**, Об одном армяно-кыпчакском грамматическом пособии XVII в. // «Вопросы языкознания», 1962, с. 151–154.

² Из публикаций на турецком языке см., в частности, **N. Koç**, Yeni Dilbilgisi. İnkılâp Kitapevi, İstanbul, 1990, s. 30.

лингвистических» задач изучения вышеназванных рукописей на первый план выдвигается задача тщательного анализа как лексики и фонетики, так и грамматики вышеупомянутых рукописей в сравнении с языком Codex Sumanicus¹, а также ранних письменных памятников языка крымских татар и караимов, и этот путь «сулит настоящие научные открытия, он, несомненно, расширит наши представления об истории кыпчакских языков»¹.




Иллюстрация – страница из манускрипта XVII века, писца Аветика (Матенадаран, рукопись № 3522)

¹ Дашкевич Я., Кто они – «Армяно-кыпчаки»? (Об этносе создателей армяно-кыпчакских рукописей XVI–XVII вв.) // «Բանբեր Մատենադարանի», 1994, էջ 108.

За последние годы сотрудниками Института арменоведческих исследований и преподавателями кафедры тюркологии ЕГУ на разных языках изданы научные и научно-популярные статьи и представлены доклады на международных научных конгрессах и симпозиумах, посвящённые историко-филологическому изучению армянографичных кыпчакоязычных рукописей¹ и раскрывающие конкретные перспективы международного сотрудничества в данной области (с настоятельным призывом привлечь лингвистов из Армении, Казахстана, Российской Федерации, Польши, Израиля и других стран)².

Институт арменоведческих исследований ЕГУ планирует издание в 2021 году³ уникальной рукописи № 3522 Матенадарана (писарь – Аветик, XVII в., Львов) с соответствующим предисловием, послесловием, подробными историко-филологическими примечаниями. Данный манускрипт завершается «Грамматикой кыпчакского». Это двуязычный (армяно-кыпчакский), местами – трехязычный (армяно-кыпчакско-польский) армянографичный текст (отметим, что алфавитный порядок слов местами нарушен). В рукописи приведены части речи армянского и кыпчакского языков. Имя существительное представлено по падежным формам как в единственном, так и во множественном числе; даны способы словообразования (представлена аффиксация, в том числе отрицательная), синонимы и омонимы, приведены также некоторые отглагольные формы армянских и кыпчакских глаголов, в соответствии с грамматическими формами армянского языка параллельно приводятся таблицы спряжения армянских и кыпчакских глаголов в настоящем, прошедшем и будущем времени, а также их неопределенные, причастные и деепричастные формы, модели образования возвратных глаголов, сослагательного и повелительного наклонений, в словарь

¹ См., в частности, **Сафарян А., Саакян Л.**, О филологической ценности армяно-кыпчакских рукописей XVII в., хранящихся в Матенадаране (Ереван) // Тезисы международного тюркологического симпозиума «Тюркский мир: история и современность», Евразийский национальный университет им. Л. Н. Гумилева, 2011, с. 103, **Сафарян А., Саакян Л.**, Армяно-кыпчакские рукописи-источники изучения истории тюркских языков // «Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи», Казань-Елабуга, 2016, с. 168-176, **Сафарян А., Әділбаев Ж.**, ТМД елдерінің түркітану орталықтары ынтымақтастығының келешегі туралы // Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек, 26-27 мамыр 2017 жыл, 2017, б. 259-262.

² См., в частности, **Сафарян А., Адилбаев Ж.**, О взаимодействии тюркологов Казанского (Приволжского) федерального университета, Евразийского национального университета им. Л. Н. Гумилева и Ереванского государственного университета // «Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи», Казань-Елабуга, 2016, с. 160-167, **Адилбаев Ж., Сафарян А., Погосян Н.**, О перспективах гуманитарного сотрудничества между Арменией и Казахстаном // Казахстан во всемирной истории: вечные ценности и новые горизонты, МГУ имени М. В. Ломоносова, Москва, 2016, с. 142, **Сафарян А., Саргсян А.**, Об изучении армянографических тюркоязычных литературных памятников // Азия и Африка: наследие и современность (XXIX Международный конгресс по источниковедению и историографии стран Азии и Африки, 21-23 июня 2017 г.: Материалы конгресса/Отв. ред.: Н. Н. Дьяков, А. С. Матвеев, Санкт-Петербург, 2017, с. 295-296, **Сафарян А. В., Сафарян А. А.**, Еще раз об армяно-казахском научно-культурном сотрудничестве и вопросах лингвистического изучения армяно-кыпчакских рукописей // Материалы II-й научной конференции средневековой истории Дешт-и-Кипчака. ТОО Научно-исследовательский центр «Дешт-и-Кыпчак», Астана, 2018, с. 150-156.

³ См. предварительное сообщение: **Մելիքյան Գ., Սահակյան Լ., Սահարյան Ա.**, XVII դարի գրիչ Ավետիքի՝ Մատենադարանի № 3522 ձեռագրի պատմաբանասիրական արժեքը // «Իրան-Նամե», 2012-2013, հ. 44-45, էջ 48-51.

включены и числительные. Языковые факты, зафиксированные в рукописи, делают возможным восстановление фонетических, грамматических и морфологических моделей (распространенное мнение: армянский алфавит точнее передает фонетику тюркской (кыпчакской) речи, чем арабская, еврейская азбука, латиница). Описываемый грамматический словарь-пособие также дает некоторое представление о словарном запасе кыпчакского, о заимствованиях из других языков, является источником для сравнительного исследования кыпчакского и других тюркских языков, сопоставительного анализа кыпчакского и индоевропейских языков¹.

Армянские исследователи традиционно подчеркивали феномен формирования традиций религиозной и национальной толерантности в Дешт-и-Кипчаке, уникальный опыт многовекового экономического и культурного взаимодействия и взаимообогащения разных народов в Северной Евразии².

* * *

В год 175-летия Абая Президент Казахстана К. Токаев выступил со статьей «Абай и Казахстан в XXI веке», где подчеркнул: «Мы должны пропагандировать Абая как культурный капитал нации. Нельзя забывать, что цивилизованные страны судят о бытии казахов, культуре и литературе, духовном развитии благодаря достижениям и мировой известности выдающихся представителей народа. Поэтому Абая необходимо широко представить мировому сообществу как бренд нового Казахстана. Это долг нынешнего поколения»³.

В юбилейном году в Ереване, благодаря казахстанской общенациональной государственной программе «Рухани жаңғыру», инициированной Первым Президентом Н. Назарбаевым в целях модернизации общественных устоев современного Казахстана, при сотрудничестве Посольства Казахстана в Армении с Ереванским государственным университетом и Институтом литературы им. М. Абегамяна НАН РА, впервые была издана фундаментальная антология казахской литературы на армянском языке (составители – Тимур Уразаев, Кайсар Амиржанов, ред. – Вардан Деврикан, Александр Сафарян)⁴. Общеизвестно, что у истоков системных армяно-казахских литературных связей стояли классики армян-

¹ См. подробнее: **Сафарян А., Саакян Л.**, Армяно-кыпчакские рукописи-источники изучения истории тюркских языков // «Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи», Казань-Елабуга, 2016, с. 168-176. См. и ср. также László Rásonyi, Tarihre Türklük (üçüncü baskı), Türk kültürünü araştırma enstitüsü yayınları: 126, seri: III – sayı: A. 34, Ankara, 1993, s. 136-155, 330-333.

² См., в частности, **Сафарян А. В., Сафарян А. А.**, О духовных ценностях и культурно-гуманитарном пространстве, объединяющих народы стран ЕАЭС // Армения в ЕАЭС. Евразийская экономическая интеграция в действии (сборник статей, глав. ред. проф. А. А. Тавадян), Ереван, 2018, с. 83-95.

³ https://www.inform.kz/ru/abay-i-kazahstan-v-xxi-veke-perevod-stat-i-prezidenta-rk-kasym-zhomartatokaeva_a3618011

⁴ См. Հազարիական գրականության անթոլոգիա, խմբագրությամբ՝ Վ. Դևրիկյանի, Ալ. Սաֆարյանի, Երևան, 2019. Соавторы данной статьи выражают благодарность Посольству Казахстана в Армении и Союзу писателей Казахстана за содействие в издании перевода полного текста предисловия вышеупомянутой антологии в старейшем и авторитетном русскоязычном казахстанском журнале (см.: **Сафарян А. В.**, Из истории армяно-казахских культурных связей // «Простор» (литературно-художественный журнал, Казахстан), 2020, № 2, с. 162-173).

ской советской литературы – Сильва Капутикян, Геворг Эмин и Паруйр Севак, посетившие в составе делегации армянских деятелей культуры Алматы в 1968 г. и уже до этого выступившие с инициативой издания произведений казахской литературы на армянском языке и армянской литературы – на казахском. В советский период на казахском языке были изданы произведения Святого Григора Нарекаци, Наапета Кучака, Саят-Новы, Ованеса Туманяна, Аветика Исаакяна, Даниела Варужана, Ваана Терьяна, Егише Чаренца, Ованеса Шираза, Амо Саягяна, Сильвы Капутикян, Геворка Эмина, Паруйра Севака. На армянском языке в советский период были изданы произведения Махамбета Утемисова, Абая Кунанбаева, Султанмахмута Торайгырова, Джамбула Джабаева, Сакена Сейфуллина, Беимбета Майлина, Ильяса Джансугурова, Сабита Муканова, Жакана Сыздыкова, Аскара Токмагамбетова, Таира Жарокова, Абдилда Тажибаева, Гали Орманова, Мариам Хакимжановой, Дихана Абилева, Абу Сарсенбаева, Жумагали Саина, Касыма Аманжолова, Калижана Бекхожина, Хамида Ергалиева, Абдоллы Жумагалиева, Сырбая Мауленова, Капана Сатылбадина, Сагынгали Сеитова, Жубана Молдагалиева, Кайнекена Джармагамбетова, Куандыка Шангытбаева, Кабдыкарима Идрисова, Музафара Алимбаева, Жаппара Омирбекова, Гафу Каирбекова, Аманжолы Шамкенова, Изтая Мамбетова, Туманбая Молдагалиева, Нуфтулла Шакенова, Саги Жиенбаева, Кадыра Мырзалиева, Жумекена Нажимеденова, Шона Смаханулы, Кайрата Джумагалиева. В новой же антологии казахской литературы на армянском языке представлены как уже известные армянскому читателю переводы Сильвы Капутикян и Геворка Эмина, так и новые переводы современных армянских поэтов-переводчиков – Варужана Хастура, Эдуарда Милитоняна, Левона Блбуляна, Гагика Давтяна. Впервые в переводе на армянский язык представлены вошедшие в антологию образцы творчества казахских жырау – Асана Кайгы Жырау¹, Казтуган Жырау², Шалкииза Жырау³, Бухара Жырау⁴, стихотворения Шакарима⁵, Ахмета Байтурсынова⁶, Магжана Жумабаева⁷, одного из известнейших русскоязычных «шестидесятников» Олжаса Сулейменова, наших современников Бахытжана Канапьянова, Улугбека Есдаулетова, исследования современных казахских литературоведов – того же Олжаса Сулейменова, Рымгали Нургали и Куралай Уразаевой, ценнейшие эпистолярные реликвии, к которым, несомненно, относятся письма Чокана Валиханова Ф. М. Достоевскому.

В год 175-летия Абая в рамках той же программы «Рухани жаңғыру» и сотрудничества между Посольством Казахстана в Армении и Ереванским государственным университетом в Армении в едином сборнике «Абай –175» были изданы роман-эпопея Мухтара Ауэзова «Путь Абая» (второе издание под редакцией Варужана Хастура, предисловие – Тимура Уразаева и Александра Сафаря-

¹ См. Ղազախական գրականության անթոլոգիա, էջ 53-54.

² Там же, с. 55-56.

³ Там же, с. 57-58.

⁴ Там же, с. 59-62.

⁵ Там же, с. 80-84.

⁶ Там же, с. 68-70.

⁷ Там же, с. 85-87.

на)¹, а также «Книга слов» самого Абая, впервые переведенная на армянский язык (переводчики – Александр Сафарян, Варужан Хастур, Арман Сафарян, предисловие – Тимура Уразаева и Александра Сафаряна)². Обе книги рекомендованы к изданию учеными советами Института арменоведческих исследований и факультета востоковедения ЕГУ. Выход в свет подобного «литературного диптиха», как подчеркнули соавторы предисловий, обусловлен его значимостью как общепризнанной, исключительной ценности его частей для истории казахской литературы, так и стремлением скромной инициативной группы, ответственной за издание, проявить инновационный подход, представив в «одном пакете» армянскому читателю и философско-публицистический трактат Абая, и новую редакцию перевода романа-эпопеи М. Ауэзова об Абаяе, впервые увидевшего свет в Ереване в далеком 1952 г. и давно ставшего библиографической редкостью³.

Олжас Сулейменов в предисловии к одному из изданий «Слов» Абая пишет: «Ничто так не укрепляет духовную силу народа, как открытая и смелая национальная самокритика. Она – свидетельство внутреннего здоровья нации, ее способности совершенствоваться, преодолевать общие беды и излечивать собственные болезни. И в этом смысле «Книга слов» – урок и призыв к размышлению для многих современных борцов за «национальную идею» – любого происхождения. «Книга» противостоит сегодняшним попыткам национальной самоизоляции, самовоспеванию и невежественному зазнайству, попыткам некоторых идеологов высокомерно оттолкнуть свои народы от всего богатства общечеловеческой культуры»⁴.

Примечательно, что в процессе подготовки армянского издания переводчики использовали выполненные в разное время переводы на русский язык (В. Шкловского, 1945 г., Л. Соболева (Слово тридцать седьмое), С. Санбаева, 1970 г., Р. Сейсенбаева и К. Серикбаевой, 1992-1993 гг.), а также переводы на турецкий и английский языки, сравнивая их с текстом академического издания оригинала (Алматы, 1995 г.)⁵. В примечаниях к армянскому переводу указаны некоторые слова и выражения, записанные в оригинале на арабском, персидском, русском языках, и даны к ним пояснения⁶.

Можно констатировать, что создан прочный фундамент для дальнейшего плодотворного сотрудничества как между ЕГУ и ЕНУ им. Л. Н. Гумилева (г. Нур-Султан), так и между другими вузами и академическими институтами, творческими союзами Армении и Казахстана.

¹ **Առեգով Առիթքար**, Արայ, (առաջաբանը՝ Թիմուր Ուրազանի և Ալեքսանդր Սաֆարյանի), Երևան, 2020, 904 էջ:

² **Աբայ**, Սև խոսքեր, (առաջաբանը՝ Թիմուր Ուրազանի և Ալեքսանդր Սաֆարյանի), Երևան, 2020, 116 էջ:

³ **Уразаев Т., Сафарян А.**, Предисловие ко второму изданию на армянском языке романа Мухтара Ауэзова «Абай» // **Առեգով Առիթքար**, указ. соч., с. 11.

⁴ **Абай**, Книга слов, Шакарим, Записки Забытого, Алматы, 1993, с. 5.

⁵ См. **Абай**, Шығармаларының екі томдық толық жинағы, Екінші том, Қазақстан Республикасы Ұлттық ғылым академиясының М.Әуезов атындағы Әдебиет және өнер институты, 158-218 беттер.

⁶ Авторы примечаний – Александр Сафарян и Кайсар Амиржанов выражают искреннюю признательность заведующему кафедрой армянской литературы, профессору Самвелу Мурадян и заведующему кафедрой арабистики ЕГУ, доценту Айку Кочаряну за всестороннее содействие.

**Արամ Միմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան – Հայաստանի և Ղազախստանի
միջև գիտակրթական համագործակցության մասին.
իրողություններ և հեռանկարներ**

2010 թ. կնքված միջպետական պայմանագիրը խթանել է Հայաստանի և Ղազախստանի միջև գիտական ու մշակութային ավանդական կապերի ամրապնդումը: Երևանի պետական համալսարանը ամենատարբեր ուղղություններով, մասնավորապես հայատառ դիչադերեն ձեռագրերի պատմաբանասիրական ուսումնասիրության ոլորտում, սերտորեն համագործակցում է Նուրսուլթանի Լ. Ն. Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի, Ղազախստանի այլ առաջատար գիտակրթական կենտրոնների հետ: ԵՊՀ մասնագետների, Հայաստանում Ղազախստանի դեսպանության և Հայաստանի ու Ղազախստանի Գրողների միությունների համագործակցության արդյունքում, 2019 թ. առաջին անգամ հայ իրականության մեջ լույս է տեսել ղազախական գրականության հիմնարար անթոլոգիան, իսկ 2020 թ.՝ ղազախական նոր գրականության հիմնադիր Աբայ Կունանբայևի 175-ամյակին նվիրված ուշագրավ «գրական դիպտիխ»՝ Մուխթար Աուեզովի «Աբայ» վեպի նոր խմբագրությունը և Աբայի «Սև խոսքերի» առաջին հայերեն թարգմանությունը:

Aram Simonyan, Alexander Safaryan – *Scientific and Educational Cooperation between Armenia and Kazakhstan: Facts and Prospects*

The interstate agreement signed in 2010 played an essential role in strengthening the long-established scientific and cultural relations between Armenia and Kazakhstan. Yerevan State University closely collaborates with L. N. Gumilyov Eurasian National University in Nur-Sultan as well as other leading higher education institutions of Kazakhstan in a wide variety of scientific disciplines (particularly in the field of the historical-philological study of the Qypchaq (Ghpchagh) language manuscripts written in Armenian script). As a result of the collaboration between the YSU specialists, the Embassy of the Republic of Kazakhstan in Armenia and the Writers' Unions of Armenia and Kazakhstan, for the first time ever, the fundamental anthology of Khazakh literature was published in Armenia in 2019. A year later, in 2020 the new edition of Mukhtar Auezov's novel "Abay" – an outstanding "literary diptych" dedicated to the 175th anniversary of the founder of modern Kazakh literature Abay Kunanbayev as well as the first Armenian translation of Abay Kunanbayev's "The Book of Words" were published.

Ներկայացվել է 23.10.2020

Գրախոսվել է 31.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ «ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ»
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

***Բանալի բառեր** – Հայաստան, Հայկական մարզ, Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերո,
Բ. Բ. Շոպեն, թուրք-թաթարներ, Ադրբեջան, ատլաս, պատմական սկզբնաղբյուրներ*

Տարիներ շարունակ Հայաստանի և Արցախի դեմ թուրք-թաթարների սանձազերծած տեղեկատվական պատերազմը օր օրի ավելի է սաստկանում և դառնում առավել ընդգրկուն: Ադրբեջանի և Թուրքիայի պետական կառույցների տեղեկատվական այս արշավը նպատակ է հետապնդում «պատմականորեն» արդարացնել իրենց որդեգրած ռազմամոլական քաղաքականությունն ու ավելի հեռուն գնացող իրական նպատակները: Այդ ճանապարհին փորձ է արվում տեղեկատվական ահռելի հոսքերի միջոցով ուղղորդել և ազդել ինչպես մեր՝ հայ հասարակության, այնպես էլ սեփական բնակչության գիտակցության վրա: Այս խնդիրներն իրականացնելու համար օգտագործվում են առկա բոլոր ռեսուրսները և տեղեկատվական դաշտի ընձեռած հնարավորությունները՝ դրանցում ներգրավելով նաև օտարերկրյա քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների, դերասանների, երգիչների, մարզիկների և այլոց մասնակցությունը:

Այսպիսով, հետհայացք նետելով թուրք-թաթարների գործընթացների տրամաբանությանը, հարկ է արձանագրել, որ Հայաստանի և Արցախի դեմ տեղեկատվական պայքարը լայն թափ է ստացել դեռևս 1960-ական թվականներից: Հսկայածավալ աշխատանք է տարվում ընդամենը մի քանի տասնամյակ Ադրբեջան կոչվող պետական կազմավորմանը վերագրելու հնագույն ժողովուրդներին բնորոշող քաղաքակրթական առանձնահատկությունները (հնագույն պետականություն, ավանդույթներ, մշակույթ և այլն)¹: Կեղծիքները «հիմնավորելու» նպատակով շրջանառվում է պատմագիտական «փայլուն» մտքի արգասիք այն «թեզը», որ տարածաշրջանում հայերը եկվորներ են, իսկ ադրբեջանցիները՝ տեղաբնիկների՝ աղվանների (Աղվանից թագավորության) հետնորդները: Ըստ նրանց՝ ադրբեջանցիների՝ աղվանների ժառանգներ լինելու «թեզը» կհիմնավորեր, օրինակ, զավթած տա-

¹ 1960-ական թվականներին թափ առած հակահայկական գրականության հեղինակներից են Զ. Բույնաթովը, Ֆ. Մամեդովը, Բ. Ալիևը, Կ. Մահմեդ-զադեն, Դ. Ախունդովը և այլք:

րածքներում քրիստոնեական մշակութային արժեքների¹ առկայության հանգամանքը, որից բխում է այն «փաստը», որ հայկական համարվող պատմամշակութային արժեքները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ աղվանա-ադրբեջանական²:

Միևնույն ժամանակ թուրք-թաթարներն իրենց իրավամբ համարում են թյուրքալեզու միջինասիական ցեղերի հետնորդները: Ջորջինակ, Ադրբեջանում և Թուրքիայում լայն շրջանառվում է «մեկ ազգ, երկու պետություն»³ կարգախոսը:

Իրականում բացահայտ սուտն ու կեղծիքը, հակասական և հակազդատական «թեզերը» իրենց իսկ՝ թուրք-թաթարական «պատմագրության» մեջ առաջ են բերել մեծ խառնաշփոթ: Այդ «պատմություններում» զավեշտալին նաև այն է, որ տվյալ տարածաշրջանում ապրած ազգերի ու ժողովուրդների հայրենիքը, նյութական և մշակութային ժառանգությունն անվարան յուրացնողները, այնուամենայնիվ, չեն խուսափում աշխարհին ներկայանալ որպես «մեծ դավադրության գոհեր»: Դրա վառ օրինակն է Ադրբեջանի արտգործնախարարության հրատարակած «Պատերազմ Ադրբեջանի դեմ: Մշակութային ժառանգության կողմնորոշում» գիրքը⁴, որի հիմքում վերոբերյալ մտավարժանքներն են՝ բնականաբար «խեղճուկրակ» թուրք-թաթարի տեսանկյունից:

Ներկա փուլում հայ ժողովրդի դեմ կիրառվող տեղեկատվական պատերազմի սահմանները հասել է այն եզրագծին, որ թուրք-թաթարները փորձում են ջանասիրաբար օգտագործել հայ պատմագրության հայր Մովսես Խորենացու աշխատությունները մեր իսկ ազգային արժեքների և ինքնիշխանության դեմ:

2016 թ. Բաքվում հրատարակված «Ադրբեջանի պատմական հուշար-

¹ Աղվանքի թագավորության պաշտոնական՝ Աղվանից եկեղեցին, Արևելյան հակաքաղեկեղոնական եկեղեցիներից է: Այն ընդունել է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու գահերեցությունը և «ի հոգևորս» ենթարկվել նրան: III դարից սկսած՝ բուն Աղվանքում ձևավորվել են քրիստոնեական համայնքներ: Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002, էջ 41-42, **Մովսես Կաղանկատվացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հ. 1, ԿՊ, 1912:

² Օրինակ, իրենց վերագրելով հայկական պատմամշակութային արժեքներից խաչքարերը, նրանք փորձում են «խաչքար»-ը փոխարինել «խաչդաշ» («դաշ»-քար) թյուրքական ծագման տերմինով: Սակայն միևնույն ժամանակ չեն խորշում իրենց իսկ տարածքներում գտնվող նույն այդ հուշարձանները կեղծել՝ ջնջելով եկեղեցիների վրայի հայկական գրություններն ու խաչերի պատկերները կամ դրանք հողին հավասարեցնել: Այդպիսի վառ օրինակներից է Ջուղայի միջնադարյան հազարավոր հայկական խաչքարերի ճակատագիրը, որոնք 2005 թ. զինվորականները ջարդովփշուր արեցին՝ տարածքը վերածելով զինավարժությունների համար նախատեսված վայրի:

³ Տե՛ս Azərbaycan-Türkiyə “bir millət iki dövlətdir” - heç bir kriptə buna mane ola bilməz // <https://1news.az/az/news/azerbaycan-turkiye-bir-millet-iki-dovletdir-hec-bir-kripto-buna-mane-ola-bilmez> (հասանելի էր 22.07.2020 թ.):

⁴ Տե՛ս War Against Azerbaijan. Targeting Cultural Heritage, Ministry of Foreign Affairs, Republic of Azerbaijan, 2007:

ձաններն ու տեղանունները: Մատենագիտություն»¹ գրքի «Արևմտյան Ադրբեջանի պատմական հուշարձաններն ու տեղանունները» բաժնում «հրաշքով» տեղ է գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը², որտեղ որպես ծանոթագրություն նշված է, որ այն տեղեկություններ է հաղորդում Ադրբեջանի պատմական հուշարձանների մասին, այն է՝ Գառնիի ամրոցի, Գառնիի տաճարի, Դվինի պալատի, Դվինի տաճարի³: Նույն «մատենագիտության» մեջ կգտնենք նմանատիպ խաչագողության բազմաթիվ այլ աղաղակող օրինակներ, ըստ որոնց՝ թուրք-թաթարական են համարվում ուրարտական շրջանի Թեյշեբանի կամ Կարմիր բլուր բերդաքաղաքը, Զվարթնոցը՝ «Երկնային Զվարթունների (Հրեշտակների) տաճարը», Գոշավանքը և մյուս բոլոր հայկական մշակութային հուշարձանները⁴: Նմանատիպ հրապարակումներն այսօր արդեն համատարած են⁵:

2012 թ. նրանք հրատարակել են այսպես կոչված «Ադրբեջանի հին քարտեզների հավաքածուն»⁶: Ըստ համացանցում եղած գովազդային հայտարարության՝ այն բաղկացած է պատմական և աշխարհագրական քարտեզներից, որոնցում արտացոլված է «Ադրբեջանի տարածքը» տարբեր ժամանակաշրջաններում:

Նմանօրինակ հիվանդ երևակայության ու մտավարժանքների արդյունք է Էմիր Էյվազի՝ համացանցում տեղադրված հրապարակումների շարքը՝ ««Մեծ Թուրանի» երկյուղը ստիպում է հայերին նենգափոխել հին քարտեզները»⁷ վերնագրով:

2015 թ. Բաքվում հրատարակվում են «Ադրբեջանի ազգային ատլաս»-ը և

¹ Տե՛ս **Сафаралиева Г.**, Исторические памятники и топонимы Азербайджана. Библиография, Баку, 2016:

² Տե՛ս **Хоренский М.**, История Армении, посмертное изд. фонд Н. О. Эмина, вып. 1, Москва, 1893:

³ «В книге даны сведения об исторических памятниках Азербайджана: Крепости Гарни, Храм Гарни [с. 22, 132]; Дворец и Храм Двин [с. 148]». Տե՛ս **Сафаралиева Г.**, նշվ. աշխ., էջ 396:

⁴ «В книге даны сведения об исторических памятниках Азербайджана: Крепость Тейшебани [с. 33-34], Крепость Колагирян: Тейшеба [с. 22, 47], Храм небесных ангелов (Гек мелеклери) [с. 33]». Տե՛ս նույն տեղում, էջ 396-397:

⁵ Տե՛ս **Alakbarli A.**, Les monuments d'Azerbaïdjan Ouest, Baku, 2007, **Алиярлы С.** (ред.), История Азербайджана: с древнейших времен до 70-х гг. XIX в., Баку, 2008, **Алиев К.**, Нахичевань в ареале античного Азербайджана (Azərbaycan arxeologiyası və etnoqrafiyası), 2006, № 2, s. 60-68, **Алиев И.**, **Мамедадзе К.**, Албанские памятники Карабаха, Баку, 1997:

⁶ Տե՛ս Собрание старинных карт Азербайджана. Факсимильное издание 1667-1914 гг., СПб., 2012 // <http://www.alfaret.ru/item.php?prod=2204&subid=130&catid=194> (հասանելի էր 22.07.2020 թ.): Հրատարակիչները նշում են, որ քարտեզներն ընտրված են XVI-XIX դդ. հրատարակված ատլասներից և գիտական, պատմական ու հավաքածու հետաքրքրություն են ներկայացնում: Ըստ նրանց գործելաոճի՝ կովկասյան թուրք-թաթարները չեն խնայել ֆինանսական միջոցներ և հրատարակել են շքեղ ու թանկարժեք քարտեզների հավաքածու՝ կաշվեպատ, ոսկե դրոշմանկարով, մետաքսե էջանշանով և այլն:

⁷ Տե՛ս **Эйваз А.**, Страх перед «Великим Тураном» заставляет армян искажать старинные карты // <http://gulustan.ws/2012/04/strax-pered-velikim-turanom/> (հասանելի էր 22.07.2020 թ.):

«Հարավային Կովկաս, 1903 թ.» քարտեզը: Ըստ հրատարակիչների՝ այս աշխատանքներում ի մի են բերված «աղբբեջանական հողերին» առնչվող ամբողջ տեղեկատվությունն ու պատմությունը¹:

Հարկ է նշել, որ այս աշխատանքները հրատարակվում են կովկասյան թուրք-թաթարների առաջնորդ Ի. Ալիևի բարձր հովանավորությամբ և քաջալերմամբ: Այդ մասին են վկայում Ալիևի հրապարակային որոշ ելույթներ, որոնք արժանի են առանձնակի ուշադրության: Այսպես, 2018 թ. նա բարբառում է «Իրեվանի (Երևանի – Վ. Մ., Գ. Ղ.) խանությունը, Զանգեզուրը և Գեյջեն (Գյոքչան՝ Սևանա լճի ավազանի մեծագույն մասը – Վ. Մ., Գ. Ղ.) աղբբեջանական ժողովրդի պատմական հողերն են», «Երևանը մեր պատմական տարածքն է, և մենք՝ աղբբեջանցիներս, պետք է վերադառնանք այդ պատմական հողը: Դա մեր քաղաքական և ռազմավարական նպատակն է»² «մոտորումները»: Իսկ 2019 թ. նա արտաբերում է, որ «Լեռնային Ղարաբաղը միշտ եղել է Աղբբեջանի անբաժանելի մասը», իսկ «բոլոր հին քարտեզներում, այդ թվում՝ ցարական Ռուսաստանի քարտեզներում, Լեռնային Ղարաբաղի բոլոր տեղանվանումներն ունեն աղբբեջանական ծագում»: Ալիևը նաև փաստում է, թե իբր «Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը փոխվել է 19-րդ դարում՝ հայերի ներգաղթի պատճառով»³ և այլն:

Ըստ թուրք-թաթարական պատմագրության «փայլուն ձեռքբերումների» և Աղբբեջանի «քաղաքական» ղեկավարության հայտարարությունների՝ Հայաստանի և Արցախի հանրապետությունները ընդամենը Արևմտյան Աղբբեջանն են⁴, իսկ հայկական մշակութային հարստությունը՝ թուրք-թաթարական: Ակնհայտ է, որ այս ամենը կրում է համակարգված բնույթ, որին Աղբբեջանում լծվել են «մեծից փոքր»:

Ամենևին նպատակ չհետապնդելով գնահատել ու անդրադառնալ տեղեկատվական պայքարի խնդիրներին՝ կցանկանայինք միայն նշել, որ հայկական կողմը բավարար ջանքեր չի գործադրում այս գեղծարարություններին դիմակայելու և արժանի պատասխան տալու ուղղությամբ:

Վերոբերյալից ակնհայտ է, որ կովկասյան թուրք-թաթարները, նենգափոխելով իրականությունը և հետապնդելով հեռահար քաղաքական նպատակներ, հատկապես շատ են կարևորում Ռուսական կայսրության տիրապետության ժամանակաշրջանը՝ թիրախավորելով պատմաաշխարհագրա-

¹ <https://www.trend.az/azerbaijan/society/2359527.html> (հասանելի էր 22.07.2020 թ.):

² Տե՛ս **Алиев И.**: стратегической целью Азербайджана является «возвращение» Еревана // <https://topwar.ru/135683-aliev-strategicheskoy-celyu-azerbaydzhana-yavlyaetsya-vozvraschenie-erevana.html> (հասանելի էր 22.07.2020 թ.):

³ Տե՛ս **Алиев И.**: «На всех старых картах все названия местностей Нагорного Карабаха имеют азербайджанское происхождение» // <https://galatv.am/ru/2787996/> (հասանելի էր 22.07.2020 թ.):

⁴ Տե՛ս **Гафарова Г.**, Памятники Западного Азербайджана: (книга-альбом), Баку, 2013:

կան սկզբնաղբյուրներն ու պատմական (հին) քարտեզները¹: Նրանք նույնիսկ չեն խորշում այլազգի գրչակ-մարտիկներին հավաքագրել «սրբազան» տեղեկատվական պատերազմին՝ հաջողություններ արձանագրելու նպատակով: Այսօրինակ վառ ներկայացուցիչ է մոսկվաբնակ Օ. Բուլանովան: Այսպես, 2011 թ. նա հրատարակել է «Աղբբեջան. մշակույթ, ավանդույթներ, մարդիկ» ռուսալեզու գիրքը², որի էլեկտրոնային հայտագրում տեղ են գտել հետևյալ ուշագրավ տողերը. «Այս գիրքը մոսկվաբնակ ռուսուհու վաղեմի և ջերմ սիրո պտուղն է հնագույն և գեղեցիկ մեր երկրի հանդեպ: Այս գրքի արժեքը նախևառաջ այն է, որ Աղբբեջանի մշակույթի մասին գրել է ոչ աղբբեջանցի հեղինակը»: Այս շարադրանքի հաջորդ մասում փորձ է արվում գրքի ընթերցողին հավաստիացնել, որ այն գերծ է շահարկումներից, հղում է արվում այն կանխավարկածին, որ եթե հեղինակը լիներ աղբբեջանցի, շատ հավանական է, որ նա՝ աղբբեջանցին, իր հզոր ժառանգությունից ոգեշնչված, ինչ-որ հարցում կանխակալություն կցուցաբերեր³:

Մեր պրպտումներից պարզ դարձավ, որ Աղբբեջանի մասին վերոհիշյալ «անկողմնակալ» գիրքը Օ. Բուլանովայի միակ աշխատանքը չէ: Պարզվում է, որ նա ջերմ սեր է տածում ոչ միայն Աղբբեջանի մշակույթի, ավանդույթների և մարդկանց, այլ նաև պատմության ու պատմական աշխարհագրության նկատմամբ: Օրինակ, նրան են պատկանում «Աղբբեջանը և Դյու Բուա դը Մոնպերոյի «Ճանապարհորդություն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.», «1833-1834 թթ. Աղբբեջանը և Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում (նկարներ)» և «Բաքվում անարխիստների հայտնվելու պատմությունը» հոդվածները⁴:

Փորձենք անդրադառնալ մեկ ամբողջականություն կազմող Օ. Բուլանովայի երկու՝ «Աղբբեջանը և Դյու Բուա դը Մոնպերոյի «Ճանապարհորդություն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.», «1833-1834 թթ. Աղբբեջանը և

¹ Օրինակ, 2020 թ., Ի. Ալիևը մասնակցել է թանգարաններից մեկի բացմանը: Ցուցասրահում ներկայացված պատմական քարտեզների վրա տեսնելով Ուրարտու անունը և չհամակերպվելով այն մտքի հետ, որ այդ ժամանակաշրջանում Աղբբեջան պետություն չի եղել, տնօրենությունից պահանջել է քարտեզի վրա ավելացնել այսպես կոչված «հնագույն աղբբեջանական» տեղանունները, իսկ հաջորդ քարտեզի վրա Իջևան, Սևան, Հրազդան և մի շարք այլ տեղանուններ փոխարինել «աղբբեջանականով» // <https://armenpress.am/rus/news/1007596.html> (հասանելի էր 22.07.2020 թ.):

² Буланова О., Азербайджан: культура, традиции, люди, Москва, 2011:

³ Տե՛ս նույն տեղում // https://www.livelib.ru/book/1001163391-azerbajdzhan-kultura-traditsii-lyudi-oksana-bulanova?utm_source=livelib&utm_campaign=viewed&utm_medium=bottom&utm_content=book (հասանելի էր 22.07.2020 թ.):

⁴ Տե՛ս Բуланова О., Азербайджан и «Путешествие вокруг Кавказа» Дюбуа де Монпере в 1833-1834 г. // Azer History: <https://azerhistory.com/?p=8880> (հասանելի էր 22.07.2020 թ.), նույնի՝ Азербайджан и Эривань 1833-1834 годов в зарисовках Дюбуа де Монпере (фото) // Azer History: <https://azerhistory.com/?p=8883> (հասանելի էր 22.07.2020 թ.), նույնի՝ История появления анархистов в Баку // Azer History: <https://azerhistory.com/?p=10077> (հասանելի էր 22.07.2020 թ.):

Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերթյի նկարներում (նկարներ)» հոդվածներին: Առաջինը նա սկսում է հետևյալ տողերով. «Ընդհանուր առմամբ Կովկասի և մասնավորապես Ադրբեջանի հնագույն մշակույթը միշտ գրավել է ճանապարհորդներին, հետազոտողներին, պատմաբաններին, նկարիչներին...»¹:

Այնուհետև նա ընդհանուր գծերով փորձել է անդրադառնալ Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերթյի կենսագրությանը, հիշատակել է նրա հանրահայտ ուսուցիչների՝ աշխարհագետ Կառլ Ռիթթերի, երկրաբան Լեոպոլդ ֆոն Բուխի և բնագետ Ալեքսանդր դը Հումբոլդտի անունները: Շատ համառոտ ներկայացրել է 1831-1834 թթ. Ֆրեդերիկ Դյու Բուայի գիտահետազոտական ճանապարհորդությունը և դրա արդյունքում հրատարակած աշխատությունները՝ «Ճանապարհորդություն Կովկասի շուրջ, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ» վերտառությամբ վեցհատորյա աշխատությունը², և «Ատլասը»՝ «Ճանապարհորդություն Կովկաս, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ»³:

Բարձր գնահատելով Ֆրեդերիկ Դյու Բուայի աշխատությունները՝ Օ. Բուլանովան հիշատակում է մի շարք հայտնի անձանց՝ Ալեքսանդր դը Հումբոլդտի, Պյոտր Կեպենի, Մարի-Ֆելիսիտե Բրոսեի, ինչպես նաև եվրոպական պետությունների և Ռուսաստանի գիտական շրջանակների արձագանքներն ու նրա աշխատություններին տրված գնահատականները: Նա հատուկ նշում է այն փաստը, որ ռուսական կառավարությունը դրամական մեծ աջակցություն է ցուցաբերել Ֆրեդերիկ Դյու Բուային «Ատլասի» հրատարակության համար, իսկ Նիկոլայ I-ը նրան պարգևատրել է Սբ. Ստանիսլավի շքանշանով:

Օ. Բուլանովան գրում է. «Ուշագրավ է, որ հետաքրքրասեր Մոնպերթյին տրամադրված «ուղեկցորդները, էսկորտները, պահակախումբը» (проводники, эскорты, конвой) 1827 թ. ռուսական կայսրության գրաված և Նիկոլայ I-ի՝ 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով Հայկական մարզի վերածված Էրիվանի խանությունը անվանում էին բացառապես Հայաստան, որի վկայությունն է աշխատության ամբողջական վերնագիրը՝ «Ճանապարհորդություն Կովկասի շուրջ, չերքեզների ու աբխազների մոտ, Կովխիդա, Վրաստան, Հայաստան և Ղրիմ»: Ոչ մի խոսք ադրբեջանական խանությունների մասին: Թեև նա եղել է առնվազն չորս՝ Գյանջայի, Ղարաբաղի, Նախիջևանի և Էրիվանի խանություններում:

¹ Տե՛ս **Буланова О.**, Азербайджан и «Путешествие вокруг Кавказа» Дюбуа де Монпере в 1833-1834 г.:

² Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, Librairie de Gide, Editeur des annales des voyages, t. I-III, IV, V-VI, Paris, 1839, 1840, 1843:

³ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, Voyage au Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, ATLAS, Neuchatel en Suisse, chez l'Auteur, Paris, 1843:

Ըստ երևույթին, ով վճարում է՝ երաժշտությունն է պատվիրում... Քանի որ նկարները, սխեմաները և քարտեզները հրապարակելու հնարավորությունը՝ հսկայական շքեղ Ատլասի տեսքով, ամբողջովին Ռուսաստանի կառավարության և անձամբ Նիկոլայ I-ի վաստակն է¹:

Նա մեջբերում է Ֆրեդերիկ Դյու Բուայի երախտիքի խոսքը՝ ուղղված ռուսական կառավարությանը «Ատլասը» հրատարակելու և ընձեռած օգնության համար: Այնուհետև կարճ ներկայացնում է Ատլասի կառուցվածքը և գրում նրա արժանիքների մասին:

Երկրորդ՝ «1833-1834 թթ. Ադրբեջանը և Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում (նկարներ)» հոդվածում Օ. Բուլանովան հիմնականում ներկայացրել է «Ադրբեջանը» 11 նկարների միջոցով՝ շեշտելով Ատլասի գլխավոր արժանիքներից մեկը՝ հետազայում անհետացած ճարտարապետական հուշարձանների պատկերների պահպանումը: Այս նկարները նա վերնագրել է և գրել էլեկտրոնային կայքի հասցե՝ azerhistory.com:

Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատությունների մասին մեր երկրում հրատարակված որևէ նյութ գտնելու ջանքերն ապարդյուն անցան: Այդ բացթողումը լրացնելու նպատակով մեր նախորդ հրապարակումներում փորձել ենք ներկայացնել հանիրավի մոռացության մատնված Դյու Բուա դը Մոնպերոյի կյանքն ու գործունեությունը², անդրադարձել ենք նրա գիտական ժառանգությանը³: Լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն՝ նա

¹ Տե՛ս **Буланова О.**, նշվ. աշխ.:

² Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոն (1798-1850) շվեյցարացի (ծագումով ֆրանսիացի) հայտնի ճանապարհորդ է և գիտնական: 1831-1834 թթ. նա միայնակ սկսում է վտանգներով լի իր գիտահետազոտական ճանապարհորդությունը դեպի Ղրիմ և Կովկաս: Այդ ընթացքում հավաքած, մշակած ու խմբագրած նյութերի հիման վրա 1839-1843 թթ. Փարիզում հրատարակվում է նրա վեց հատորյա «Ճանապարհորդությունը», իսկ 1843 թ. Նոշատելում (Շվեյցարիա) լուս է տեսնում նրա կազմած «Ատլասը»: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատանքը: «Ճանապարհորդությունը» ֆրանսերեն հրատարակվելուց հետո, ամբողջությամբ թարգմանվում է գերմաներեն: Փարիզի Աշխարհագրական ընկերությունը նրան պարգևատրում է Մեծ մրցանակով (Grand prix): Լոնդոնի երկրաբանական ընկերությունը բարձր է գնահատում կատարված աշխատանքը, իսկ ռուսական կառավարությունը 20.000 ռուբլի դրամական պարգև է հանձնում Դյու Բուա դը Մոնպերոյին «Ատլասը» հրատարակելու համար: Նիկոլայ I-ը նրան պարգևատրում է Սբ.Ստանիսլավի շքանշանով և նվիրում ադամանդակալու մատանի: Պրուսիայի թագավորը գիտության բնագավառում հաջողությունների համար նրան պարգևատրում է Մեծ ոսկե մեդալով (Grande medaille d'or): Լոնդոնի, Բեռլինի և Սանկտ Պետերբուրգի Աշխարհագրական ընկերությունները նրան ընտրում են իրենց թղթակից անդամ: Տե՛ս **Jeanneret F.A.M., et Bonhôte J.H.**, Biographie Neuchâtelaise, t. 1, Locle, chez Eugène Courvoisier, Libraire-éditeur, 1863, p. 279-280:

³ Տե՛ս **Մխիթարյան Վ.**, Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի քարտեզը ադրբեջանական գիտական և քաղաքական շահարկումներում // «ՀՀ», 2014, թիվ 3, էջ 34-52, *նույնի* Les cartes françaises de la Transcaucasie comme sources historiques // L'Arménie et la Géorgie en dialogue avec l'Europe, du Moyen Âge à nos jours, Paris, 2016, p. 274-282, *նույնի*՝ Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերո՝ այդչափ հայտնի և մեզանում այդքան անծանոթ շվեյցարացի ճանապարհորդը (պատմաաշխարհագրական և քարտեզագրական ուսումնասիրություն) // «ՀՀ և մերձավոր

իր աշխատություններում արձանագրել է տվյալ ժամանակաշրջանում Այսրկովկասում և Ղրիմում տիրող իրավիճակը, շրջանառության մեջ է դրել պատմական, աշխարհագրական, քարտեզագրական և մշակութային հսկայական նյութ, որը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություններ և վերլուծություններ: Դրանցում կան, անշուշտ, որոշակի անճշտություններ, բացթողումներ, սակայն աներկբա կարելի է փաստել, որ դրանք մեզ համար անգնահատելի պատմական սկզբնաղբյուրներ են:

Անդրադառնալով Օ. Բուլանովայի հրապարակած առաջին՝ «Ադրբեջանը և Դյու Բուա դը Մոնպերոյի «Ճանապարհորդություն Կովկասի շուրջը» 1833-1834 թթ.» հոդվածին, նշենք, որ վերնագրից ակնհայտ երևում է, որ այն, մեղմ ասած, շատ հավակնոտ է: Զավեշտալին այն է, որ հոդվածագիրը պատմական տվյալ ժամանակահատվածում գոյություն չունեցող «Ադրբեջան» պետությանն ու «ադրբեջանցի» կոչվող ժողովրդին ներկայացնում է որպես հնագույն մշակույթ կրողների: Նա «անկեղծորեն» զարմանում է, թե ինչպես կարող էր Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատությունների վերնագրերում տեղ գտնել Հայաստան երկրանունը, երբ նրա ճանապարհորդությունը անցնում էր ադրբեջանական՝ Էրիվանի (ըստ Ի. Ի. Շոպենի¹ ուսումնասիրության՝ Հայկական մարզի կենտրոն Էրիվան քաղաքին տեղաբնիկները՝ հայերը կոչում էին Էրեվան)², Նախիջևանի, Ղարաբաղի և Գանջայի խանությունների տարածքներով և չհիշատակել Ադրբեջանի մասին: Ընդ որում, Հայկական

արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 82-90, **Մխիթարյան Վ., Դավթարյան Գ.**, «Սևանա լճի ավազանի քարտեզը Հայաստանում՝ գծահանված ռուս ինժեներների կողմից 1832 թ.»՝ որպես պատմական սկզբնաղբյուր // «ՀՀ», 2019, թիվ 3, էջ 35-48:

¹ Ի. Ի. Շոպեն (1798-1870), ռուս (ծագումով ֆրանսիացի) պետական գործիչ, ազգագրագետ և պատմաբան: 1829-1832 թթ. զբաղվել է Հայկական մարզի (Էրեվանի և Նախիջևանի խանություններ) մանրամասն ուսումնասիրությամբ՝ նյութեր հավաքելով ապագա գրքի համար: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել նրա կատարած ուսումնասիրությունը: 1840 թ. նրա «Հայկական մարզի կամերալ նկարագրություն» աշխատությունը արժանանում է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ազգագրագետների դրական կարծիքին (գրախոսներ Ս. Ի. Բրոսսե և Պ. Ի. Կեպպեն), իսկ այնուհետև Ս. Պետերբուրգի կայսերական գիտությունների ակադեմիայի Դեմիդովյան պարգևին: 1830 թ. նա ստանձնել է Հայկական մարզային կառավարման խորհրդականի պաշտոնը: 1833 թ. եղել է Հայկական մարզի եկամուտների և պետական գույքի դեպարտամենտի նախագահը, իսկ այնուհետև աշխատել է որպես Այսրկովկասյան երկրամասի գլխավոր կառավարչի՝ հաստիկ հանձնարարությունների գծով պաշտոնյա: 1838 թ., տեղափոխվելով Սանկտ Պետերբուրգ, աշխատանքի է անցել Պետական գույքի նախարարությունում: 1840 թ. ի վեր եղել է Ներքին գործերի նախարարության վիճակագրական վարչության թղթակից անդամ // https://ru.wikipedia.org/wiki/Шопен,_Иван_Иванович (հասանելի էր 22.07.2020 թ.):

² См. у Шопен И. И., Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПб., 1852, с. 463:

մարզ ասելով նա նկատի ունի միայն Էրեվանի խանությունը, որը ճիշտ չէ¹:

Հողվածագիրը՝ բարձր գնահատելով Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատությունները, այնուհանդերձ բացահայտ մեղադրանքներ է հնչեցնում նրա հասցեին և նրան պարսավում կողմնակալության մեջ. «Ըստ երևույթին, ով վճարում է, նա և երաժշտությունն է պատվիրում,– գրում է նա, – քանի որ նկարների, սխեմաների և քարտեզների հրապարակելու հնարավորությունը, հսկայական շքեղ Ատլասի տեսքով, ամբողջովին Ռուսաստանի կառավարության և անձամբ Նիկոլայ I-ի վաստակն է»²:

Հասկանալի է, որ ըստ Օ. Բուլանովայի՝ վերոհիշյալ տողերը առաջին հերթին ուղղված են «վճարող և երաժշտություն պատվիրող» կողմին՝ ռուսական իշխանություններին, հանձին Նիկոլայ I-ի: Ցարի՝ Դյու Բուա դը Մոնպերոյին աջակցելու փաստը պայմանավորել «խեղճ ադրբեջանցիների» հանդեպ կազմակերպված ու իրականացված երկկողմ՝ ռուսական կառավարության և մեծանուն ճանապարհորդի միջև կնքված «դավադրությամբ», չակնարկելով անգամ դրա դրդապատճառները, մեղմ ասած, անհեթեթություն է: Իսկ այդ «դավադրության» մյուս շահառու կողմը, ըստ Օ. Բուլանովայի՝ «եզրահանգումների», ինչպես հասկանում ենք, հայկական կողմն է:

Եվ այն, որ «Ատլասի» տպագրության ծախսերը հոգացել է ռուսական իշխանությունը, իսկ հրատարակված «Ճանապարհորդությունն» ու «Ատլասը» արժանացել են ռուսական կայսեր բարձր գնահատանքին, բացարձակապես հայտնի փաստեր են³: Ավելին, Դյու Բուա դը Մոնպերոյի ստեղծագործությունները, ինչպես արդեն նշեցինք, պակաս գնահատանքի չեն արժանացել Փարիզում, Լոնդոնում և Բեռլինում, և կարծես թե հողվածագիրը դրան ևս տեղյակ չէ:

Իսկ այն հանգամանքը, որ Դյու Բուա դը Մոնպերոյի գիտաճանաչողական ուղևորության անվտանգ իրականացմանը նպաստել են նաև տեղական իշխանությունները, այդ մասին են վկայում նաև հեղինակի գրառումները⁴:

Ինչ վերաբերում է Դյու Բուա դը Մոնպերոյի «ուղեկցորդներին, էսկորտներին և պահակախմբերին» (проводники, эскорты, конвой), տեղեկացնենք, որ նա Հայաստան երկրի մասին նրանցից տեղեկություններ ստանալու որևէ կարիք չունեւ: Բավական է ծանոթանալ նրա աշխատություններին, և պարզ կդառնա, որ նա ոչ միայն լավ տիրապետում էր այդ տեղեկատվությանը,

¹ Ըստ 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի՝ ռուս-պարսկական պետական սահմանագիծը հարավում հաստատում է Արաքս գետը: Պարսկաստանը պաշտոնապես ճանաչում է Էրեվանի ու Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին: Իսկ 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի հրամանագրով Արևելյան Հայաստանի նոր գրավված տարածքներում կազմավորվում է Հայկական մարզ (Армянская область) վարչական միավորը (1828-1840 թթ.)՝ Էրեվան (Էրիվան, Երևան) կենտրոնով:

² Տե՛ս **Буланова О.**, նշվ. աշխ.:

³ Տե՛ս **Jeanneret F.A.M., et Bonhôte J.H.**, նշվ. աշխ., էջ 279-280:

⁴ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., հ. I, էջ XI:

այլն ճանապարհորդությունից առաջ բավականին լուրջ ուսումնասիրել էր տեղաբնիկների պատմությունն ու մշակույթը, որին քաջատեղյակ էր: Ավելին, նյութը շարադրելիս նա շրջանառության մեջ է դրել եվրոպական և այլ բազմաթիվ սկզբնաղբյուրներ¹:

Դյու Բուա դը Մոնպերռյի 1834 թ. տարածաշրջան այցելելուց ընդամենը մի քանի տարի առաջ՝ 1829-1832 թթ., «Հայկական մարզ»² նորաստեղծ վարչական միավորի մասին բազմակողմանի և հավաստի վիճակագրական տեղեկատվություն ստանալու նպատակով ցարական կառավարության հանձնարարությամբ Ի. Ի. Շոպենի գլխավորությամբ սկսվում են Հայկական մարզի նկարագրության աշխատանքները: Ռուս պատասխանատու պաշտոնյան «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին՝ այն Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակաշրջանում»³ աշխատությունը շարադրելիս, Հայկական մարզին վերաբերող պաշտոնական ամբողջական տեղեկատվությունից զատ, փնտրտել, գտել և թարգմանել է Այսրկովկասի մասին եղած աշխատությունները, իսկ անհրաժեշտության դեպքում գրականություն է ձեռք բերել Փարիզից, Սանկ-Պետերբուրգից և Մոսկվայից, որոնց շնորհիվ կարողացել է շարադրել Հայաստանի պատմության, աշխարհագրության, ազգագրության և հնագիտության բաժինները⁴:

Ի. Ի. Շոպենն իր աշխատության առաջին գլուխը վերնագրում է այսպես. «Մեծ Հայքի հնագույն աշխարհագրության կարճ նկարագրություն»: Այն սկսվում է հետևյալ պարբերությամբ. «Երկիրը, որը հայտնի է Հայաստան անվամբ, իրենից ներկայացնում էր երբեմնի բավական հզոր պետություն, որը երկարությամբ՝ 1,500 վերստ (1,600 կմ – Վ. Մ., Գ. Ղ.) ձգվում էր Եփրատ գետից մինչև Կուր և Կասպից ծով, իսկ լայնությամբ՝ 1,200 վերստ (1,280 կմ – Վ. Մ., Գ. Ղ.)՝ Լազերի երկրից, Կովխիդայից, Կովկասյան լեռներից և Իբերիայից մինչև Դիարբեքիի հարավային սահմանները: Այս ընդարձակ երկիրը, որը ներառում է շուրջ 1,800,000 վերստ² (2,048,400 կմ² – Վ. Մ., Գ. Ղ.) տարածք, հնագույն ժամանակներից բնակեցված է հայերով: Հայրենիքին համակած դժբախտություններից ստիպված՝ նրանք հաճախ տեղահանվում էին ամբողջ բնակավայրերով և փոխարինվում Փոքր Ասիայում փոխ առ փոխ գերիշխող տարբեր ժողովուրդների նոր վերաբնակներով»⁵:

Իսկ Մեծ Հայքի թագավորության տեղադիրքը և սահմանները նկարագրելիս նա գրում է. «Մեծ Հայքը արևմուտքից սահմանակցել է Փոքր Հայքին, որից բաժանվում էր Եփրատ գետով, հարավում՝ Միջագետքին, Ասորեստա-

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., հ. I, էջ XVII-XXV:

² **Մխիթարյան Վ.**, Հայկական մարզի վարչատարածքային բաժանումը (1828-1840 թթ.), տե՛ս քարտեզ 1:

³ **Шопен И. И.**, նշվ. աշխ., 1232 էջ:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ I, III-IV:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 1:

նին և Քրդստանին, որոնցից բաժանվում էր Տավրոսի լեռնաբազուկներով: Արևելքում սահմանակցում էր Պարսկաստանի Ատրպատական (Ադերբայջան) նահանգի և Կասպից ծովի, իսկ հյուսիսում՝ Ալբանիայի (այժմ Շաքի և Շամախի), Իբերիայի (Վրաստան) և Կովխիդայի (Մինգրելիա, Իմերեթիա և Գուրիա) թագավորության և նրա մաս՝ Տրապեզոնդի (Տրապիզոնի – Վ. Մ., Գ. Ղ.) փաշալիքի հետ»¹:

Հայկական մարզի նկարագրության մեջ նշվում է. «Հայկական մարզը զբաղեցնում է պատմական (Մեծ Հայքի թագավորության – Վ. Մ., Գ. Ղ.) Արարատյան և Սյունիքի մարզերի (աշխարհների – Վ. Մ., Գ. Ղ.) մեծ մասը և Վասպուրականի երկու գավառը»²: Մարզն ունի շուրջ 24,000 վերստ² (կամ 27,314 կմ² – Վ. Մ., Գ. Ղ.)³ մակերես: Ընդհանուր պետական սահմանի երկարությունը շուրջ 480 վերստ է (կամ 512 կմ – Վ. Մ., Գ. Ղ.), որից Թուրքիայի հետ սահմանագծի երկարությունը՝ 230 վերստ է (կամ 245 կմ – Վ. Մ., Գ. Ղ.), իսկ Պարսկաստանի հետ՝ 250 վերստ (կամ 267 կմ – Վ. Մ., Գ. Ղ.): Մարզային սահմանի երկարությունը 430 վերստ է (կամ 458,7 կմ – Վ. Մ., Գ. Ղ.): Սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 910 վերստ (կամ 970,7 կմ – Վ. Մ., Գ. Ղ.)⁴:

Վերոհիշյալ աշխատությունների հեղինակները՝ Դյու Բուա դե Մոնպերոն և Ի. Ի. Շոպենը, հիշյալ կամ դրան նախորդող պատմական ժամանակահատվածներին անդրադառնալիս չէին կարող հիշատակել «ադրբեջանցի» կամ «Ադրբեջան» բառերը՝ թեկուզև ցեղի, ցեղային միության կամ առավել ևս մեկ այլ ձևակերպման համատեքստում, քանի որ այն գոյություն չուներ:

Անդրադառնալով Օ. Բուլանովայի հրապարակած երկրորդ «1833-1834 թթ. Ադրբեջանը և Էրիվանը Դյու Բուա դը Մոնպերոյի նկարներում» հոդվածին՝ նշենք, որ այն առաջինի «տրամաբանական» շարունակությունն է բոլոր առումներով, բացառությամբ, որ այստեղ ներկայացված են նաև Դյու Բուա դե Մոնպերոյի «Ատլասից» 11 նկար՝ իրենց «վերնագրերով»:

Տարիների ընթացքում մեր հետազոտությունների շրջանակներում ստեղծել ենք Հայաստանի և Այսրկովկասի ֆրանսերեն քարտեզների՝ դեռևս անտիպ հավաքածու՝ ուսումնասիրելով մասնավորապես Հայաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի ազգային գրադարաններն ու արխիվները: Բարեբախտաբար մեր տրամադրության տակ ունենք ճանապարհորդ և գիտնական Դյու Բուա դը Մոնպերոյի «Ատլասի» այն նկարներն

¹ Տե՛ս Шопен И. И., նշվ. աշխ., էջ 1-2:

² Տե՛ս նույն տեղում, էջ 250:

³ Ի. Ի. Շոպենը, իր աշխատությունում Հայկական մարզի զբաղեցրած մակերեսին անդրադառնալով, գրել է, որ իր հաշվարկով այն զբաղեցնում է մոտ 24,000 վերստ², ինչը հավասար է 27,314 կմ²: Մակայն մեզ հայտնի գրականության մեջ տարածքի մակերեսը տրվում է շատ ավելի փոքր (20,720 կմ², 21,000 կմ²): Տե՛ս նույն տեղում, էջ 353:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 352-353:

ու դրանց իրական վերնագրերի պատճենները, որոնք ներկայացված են հոդվածում:

Այս դեպքում հոդվածագիրը նենգափոխել է Դյու Բուա դը Մոնպերոյի «Ատլասում» տեղ գտած հեղինակային նկարների վերնագրերը՝ ցանկալին ներկայացնելով որպես իրականություն: Օ. Բուլանովան և նրան հովանավորողներն իրենց կեղծիքը կառուցել են ընթերցողի պարզ վստահության և անիրագրելության վրա: Նրանց այդ պարզունակ «հաշվարկների» հենքում այն է, որ «Ատլասը» իրավամբ հազվադեպ աշխատանք է, և շատ քչերին է հասանելի: Ուստի և նման պայմաններում գեղծարարությունները բացահայտելու հնարավորությունը կարող էր հասնել նվազագույնի:

Ուստի քանի որ խոսքը նկարների մասին է, որոշել ենք ներկայացնել Օ. Բուլանովայի նկարների մի մասը՝ իր իսկ կամայականորեն վերափոխած վերնագրերով, որոնց վրա առկա է azerhistory.com էլեկտրոնային հասցեն: Ավելին, զուգահեռաբար ցուցադրելու ենք նկարների բնագրերը՝ իրական վերնագրերով: Կարծում ենք՝ այս մոտեցումը հնարավորություն կընձեռնի ավելի տեսանելի ներկայացնել կեղծիքները:

Այսպես.

Առաջին նկարը Օ. Բուլանովան վերնագրել է «Озеро Севан-Чёйча зимой 1839 года. Эриванское ханство» ձևով: Իրականում, ըստ բնագրի՝ նկարը պետք է ունենար հետևյալ վերնագիրը. «ՏԵՍԱՐԱՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, հայացք Չուբուկլուից¹»² (տե՛ս նկար 1):

Նշենք, որ Օ. Բուլանովան վերնագրում սխալ տարեթիվ է հիշատակել: Դյու Բուա դը Մոնպերոն Հայակական մարզի սահմանը հատել և Սևանա լճի ավազանում է հայտնվել 1834 թ. փետրվարի սկզբներին, այլ ոչ թե 1839 թ.³:

Երկրորդ նկարը Օ. Բուլանովան վերնագրել է «Руины укреплений на реке Араз. Эриванское ханство» ձևով: Իրականում, ըստ բնագրի՝ նկարը պետք է ունենար հետևյալ վերնագիրը. «ՏԵՍԱՐԱՆ ԵՐՈՎԱՆՏԱԳԵՐԴԻ ԱՎԵՐԱԿ-ՆԵՐԻՑ, Արաքսի ափին, Հայաստանում»⁴ (տե՛ս նկար 2): Վերնագրում ակնհայտ երևում է, որ շվեյցարացի ճանապարհորդը իրեն օտարահունչ հայերեն Երվանդակերտ տեղանունը փոքր-ինչ սխալ է տառադարձել, և այն ստացել է Երովանտագերդ ձևը:

Երրորդ նկարը Օ. Բուլանովան վերնագրել է «Руины Джульфы» ձևով:

¹ Չուբուկլու բնակավայրը հայտնի է նաև Ճապոտիկ, Մուրացան, Չիբուխլու ձևերով, այժմ՝ Ծովագյուղ:

Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Սո., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 860:

² Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., II, Série, Pittoresque, Pl. XXXIII:

³ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., III, էջ 288, 314:

⁴ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., II, Série, Pittoresque, Pl. XXXVI:

Իրականում ըստ բնագրի նկարը պետք է ունենար հետևյալ վերնագիրը. «ՏԵՍԱՐԱՆ ՋՈՒԼՖԱՅԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻՑ, Արաքսի ափին (Մեծ Հայք)»¹ (տե՛ս նկար 3): Այս դեպքում ևս Դյու Բուա դը Մոնպերոյի վերնագրում տեղ գտած Մեծ Հայք երկրանունն ու նկարի բնագրում պատկերված խաչքարերը բնավ խոչընդոտ չեն եղել, որ անհեռանկար արատավոր գործելաձև որդեգրած Օ. Բուլանովան չկեղծի սկզբնաղբյուրները:

Օ. Բուլանովայի այս հոդվածում տեղ գտած վերոհիշյալ կանխակալ մոտեցման բացահայտումը և կեղծիքների առկայությունը մեզ հիմք են տալիս չանրադառնալ մյուս ութը նկարների ցուցադրմանն ու մեկնաբանությունը:

Հատկանշական է և բնավ պատահական չէ, որ Դյու Բուա դը Մոնպերոն վերոհիշյալ նկարները մակագրել ու դրանցում օգտագործել է Մեծ Հայք-Հայաստան երկրանվանումները որպես հոմանիշներ՝ հավասարության նշան դնելով դրանց միջև: Վստահ ենք, որ նա հստակ գիտակցել է հայ ժողովրդի, հայոց պետականության և հայկական մշակութային ժառանգության բացառիկ նշանակության դերը համամարդկային քաղաքակրթության ձևավորման գործընթացներում:

Վերոբերյալ երկու հոդվածների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս կարծիք հայտնել առ այն, որ Օ. Բուլանովան շատ վատ է պատկերացնում քննարկվող պատմական ժամանակաշրջանը, ավելին, կարելի է ասել, որ պատշաճ կերպով չի տիրապետում քննարկվող նյութին՝ Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններին: Այդուհանդերձ, նա հրապարակել է «դատողություններ», որոնք շատ հեռու են իրականությունից, ունեն միայն քարոզչական ուղղվածություն և իրենցից որևէ գիտական հետաքրքրություն ու կարևորություն չեն ներկայացնում:

Այս պարագայում մեզ համար հստակ են հոդվածագրի մոտեցումները, դրդապատճառները և նպատակները: Կամայական մեկնաբանելով և նենգափոխելով պատմական իրողությունն ու Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններում առկա փաստերը՝ նա հետապնդել է մի քանի նպատակ.

ա) շրջանառել այն միտքը, թե իբր մինչև XIX դ. 30-ական թվականները Մեծ Հայք-Հայաստան անունով երկիր երբեք գոյություն չի ունեցել,

բ) ստվեր նետել Դյու Բուա դը Մոնպերո գիտնականի և նրա աշխատությունների ճշմարտացիության վրա,

գ) մեղադրել ռուսներին, որոնք իբր, հանուն իրենց շահի և ի նպաստ հայերի, հովանավորել են հանրահայտ գիտնական ճանապարհորդին՝ «պատմական կեղծիքներ» կատարելու դիմաց,

դ) «ապացուցել», որ Ադրբեջանը հնագույն երկիր է, իսկ ադրբեջանցիները բնիկներ են,

ե) Ադրբեջանին ներկայացնել իբրև հնագույն մշակույթ կրող երկիր:

¹ Տե՛ս **Frédéric DuBois de Montperreux**, նշվ. աշխ., II, Série, Pittoresque, Pl. XXXVII:

Քստմենլի ստի ու կեղծիքի նկատմամբ թուրք-թաթարների հակվածությանն է անդրադարձել անգամ Ի. Ի. Շոպենը: Նա գրում է, որ նրանք սովոր են խաբելուն, եթե մինչև անգամ դրանից օգուտ չունեն, անխղճորեն շողոքորթում են, նենգ են և աչքի են ընկնում պատվի մասին օրենքների չիմացությամբ¹:


Ելնելով վերոբերյալից՝ խորհուրդ կտայինք Օ. Բուլանովային, նրա նմաններին և նրանց հովանավորողներին հաջորդ «քերթություններում» ջանք ու եռանդ չխնայել, անպատճառ անդրադառնալ պատմական քառուղիներում աննշան կորսված, երևակայական «Ադրբեջանի և ադրբեջանցիների» հետքերի փնտրտուքներին, գուցե այդ դեպքում թույլ տրված կեղծիքները ճշմարտացիությանը ավելի մոտ լինեն: Սակայն, շատ ենք կասկածում արդյունքին, քանզի թուրք-թաթարները անգամ արհեստավարժորեն կեղծելու մտավոր կարողությունից զուրկ տեսակին են պատկանում:

Կարևորելով Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի աշխատություններում տեղ գտած տեղեկատվությունը Հայաստանի և հայերի մասին, ներկայացնելով վերոհիշյալ պատմական ժամանակաշրջանը, որը հետագայում շրջադարձային սահման դարձավ Այսրկովկասյան տարածաշրջանում ապրող բնիկ ժողովուրդների և այնտեղ ներթափանցած ցեղերի համար, փորձել ենք անաչառ, հավաստի սկզբնաղբյուրների համադրմամբ, բացահայտել թուրք-թաթարական խառնամրոխի, նրանց առաջնորդ Ի. Ալինի և հավաքագրված օտարազգի գրչակների վերոհիշյալ կեղծիքներն ու սուտը, որով ողողել են մերօրյա տեղեկատվական-գիտաֆանտաստիկ դաշտը:


Հավելենք, որ մեր կողմից հրատարակության է նախապատրաստվում մի աշխատություն, որտեղ թարգմանաբար կներկայացվի Ֆրեդերիկ Դյու Բուա դը Մոնպերոյի վեցհատորյա «Ճանապարհորդությունից» ու «Ատլասից» Հայաստանին և հայերին վերբերող ընդգրկուն հատվածը: Հուսով ենք, որ այն իր ուրույն տեղը կգտնի՝ եվրոպացի հեղինակների հայերի և Հայաստանի մասին հրապարակումների շարքում պատմության, աշխարհագրության, տեղանվանաբանության, քարտեզագրության, երկրաբանության, ջրաբանության, կլիմայի, հնագիտության և ազգագրության մասին արժեքավոր ու անաչառ տեղեկություններ պարունակելու շնորհիվ:

¹ Տե՛ս Шопен И. И., նշվ. աշխ., էջ 709-710:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱՏԱՐԱՍԹԱՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (1828-1840 ԹԹ.)



Քարտեզ 1



Озеро Севан-чѣйча зимой 1839 года. Эриванское ханство




VUE DU LAC SEVAN, en ARMEENIE,
prise de Tchouboukhou.

Նկար 1




Руины укреплений на реке Араз. Эриванское ханство





Руины Джульфы



Il Serie Pittoresque.

D. B. de la Haye

dit de l'Araxe à l'Araxe - 1850

Hermann a la Haye

VUE DES RUINES DE DJOULFA,
au bord de l'Araxe (Grande Arménie)

Նկար 3

Вардан Мхитарян, Гоар Гамбарян – К вопросу о вовлечении иностранных «авторов» в информационную войну

В информационной войне, развязанной против Армении и Арцаха, на протяжении долгих лет турки и татары последовательно фальсифицировали, по-своему интерпретировали и подтасовывали исторические факты, выдавали желаемое за действительное. Для того чтобы придать достоверность этим «работам», делается попытка в качестве «авторов» привлечь также и завербованных иностранных писак, которые и выполняют заказ. В статье рассмотрены материалы одного из таких иностранных «авторов статей».

Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan – *On the Issues of Involvement of Foreign “Authors” in the Information Warfare*

In the information warfare unleashed against Armenia and Artsakh for years, the Turkish-Tatars have continuously falsified, arbitrarily interpreted, distorted historical facts, and presented the desired as a reality. In order to give the illusion of credibility to these “works” among the readers, an attempt has been made to involve the collected foreign blotters as “authors”, who will fulfill the undertaken orders. In this article we have discussed the materials of one of such foreign “article writers”.

Ներկայացվել է 20.08.2020

Գրախոսվել է 23.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ

Բանալի բառեր – Վահրամ Գազեցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան վարդապետ, Վանական վարդապետ, Տավուշ գավառ, Խորանաշատի վարդապետարան, Նոր Գետիկ

Բագրատունյաց թագավորության ստեղծումից ի վեր ներքին ու արտաքին բարենպաստ պայմանների շնորհիվ հայ մշակույթը, ճիշտ է՝ որոշ հարկադրական դադարներով, վերելք ապրեց: Այն իր գագաթնակետին հասավ XII-XIII դարերում, որոնք, իրավամբ համարվում են հայ մշակույթի արծաթեդարյան ժամանակաշրջան: Մշակութային այդ վերելքին իր մեծ ավանդը բերեց Մխիթար Գոշի (1130-1213) հիմնադրած ու ղեկավարած Նոր Գետիկի վարդապետարանի ծնունդ Խորանաշատը: Լ. Մելիքսեթ-Բեկի իրավացի դիտարկմամբ՝ «Նոր Գետիկը և Խորանաշատը ԺԳ դարի երկրորդ կեսին հայ գիտական մտքի կենտրոններ դարձան՝ Հաղբատ-Սանահնի փոխարեն»¹:

Խորանաշատի վարդապետարանի հիմնադիրն ու նշանավոր ուսուցչապետը միջնադարյան հայոց գիտամշակութային, հոգևոր ու հասարակական կյանքի խոշորագույն գործիչներից մեկը՝ Վանական վարդապետ Տավուշեցին է (1181-1251): Ղ. Ալիշանի հավանական ենթադրությամբ՝ նա ծնվել է Տավուշ գավառի նույնանուն գյուղում²: Այն համապատասխանում է Տավուշի մարզի Բերդ համայնքի համանուն քաղաքին:

Ապագա ուսուցչապետը նախնական կրթությունը ստացել է Պողոս անունով եղբոր մոտ և քսանամյա հասակում, այն է՝ 1201 թ., օծվել է քահանա³: Դրանից անմիջապես հետո նա ուսումնառությունը շարունակել է Նոր Գետիկի վարդապետարանում՝ դառնալով Մխիթար Գոշի երևելի աշակերտներից մեկը⁴: Մինչ Վանական վարդապետն ուսանում էր, նրա հայրենի Տավուշ գավառը լիովին ազատագրվեց սելջուկյան տիրապետությունից: Դա

¹ Մելիքսեթ-Բեկ Լ., «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, Ս. Էջմիածին, 2016, էջ 250:

² Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1856, էջ 84:

³ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 7433, թ. 263, Գիրք որ կոչի Յայսմաուրբք, Կոստանդնուպոլիս, 1730, էջ ԳՃԽԸ, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց հ. Հակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 39, Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 462 և ուրիշներ:

⁴ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի), Երևան, 1961, էջ 219:

կատարեց Ջաքարյան ավատատիրական տան կրտսեր ճյուղերից մեկը ներկայացնող Բլուզ Ջաքարե Վահրամյանը: 1196-1199 թթ. շարունակելով այդ գավառի ամրություններից Նոր Բերդը գրաված իր հորեղբորորդի Իվանե Ա. Ջաքարյանի սկսած գործը՝ նա 1203 թ. նվաճեց նույն գավառի Տավուշ, ապա Երզնանք բերդերը¹: Այդպիսով, Տավուշ գավառն ամբողջովին ազատագրվեց և ընդգրկվեց Վահրամյանների հզոր իշխանության մեջ: Դա բարենպաստ պայմաններ ստեղծեց Վանական վարդապետի գործունեության, այդ թվում նրա կողմից թե՛ Խորանաշատի վանքի կառուցման և թե՛ դրան կից գործող նույնանուն վարդապետարանի ստեղծման համար:

Նոր Գետիկում ուսումնառությունն ավարտելուց հետո «կատարեալ գիտնական»² դարձած Վանական վարդապետը, իր ուսուցչից վարդապետական գավազան ստանալով, վերադարձավ հայրենի գավառ: Ինչպես շուտով պարզվեց, նա նպատակ ուներ այնտեղ վանական համալիր կառուցել և դրան կից վարդապետարան հիմնելով՝ գիտամանկավարժական ու հասարակական բուռն ու բեղուն գործունեություն ծավալել:

Թե երբ Վանական վարդապետն ավարտեց ուսումնառությունն ու վերադարձավ Տավուշ գավառ, ստույգ հայտնի չէ: Այդուհանդերձ պարզ է, որ դա եղել է վրացական պետության ամիրսպասալար ու մանդատուրթ-ուխուցես Ջաքարե Բ Ջաքարյանի հրամանով 1207 թ. վերջից 1208 սկիզբն ընկած միջակայքում³ Անիում հրավիրված՝ քաղաքական ենթատեքստ ունեցող եկեղեցական ժողովից հետո: Բանն այն է, որ Վանական վարդապետը դրան «յաշակերտի կարգի գոլով» ականատես ու ականջալուր էր եղել⁴:

Եթե նաև նկատի ունենանք, որ այդ ժամանակաշրջանում բարձրագույն կրթարաններում ուսումնառության գործընթացը տևել է յոթ-ութ տարի⁵ և Մխիթար Գոշին՝ քսանամյա հասակում, այն է՝ 1201 թվականից սկսած, Վանականի աշակերտելը, ապա կարող ենք անվարան պնդել, որ նա Նոր Գետիկում ուսումն ավարտել է և Տավուշ վերադարձել ոչ վաղ, քան 1208 թվականին⁶:

¹ Տե՛ս **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 119, Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 392, 399, ծան. 29, Դիվան հայ վիմագրության, պրակ IX, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Մաղումյան, Երևան, 2012, էջ 208:

² Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 7433, թ. 263:

³ Տե՛ս **Թորոսյան Վ.**, Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների թվագրման շուրջ // «Հայոց պատմության հարցեր», թիվ 10, Երևան, 2009, էջ 56, 58:

⁴ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 178:

⁵ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 311:

⁶ Հ. Ոսկյանի կարծիքով՝ Վանականը 1206-1215 թթ. ընթացքում է վարդապետական գավազան ստացել (տե՛ս **Ոսկեան Հ.**, Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 7): Փ. Անթապյանն այս իրադարձությունը թվագրում է 1214-1215 թվականներով, ինչը ևս չի համապատասխանում իրականությանը (տե՛ս **Անթապյան Փ. Փ.**, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, էջ 35):

Վանական վարդապետի կողմից ինչպես Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինարի գյուղից շուրջ 2.5 կմ արևելք «ի թիկանց Գարդմանայ» և «հանդեպ Երզնանից բերդին»¹ Խորանաշատի վանքի հիմնադրման, ինչպես նաև դրան կից վարդապետարան հիմնելու թվականները ո՛չ վիմագիր և ո՛չ գրչագիր սկզբնաղբյուրներում չեն ավանդվել:

Ս. Զալալյանը կարծել է, որ Խորանաշատի վանական համալիրի գլխավոր ու ժամանակագրորեն առաջին շինությունը՝ Ս. Աստվածածին եկեղեցին, սկսել է կառուցվել 1191 թ.²: Հ. Ոսկյանը գտել է, որ դա տեղի է ունեցել 1216 թ. կամ դրանից առաջ³: Կ. Մելիք-Օհանջանյանը Խորանաշատի հիմնարկումը ենթադրաբար, իսկ Վ. Առաքելյանը կառուցումը վստահաբար թվագրել են 1215-1220 թվականներով⁴: Կ. Ղաֆադարյանը, ելնելով Ս. Աստվածածնի պատերին պահպանված արձանագրությունների ժամանակագրական շրջանակից (1211-1222 թթ.), գտել է, որ դրա շինարարությունը տևել է 13-15 տարի, այսինքն՝ սկսվել է 1207-1209 թթ. ընթացքում⁵: Հ. Քարտաշյանն իր հերթին, հիմք ընդունելով Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա դրա կառուցման ծախսը հոգացած ոմն Սերոբի թողած 1211 թվակիր արձանագրությունը⁶, որն այդ կառույցի շինարարական հնագույն վկայագիրն է, և Անիի՝ իր կարծիքով 1205 թ. կայացած եկեղեցական ժողովին որպես Մխիթար Գոշի աշակերտ Վանական վարդապետի մասնակցությունը, հավաստել է, որ այդ «եկեղեցին սկսել է կառուցվել 1206-1210 թթ. արանքում»⁷:

1208 թ. ոչ շուտ հայրենի Տավուշ վերադարձած Վանական վարդապետը չէր կարող դրանից վաղ հիմնարկել Խորանաշատի վանքը՝ ձեռնարկելով նրա Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը: Վահրամյանների ստորակա Մածնաբերդի Կյուրիկյան իշխան Կյուրիկե Գ-ն, որի իշխանության տարածքում էր գտնվում Խորանաշատի վանական համալիրը, 1246 թ. Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին՝ մուտքի գլխին թողած բարձրադիր նվիրատվական արձանագրության մեջ Վանականին հիշատակել է իբրև «ի

¹ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 346:

² Տե՛ս **Զալալեանց Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիֆլիս, 1842, էջ 161:

³ Տե՛ս **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 154:

⁴ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Առաջաբան, էջ ԺԴ // **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարազ Առաքելյանի (այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն), Երևան, 1982, էջ 5:

⁵ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, I, Երևան, 2007, էջ 280:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ **Քարտաշյան Հ.**, Խորանաշատի ճարատարապետական համալիրը // «ԼՀԳ», 1986, թիվ 4, էջ 43:

խամո շինող վանիցս»¹: Կ. Ղաֆադարյանի իրավացի կարծիքով՝ դա «մի գորեղ ապացույց է, որ Վանականի շինությունից առաջ Խորանաշատի տեղում հին ժամանակներից մնացած շինություններ չեն եղել»²:

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ նման մեծածավալ կառույցի շինությունը համապատասխան նախապատրաստական աշխատանքներ էր պահանջում, ապա պետք է արձանագրենք, որ Վանական վարդապետը դրան կարող էր ձեռնամուխ լինել առնվազն 1208 թ. երկրորդ կիսամյակում: Բացի այդ, քանի որ Ս. Աստվածածնի 47.4 մ պարագծով պատերն անկասկած բարձրացվել են մուտքի հետ համաժամանակ, իսկ դրանք վերջինիս բարավորի մակարդակին հասցնելու համար կպահանջվեր առնվազն երկու տարի, ապա այդ կառույցի հիմնվելու ընդունելի ժամանակահատվածը 1208-1209 թվականներն են: Ավելի հավանական է 1209 թ.³:

Ս. Աստվածածնի պատերին պահպանված արձանագրությունների թվագրումից (1211, 1213, 1216, 1218, 1220)⁴ հետևում է, որ դրա շինարարությունն ընթացել է առանց ընդմիջումների և ավարտվել ոչ շուտ, քան 1221 թվականը: Հ. Քարտաշյանը, հիմք ընդունելով Խորանաշատի վանական համալիրի գավթի կառուցումը 1222 թ. սկսված լինելը, գտել է, որ Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունն ամենաուշն ավարտվել է 1221 թ.⁵: Բացի այդ, իբրև ապացույց բերելով 1223-1224 թթ. Խորանաշատում գրչագրված ձեռագրերը, նա պնդել է, որ Ս. Աստվածածին եկեղեցին այդ ժամանակ արդեն գործող էր⁶: Եվ իրոք, նշված ձեռագրերի հիշատակարաններն այս իրողությունը հաստատում են: Սակայն մեր խնդրո առարկա վարդապետարանի հետ կապված՝ հատկապես կարևոր են 1223 թվակիր ձեռագրի գրիչ Ստեփանոս Աղթամարցու թողած երեք հիշատակարանների հաղորդումները: Նա դրանցում հաջորդաբար հայտնում է, որ ժողովածու հանդիսացող այդ ձեռագիրն «ի ձմեռնաին յաւուրս գրեցաւ»⁷, որ ձեռագրի գրչագրումն ավարտվել է «ի տանի Աստուածածնիս, ի վանք Խորանաշատու»⁸, և որ «գրեցաւ Իմաստացոյց բանքս առաջնոց գրաւդաց բնութեան իրաց... ի վանքս Խորանաշատ

¹ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 283:

² Ղաֆադարյան Կ., Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին // Արմֆանի «Տեղեկագիր», 1940, թիվ 3-4, էջ 175:

³ Ժամանակին Անիի եկեղեցական ժողովը 1205-ով թվագրելով՝ Ս. Աստվածածնի շինարարության սկիզբ ենք համարել 1207/1208 թ.: Տե՛ս Շահնագարյան Ա. Ի., Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ 162-163:

⁴ Տե՛ս Ղաֆադարյան Կ., Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, I, էջ 284, 287, 288, 294, 296:

⁵ Տե՛ս Քարտաշյան Հ., նշվ. աշխ., էջ 44:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 136:

⁸ Նույն տեղում:

կոչեցեալ... ընդ[հով]անեաւ մաւրս լուսոյ Աստուածածինս»¹: Բացի այդ, Ստեփանոս Աղթամարցիին երկիցս՝ առաջին և երրորդ հիշատակարաններում հայտնում է, որ ձեռագիրը գրչագրվել է ՌՀԲ (=1223) թվականին²: Ընդ որում, նա «ի տաւնի Աստուածածնիս» ասելով նկատի է ունեցել Ս. Աստվածածնին նվիրված տոներից օգոստոսի 15-ին մերձավոր կիրակի օրը նշվող Վերափոխման տոնը: Ուստի «ի ձմեռնաին ատուրս», այսինքն՝ 1222-1223 թթ. ձմռանը, այն է՝ կամ 1222 թ. վերջին, կամ 1223 թ. սկզբին գրչագրվել սկսված այդ ժողովածուն ստեղծվել է ութ ամսից մի քիչ ավել կամ պակաս ժամկետում: Հետևաբար, Ս. Աստվածածին եկեղեցու 1222 թ. կառուցված լինելը և 1223 թ. գործելը կասկածից վեր են: Նույն կերպ անվիճելի է նաև 1223 թ. Խորանաշատում դպրատան գոյությունը:

Վանական վարդապետը չուներ այնպիսի հզոր հովանավորներ, որպիսիք ուներ նրա ուսուցիչ Մխիթար Գոշը՝ Նոր Գետիկը կառուցելիս³: Նա իր առջև դրված հիրավի խիստ դժվարին խնդիրը լուծելիս ստացավ միայն Բլուզ Զաքարեի որդու ու թոռան՝ Վահրամ Գագեցի և Աղբուղա իշխանների եթե ոչ գործուն օգնությունը, ապա առնվազն բարյացակամությունը: Դրա վկայությունն է թեկուզ այն, որ չնայած Խորանաշատի վանական համալիրը, ինչպես նշվել է, գտնվում էր Մաճնաբերդի Կյուրիկյան իշխանության տարածքում, ոմն Ապստամբի որդի Վասակը Ս. Աստվածածին եկեղեցուն 1213 թ. երկու արտ հող է նվիրել ոչ թե այդ ժամանակ Մաճնաբերդի Կյուրիկյան իշխան Աղսարթանի, այլ Վահրամ Գագեցու և նրա որդի Աղբուղայի «դաւլաթով», այն է՝ թույլտվությամբ⁴: Ինչ վերաբերում է Մաճնաբերդի Կյուրիկյաններին, ապա դատելով մեզ հասած վկայություններից, Խորանաշատի հետ նրանց առնչությունը սահմանափակվել է 1246 թ. Ս. Աստվածածին եկեղեցուն Կյուրիկե Գ-ի չորս սեղան պատարագով միաբանելով⁵ ու դրանից առաջ կամ հետո նրա մայր Բորինայի՝ նույն եկեղեցուն արած նվիրատվությամբ⁶:

Նման պայմաններում շինարարական գործունեություն ծավալելու համար Վանական վարդապետին մնում էր ապավինել նվիրատուների օգնությանը, ինչը, դատելով Խորանաշատի մեզ հասած վիմագրերից, նա ստացավ: Անկասկած, Խորանաշատի վարդապետարանը ևս սկզբում գործում էր հովանավորների տրամադրած միջոցների, իսկ հետագայում նաև վանքապատկան կալվածքներից ստացված հասույթների շնորհիվ:

Ստեփանոս Աղթամարցիին «Առասպելախոս տետ[ր]ակ» կոչված վերոհիշյալ ժողովածուի երեք հիշատակարանում փաստում է դրա գրության

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 137:

² Տե՛ս նույն տեղում, էջ 136, 137:

³ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 210, 211, 215, 216:

⁴ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, I, էջ 287:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 233:

⁶ Տե՛ս նույն տեղում:

Ժամանակ Խորանաշատի վարդապետարանի գոյություն ունենալը: Առաջին հիշատակարանում նա նշում է, որ այն գրվել է «առ ոտս աղփաճեմ <և> աստուածարդիւնական վարդապետիս Վանականի»¹: Դրանից հետո նա ներկայացնում է իր ուսուցչին՝ հավաստիացնելով, որ նա իբրև այդպիսին «ամպ հոգեցաւոյ, հանապազ հոսելով զաստուածաինս և զբանաւորաց ռոռգանէ երկիր»²: Դրանից անմիջապէս հետո Ստեփանոս Աղթամարցին հայտնում է, որ ինքը Խորանաշատի վարդապետարանի կրտսեր սան է՝ «կրտսեր էաք ի լսարան համահանդիսիս»³: Նա երկրորդ հիշատակարանում հայտնում է, որ ժողովածուն գրվել է իր վարդապետ Վանականի կառուցած Խորանաշատի վանքում⁴, իսկ երրորդ հիշատակարանում տեղեկացնում, որ այն գրվել է «ձեռամբ Ստ[ե]փանոս Աղթամարեցւոյ, կրթեալ առ Վանական վ[ար]դապետիս»⁵:

Այս Ժողովածուի արժանահավատ հիշատակարանները նաև օգնում են հնարավորինս ստույգ ճշտելու, թե երբ է հիմնվել Խորանաշատի վարդապետարանը: Դատելով բոլորագիր գրչությամբ 204 թերթանոց (վերջին երեսը դատարկ) այս Ժողովածուի բովանդակությունից (Պլատոնի, Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Գրիգոր Աստվածաբանի երկեր, «Բարոյախոս», «Անուանք հերձուածողաց» և այլն), այն ստեղծվել է Խորանաշատի վարդապետարանում իբրև փիլիսոփայության դասագիրք գործածվելու համար: Դա են հուշում նաև իր երրորդ հիշատակարանում Ստեփանոս Աղթամարցու թողած հետևյալ տողերը. «Գրեցաւ Իմաստացոյց բանքս առաջնոց գրաւղաց բնութեան իրաց, որ ըստ գովի և պարսաւի»⁶:

Ըստ առաջին հիշատակարանի՝ Ժողովածուն գրչագրվելու ժամանակ (1223 թ.) Վանականի՝ իբրև վարդապետի «աղփաճեմ <և> աստուածարդիւնական»⁷ լինելն ու «ի Ժամանակիս որպէս || զաստղ առաւաւտու»⁸ փայլելը վկայում են «ի կողմանց հիւսիսոյ»⁹, այսինքն՝ Հյուսիսային Հայաստանում նրա ունեցած մեծ համբավի մասին: Վանականն այն առաջին հերթին կարող էր ձեռք բերել իր սաների շնորհիվ: Դա իր հերթին ենթադրում է, որ Խորանաշատի վարդապետարանն արդեն շրջանավարտներ էր տվել: Դրա օգտին է վկայում նաև այն, որ Ստեփանոս Աղթամարցին այդ թվականին իբրև Վանականի կրտսեր սան է ներկայանում:

Հետագոտողները Խորանաշատի վարդապետարանի հիմնադրման

¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 136:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 137:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 136:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում:

տարբեր թվականներ են առաջադրել: Հ. Ոսկյանի եզրահանգմամբ դա տեղի է ունեցել հավանաբար 1215-1220 թթ.¹: Նրա հետ համերաշխվել է Կ. Մելիք-Օհանջանյանը²: Փ. Անթապյանը, Նոր Գետիկից Տավուշ Վանականի տեղափոխվելը թվագրելով 1214-1215 թվականներով, գտել է, որ նրա «դպրոցի հիմնադրումը ամենավաղը հասնում է 1214-1215 թվականները»³:

Ստեփանոս Աղթամարցու՝ 1223 թ. Խորանաշատի վարդապետարանի կրտսեր սան լինելը և միաժամանակ Հյուսիսային Հայաստանում Վանական վարդապետի համբավավոր լինելը ստիպում են եզրակացնել, որ յոթ-ութ տարվա ուսումնառության տևողությունն ունեցող այդ կրթօջախը մինչև 1223 թ. մեկ անգամ չէ, որ շրջանավարտներ է տվել: Այդ իրողությունից կարելի է մակաբերել, որ այն հիմնադրվել է 1210-ական թվականների սկզբներին: Դա ամենայն հավանականությամբ կատարվել է Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը հունի մեջ դնելուց և այդ ուսումնական հաստատության անխափան գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուց հետո:

Վանականն անվիճելիորեն ծանոթ էր Նոր Գետիկը կառուցելիս և այնտեղ վարդապետարան հիմնելիս Մխիթար Գոշի փորձին⁴: Անկասկած, նա ևս սկզբում Խորանաշատն ընդգրկող տափարակը կառուցապատել է փայտակերտ եկեղեցով և տարբեր նշանակություն ունեցող աշխարհիկ շինություններով: Իսկ փայտանյութի հայթայթումը դժվար չէր, քանի որ Խորանաշատի շրջակա տարածքն անտառապատ էր, ինչպիսին է այժմ:

Մոնղոլները 1220-1222 թթ. հետախուզական արշավանքի ժամանակ երկու անգամ Վահրամյանների իշխանություն ներխուժելով հանդերձ, Խորանաշատի վանքը չվնասեցին: Դա Վանական վարդապետին հնարավորություն ընձեռեց այնտեղ շարունակել իր անդով շինարարական ու բեղուն գիտամանկավարժական գործունեությունը. այն է՝ Խորանաշատի վանքի կառուցումն ու վարդապետարանի ղեկավարումը: Ըստ Կիրակոս Արևելցու (Գանձակեցու) խմբագրությամբ հայտնի «Հայսմավուրք» ժողովածուի՝ այդ ընթացքում Վանական վարդապետը հռչակվել էր ամբողջ երկրով մեկ և «համբաւ իմաստութե(ա)ն ն(ո)ր(ա) համանգամայն տարածեցաւ ընդ տիեզերս և գային առ նա յամենայն կողմանց և ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութե(ան) և սրբութե(ան) և զգիտութե(ան) ա(ստուա)ծեղէն զրոց և լուսաւորեալք գիտութեամբ գնաին յիւրաքանչիւր տեղիս. և լինէին լոյսք աշխարհաց»⁵: Սակայն շուտով իրավիճակը փոխվեց: Խորեզմշահ Ջալալ ադ-Դինը (1220-1231) շուտով՝ 1225-1231 թթ. դաժանություններով ուղեկցվող

¹ Տե՛ս Ոսկեան Հ., Յովհաննէս Վանական եւ իւր դպրոցը, էջ 7-11:

² Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Առաջաբան, էջ ԺԴ:

³ Անթապյան Փ. Փ., նշվ. աշխ., էջ 35:

⁴ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 211-212, 215-217:

⁵ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 7433, թ. 263-264:

ռազմական գործողություններ վարեց Հայաստանում և հարակից երկրներում: 1229 թ. գարնանն ու ամռանը նա ավելի քան երեք ամիս տևած ավերիչ արշավանք կատարեց Վահրամյանների իշխանության դեմ¹, որի ընթացքում Խորանաշատի վանքն ավերվեց:

Կիրակոս Գանձակեցին, նկատի ունենալով Խորանաշատի վանքն ու Վանական վարդապետին, գրել է, որ «աւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Երգեվանից, ի Ջալալադդին սուլտանին հինից»²: Այս իրողությունը հավաստել են նաև տարբեր խմբագրություններով հայտնի «Հայամավուրք» ժողովածուները³: Վանականն իր սաների հետ ստիպված ապաստանեց Տավուշ բերդի հարավակողմում՝ Լորուտ կոչված գյուղի հանդիպակաց ժայռի գագաթին «իւրովք աշխատութեամբք փորեալ»⁴ քարայրում՝ «Ժողովեալ բազում գրեանս»⁵: Կիրակոս Գանձակեցու՝ իբրև ականատեսի հավաստի վկայությամբ «բազումք գային առ նա, և ուսանէին զբանն վարդապետական ի նմանէ: Եւ իբրև շատացան մարդիկն, հարկ եղև նմա իջանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սենեակս, և անդ դադարեալ էր»⁶: Ինչպես տեսնում ենք, Վանական վարդապետն այստեղ ևս շարունակում էր իր հիմնած ու գլխավորած վարդապետարանի գործունեությունը: Սակայն թե ինչո՞ւ նա 1231 թ. Ջալալ ադ-Դինի անփառունակ վախճանից հետո Խորանաշատ չվերադարձավ՝ հայտնի չէ:

Վանական վարդապետին վիճակված էր Տավուշ բերդի մերձակայքում ևս կարճ ժամանակ՝ ընդամենը յոթ տարի խաղաղ պայմաններում արարել: Վրա հասան մոնղոլական նվաճումները, և Տավուշ գավառի գրավման ժամանակ Վանականի քարայրը⁷, որը «լցաւ արամբք և կանամբք և մանկոք»⁸, պաշարվեց: Դա տեղի ունեցավ 1236 թ. ամռանը՝ Վարդավառի օրը, այսինքն հուլիսի 6-ին: Երեք օր անց, տեսնելով, որ քարայրում ապաստանած

¹ Տե՛ս **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насиви**, Жизнеописание Джалал ад-Дин Манкбурны, перевод с арабского, комментарии, примечания и указатели З. М. Бунятова, Баку, 1973, с. 226:

² **Կիրակոս Գանձակեցի**, էջ 244:

³ Տե՛ս Գիրք, որ կոչի Յայսմաուրք, Կոստանդնուպոլիս, 1730, էջ ԳՃԽԹ, Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, էջ 39, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 7433, թ. 264:

⁴ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 243:

⁵ Նույն տեղում, էջ 244:

⁶ Նույն տեղում:

⁷ Չնայած այս քարայրի գտնվելու վայրի շուրջ շրջանառվող մի քանի վարկածներին՝ այն դեռևս չի տեղորոշվել: Դրա գլխավոր պատճառը քարայրն «ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի» գտնված լինելու մասին այնտեղ ուսանած Կիրակոս Գանձակեցու հստակ ցուցման (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 243-244) կա՛մ շրջանցումն է, կա՛մ լիովին անընդունելի հիմնավորման մերժելու փորձը: Այդ քարայրը պետք է փնտրել անկասկած Տավուշ բերդի հարավակողմում, ինչպես այն տեղորոշել է թե՛ դրա շրջակայքին և թե՛ հորիզոնի կողմերին քաջածանոթ Կիրակոս Գանձակեցին:

⁸ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 244:

մանուկները ծարավից պապակվելով մերձիմահ են և անսալով այնտեղ գտնվածների խնդրանքին, Վանական վարդապետն իր աշակերտներ Մարկոս և Սոսթենես քահանաների ուղեկցությամբ, կյանքը վտանգելով, գնում է մոնղոլ զորավար Մոլար Նոյինի մոտ: Վերջինս Վանականին լսելուց և իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները ստանալուց հետո հայտնում է, որ քարայրում եղածներն իրենց ունեցածով աներկյոյտոլ այնտեղից իջնեն: Մոնղոլները, ի վերջո նրանց աշխարհականներին վերակացուի պաշտպանությանը հանձնելով, ազատում են:

Ընչաքաղցությամբ հայտնի մոնղոլները կողոպտում են ինչպես Վանականի աշակերտներին, այնպես էլ սկզբում նրան հանձնած՝ քարայրում պահված եկեղեցական սպասքն ու արծաթով ընդելուզված երկու ավետարան: Բացի այդ, նրանք գերում են Վանականի աշակերտներին այդ թվում՝ եղբորորդի Պողոսին ու Կիրակոս Գանձակեցուն: Հուսալով եղբորորդուն ու մյուս սաներին ազատել՝ Վանականը միանում է նրանց ու հայտնվում գերու կարգավիճակում: Ի վերջո աշնանը նրա աշակերտներին, բացի երկուսից, որոնց փախչելիս բռնում և սպանում են, հաջողվում է փախուստով փրկվել: Դրանց մեջ էր նաև Կիրակոս Գանձակեցին: Ինչ վերաբերում է Վանական վարդապետին, ապա նրան նույն աշնանն ութսուն դահեկանով փրկագնում են Վահրամյանների իշխանանիստ Գագ բերդի բնակիչները¹:

Անխոնջ ուսուցչապետը դրանից անմիջապես հետո գնում է Խորանաշատ, այն նորոգում և, ճիշտ է, մոնղոլական տիրապետության տակ, բայցևայնպես համեմատաբար խաղաղ պայմաններում շարունակում է վանական համալիրի կառուցապատումը և գիտամանկավարժական ու հասարակական գործունեությունը: Վանականը մինչև կյանքի վերջը Խորանաշատը լքում է երկու անգամ: Նա 1238 թ. գնում է Տփլիս և վերդարձնում 1236 թ. մոնղոլների խլած երկու ավետարաններից մեկը², իսկ 1240 թ. Խաչենի իշխան Հասան-Ջալալի հրավերով մասնակցում Գանձասարի վանքի Ս. Հովհաննես եկեղեցու օծմանը՝ իր ներկայությամբ մեծ շուք հաղորդելով այդ հանդիսավոր արարողությանը:

Պ. Չոբանյանը, Վանական վարդապետին նույնացնելով 1239 և 1240 թթ. Հռոմում գրված երկու հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հիշատակված ոմն Վանականի հետ, կարծել է, թե նա, նախքան Գանձասարի վանք գնալը, հայ գործիչների մի խմբի հետ եղել է այդ քաղաքում³: Իսկ Մ. Մուրաֆյանը, ավանդույթի ուժով Վանականի բուն անունը սխալմամբ Հովհաննես համարելով, Վարդան վարդապետի «Ժղլանք»-ի մի հատվածում հի-

¹ Մանրամասն տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 244-252:

² Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 4823, թ. 155ա:

³ Տե՛ս **Չոբանյան Պ.**, Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանները (XIII դար) // Հայաստանը և Քրիստոնյա արևելքը, Երևան, 2000, էջ 127-129:

շատակված Հովհաննես Տուեցուն նույնացրել է նրա հետ¹։ Դրանից հետևում է, որ Վանական վարդապետը Տիրոջ գերեզմանին այցելելու նպատակով եղել է Երուսաղեմում, ինչը ևս չի համապատասխանում իրականությանը։

Զնայած Կիրակոս Գանձակեցին պնդում է, որ Վանականը մինչև կյանքի վերջը եղել է Խորանաշատի վանահայրը², այդ վանքի գավթի արևմտյան ճակատի 1244 թ. վիմագիրը հավաստում է, որ առնվազն այդ թվականից Խորանաշատի վանահայրությունը վարել է նրա եղբորորդի Պողոսը³։ Ըստ երևույթին նկատի ունենալով առաջացած տարիքն ու Խորանաշատի վանական համալիրի կառուցապատման ավարտին մոտ լինելը՝ Վանականը վանահայրությունը հանձնել էր եղբորորդուն՝ նպատակ ունենալով հիմնականում զբաղվել գիտամանկավարժական և հասարակական գործունեությամբ։ Եվ իրոք նա մինչև իր իմաստալից և արդյունաշատ կյանքի վերջը «զբան վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովեալ էին առ նա յամենայն գաւառաց»⁴ և «լցոյց երկիր աշակերտելաւք»⁵։ Սա ուղղակի վկայում է, որ Խորանաշատի վարդապետարանը հռչակված էր, և այնտեղ սովորելու էին գալիս երկրի տարբեր վայրերից։

Կ. Տեր-Մկրտչյանը, անդրադառնալով միջնադարում Հայաստանի բարձրագույն կրթօջախների վարկի հիմքում ընկած գործոններին, իրավացիորեն նկատել է, որ «մեծ վարդապետի հմտությունից ու վայելած հռչակից մեծապես կախում ունեն հարկավ այն դպրոցի հռչակն ու դիրքը, որ նա ղեկավարում էր»⁶։ Այս առումով խնդրո առարկա վարդապետարանը շահեկան վիճակում էր, քանզի րաբունապետը Վանականն էր, որը Մ. Օրմանյանի անաչառ գնահատմամբ, իր ուսուցիչ Մխիթար Գոշից «ետքը գլխաւոր եւ հռչակաւոր եղած է դարուս Հայ վարդապետերու մեջ»⁷։ Մեծանուն գիտնականի հետ դժվար է չհամաձայնվել՝ մանավանդ հիշելով Կիրակոս Գանձակեցու խոսքերն առ այն, որ Վանականը «վարդապետական բանի քուն գամենեսին, որ ի ժամանակին էին, գերազանցեալ»⁸։

Խորանաշատի վարդապետարանի ուսումնական գործընթացի, ծրագրի և ներքին կյանքի մասին մեզ հասած տեղեկությունները, կցկտուր լինելուց զատ, հաճախ անուղղակի են։ Այդուհանդերձ, դրանց համադիր քննությունը թույլ է տալիս եթե ոչ սպառիչ, ապա գոնե ընդհանուր պատկերացում

¹ Տե՛ս **Մուրաֆյան Մ.**, «Բան հաւատալի» երկի հեղինակի խնդիրը // «Շողակաթ», 1995, էջ 159-161։

² Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, էջ 348։

³ Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, I, էջ 286։

⁴ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 347։

⁵ Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 41։

⁶ **Կարապետ եպիսկոպոս**, Մահմեդական լուծը և նրա բռնության ներքո ծաղկող հայ վարդապետարանները, Էջմիածին, 1913, էջ 10։

⁷ **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, սյունակ 1893։

⁸ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 218։

կազմելու այդ նշանավոր կրթօջախի մասին: Վանականի գործունեության վերջին շրջանում, ինչպես հետևում է Կիրակոս Գանձակեցու խոսքերից, վարդապետարանի պարապմունքներն ընթանում էին Խորանաշատի գավթում¹: Ըստ Գրիգոր Ակներցու՝ Վանականը «ձրի բաշխեր զկերակուրն հոգեւոր, այսինքն զբան վարդապետութեան»², ինչից պարզվում է, որ այնտեղ ուսուցումը ձրի էր: Այդ ուսումնական հաստատությունում ուսանելու համար անհրաժեշտ են եղել նախնական համապատասխան գիտելիքներ: Դրա վկայությունն է այն, որ Ստեփանոս Աղթամարցիին նախքան Վանականի մոտ ուսանելն աշակերտել է իր հորեղբայր տեր Սարգսին³: Ուսումնառության տևողությունը, ինչն արդեն նշվել է, ինչպես ժամանակի համանման կրթօջախներում, այստեղ ևս պետք է տևած լինի յոթ-ութ տարի:

Խորանաշատի վարդապետարանի սաները կրթվել են սկզբում նախնական, ապա բարձրագույն ուսումնական ծրագրերով: Այդ հաստատության ուսումնական ծրագրի նախնական փուլի համառոտ ամփոփումն է Վանականի պահպանված գործերից ամենաարժեքավորը՝ պատշաճ քննությամբ հրատարակության կարոտ «Հարցմունք և պատասխանիք»-ը: Այն ամփոփում է իր ժամանակի հայ իրականության պատկերացումներն ու իմացությունը գիտության այն ճյուղերի մասին (պատմություն, ազգագրություն, աստվածաբանություն, իմաստասիրություն, քերականագիտություն, աստղաբաշխություն, բժշկագիտություն, մատենագիտություն և այլն), որոնք ուսումնասիրության նախնական փուլում պարտավոր էին յուրացնել վարդապետարանի սաները: Նրա մեզ հասած ընդօրինակություններից հնագույնը 1255 թվակիր խորանաշատյանն է⁴: Ուսումնառության հաջորդ բարձրագույն փուլի ծրագրով դասավանդվում էին աստվածաբանություն, պատմություն, իմաստասիրություն, մատենագիտություն, տոմարագիտություն, կենսաբանություն, անատոմիա, բնագիտություն, երաժշտագիտություն, աստղաբաշխություն և այլն⁵:

Այսպիսով, Վանական վարդապետն իր հիմնադրած ու մինչև կյանքի վերջը ղեկավարած Խորանաշատի վարդապետարանի համար կազմել էր ժամանակի ոգուց բխող ուսումնական երկաստիճան ծրագիր: Այն արտացոլում էր ժամանակի հայ իրականությունում մշակույթի ու գրականության աշխարհիկացման միտումը և առաջադրում կրթությունը ժողովրդին մոտեցնելու կյանքի կոչվող գաղափարը: Հետևաբար՝ պատահական չէ, որ գրաբարին հրաշալի տիրապետող մեծ ուսուցչապետն իր աշխատությունների մեծ մասը, հատկապես ուսուցողականները, շարադրել է ժողովրդին մատչելի գրեթե խոսակցա-

¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 347:

² Գրիգոր Ակներցի, Պատմութիւն թաթարաց (այսուհետև՝ Գրիգոր Ակներցի), Երուսաղեմ, 1974, էջ 27:

³ Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 137:

⁴ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 6106:

⁵ Տե՛ս նույն տեղում, ձեռ. թիվ 2101, 2273, 6101:

կան միջին հայերենով: Դրանց թվում էին նրա մեկնողական երկերը, որոնք, Շ. Ոսկյանի հավանական ենթադրությամբ, գրվել էին «իր դասախոսությունների առթիվ աշակերտաց ձեռքը համառոտ ուղեցույց մը տալու համար»¹: Խորանաշատի բարձրագույն դպրոցի ուսումնական լրիվ դասընթացը յուրացրած ուսանողները վարդապետական գավազան էին ստանում:

Ինչպես հայտնի է, հայկական միջնադարյան բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական ուղղվածությունն իբրև կանոն պայմանավորված էր նրա հիմնադիր ուսուցչապետի գիտական հիմնական նախասիրությամբ: Այդ առումով Խորանաշատի վարդապետարանը բացառություն չէր: Այն ուներ պատմագիտական ուղղվածություն, որի հիմքում Վանականի գլխավոր նախասիրությունը՝ պատմությունն էր: Եվ բնավ պատահական չէ, որ XIII դ. հայ նշանավոր պատմիչներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան վարդապետն ու Գրիգոր Ակներցին ուսանել են Խորանաշատի վարդապետարանում՝ կրելով իրենց ուսուցչի պատմագրական հայացքների խոր ազդեցությունը: Գ. Հովսեփյանը Վանականի աշակերտ է համարել նաև Մխիթար Այրիվանեցուն², սակայն, Է. Հարությունյանի ընդունելի պնդմամբ, նա, այդպիսին չլինելով հանդերձ, առնչվել է նրա դպրոցի հետ³:

Խորանաշատի վարդապետարանի սաներ են նաև նշանավոր եկեղեցական գործիչ Առաքելը⁴, Արտազ գավառի թեմակալ և Ս. Թադեի վանքը նորոգող Հովսեփ եպիսկոպոսը⁵, Մելիտինեի (Մալաթիա) սահմաններում գործող Թորոս վարդապետը⁶, Արցախ-Խաչենի մշակութային ու քաղաքական կյանքում զգալի դեր խաղացած Մարկոս վարդապետը⁷, ժամանակակիցների կողմից իր փիլիսոփայական գիտելիքներով Վահրամ Բաբունու հետ համեմատվող Սուրենես վարդապետը⁸, «Հայսմավուրք» ժողովածուներից մեկի խմբագիր Իսրայել եպիսկոպոսը⁹, Ստեփանոս Աղթամարցին¹⁰, իր եղբորորդի Պողոս վարդապետը և ազգական Գրիգորիս վարդապետը¹¹: Նրանք

¹ Ոսկեան Շ., Յովհաննես Վանական եւ իւր դպրոցը, էջ 25-26:

² Տե՛ս Հովսեփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 11:

³ Տե՛ս Հարությունյան Է. Հ., Մխիթար Այրիվանեցի (կյանքն ու ստեղծագործությունը), Երևան, 1985, էջ 30:

⁴ Տե՛ս Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 41, Գրիգոր Ակներցի, էջ 28:

⁵ Նույն տեղում:

⁶ Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 344:

⁷ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 245, 359:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 245:

⁹ Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 369:

¹⁰ Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 136-137:

¹¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 248, 348:

«փայլեին գիտութեամբ որպէս զաստեղս»¹ և «խաչանման բաժանեալ զաշխարհն արեւելից՝ լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ»²:

Անշուշտ, Վանական վարդապետի սաների թիվը նրանցով չի սահմանափակվում: Նաև ինքնին հասկանալի է, որ մեծ մասամբ մեզ են հասել նրանցից առավել նշանավորների անունները: Ինչ վերաբերվում է նրանցից ամենակարկառուններին՝ Վարդան վարդապետին ու Կիրակոս Գանձակեցուն, ապա Խորանաշատի վարդապետարանում նրանց ուսանելու վայրի ու ժամանակի մասին տեղեկություններն անորոշ ու աղքատիկ են: Դա առավել զգալի է Վարդան վարդապետի պարագայում: Անդրադառնալով իր ուսումնառությանը՝ նա բավարարվել է միայն Վանական վարդապետի սանը և Կիրակոս Գանձակեցու ուսումնակիցը լինելու փաստը կարճառոտ հաստատելով՝ գրելով հետևյալը. «Փառաւորեալ հայրն մեր Վանական վարդապետն և հարազատն մեր Կիրակոս վարդապետն»³:

Վարդան վարդապետի կյանքն ու գործունեությունը և դրանց հետ կապված հարցերը շահեկանորեն հետազոտած Փ. Անթապյանը հնարավոր է համարել, որ էրբ Վանականը, ըստ իրեն, 1214-1215 թթ. Նոր Գետիկից մեկնեց Տավուշ՝ իր դպրոցը հիմնելու, նա ևս Կիրակոս Գանձակեցու հետ մեկնել է այնտեղ և աշակերտել նրան⁴: Ապա ելնելով այն հանգամանքից, որ Վարդան վարդապետը 1236 թ. մոնղոլների կողմից Վանականի գերված աշակերտների թվում չի հիշատակվում, Ջալալ ադ-Դինի հրոսակների կողմից Խորանաշատի ավերումը 1229 թ. փոխարեն 1225 թ. թվագրելով, Փ. Անթապյանը կարծել է, թե նա այնտեղից հեռացել է 1225 թ. կամ դրանից առաջ⁵: Քանի որ Վանական վարդապետը Տավուշ է մեկնել ոչ թե 1214-1215 թթ., այլ ավելի վաղ, այդ տարիներին նրանց Տավուշ գնալու հանգամանքը բացառվում է: Բացի այդ, Վարդան վարդապետն ու Կիրակոս Գանձակեցին միասին Նոր Գետիկից Տավուշ կարող էին գնալ ոչ թե Վանականի հետ, այլ նրա կողմից այնտեղ կեցության և ուսումնական գործընթացի համար գոնե նվազագույն պայմաններ ստեղծվելուց հետո, այն է՝ 1210-ական թվականների սկզբին, այսինքն՝ ավելի վաղ, քան 1214-1215 թթ.:

Կիրակոս Գանձակեցու կենսագրականը քննության նյութ դարձրած Կ. Մելիք-Օհանջանյանը ևս, ինչպես արդեն տեսանք, Խորանաշատի հիմնարկումը սխալմամբ 1215-1220 թվականներով թվագրելով, գտնում է, որ նա Նոր Գետիկից Վանականի հետ է գնացել Տավուշ⁶: Սակայն, ինչպես Վարդան վար-

¹ Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., հ. I, էջ 41:

² **Գրիգոր Ակնեքցի**, էջ 28:

³ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 146-147:

⁴ Տե՛ս **Անթապյան Փ. Փ.**, նշվ. աշխ., էջ 35:

⁵ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 35-36:

⁶ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Առաջաբան, էջ ԺԴ:

դապետի օրինակով տեսանք, նա կարող էր այնտեղ գնալ Վանական վարդապետից հետո, այն էլ՝ 1210-ական թվականների սկզբին: Վ. Առաքելյանն իր հերթին, Խորանաշատի կառուցումը 1220 թ. ավարտված համարելով, կարծել է, որ Կիրակոս Գանձակեցին այդ թվականին է փոխադրվել այնտեղ՝ Վանականի մոտ¹: Ի դեպ Կիրակոս Գանձակեցու «բազում ժամանակս կացաք մեք առ նմա ի վարժս կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ»² վկայությունից հնարավոր կլիներ ենթադրել, թե նա Վանականի մոտ ուսանել է միայն այդտեղ, այսինքն՝ 1229-1236 թթ. ընթացքում, եթե Վարդան վարդապետը ևս նրա հետ այնտեղ ուսանած լիներ: Վարդան վարդապետը Խորանաշատի վարդապետարանում ուսումնառությունն ավարտելուց հետո հեռանում է Կայան բերդի դիմաց գտնվող Ս. Անդրեի վանք ու այնտեղ դպրոց հիմնում³, իսկ Կիրակոս Գանձակեցին մոնղոլական գերությունից փախչելուց հետո գնում է իր սկզբնական կրթավայր Նոր Գետիկի վանք ու հաստատվում այնտեղ⁴:

Իրենց ուսուցչի հետ Խորանաշատի վարդապետարանի սաների անձնական ու գործնական կապերը միայն ուսումնառության տարիներով չէին սահմանափակվում: Նրանցից ոմանք իրենց որոշ երկասիրությունների ստեղծմանը կա՛մ ձեռնամուխ էին լինում Վանականի հորդորով, կա՛մ ձգտում էին հավատարիմ մնալ նրա աշխատությունների ոգուն: Օրինակ, Իսրայել եպիսկոպոսը «Հայսմավուրք»-ը խմբագրել է Վանական վարդապետի հանձնարարականով⁵: Վարդան վարդապետն իր «Ժղլանք»-ը երկասիրելիս նախօրինակ է դիտել ու սկզբնաղբյուր ծառայեցրել իր ուսուցչի «Հարցմունք և պատասխանիք»-ը: Անկասկած, Կիրակոս Արևելցին (Գանձակեցին) «Հայսմավուրք»-ի իր խմբագրությունը, իսկ Վարդան վարդապետը «Տոնապատճառի» վերախմբագրումն ու վերակազմումն իրականացրել են իրենց Վանականի հրամանով⁶: Խորանաշատի սաները, օրինակ ունենալով իրենց ուսուցչին, ոչ թե իրական կյանքից կտրված գիտամշակութային կամ հոգևոր գործիչներ էին, այլ հասարակական՝ միաժամանակ լինելով իրենց մայր ժողովրդի կյանքով ապրող և նրա ճակատագրով մտահոգ մտավորականներ:

1251 թ. մարտի 18-ին «անձամբն չափահասակ, մեծերես և փոքրաքիթ, լայնամօրուս և փառահեղ»⁷ Վանական վարդապետի մահվանից հետո Խորանաշատի վարդապետարանի ուսուցչապետությունը ստանձնեց Գրիգորիս վարդապետը⁸: Սակայն նրա օրոք այդ հռչակավոր ուսումնական կենտ-

¹ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, էջ 5:

² Կիրակոս Գանձակեցի, էջ 218:

³ Տե՛ս Անթապյան Փ. Փ., նշվ. աշխ., գիրք Ա, էջ 35, Կիրակոս Գանձակեցի, էջ 311:

⁴ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 252:

⁵ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2189, թ. 211ա:

⁶ Տե՛ս Անթապյան Փ. Փ., նշվ. աշխ., էջ 244:

⁷ Ալիշան Ղ., Հայապատում, էջ 463:

⁸ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 348, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2273, թ. 361բ:

րոնի փառքը սկսեց աստիճանաբար մարել: Դա պայմանավորված էր ոչ միայն մոնղոլական տիրապետության աստիճանական ծանրացման հետևանքով վարդապետարանի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների վատթարացմամբ: Ցավոք, նրա նոր ուսուցչապետը զուրկ էր իր նախորդի գիտամանկավարժական ու կազմակերպական կարողություններից և, որ ոչ պակաս կարևոր է, հեղինակությունից: Խորանաշատի վարդապետարանի փոխարեն մեծ ճանաչում ստացան այն ուսումնագիտական կենտրոնները, որոնցում այս կամ այն կարգավիճակով գործում էին նրա սաները կամ վերջիններիս աշակերտները:

Միջնադարում մեր ժողովրդի գիտամշակութային կյանքում դժվար գերազանցատելի դեր խաղացած այս կրթական հաստատության գործունեության ավարտի գոնե մոտավոր թվականը հայտնի չէ: Այդուհանդերձ վստահաբար կարելի է պնդել, որ Գրիգորիս վարդապետը նրա վերջին ուսուցչապետն էր: Ինչ վերաբերվում է Խորանաշատի վանքին, ապա այն իբրև հոգևոր հաստատություն դեռ երկար շարունակում էր գործել:

Аргашес Шахназарян – Хоранашатский вардапетаран

Основателем и руководителем Хоранашатского вардапетарана до конца своей жизни был средневековый научно-культурный и общественный деятель, вардапет Ванакан Тавушеци (1181-1251). Это образовательное учреждение начало функционировать в начале 1210-х в Хоранашатском монастыре, который построил именно он – вардапет Ванакан. Имея историографический уклон, вардапетаран стал одним из самых выдающихся высших образовательных учреждений Армении. Ряд научных и культурных деятелей учились здесь. Среди них особенно выделялись вардапет Вардан и Киракос Гандзакети. Преемником вардапета Ванакана стал вардапет Григорис. Во времена его правления слава этого образовательного учреждения померкла. Можно констатировать тот факт, что вардапет Григорис был последним руководителем Хоранашатского вардапетарана.

Artashes Shahnazaryan – Vardapetaran of Khoranashat

The vardapetaran of Khoranashat was founded and administered till the end of his life by vardapet Vanakan of Tavush (1181-1251), medieval scientific, cultural and public figure. That educational institution started functioning in the beginning of 1210 in Khoranashat monastery being built by the same Vanakan vardapet. The vardapetaran, having a historical bend, soon became one of the most outstanding higher educational institutions in Armenia. A number of scientific, cultural figures studied there. The most vivid of them were Vardan vardapet and Kuirakos Gandzkaetsi. The successor of the vardapet Vanakan of Khoranashat vardapetaran became Grigoris vardapet. During his administration the glory of that educational institution began to fade. We can state that Grigoris vardapet was the last head of the Khoranashat vardapetaran.

Ներկայացվել է 01.07.2020

Գրախոսվել է 17.07.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ

Բանալի բառեր – Ղուկաս Ա Կարնեցի, Հերակլ, հոգևոր առաջնորդ, կաթողիկոս, կոնդակ, Էջմիածին, Հաղպատի վանք, վիրահայոց թեմ, վրացական իշխանություններ

Ամենայն հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու (1763-1780) մահից հետո կաթողիկոսական գահին զբաղեցնում է Ղուկաս Ա Կարնեցին (1780-1799): Գահակալության սկզբնական շրջանում նրա առաջին քայլերից մեկը հարևան Վրաստանի հետ Սիմեոն Երևանցու օրոք հաստատված բարիդրացիական հարաբերությունների պահպանման շարունակության որդեգրումն էր: Հայոց կաթողիկոսները մշտական դրացիական հարաբերությունների մեջ էին վրացական ու վրացահայ քաղաքական շրջանների հետ և ներկայացնում էին հայ ժողովրդի քաղաքական շահերը հարևան երկրում¹:

Այդ նպատակով Ղուկաս Կարնեցին բազմաթիվ նամակներ է հղում վրացական հոգևոր ու աշխարհական ղեկավարներին՝ Հերակլ արքային (1744-1798) և արքայական ընտանիքի մյուս անդամներին, Մցխեթայի Անտոն կաթողիկոսին ու Ամբակում եպիսկոպոսին, Ախալցխայի Սուլեյման փաշային, Արևմտյան Վրաստանի Սոլոմոն արքային և Մաքսիմե կաթողիկոսին, ինչպես նաև այլոց²: Նամակներում կաթողիկոսը նրանց խնդրում էր բարյացակամորեն վերաբերվել իրենց տարածքներում բնակվող հայերին:

Վրաստանի հետ բարեկամական հարաբերությունների կարևորությունը պայմանավորված էր նախևառաջ այդ երկրում հայ բնակչության ստվարությամբ: Բացի այդ, թիֆլիսահայ երևելիները բազմաթիվ հարցերում օժանդակում էին Մայր Աթոռին և կաթողիկոսներին, իսկ Թիֆլիսի ու վրացահայատակ հայկական տարածքների³ վանքերն ապահովում էին Մայր Աթոռի շա-

¹ Տե՛ս **Բարխուդարյան Վ.**, Հայ ազատագրական շարժման հնդկահայ կենտրոնը // Հայոց պատմություն, հ. 3, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 176:

² Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1780-1785), հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 124, 125, 136, 139, 149-150, 153 (այսուհետև՝ Դիվան...), **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 2013, էջ 102:

³ Բացառապես հայ բնակչությամբ Լոռու տարածաշրջանը կամայականորեն ներառված էր Քարթլի-Կախեթի թագավորության տարածքում: 1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Արևելյան Վրաստանի միջև կնքված «Բարեկամության պայմանագրով» Վրաստանը անցնում է Ռուսաստանի հովանավորության տակ, նրա հետ միասին՝ նաև Լոռին, որով Լոռու հարավային սահմանն է դառնում Երևանի խանու-

հույթի մի մասը¹: Հետևաբար, կաթողիկոսն իր համակ ուշադրության կենտրոնում էր պահում վիրահայոց թեմի² գործունեությունը, տեղեկանում էր տեղի հայերի հոգևոր կյանքին, փորձում կանոնակարգել եկեղեցական հարցերը, կանխել օրինազանց հոգևորականների գործունեությունը և այլն:

Վրացահպատակ հայկական տարածքներում հայկական վանքերի բարեկեցիկ վիճակը բխում էր նաև վրացական իշխանությունների շահերից՝ տեղում հարկատու, ստվար հայ աշխատավոր բնակչություն ունենալու տեսանկյունից³:

Օգտվելով Երևանի խանության և Էջմիածնի քաղաքական ու տնտեսական ծանր իրավիճակից՝ վրացական կառավարությունը միջամտում էր հայոց եկեղեցու ներքին գործերին: Դրան նպաստում էին Հայաստանի հյուսիսային շրջանների բռնակցված լինելը Վրաստանին, ինչպես նաև հայկական թեմերում ներքին անհամաձայնությունները, որոնք անխուսափելիորեն հանգեցնում էին վրացական արքունիքի հետ ներքին հակամարտության:

Այս ամենը նկատի ունենալով՝ Ղուկաս Կարնեցին, որը բազմաբնույթ նամակներ էր ստանում վիճահարույց թեմական տարբեր հարցերի վերաբերյալ, փորձում էր հնարավորինս կարգավորել ծագած խնդիրներն ու հարթել անախորժությունները: Հարկ ենք համարում նշել, որ անհրաժեշտության դեպքում կաթողիկոսը չէր խուսափում անմիջականորեն դիմել վրաց արքային՝ հարթելու համար եկեղեցական վեճերի, Մայր Աթոռին հասանելիք տուրքի, վրացահայերի շրջանում կաթոլիկության դեմ պայքարելու և այլ հիմնախնդիրներ⁴:

Վեճերի պատճառ էր հատկապես վրացահպատակ, անգամ դրանցից դուրս գտնվող հարևան հայկական տարածքների բնակչության թեմական պատկանելության հարցը: Այսպես, օրինակ, ի պատասխան Հաղարծնի վանքի առաջնորդ Մանուելի և միաբան Ավետիս վարդապետի բողոքի, որոնց թեմը Հաղպատի թեմի տնօրինության ներքո էր, կաթողիկոսը դիմում է Հերակլ արքային⁵:

1781 թ. ապրիլին Ս. Աթոռին պատկանող Թիֆլիսի Սահակաշեն եկեղեցում ծագած վեճին միջամտում է նաև Հաղպատի առաջնորդ Իսրայել արք-

թյունը: Տե՛ս Атлас Армянской ССР «Армения накануне присоединения к России (1785-1825 гг.)», Ереван-Москва, 1961, с. 107:

¹ Լոռու մի շարք վանքեր (Հաղպատ, Մանահին, Օձուն) ունեին սեփական գյուղեր, այգիներ, արտեր, ջրաղացներ և այլն, որոնցից տարեկան զգալի եկամուտներ էին ստանում:

² Վիրահայոց թեմի ստեղծման ժամանակաշրջան է համարվում XII դարի 70-ական թթ.: Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, 1964, էջ 97:

³ Միայն Ախթալայի պղնձահանքերը Հերակլին տարեկան հսկայական եկամուտ էին բերում:

⁴ Դիվան..., հ. Ա, էջ 66:

⁵ **Աղանեանց Գ.**, Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 389, Դիվան..., հ. Ա, էջ 300-301:

եպիսկոպոսը: Վանքի հոգևորականները վեհին խնդրում են գրել Հերակլ արքային՝ լուծելու վեճը, ինչը Ղուկաս Կարնեցին կատարում է¹:

1782 թ. մայիսին կաթողիկոսը Հերակլ արքայի որդի Գեորգիին գրում է, որ այլ բնակավայրերից Լոռու բերդ և շրջակայք տեղափոխված հայ բնակիչները ցանկություն չունեն ենթարկվել վիրահայոց թեմին. «Կոնդակ ևս գրեաց սրբազան Վեհն առ Լոռու բերդի և իւր մերձակայից ժողովուրդսն, որք էին՝ ջաւախէթցիք, բիրականցիք և ապարանցիք, որք աղերսանօք և բազմակնիք թղթով խնդրէին առնել զինքեանս տէրունի սրբոյ Աթոռոյս, զի չկամէին լինիլ թեմ Սանահնու (որոյ վիճակ էր Լոռի) և ոչ Հաղպատու, այլ սրբոյ Աթոռոյս կամէին լինիլ տէրունի վիճակ»²: Նույն թվականի մայիսին նշված բնակիչներին նա գրում է, որ նրանք Ս. Աթոռի տէրունական վիճակում են, և ավագ քահանա Աբրահամին կարգում է տեղում Էջմիածնի գործակալ³:

Գործի հայությանն ուղղած գրության մեջ Ղուկաս Կարնեցին հայտնում է, որ տեղի տեր Ղազարի ու տեր Գրիգորի միջև վեճը Ս. Աթոռի միջնորդությամբ հարթված է⁴: Նմանօրինակ դեպքերում նա թեմականներին կոչ էր անում հանդուրժող լինել միմյանց նկատմամբ:

Թիֆլիսի հոգևոր առաջնորդ տեր Մարտիրոսը, Դավիթ վարդապետը և գործակալ տեր Ղազարը տեղի Մուղնու եկեղեցականների հետ բողոք էին գրել Էջմիածին այն մասին, որ տեր Առաքել երեցը նպատակադրվել է այդ եկեղեցուն կից աղոթատուն կառուցել: Կաթողիկոսը 1789 թ. հոկտեմբերին նամակով պահանջում է դադարեցնել գործընթացը: Նա հեզնանքով հարցնում է, թե մի՞թե սակավ է քաղաքի եկեղեցիների թիվը, կամ միգուցե ժողովո՞ւրդն է չափից դուրս շատ, և աղոթատեղիի պակաս կա, որ «...իւրաքանչիւր ոչ ճանաչօղ չափու իւրոյ զքարինս տնկէ եւ զեկեղեցեաց պատին եւս նուազեցուցանէ»⁵: Ղուկաս Կարնեցին զայրանում է, որ կառուցողները դա անում են իրենց համար տոհմական գերեզմանատուն ունենալու նպատակով: Նա համոզմունք է հայտնում, որ եթե կառուցողը շատ կարողություն ունի և ցանկանում է «հոգւոյն զվարձս ստանալ», ապա այժմ, երբ ժողովրդի քանակը շատ հաճախ նվազում է գերեզմարումների հետևանքով, ուրեմն թող «բարեպաշտը» մի քանի գերի ազատի թշնամիներից, ինչը գերադասելի է եկեղեցաշինությունից⁶:

Հայտնի է սակայն, որ կաթողիկոսն իր գահակալության ընթացքում առ-

¹ Դիվան..., հ. Ա, էջ 227:

² Նույն տեղում, էջ 296:

³ Նույն տեղում, էջ 323-324:

⁴ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 4538, թ. 10ա:

⁵ Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1786-1792), հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, 2003, էջ 496:

⁶ Նույն տեղում, էջ 497:

հասարակ ողջունել և օրհնագրեր է հղել եկեղեցիներ կառուցած անձանց: Հնարավոր է, որ արգելման պատճառներից կարող էր լինել նաև այն հանգամանքը, որ վրացահպատակ թեմում եկեղեցիների հովվության և հոգևոր հասույթի հարցերը խնդրահարույց էին դառնում վրացական կառավարության հետ:

Ղուկաս Կարնեցու ուշադրության կենտրոնում էր վանքերի հոգևոր առաջնորդների նշանակման հարցը, քանի որ վերջիններիս բարեխղճությունից ու խոհեմությունից էին կախված ոչ միայն թեմի ու եկեղեցու ղեկավարումն ու պահպանումը, եկեղեցական կարգուկանոնի անխափան գործունեությունը, այլև հոգևոր հարկերը ժամանակին հավաքելն ու էջմիածին հասցնելը, աղանդների դեմ պայքարելը և այլ հարցեր:

Վրացական կողմը ձգտում էր հայկական վանքերում հաստատել իրեն ձեռնտու թեկնածուներ: Ի դեմս վերջինների՝ վրացական կառավարությունն ունենում էր վստահելի գործիչներ, որոնց միջոցով վերահսկում էր հայկական համայնքի հոգևոր գործերը: Կաթողիկոսը, տարբեր հանգամանքներից ելնելով, ստիպված էր լինում ընդառաջել վրացական կողմին և ըստ վերջինիս ցանկության՝ առաջնորդներ կարգել¹:

Նմանօրինակ հարցեր բազմիցս ծագում էին Թիֆլիս քաղաքի հայոց եկեղեցիների շուրջ: Թիֆլիսի թեմը, լինելով վիրահայությանը համախմբող կենտրոն, խիստ կարևոր տեղ էր զբաղեցնում հայոց եկեղեցու նվիրապետությունների շարքում: Թեմը նմանապես կարևոր էր վրացական կառավարության համար՝ տեղի հայությանը վերահսկելու, դրա միջոցով հայոց կաթողիկոսների վրա ներգործելու և այլ նպատակներով: Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդի պաշտոնը դարձել էր հայ-վրացական շահերի բախման կիզակետ:

1790 թ. նոյեմբերին Հերակլին ուղղած նամակում Ղուկաս Կարնեցին հայտնում էր, որ արքան խնդրել էր Թիֆլիսի առաջնորդ նշանակել Մարտիրոս վարդապետին (վերջինիս նա հեռացրել էր և փոխարենը նշանակել Պետրոս վարդապետին): Առաջարկն ակնհայտորեն զայրացրել էր կաթողիկոսին: Վերջինս բավականին կոշտ էր արձագանքել Հերակլի խնդրանքին՝ նախապես խնդրելով չնեղսրտել իր տողերից և կասկածի տակ չդնել իր անկեղծ բարեկամական վերաբերմունքը: Նա հիշեցրել է, որ մինչ այդ արքայի բոլոր առաջարկներն իր կողմից կյանքի էին կոչվել, սակայն Մարտիրոսին առաջնորդ նշանակելը «արտաքոյ է բնիկ սովորութեան Սրբոյ Աթոռոյս»: Հայոց եկեղեցու վարդապետության մեջ ընդունված կարգ էր, որ առաջնորդը վիճակում նշանակվելու ժամկետը լրանալուց հետո միայն կարող էր վերադառնալ էջմիածին: Ղուկաս Կարնեցին մտավախություն ուներ, որ կարգի խախտումը սովորություն կդառնար, և դրանից ժողովուրդն ու

¹ Աղանեանց Գ., նշվ. աշխ., էջ 581 -583, 589, 590, 677:

միաբանները կառնադրվեին¹: Ուստի խնդրել է արքային՝ չորդել շեղվել նախնիների ավանդույթներից ու Ս. Աթոռի սովորույթներից:

Նույն ամսին Թիֆլիսի հայ երևելի մելիք Ավետիքին գրած նամակում կաթողիկոսը դարձյալ մերժում է Մարտիրոս վարդապետին Թիֆլիսի առաջնորդ նշանակելու խնդրանքը²: Մելիքն իր միջնորդագիրն ամենայն հավանականությամբ գրել էր Հերակլի խնդրանքով:

Հայոց եկեղեցու ներքին գործերին խառնվելու ակնհայտ դրսևորում էր Հերակլի խնդրանքը՝ Թիֆլիսի Մուղնու եկեղեցու մահացած ավագ քահանա տեր Աբրահամի փոխարեն նշանակել նրա եղբոր որդուն՝ տեր Գրիգորին: Ղուկաս Կարնեցու տողերից զգացվում է նրա անհանգստությունն ու անհաճ վերաբերմունքը Հերակլի խնդրանքի նկատմամբ: Այնուամենայնիվ, կաթողիկոսը հաստատում է Գրիգորի թեկնածությունը և ուղարկում ավանդական նվերը՝ քահանայական զգեստը: Այդ մասին ելից մատյանում նշված գրանցումից անգամ զգացվում է, որ Ղուկաս Կարնեցին նշանակումն արել է հակառակ իր կամքի. «Թիֆլիսի Մուղնու եկեղեցույ նորոգ աւագ քահանայ տեր Գրիգորին... փիլոն ձգեցաք... այլ ոչ էր կամաւ, այլ սորա նորա միջնորդ արկանելով բազմօք թախանձանօք խնդիր արար...»³:

Նմանօրինակ վերաբերմունք էր դրսևորվում նաև Թիֆլիսից դուրս գտնվող հայկական թեմերի նկատմամբ: Այսպես օրինակ, 1781 թ. նոյեմբերին Ղուկաս Կարնեցու Թիֆլիս հղած նամակից տեղեկանում ենք, որ Գանձակի բնակիչ ոմն Սիմեոն վարդապետ, Գեորգի արքայորդու հովանավորությամբ կամենալով վերականգնել Հովհան Օձնեցի ամայի վանքը⁴, արքայորդու և Թիֆլիսի Կարապետ վարդապետի գործունեություններով եկել էր էջմիածին՝ կոնդակ ստանալու: Ըստ այդմ Սիմեոն վարդապետը պետք է կարգվեր նշված վանքի և շրջակայքի վիճակի առաջնորդ: Կաթողիկոսը խուսափում է կոնդակ տրամադրել, քանի որ վանքը ներառված էր Հաղպատի ու Սանահինի թեմական վիճակում, ինչը կարող էր վեճի առիթ դառնալ: Ղուկաս Կարնեցին հորդորեց վտանգի մասին ծանուցել արքայորդուն, վերջինիս տեղակությամբ հավաքել «զհնագոյն արս կողմանցս» և հարցում անել: Եթե որոշվի, որ այդ քայլը աղմուկի տեղիք չի տա, ապա կոնդակը կտրվի⁵:

1783 թ. Ղուկաս Կարնեցին, Հերակլի խնդրանքին ընդառաջ, Աբրահամ վարդապետին ձեռնադրում է եպիսկոպոս և ուղարկում Սանահինի վանք՝ հոգևոր ծառայության⁶:

¹ Դիվան..., հ. Բ, էջ 573:

² Նույն տեղում, էջ 574:

³ Նույն տեղում, էջ 780:

⁴ Կառուցվել է VIII-XVII դարերում, հայտնի է նաև Սուրբ Հովհաննես անունով, գտնվում է Հայաստանի Լոռու մարզում, Արդվի գյուղի հյուսիսարևմտյան եզրին:

⁵ Դիվան..., հ. Ա, էջ 271-272:

⁶ Նույն տեղում, էջ 370:

1790 թ. նա հանդես է գալիս Էջմիածնի գործակալ, Հաղպատի քահանա Ղազարի պաշտպանությամբ, որն ամբաստանվել էր Հերակլի որդու՝ Դավիթի կողմից: Վերջինս Գորիի բնակիչ տեր Սահակի միջոցով փորձել էր միջամտել Հաղպատի վանքի ու բնակիչների գործերին: Կաթողիկոսը հակադարձում է տեր Ղազարին ներկայացված արքայորդու անհիմն մեղադրանքներին: Այս անգամ հայկական եկեղեցու կյանքին միջամտելու հերթական փորձը նա ջանում է կանխել վրաց Անտոն կաթողիկոսի միջոցով¹:

Ղուկաս Կարնեցու և վրացական կառավարության միջև մշտապես քննարկման առարկա էր եպիսկոպոսական աթոռանիստ Հաղպատի վանքի՝ որպես վիրահայոց թեմի հոգևոր կարևոր կենտրոնի՝ առաջնորդի նշանակման հարցը²: Աստիճանաբար սերտաճելով վրաց ավատատիրական հասարակության մեջ՝ Վրաստանի հայ բնակչությունն իր ազգային դիմագիծը պահպանելու համար դիմում էր առավելապես դավանական համախմբման միջոցին՝ կազմելով Հաղբատի հոգևոր թեմը: Վրաստանում հայ բնակչությունը ենթարկվում էր կա՛մ ուղղակի Էջմիածնի Մայր Աթոռին և ներկայանում իբրև Հաղբատի առանձին համայնք, կա՛մ ընդգրկված էր Հաղբատի թեմում՝ որպես Վրաստանի «լիիրավ» բնակիչ³:

Հետևաբար Վրաստանում և վրացահպատակ հայկական տարածքներում գտնվող հայերը հոգևոր կառավարման առումով բաժանվում էին երկու թեմի՝ Հաղպատի և Էջմիածնի: Դրանցից առաջինը կախում ուներ անմիջապես թագավորից, իսկ երկրորդը՝ Էջմիածնի կաթողիկոսից: Հաղպատի հոգևոր առաջնորդը ընտրվում էր թագավորի կողմից և միայն օծման համար ուղարկվում Էջմիածին⁴:

Այդ ժամանակաշրջանում Հաղպատի աթոռակալության հարցը շաղկապվում է Գանձասարի կաթողիկոսների գահակալության հետ: Հայտնի է, որ Գանձասարի կաթողիկոսի՝ Հովհաննես Հասան-Ջալալայանի (1763-1786) աթոռակալության ընթացքում նրա եղբայր, հակաթոռ Իսրայելը հեռացել էր Գանձակ և վրացական կառավարության միջոցով ձգտում էր գրավել հայրապետական գահը⁵: Վրաց թագավորները ձգտում էին օգնել Աղվանից

¹ Դիվան..., հ. Բ, էջ 514, 614:

² Հաղպատի եպիսկոպոսությունը հիմնադրվել է 1081 թ. Հաղպատում Բարսեղ Ա Անեցու կաթողիկոսական ձեռնադրությունից անմիջապես հետո: Աթոռը միջնադարում առանձնահատուկ դեր է ունեցել Ամենայն Հայոց կաթողիկոսների ընտրության ժամանակ: Հաղպատի եպիսկոպոսական Աթոռին է ենթարկվել վրացահայության զգալի մասը (Քարթլիի և Կախեթի հայությունը):

³ **Չորանյան Պ.**, Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2006, էջ 59:

⁴ Նույն տեղում:

⁵ Հայտնի է, որ մինչև XVI դարը Աղվանից կաթողիկոսները յուրացրել էին Լոռու, Գեղարքունիքի, Կապանի, Աղստնի թեմերը, և միայն այդ դարում են դրանք կրկին դրվում Էջմիածնի

կաթողիկոսների թեկնածուներին, քանի որ դրանով վերահսկողություն կսահմանեին նաև Գանձասարի կաթողիկոսության վրա և հանձինս նրանց կունենային վստահելի ներկայացուցիչներ: Մյուս կողմից դա կարող էր դիտվել իբրև հայոց Աթոռի դեմ հակընդեմ քայլ, ինչը կարող էր վտանգել Էջմիածնի հետ հարաբերությունները:

Դեռևս Սիմեոն Երևանցու հետ համաձայնության գալով՝ Հերակլը Բարայելին կարգել էր Հաղպատի վանքի առաջնորդ՝ արքեպիսկոպոսի հոգևոր աստիճանով: Բայց նա սկսում է կաթողիկոսական գործունեություն ծավալել, ինչը Ղուկաս Կարնեցին փորձում է վրացական կողմի միջոցով կանխել: 1783 թ. նա արքային առաջարկում է կանոնական ավանդույթը խախտող Բարայելին ուղարկել Էջմիածին՝ օրինական կարգով Հաղպատի վիճակի եպիսկոպոս ձեռնադրվելու¹: Կաթողիկոսի նամակները Հերակլ արքային մեղադրական երանգ են ստանում. «Ձի ինչպես ձեր թույլտվությամբ նա այդտեղ արմատացաւ, դա յայդր առ է խանգարեալ զկանոնական ասանդութիւն հարցն առաջնոց: Նոյնպես և մեծութեամբ ձեր վերստին հանել զդա այտի աղաչեմք»²: Ղուկաս Կարնեցու՝ նույն թվականի ապրիլին գրված նամակից տեղեկանում ենք, որ Հերակլը նրա խնդրանքով Հաղպատի վանքի առաջնորդությունից հեռացրել է Բարայելին³: Իրականում, սակայն, արքան Բարայելին հեռացրել էր, քանի որ, ինչպես տեսանք, վերջինս կաթողիկոսական գործունեություն էր ծավալել, ինչը Հերակլը հատուկ հրամանագրով արգելել էր⁴:

Կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի սպանությունից հետո կարճ ժամանակ անց Ղարաբաղի Իբրահիմ խանի ու հայ մելիքների աջակցությամբ Աղվանից կաթողիկոս է հաստատվում Բարայելը⁵: Ղուկաս Կարնեցին 1787 թ. վերահաստատում է Բարայել կաթողիկոսին որպես «միահեծան հայրապետի վերայ տանդ Աղուանից» և հորդորում Շամախու և Նուխու թեմերին ենթարկվել նրան⁶:

Հաղպատի նոր առաջնորդի ընտրության կապակցությամբ կաթողիկոսը Հերակլին ակնարկում է, որ նա պետք է նշանակվի նույն վանքի թեմական-

վերահսկողության տակ: Տե՛ս **Մկրտումյան Լ.**, Գանձակի խանության հոգևոր թեմերը // «Կանթեղ», 2006, էջ 178:

¹ **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 505:

² ՄՄ, ձեռ. 4538, թ. 173բ:

³ Հետագայում Ղուկաս Կարնեցին, անսալով Ղարաբաղի մելիքների միջնորդությամբ, իր համաձայնությունն է տալիս, որ Բարայելը նշանակվի Գանձասարի կաթողիկոս: Տե՛ս **Иоанни-сян А. Р.**, Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, Ереван, 1990 с. 77:

⁴ Դիվան..., հ. Ա, էջ 369:

⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս **Մկրտումյան Լ.**, նշվ. աշխ., էջ 174-176: Տե՛ս նաև Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1786-1792), հ. Բ, էջ 220:

⁶ **Կոստիկյան Բ.**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը հայոց պատմության սկզբնաղբյուր (XVII դարի II կես-XIX դարի I կես): Դոկտորական ատենախոսություն, Երևան, 2017, էջ 179 // <http://etd.asj-oa.am/7464/2/doctor.pdf>

ների՝ «...վիճակայնոց ընտրութեամբն և հաւանութեամբն»: Հետևաբար, նա առաջարկում է, որ Հաղպատի վարդապետները և տեղի Ս. Աթոռի միաբաններն ընտրեն թեկնածու, այդ մասին ծանուցեն արքային, ապա կնքած թղթով նրան ուղարկեն Էջմիածին, ինչից հետո «...ըստ հրամանի քում (Հերակլ արքայի – Հ. Ա.) և ըստ հաճութեան նոցին (Հաղպատի միաբանների – Հ. Ա.) արասցուք»¹:

Սակայն հետագայում ևս Հաղպատի հոգևոր առաջնորդը հիմնականում նշանակվում է վրացական կառավարության պարտադրանքով: Հաղպատի վանքի միաբան Դավիթ վարդապետը Գեորգի արքայորդու միջնորդագրով ուղևորվում է Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: 1783 թ. արքայորդուն գրած՝ Ղուկաս Կարնեցու նամակներում հստակորեն զգացվում է նրա խուսափողական վերաբերմունքը Դավիթին ձեռնադրելու հարցում: Նախ Գեորգի արքայորդու գրության մեջ հստակեցված չէր, թե եպիսկոպոս ձեռնադրվելու դեպքում Դավիթը որ՝ հոգևոր կառույցը պետք է առաջնորդեր: Բացի այդ, նա իր հետ չունեւ ժողովրդի գրություն կամ մահսար², որը, ըստ կանոնի, ձեռնադրվելու ժամանակ պետք է ընթերցվեր եկեղեցում: Հետևաբար, նրա ձեռնադրությունը կանոնազանցության օրինակ կհանդիսանար:

Պարզվում է, որ վրացական կողմը Դավիթին նախապատրաստում էր Հաղպատի վանքի առաջնորդության համար: Թեև կաթողիկոսը համաձայն էր, որ Դավիթը նշանակվի առաջնորդ՝ Իսրայելին Հաղպատից հեռացնելու պայմանով³: Հնարավոր է, որ արքան հենց Դավիթին նշանակելու պատճառով է Հաղպատի առաջնորդի պաշտոնից հեռացնում Իսրայելին:

Զցանկանալով սրել Վրաստանի հետ հարաբերությունները՝ 1784 թ. ապրիլի 19-ին Ղուկաս Կարնեցին Դավիթին Հաղպատի վանքի առաջնորդությունը վարելու կոնդակ է տալիս, որում նշվում է, որ այն տրվում է «հաղպատեցոցն» խնդրանքով: Նույն օրը գրած նամակներում նա այդ մասին տեղեկացնում է Հերակլ արքային և Գեորգի թագաժառանգին⁴:

Դավիթ վարդապետը, սակայն, չի արդարացնում իրեն որպես հոգևոր գործիչ, ավելին՝ նա եպիսկոպոսներ է ձեռնադրում, ինչի իրավունքը չունեւ, իսկ հյուսիսկովկասյան լեզգիների արշավանքներից հետո հեռանում է Թիֆլիս⁵: Վանքը մնում է ամայի ու անբարեկարգ: Վարդապետի վերաբերմունքն

¹ Դիվան..., հ. Ա, էջ 753, 370:

² Մահսար կամ մանսար (արբ.) - համախոսական նամակ, հանրագիր:

³ Աղանեանց Գ., նշվ. աշխ., էջ 504-505:

⁴ Դիվան..., հ. Ա, էջ 414-415:

⁵ Դավիթը Հաղպատի վանքից հեռացել էր հավանաբար 1785-1786 թթ. լեզգիների արշավանքների ընթացքում, որոնց ժամանակ հիմնահատակ ավերվեցին Լոռու մի շարք բնակավայրեր, այդ թվում Հաղպատը, որի բնակիչների մեծ մասը հեռանում է գյուղից: Տե՛ս ՄՄ, ձեռ. 4331, թթ. 69բ-70ա, ձեռ. 4501, էջ 947, **Ոսկերչեան Հ.**, Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար // «Կոռնկ հայոց աշխարհին», 1862, ապրիլ, էջ 281, **Հովհաննես Ղրիմեցի**, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, Վիեննա, 1965, էջ 127-128,

առաջ է բերում Հաղպատի հոգևորականների և տեղի հայ հասարակության դժգոհությունը, որոնք նրա վերաբերյալ կաթողիկոսին բազմաթիվ գանգատաթղթեր են հղում:

1787 թ. ապրիլին Ղուկաս Կարնեցու՝ Գեորգիին գրած նամակից տեղեկանում ենք, որ արքայորդին մինչ այդ բանագնացի միջոցով գրություն էր ուղարկել կաթողիկոսին, որպեսզի նա սաստի դժգոհ բնակչությանն ու հոգևորականներին և պահանջի, որ նրանք ենթարկվեն Դավիթին՝ որպես թեմի առաջնորդի: Կաթողիկոսը խոստանում է հնարավորինս հարթել վեճը: Նաև ստիպված է լինում Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Պետրոս վարդապետին և տեղի հայ երեսելիներին գրած պատասխան նամակում գրել, որ Դավիթի նկատմամբ իրենց անհամաձայնության մասին տեղեկացնեն արքայորդի Գեորգիին¹:

Դավիթ վարդապետը, որը հրաժարվում է վերադառնալ Հաղպատ և զբաղվել վանքի բարեկեցությամբ, բանադրվում է կաթողիկոսի կողմից², ինչից հետո իր հեղինակությունն ու դիրքը վերականգնելու համար դիմում է վրացական արքունիքի միջնորդությանը: Ի պատասխան՝ կաթողիկոսը 1792 թ. հուլիսին Հերակլ արքային հիշեցնում է, որ Դավիթն արքայի խնդրանքով էր եպիսկոպոս ձեռնադրվել և առաջնորդ կարգվել՝ պայմանով, որ նա պարկեշտորեն և խոհեմությամբ առաջնորդի և զբաղվի վանքի բարեկարգմամբ. «...իսկ նա վանիցն զայլոց շինեալ փայտակերտսն ևս քակեալ երեր յայդր յորջ հաստատել ինքեան և զվանքն ամայի թողուլ»³:

Կաթողիկոսը վրացական արքունիքից խնդրում է Դավիթ վարդապետին ուղարկել Մայր Աթոռ՝ նրան ըստ օրինակարգի վանքի և ամբողջ վիճակի առաջնորդ կարգելու:

Ի վերջո, անսալով արքայի միջնորդությանը, կաթողիկոսն ստիպված է լինում Դավիթին եպիսկոպոս վերաձեռնադրել և վերահաստատել վանքի առաջնորդի պաշտոնում, իսկ Հերակլից խնդրում է հրամայել Հաղպատից հեռացած բնակիչներին վերադառնալ գյուղ և վերանորոգել վանքը⁴:

Հաղպատի թեմական հարցերի կարգավորման շրջանակում Ղուկաս Կարնեցին փորձում է ներգրավել Թիֆլիսի հայ երեսելիներին: Մելիք Ավետիքին հղած նրա նամակում մեղադրական երանգ է հնչում. «Զչափս իւրեանց ո՛չ ճանաչողք, զմահսար և զմուճալամայս են շինեալ վասն կրկին հաստատելոյ զանկարգ և զապօրինաւոր կամս իւրեանց, ապա դու ըստ է՞ր ո՛չ իրազեկ լինես առ ի խափանել զթերիւր և զանկարգ արարմանս դոցայ (Հաղպատի

Летопис протоиерея Тер-Огана Воскерчянци // «Кавказская старина», 1873, № 7-8, с. 196, **Լեռ**, Սահմանափեճեր Լօռի, Ախալքալաք, Ղարաբաղ, Աթենք, 1990, էջ 79:

¹ ՄՄ, ձեռ. 4449, թթ. 31ա, 31բ-32ա:

² Դիվան..., հ. Բ, էջ 236-237:

³ **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 580-582:

⁴ Նույն տեղում, էջ 589-590:

հոգևորականների – Հ. Ա.), իսկ եթե քո զգուշացումը չլսեն, մեզ ծանուցիր»¹:

Նշված իրադարձությունների պատճառով Թիֆլիսի և շրջակայքի հայ բնակչության ու հոգևորականների շրջանում սկիզբ առած ներքին հակասությունների հարթման համար կաթողիկոսն անգամ դիմում է Յակոբ Ռեյնեգսին², որպեսզի վերջինս այդ հարցում միջնորդի արքայի առջև³: Դա Ռեյնեգսին առիթ տվեց, որ անհարկի միջամտի Հաղպատի թեմակալ առաջնորդի նշանակման հարցերին⁴:

Դավիթ վարդապետից հետո Հաղպատի առաջնորդության պաշտոնը փորձում է ձեռք բերել Սարգիս Հասան-Ջալալյանը⁵, որը 1798 թ. «սաստկացած խռովության» պատճառով Գանձասարից փախչում է Թիֆլիս⁶: 1799 թ. օգոստոսին Գեորգի արքային (1798-1801) հղած կաթողիկոսի գրածոյից տեղեկանում ենք, որ արքան Սարգիս եպիսկոպոսի միջոցով նամակ էր ուղարկել Ղուկաս Կարնեցուն՝ առաջարկելով Սարգիսին կարգել Հաղպատի վանքի առաջնորդ, թեմի երևելիները ևս մահսար էին գրել այդ մասին⁷:

Ղուկաս Կարնեցին մերժում է՝ պատճառաբանելով մինչ այդ Գանձասարում Սարգսի ինքնագլուխ կաթողիկոս հռչակվելը: Մինչ այդ «Կոնդակ Շուշի, Շամախի, Նուխի, Բաքու, Դերբենդ և շրջակայքը» վերստառությամբ առաջնորդական գրով նա նշված վայրերի ու շրջակայքի հայությանն արգելել էր Գանձասարի հոգևոր առաջնորդ ճանաչել Սարգիսին, որը Գանձակում օծվել էր և կեղծ լուրեր տարածել՝ իբր Գանձասարի կաթողիկոսը վախճանվել է⁸:

Գեորգի արքան սպառնաց, որ կարգելի հայ նվիրակներին⁹ իր երկրի տարածք մուտք գործել¹⁰: Կաթողիկոսը պատասխան նամակում արտահայ-

¹ ՄՄ ձեռ. 4538, թ. 186բ:

² Յակոբ Ռեյնեգսը եղել է ռուս պետական գործիչների գործակալը, որի միջոցով վերջիններս նամակագրական կապ էին պահպանում կաթողիկոսի, վրաց արքաների և այլոց հետ: Այդ նպատակով Ռեյնեգսը քանիցս այցելել էր Էջմիածին:

³ Դիվան..., հ. Ա, էջ 350-351:

⁴ **Иоаннисян А. Р.**, նշվ. աշխ., էջ 77:

⁵ Սարգիս Հասան-Ջալալյանը Հովհաննեսի և Բարայելի եղբայրն էր, որը 1786-1792 թթ. հեռացել էր Գանձասարից: Նա եղբորից հետո 1792 թ. Գանձակում օծվում է կաթողիկոս, բայց չստանալով հայոց կաթողիկոսի և տեղի հայ մեկիքների աջակցությունը, ինչպես նաև հալածանքների ենթարկվելով Իբրահիմ խանի կողմից՝ հեռանում է Լոռի, ապա գնում Թիֆլիս՝ փորձելով վրաց կառավարության օգնությամբ հոգևոր պաշտոն ձեռք բերել: Հետագայում նա դարձյալ վերադառնում է Գանձասար, ստանձնում կաթողիկոսի պաշտոնը (1810-1828):

⁶ **Կոստիկյան Զ.**, նշվ. աշխ., էջ 180:

⁷ **Աղանեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 677:

⁸ ՄՄ, ձեռ. 4424, թ. 112բ:

⁹ Հայ նվիրակը թեմի կողմից գործուղված անձ էր, որը պետք է տվյալ վայրում հավաքեր հոգևոր հարկը, ժողովարարություն,՝ հանգանակություն կատարեր հոգուտ թեմի, զբաղվեր հոգևոր այլ հարցերով:

¹⁰ **Օրմանեան Մ.**, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, հ. Բ, 1914, էջ 3238-3239:

տում է իր վիրավորանքն ու զարմանքը: Նա փաստում է, որ իր 19 տարվա կառավարման ընթացքում շրջապատված լինելով դաժան թշնամիներով՝ ոչ ոքից օգնության չի ստացել, այլ «...միայն Աստուծոյ ողորմութեամբն և տառապեալ ազգիս մերոյ դառն քրտամբքն պահպանեցաւ Սուրբ տունս»¹: Իսկ այժմ, երբ Էջմիածնի վանքը տնտեսական ծանր վիճակում է, նմանօրինակ հարց է դրվում իր առջև:

Ղուկաս Կարնեցուն հավանաբար վիրավորել էր արքայի սպառնագին տոնը: Նա ստիպված կատարում է նրա առաջարկը՝ ելնելով երկրի ու Մայր Աթոռի դեմ նրան չտրամադրելու հրամայականից: Սարգիսին կոնդակ տալով՝ նրան ուղարկում է Հաղպատ, պայմանով, սակայն, որ վերջինս վանքը կառավարի որպես արքեպիսկոպոս՝ առանց կաթողիկոս կոչվելու և կաթողիկոսական կարմիր կնիք գործածելու²: Ռուսաստանի կողմից Գանձակի ու Ղարաբաղի խանությունների նվաճումից հետո Սարգիսը վերադառնում է Գանձասար և զբաղեցնում կաթողիկոսի աթոռը³:

Կաթողիկոսը տալիս է սեփական արարքի գնահատականը. «Լաւ են վերք բարեկամի (վրացիների – Հ. Ա.), քան զկամակոր համբոյրս թշնամոյ»⁴: 1799 թ. սեպտեմբերին Գեորգի արքային հղած նամակում նա հաստատում է, որ Սարգիս եպիսկոպոսը Հաղպատի վանքի առաջնորդ է կարգվել արքայի կամքով⁵:

Ղուկաս Կարնեցու հոգևոր գործունեության մասն են կազմում տարբեր հոգևոր կառույցների բարեկարգման ու տնտեսական վիճակի բարելավման համար ժողովարարության՝ դրամական հանգանակության թղթեր տրամադրելը: Դրանց մի մասը տրվում էր վրացահայ թեմի եկեղեցիներին օգնելու նպատակով: «Կոնդակ ժողովարարութեան վասն Սանահնոյ Սրբոյ Աստուածածնի վանիցն ի վերայ Թիֆլիզու և բոլոր շրջակայիցն» վերնագիրը կրող կոնդակից տեղեկանում ենք, որ երբեմնի ամայի Սուրբ Աստվածածնի վանքը Հերակլ արքայի հավանությամբ վերաբացվել էր: Սակայն այն դեռևս աղքատ էր, արդյունքը՝ սակավ և վերակառուցման համար դրամ էր անհրաժեշտ: Կաթողիկոսը հայ բնակչությանը կոչ է անում հոժարակամ առատ տուրք տալ վանքին⁶:

Թիֆլիսի մելիք Ավետիքը կաթողիկոսից ժողովարարության կոնդակ էր խնդրել Հավլաբարի Ծիրանավոր Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման համար: 1782 թ. օգոստոսի 2-ին գրված կաթողիկոսի նամակից տեղեկանում ենք, որ եկեղեցին ավերվել էր, իսկ այժմ վերաշինվել, և

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. 4538, թ. 82բ:

² **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., էջ 3238-3239:

³ **Կոստիկյան Բ.**, նշվ. աշխ., էջ 180:

⁴ ՄՄ, ձեռ. 4538, թթ. 82ա-82բ:

⁵ Նույն տեղում, թթ. 123բ-124ա:

⁶ Նույն տեղում, թ. 190ա:

միջոցներ էին հարկավոր այն կրկին վերաբացելու համար: Վրաստանի հայությանն ուղղած գրությամբ Ղուկաս Կարնեցին հորդորում է կամավոր ողորմություն տալ եկեղեցուն¹:

Հատկանշական է, որ նմանատիպ կոնդակ նա գրում է նաև 1788 թ. դեկտեմբերին՝ «Կոնդակ մի ժողովարարության ի վերայ Թիֆլիզու, ի Գօրույ եւ ի Կախէթու վասն Ծիրանավոր կոչեցեալ Սրբոյ Աստուածածնի անապատին որ է ի Հալուաբարու դաշտին, որք յամենայնում՝ ամի մի անգամ զկամաւոր ողորմութիւն տացեն այնմ սրբոյ անապատին՝ ի շինութիւն նորին» վերտառությամբ²:

1783 թ. նմանօրինակ կոնդակներ են հղվում Շիրվան, Շամախի, Նուխի և շրջակայքի բնակավայրեր՝ Գորու Ս. Ստեփաննոս եկեղեցուն ի օգնություն, քանի որ եկեղեցու կայքը հրդեհից այրվել էր³: 1784 թ. նոյեմբերին Ղուկաս Կարնեցին կոնդակով դիմում է Վրաստանի հայությանը՝ օգնություն հանգանակելու Հաղպատի վանքի համար՝ այն ազատելու պարտքերից⁴ և այլն:

Ժողովարարության կոնդակները յուրօրինակ սկզբնաղբյուրներ են, որոնցից տեղեկանում ենք ոչ միայն տվյալ հոգևոր կառույցի տնտեսական վիճակի, այլև ամբողջ թեմի կատարած հայապահպան գործունեության, անգամ տվյալ վայրերում կամ երկրում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ:

Կաթողիկոսը բազմիցս ստիպված էր լինում ժողովարարության կոնդակներ տրամադրել Հերակլի և արքայական ընտանիքի մյուս անդամների խնդրանքներով: 1783-1791 թթ. նման կոնդակներ են տրվել Երուսաղեմ ուխտ գնացող կամ տարբեր վայրեր այցելող, սոցիալ-տնտեսական ծանր վիճակում գտնվող, պարտքեր կուտակած վրացի հոգևոր գործիչներին օգնելու, վրացական տարբեր եկեղեցիներ վերանորոգելու և այլ նպատակներով⁵: Դրանք տրվել են հիմնականում Թիֆլիսի, Գորու, Կախեթի, Փամբակաձորի և շրջակայքի հայության անունից:

Գեորգի արքայորդուն, Հերակլ արքային Ղուկաս Կարնեցին բազմիցս գրում է, որ ժողովարարական թղթերը դժգոհություն են առաջացնում բնակչության շրջանում⁶: 1794 թ. նոյեմբերի 23-ին խնդրած հերթական ժողովարարական թղթի առիթով նա Հերակլի թոռ Դավիթ միրզային տեղեկացնում է, որ աղքատության մեջ գտնվող ժողովուրդը զայրացել ու դժգոհել է: «...Մերայինքն ամենայն ի յաղքատութենէ և ի դառնութեանց ժամանակիս նեղեալ գոլով՝ գրեթէ յերես են ելեալ, որոց աւելորդ հրաման հրամայելն վնաս բերէ,

¹ Տե՛ս Աղանեսնց Գ., նշվ. աշխ., էջ 417, Դիվան..., հ. Ա, էջ 335-336:

² Դիվան..., հ. Ա, էջ 425:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 357:

⁴ Նույն տեղում, էջ 480:

⁵ Նույն տեղում, էջ 328, 330-331, 371-372, 422, 507, Դիվան..., հ. Բ, էջ 464, 495, 517, 574, 629:

⁶ Դիվան..., հ. Ա, էջ 155, 302:

քան թէ օգուտ»¹, – գրում է նա՝ այնուամենայնիվ տրամադրելով կոնդակը:

Ղուկաս Կարնեցու նմանօրինակ քայլը Վ. Գրիգորյանը մեկնաբանում է այն բանով, որ նա վախենում էր ժողովրդական գայրության: Մակայն նա իրավամբ չի ժխտում, որ տուրքերի ու հարկերի, եկեղեցական բազմապիսի վճարումների ծանր բեռի տակ եղած աշխատավորները, որոնք խիստ կարիքի մեջ էին, այլևս չէին կարողանում օժանդակություն ցույց տալ թեկուզ կնիքը կրող նրա ժողովարարական կոնդակ բերողներին²: Կարող ենք եզրահանգել, որ ժողովուրդը բացահայտ բողոքում էր, և նրա գայրույթը բնականաբար պետք է ուղղվեր Մայր Աթոռի դեմ, ինչը կաթողիկոսը չէր կարող թույլ տալ:

Բացի այդ, Ղուկաս Կարնեցին ժողովարարության թղթերը տրամադրում էր՝ հաշվի առնելով, որ մերժումները կարող էին բացասաբար անդրադառնալ հայ-վրացական հարաբերությունների հետագա ընթացքի վրա, ինչպես նաև հակասություններ առաջ բերել հայ և վրացի բնակչության միջև: Մյուս կողմից, ինչպես պարզվում է 1785 թ. Հովսեփ Արղությանին գրած նրա նամակից, Վրաստանից եկած և կաթողիկոսից մերժում ստացողները դիմում էին վրացական արքային և վերջինիս միջնորդությամբ երկրորդ դիմումով ձեռք բերում կոնդակները³:

Կաթողիկոսի և վրացական կառավարության միջև հակասություններ էին ծագում նաև Վրաստանում գտնվող հայկական եկեղեցու հետևորդների, այդ թվում՝ ճորտերի նկատմամբ գործադրվող կամայականությունների, հայ եկեղեցապատկան գույքի նկատմամբ ոտնձգությունների և այլ պատճառներով: Կաթողիկոսը հաճախակի էր դիմում վրաց արքաներին՝ վրացահպատակ տարածքներում Ս. Աթոռին պատկանող գույքը այլոց ոտնձգություններից զերծ պահելու, օտարների ձեռքից վերցնելու և Մայր Աթոռին վերադարձնելու, Վրաստանում բնակվող էջմիածնահպատակ ճորտերին հարկերից ազատելու և այլ հարցերով⁴: Ղուկաս Կարնեցու նախաձեռնությամբ՝ վրաց արքայազն Գեորգիի հրամանով վրացահպատակ Միրզա Ահմադը ուղարկվում է էջմիածնի վանք և դառնում կաթողիկոսի գրագիր սպասավորը՝ պարսկերենով գրագրություններ կատարելու համար⁵:

Նա տարբեր առիթներով ստիպված է լինում ճորտության թղթեր հղել վրացահայ անձանց՝ վերահաստատելով, որ էջմիածնի ճորտերի նկատմամբ որևէ մեկը իրավունքներ չունի, ինչպես հռչակում է վրացական օրենքը, և

¹ Տե՛ս Աղանեանց Գ., նշվ. աշխ., էջ 642-643, Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, 1958, էջ 62:

² Գրիգորյան Վ., Ղուկաս Կարնեցու 1786-1792 թթ. նամականին // Դիվան..., հ. Բ, էջ LI:

³ Դիվան..., հ. Ա, 507:

⁴ ՄՄ, ձեռ. 4538, թթ. 123բ-124ա, Աղանեանց Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 683-684:

⁵ Տե՛ս Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Դ, վավ. 52, Երևան, 2008, էջ 386, *նույնի*՝ Մատենադարանի պարսկերեն վավերագրեր..., էջ 91:

հայ ճորտերը տուրքերն ու հարկերը պետք է տեղի առաջնորդի միջոցով փոխանցեն Ս. Աթոռին¹: Ոմանք իբրև Էջմիածնի ճորտեր ներկայանում էին անգամ այլոց ճորտությունից ազատագրվելուց հետո՝ նոր պարտադրանքների ենթարկվելուց խուսափելու նպատակով: Նման խնդրանքներով վրացահայերը բազմիցս դիմել են Ղուկաս Կարնեցուն²:

Բացի նշվածներից, կաթողիկոսը կարողանում էր այլ արտոնություններ կորզել վրաց թագավորներից: Այսպես օրինակ, Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում առկա է Հերակլ Երկրորդի հրովարտակը, որով նա հրամայում է Էջմիածնի հոգևորականներին չանհանգստացնել և անհարկի հարկեր չպահանջել³:

Ինչպես տեսանք, Ղուկաս Կարնեցին ստիպված էր իր գործունեության ընթացքում բազմիցս ընդառաջ գնալ վրացական կողմին: Կարծում ենք, որ դա ուներ ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական դրդապատճառներ: Կաթողիկոսը ձգտում էր չարել հայ-վրացական հարաբերությունները՝ հաշվի առնելով, որ Վրաստանը, լինելով պետականություն ունեցող երկիր, Հայաստանի հարևան միակ քրիստոնյա պետությունը, ինչպես նաև գտնվելով նրա հյուսիսային սահմանում, ի գործ էր պայքարել բազմիցս կրկնվող պարսկական և հյուսիսկովկասյան ժողովուրդների ավերիչ արշավանքների դեմ:

Վրացական պետական և հոգևոր գործիչների միջոցով նա տեղեկանում էր հյուսիսից սպասվող հարձակումների մասին, նրանց հետ քննարկում թշնամիներին դիմակայելու և այլ հարցեր: Եվ վերջապես, Երևանի խանությունը Վրացական պետության հարկատուն էր:

Բացի այդ, հայ-վրացական քաղաքական, տնտեսական և հոգևոր ամուր հարաբերությունները հնարավորություն էին ընձեռում վերահսկել Վրաստանում և վրացահպատակ հայկական տարածքներում գտնվող եկեղեցիներն ու հայ բնակչության հոգևոր կյանքը:

Սակայն, ինչպես տեսնում ենք, չնայած Ղուկաս Կարնեցու ջանքերին՝ պահպանելու հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունները, դրանք երբեմն խիստ վտանգվում էին, որի հիմնական պատճառը հայ հոգևոր կյանքին վրացական կառավարության անհարկի միջամտելու հանգամանքն էր: Վրացական արքունիքը, պահանջներ ներկայացնելով կաթողիկոսին, հաշվի չէր առնում հայ եկեղեցական կարգուկանոնը, ինչը տեղիք էր տալիս ոչ միայն հոգևոր օրենքները խախտելուն, այլև վնասում էր կաթողիկոսի հեղինակությանը:

Ղուկաս Կարնեցու գործունեությունն ուղղված էր տեղի հոգևոր կառույց-

¹ Դիվան..., հ. Բ, էջ 531-132, 657:

² Տե՛ս **Չոբանյան Պ.**, նշվ. աշխ., էջ 58:

³ **Հակոբյան Վ.**, Երևանի խանության XVIII դարի երկրորդ կեսի պատմության հիմնախնդիրները ըստ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի: Թեկ. ատենախոսություն, Երևան, 2019, էջ 18: <http://etd.asj-oa.am/7464/2/doctor.pdf>.

ների բարեկարգմանը, նվիրյալ հոգևորականների նշանակմանը, տարբեր վիճահարույց հարցերի հարթմանը, առհասարակ վերահայոց թեմի վերահսկմանը:

Асмик Амирджанян – *Грузинская епархия Армянской апостольской святой церкви в годы патриаршества Гукаса Карнеци*

В статье раскрываются взаимоотношения Грузинского правительства и Армянской апостольской церкви в годы предстоятельства Католикоса всех армян Гукаса Карнеци (1780-1899). Католикос сыграл важную роль в деле организации прав и обязанностей, духовной жизни армян в Грузино-имеретинской епархии, его усилиями были урегулированы духовные дела епархии. В статье анализируется роль Католикоса в сплочении общины и сохранении духовной, национальной жизни армянского населения. В работе также отражена социально-экономическая деятельность Карнеци, армянская духовная жизнь в этом регионе. Урегулировав административные и духовные дела Грузино-меретинской епархии армянской церкви, Католикос способствовал этим не только благоустройству епархии, но и развитию армяно-грузинских отношений.

Hasmik Amirjanyan – *The Diocese of Georgia of the Armenian Apostolic Church during the Reign of Catholicos Ghukas Karneci*

The article describes the relationship between the Georgian Government and the Armenian Apostolic church during the years of presidency of Catholicos of All Armenians Ghukas Karneci (1780-1899). One of the main activities of Ghukas Karneci was the improving in the religious-administrative regulations of Armenian monasteries and churches in Armenian Diocese of Georgia-Imereti. The article examines the role of Catholicos preserving the spiritual national live of the Armenian population. The article presents also the social-economic activities of Ghukas Karneci, shows the state of the Armenian Church. One of the main activities of Karneci was the administrative regulations of Georgian eparchy of Armenian Church. He made valuable contributions not only for Armenian eparchy but also increased and strengthened Armenian-Georgian relations.

Ներկայացվել է 15.08.2020

Գրախոսվել է 17.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ՀԱՄԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԴԻԱՐԲԵՔԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ 1895 թ.

***Բանալի բառեր** – Արևմտյան Հայաստան, Դիարբեքիր, Տիգրանակերտ, Ամիդ, Գ. Մելիքի, համիդյան կոտորածներ, թալան, բռնի իսլամացում*

1894-1896 թթ. համիդյան կոտորածները Հայոց ցեղասպանության պատմության բաղկացուցիչ և խիստ կարևոր դրվագներից են: Դրանց իրականացման ընթացքն ու մեխանիզմներն ունեն իրենց օրինաչափությունները, որոնց վերհանումը նոր լույս է սփռում արևմտահայության նկատմամբ իրականացված ցեղասպան քաղաքականության վրա: Հետևաբար, հայկական կոտորածների մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ հայերին բնաջնջելու օսմանյան իշխանությունների մտադրությունը չի ձևավորվել երիտթուրքական կառավարության օրոք, այլ ունեցել է իր նախապատմությունը: 1895 թ. Դիարբեքիրի¹ վիլայեթում (նահանգում) կազմակերպված հայկական կոտորածների ընթացքը² ևս պարունակում է մուրթ և պարզաբանման կարոտ հարցեր, որոնք աղերսվում են հատկապես Դիարբեքիր քաղաքում տեղի ունեցած հայերի ոչնչացմանը:

Համիդյան կոտորածների պատմությանն առնչվող բավականին արժեքավոր նյութերի ենք հանդիպում ֆրանսիական «Դեղին գրքում», որտեղ ամփոփված են Ֆրանսիայի արտաքին քաղաքականության արխիվի՝ 1893-1897 թթ. Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի քաղաքականությանն առնչվող և հայկական կոտորածներն անաչառորեն լուսաբանող դիվանագիտական փաստաթղթեր³: Այստեղ զետեղված փաստաթղթերն ավելի են արժևորվում, քանզի թե՛ թուրքական պատմագրության ներկայացուցիչները և թե՛ Հայոց ցեղասպանության եղելությունը ժխտող այլ անձինք, Դիարբեքիր

¹ Հայկական սկզբնաղբյուրներում քաղաքն ու նույնանուն վիլայեթը երբեմն անվանվում են Տիգրանակերտ:

² Մանրամասն տե՛ս **Բաբումյան Ա.**, Արևմտյան Հայաստանի Դիարբեքիր նահանգի հայ բնակչությունը համիդյան կոտորածների տարիներին // «Ցեղասպանագիտական հանդես», 2020, թիվ 8, էջ 45-64:

³ Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire ottoman. 1893-1897, Paris, 1897, Documents diplomatiques. Affaires arméniennes. (Supplément). 1895-1896, Paris, 1897. Այս երկհատոր արժեքավոր ժողովածուի մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը՝ ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ, բարեփոխված հրատարակություն, Երևան, 2011, էջ 27-44:

քաղաքում իրագործված կոտորածները քանիցս ներկայացրել են իբրև գործողություններ, որոնք կյանքի են կոչվել ի պատասխան հայերի «ապստամբության»: Մինչդեռ այս տարածքում օսմանյան կառավարության կազմակերպած և իրականացրած հայկական կոտորածները բացարձակապես ոչնչով չեն տարբերվում Արևմտյան Հայաստանի այլ նահանգներում տեղի ունեցած կոտորածներից:

1895 թ. Դիարբեքիի վիլայեթում և բուն քաղաքում տեղի ունեցած կոտորածների մանրամասներին կարող ենք տեղեկանալ իրադարձությունների ականատես, Դիարբեքիում Ֆրանսիայի փոխհյուպատոս Գուստավ Մեյրիեի զեկուցագրերում, ամերիկացի միսիոներների նամակներում և տեղեկագրերում, ինչպես նաև՝ հայ ականատեսների ու կոտորածներից փրկվածների հուշերում:

Իրավիճակը նախքան կոտորածները

Դիարբեքիի վիլայեթում համիդյան կոտորածներն իրականացվեցին 1895 թ. աշնանը՝ հիմնականում նոյեմբերին, մինչդեռ լուրերը սպասվող արհավիրքի վերաբերյալ բնակավայրերում տարածվել էին ավելի վաղ: Այս մասին դեռևս 1895 թ. մարտի 23-ին Գ. Մեյրիեն գրում է. «Մահմեդականները գրգռված են ավելի, քան երբևէ: Նրանց թշնամանքը բացահայտորեն ի դերն է գալիս անընդմեջ հարձակումների միջոցով, որոնց նպաստում է իշխանությունների և, մասնավորապես, ոստիկանության կոմիսարի դիրքորոշումը»¹: Մայիսին նա արդեն արձանագրում է իրավիճակի շեշտակի վատթարացումը վիլայեթի ամբողջ տարածքում, ինչը պայմանավորված էր քրդերի՝ բոլոր կողմերից՝ Մարդինից, Սլիվանից, Արդանայից, Դիարբեքիի շրջակայքից, կատարվող հարձակումներով²:

Ամռանը Դիարբեքիում խուլերայի համաճարակ բռնկվեց: Ուստի քաղաքի բնակիչները հեռացան իրենց տներից՝ բնակության վայր ընտրելով դաշտերն ու լեռները: Սակայն այս պայմաններում ևս վերը նշված լարվածությունը կար, քանի որ «տերութիւնը առիթ գտնելով սկսաւ քաղաքիս ամէն մի աննշան տեղերը քարանթինա դնելով կեղեքել և մերկացնել քրիստոնեայ անմեղ ժողովուրդը»³: Սեպտեմբերին համաճարակը տեղի տվեց, և քաղաքից հեռացած բնակչությունը, որի ապրուստի միջոցները սպառվել էին, վերադարձավ Դիարբեքի: Այս ժամանակաշրջանում է, որ քաղաքի անդորրը կրկին խաթարվում է, որի պատճառը Մարդինի մյութեսարիֆ Անիս (Էնիս) փաշայի նշանակման փաստն էր իբրև Դիարբեքիի վալի (նահանգապետ):

¹ Տե՛ս **Պողոսյան Վ.**, Գուստավ Մեյրիեն համիդյան կոտորածների մասին // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2004, թիվ 9, էջ 154:

² Նույն տեղում:

³ «Նամակ Թուրքիայէն» // «Արմենիա», 1895, նոյեմբեր 6, էջ 1:

Այս լուրն ավելի սաստկացրեց քրիստոնյաների տագնապը, քանզի նրանք շատ լավ էին հասկանում, որ հայտնվել են մի մարդու ղեկավարության ներքո, որից որևէ լավ բան սպասել չէր կարելի: Հիրավի, նորանշանակ վալին սպառնալիքի տակ ստիպեց, որ նամակ հղվի սուլթան Աբդուլ Համիդ II-ին, որպեսզի տեղի բնակիչները նրան երախտագիտություն և գոհունակություն հայտնեն այդ պաշտոնում իր նշանակման համար: Ժողովուրդը ցասման մեջ էր, ընդ որում խոսքը ոչ միայն հայերի մասին էր, այլև մյուս քրիստոնյաների:

Հետագայում արդեն քրիստոնյաների ընդվզումը տեղական իշխանությունների դեմ պետք է նոր շահարկումների տեղիք տար և մեկնաբանվեր որպես կոտորածներին դրդող պատճառներից մեկը, ինչին կանդրադառնանք ստորև: Առաջնորդական տեղապահ Տեր Եզեկիել վարդապետի գլխավորությամբ տարբեր հարանվանությունների ներկայացուցիչները հավաքվում են Սուրբ Կիրակոս եկեղեցու առաջնորդարանում և կազմում նոր գրություն՝ ուղղված Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանին: Նամակում շեշտվում էր այն փաստը, որ սուլթանին ուղղված նամակը ստորագրվել է սպառնալիքի տակ¹: Սույն նամակը ստորագրում են բոլոր քրիստոնյաների ներկայացուցիչները, այդ թվում՝ կաթոլիկ հայր Անդրեասը, ասորի կաթոլիկների եպիսկոպոսը և այլք: Ժողովուրդը պատասխանի էր սպասում Կոստանդնուպոլսից և մտադիր չէր հանդարտվել, մինչդեռ Տեր Եզեկիել վարդապետին վալին սպառնում է զորքով հանդարտեցնել ժողովրդին²: Վերջապես, երբ ստացվում է պատրիարքի պատասխանն ու հորդորը՝ անցնելու բնականոն կյանքի, ժողովուրդը ցրվում է, և կարծես անդորրը վերականգնվում է: Սակայն արդեն մի քանի օր անց սկսվում են ձերբակալություններ, ընդ որում մուսուլման սրիկաների հետ բանտարկվում են նաև եռապատիկ թվով ավելի հայեր. հոկտեմբերի 9 (21)-ին երաշխավորագրերի դիմաց կառավարությունը բաց է թողնում բոլորին³: Կարծում ենք՝ այս քայլն արդեն կապված էր սպասվող կոտորածների վերաբերյալ տարածվող լուրերի հետ, և կարիք չկար ավելորդ լարվածության մեջ պահել բնակչությանը, հետևաբար բանտարկվածներին ազատ են արձակում:

Հոկտեմբերին, երբ Աբդուլ Համիդ II-ը ստորագրեց Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում բարենորոգումներ անցկացնելու ծրագրի փոփոխված տարբերակը, թե՛ Դիարբեքիր քաղաքում և թե՛ վիլայեթի բնակավայրերում սկսեցին բացեիքաց խոսել սպասվող կոտորածի մասին: Ընդ որում, «Արմենիա» թերթում տպագրված՝ Դիարբեքիրի դեպքերին առնչվող ընդարձակ տեղեկատվության մեջ նշվում էր, որ այդ լուրը բխում է թրքական պաշ-

¹ «Նամակ Թուրքիայէն» // «Արմենիա», 1895, դեկտեմբեր 14, էջ 1: Տե՛ս նաև «Армянский вопрос по документам французской Желтой Книги» // Братская помощь пострадавшим в Турции армянам, отдел II, Москва, 1898, с. 107-108:

² Նույն տեղում, էջ 1-2:

³ «Նամակ Թուրքիայէն» // «Արմենիա», 1895, դեկտեմբեր 14, էջ 2:

տոնական շրջանակներից¹: Պատահական չէ, որ բարենորոգումների ծրագրի ստորագրման լուրի տարածմանը զուգահեռ՝ մուսուլմանները, որոնք չէին թաքցնում ընդգծված ասելությունն ու մոլուցքը քրիստոնյաների և նախևառաջ՝ հայերի նկատմամբ, գնեցին վաճառքում եղած բոլոր զենքերը: Ականատեսներից մեկն այս մասին գրում է. «Հոկտեմբերի 15-ի աշնան ամիսն էր, չարագուշակ լուրերու տարածայնութիւնները աւելի սաստկացան մեզ շրջապատող թուրքերուն եւ քիւրտերուն մէջ, եւ անոնց հրապարակային արտայայտութիւնները բացորոշ կերպով սկսան իրենց ոճրապար պտուղները տալ մեր տառապանքի մտածումներու մէջ»²:

Հոկտեմբերի 30-ին Ֆրանսիայի փոխիշուպատոսն այցելում է վալիին՝ շրջանառվող լուրերի մասին խոսելու, ինչպես նաև որևէ կերպ մարդկանց հանդարտեցնելու խնդրանքով նրան դիմելու համար: Թեև վալին նրան վստահեցնում է, որ մուսուլմանները հանգիստ են, և անձամբ ինքը պատասխանատու է խաղաղության համար, եթե միայն քրիստոնյաները որևէ կերպ չխաթարեն այն, Գ. Մեյրիեն, բնականաբար, չի վստահում նրա խոսքերին և իր կառավարությանը զեկուցում է իրավիճակի վտանգավորության մասին³: Նոյեմբերի 1-ից սկսվում է կոտորածը Դիարբեքիրում, որի ալիքը հենց նույն օրերին տարածվում է նահանգի մյուս բնակավայրերում:

1895 թ. կոտորածը Դիարբեքիր քաղաքում

Այսպես, նոյեմբերի 1-ին լուրեր են տարածվում, որ քաղաքի փողոցներով վազում է մի մուսուլման և կոչ անում մյուսներին՝ հարձակվել քրիստոնյաների վրա: Այդ օրը հայ առևտրականներից շատերը, ինչ-որ կերպ իրազեկվելով իրենց նկատմամբ կազմակերպվող ոճրի մասին, առավոտյան դուրս չէին եկել աշխատանքի: Դիարբեքիրի հայ եկեղեցու առաջնորդը և Գ. Մեյրիեն շտապում են վալի Անիս փաշայի մոտ՝ նրանից պարզաբանում ստանալու համար: Վերջինս վստահեցնում է, որ բոլոր վախերն անհիմն են և ավելին՝ առաջնորդին հորդորում է շրջել շուկայով և բոլոր քրիստոնյաներին հաղորդել, որ որևէ վտանգ չկա⁴: Ցավոք, հենց նույն օրն իրադարձությունները ցույց տվեցին, որ հայերի դեմ կար հատուկ ծրագիր, որի իրագործմանը չխանգարեցին ո՛չ Ֆրանսիայի փոխիշուպատոսի, ո՛չ հայ բնակչության անհանգստությունները: Վալին գնում է մզկիթ, որտեղ արդեն մեծ բազմություն էր հավաքվել. տարօրինակ կերպով այդ օրը մուսուլմանների աղոթքը շուտ է ավարտվում, ինչին հաջորդում է կոտորածը սկսելու հրամանը: Սպանու-

¹ «Նամակ Թուրքիայէն» // «Արմէնիա», 1895, դեկտեմբեր 14, էջ 2:

² **Զախատրեան Վ.**, Հաւաւի ըմբոստ արծիւը. Պ. Արամեանի Յուշատետրից, Նիւ Եորք, 1950, էջ 7:

³ «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 108.

⁴ Նույն տեղում:

թյունները սկսում են “Salavat Mahomed” գոռոցներով. շուկան շրջապատվում է, նախ կոտորվում են փողոցներում եղած հայերը: Հոգևորականի հորդորներին հետևելով՝ մի շարք առևտրականներ բաց էին պահել խանութները, ուստի դարձան կոտորածի առաջին զոհերը: Մյուսները, ովքեր չէին հավատացել պաշտոնյաների խոստումներին և մնացել էին տանը, ապաստանեցին ֆրանսիական հյուպատոսարանում ու կապուցինյան վանքում¹:

Դիարբեքիրում կոտորածը շարունակվում է երեք օր: Երկրորդ օրը սկսում է իսկական արյունահեղությունը: Կոտորածներին, ըստ Գ. Մեյրիեի, մասնակցում էին քաղաքի գրեթե բոլոր մուսուլմանները՝ զինվորները, զափթիենները, շրջակայքի քրդերը: Այս ամբոխը բաժանվել էր խմբերի և համակարգված ձևով շրջում էր քաղաքում, շրջանցելով մուսուլմանների տները՝ ներխուժում քրիստոնյաների տները, դրանք հրկիզում, իսկ բնակիչներին սպանում²: Դիարբեքիրի կոտորածներին է անդրադառնում գերմանացի միսիոներ և հասարակական գործիչ Յոհաննես Լեփսիուսը, որը գրում է. «Քրդերը քաղաք եկան նոյեմբերի 1-ի առավոտյան և միանալով մուսուլմաններին թալանեցին շուկան, հրդեհեցին այն, ապա սկսեցին կոտորել բոլոր ազգությունների քրիստոնյաներին: Քրիստոնյաներին կրակելու գործում մասնակից էին զինվորները, զափթիենները և քրդերը»: Նա համաձայնում է Գ. Մեյրիեի հետ այն հարցում, որ սուտ է, թե իբր քրիստոնյաներն են նախահարձակ եղել, ավելին, ըստ նրա՝ կասկած չկա, որ մուսուլմանները զգուշորեն պատրաստվել են կոտորածին³:

Ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր հանդիսացող՝ կոտորածներից փրկված հայ ականատեսների վկայություններում դեպքերը նկարագրվում են միևնույն ընթացքով, ինչպես օտարերկրացի ականատեսների սկզբնաղբյուրներում: Ըստ «Արմենիա» թերթում տպագրված՝ կոտորածներին առնչվող մի վկայության՝ թուրքերն իրենց աղոթքը այդ օրը շուտ են ավարտել, իսկ քրիստոնյանները փակել են խանութներն ու փակվել տներում: Նոյեմբերի 1-ին քաղաքի գլխավոր մզկիթի՝ Ուլու Ճամիի քարոզիչ Աբաս Հոճան քարոզի վերջում յուրաքանչյուր մուսուլմանի կոչում է սպանել 25 քրիստոնյայի, «եւ նոցա ընչից, ըստացուածոց եւ կնոջ տիրանայ»⁴: Կոչից հետո թուրքերն ու քրդերը հարձակվում են շուկայում գտնվող այն անմիտների վրա, որոնք վստահել էին հարևան թուրքերին ու չէին փակել խանութները: Նրանք սրերով ու կացիններով սպանվեցին խուժանի կողմից հենց փողոցներում: Սպանություններին զուգահեռ թալանվում էին խանութները: Մասնավորապես, հիշատակվում է Ազիմաթ փաշայի մասին, որը ոսկերչանոցից և այլ խանութներից հասցրեց բավական շատ թանկարժեք իրեր ու ոս-

¹ Lord **Warkworth M. P.**, Notes from a Diary in Asiatic Turkey, London, 1898, p. 237.

² «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 109.

³ **Lepsius J.**, Armenia and Europe, London, 1897, p. 11.

⁴ «Տեղեկագիր Տիգրանակերտէն» // «Արմենիա», 1896, փետրուար 8, էջ 2:

կեղեն թալանել: Ի վերջո շուկան հրդեհվում է¹:

Ըստ ականատեսների վկայության՝ քաղաքի ոստիկանության, ժանդարմների, զորքերի մի մասը ևս աջակցում էր խուժանին: Քրդերը երբ փողի ձայն են լսում՝ փորձում են դադարեցնել ավարառությունը և ետ քաշվել, սակայն նրանց ետ են կանչում զինվորները և կոչ անում հրդեհել խանութները և անցնել դրանցում պահված ոսկեղենի, զարդերի թալանին: Ֆաթիհ փաշայի մզկիթից հարձակվողներն ավերել են Աղմազար թաղի քրիստոնյաների տները, որտեղ մի տան մեջ հավաքված 80-ից ավել հայերի մորթել են և խոշտանգել. միայն մի քանի աղջիկների են գերել, իսկ մյուսներին՝ նահատակել²:

Կոտորածի ժամանակ ասորիների Սուրբ Աստվածամայր եկեղեցին, որտեղ ապաստանում է շուրջ 1000 քրիստոնյա, հարձակման չի ենթարկվում, քանի որ ասորիները դիտվում էին որպես պետությանը հավատարիմ ժողովուրդ: Սակայն դա միայն քաղաքում էր, քանզի գյուղերում քրդերը հարձակման ենթարկեցին բոլորին³: Սուրբ Հայրերի վանքում ապաստանել էր շուրջ 3000 մարդ, իսկ ֆրանսիական հյուպատոսարանում՝ շուրջ 1500⁴:

Իշխանությունների ապատեղեկատվությունը

Դիարբեքիի կոտորածների մանրամասների ուսումնասիրությունն առավել կարևորվում է, քանզի որոշ սկզբնաղբյուրներում շրջանառվում է այն վարկածը, թե իբր այդ քաղաքում հայերն են նախահարձակ եղել կամ սաղդել կոտորածը: Թյուրիմացության հիմնական սկզբնաղբյուրը թուրքական պաշտոնական տվյալներն են, որոնք տեղ են գտել նաև ամերիկյան մամուլի էջերում՝ դրանով իսկ ավելի խորացնելով իրականության խեղաթյուրումը: Այսպես, 1895 թ. նոյեմբերի 4-ին, “The New York Times”-ի հրապարակումներից մեկում նշվում է, որ ըստ պաշտոնական տվյալների՝ հայերը Դիարբեքիում հարձակվել են մուսուլմանների վրա, երբ վերջիններս աղոթում էին մզկիթում, արդյունքում երկու կողմից սպանվածներ և վիրավորներ կան: Նաև հիշատակություն կա այն մասին, թե իբր հայերը սպանել են թուրք զինվորականին և նրա ընտանիքի անդամներին, երբ նրանք ճանապարհվում էին Մարաշ⁵: Հաջորդ օրը նույն թերթում ևս մեկ հրապարակում է տպագրվում, որտեղ Դիարբեքիի վալին հաստատում է նույնը, նաև նշվում, որ շուկայում հրդեհ է բռնկվել, որի տարածումը, սակայն, իշխանություննե-

¹ «Տեղեկագիր Տիգրանակերտեն» // «Արմենիա», 1896, փետրուար 8, էջ 2-3:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 110.

⁵ The Armenian Genocide: Prelude and Aftermath. As Reported in the U.S. Press. The New York Times, vol. 1 (1890-1914). Compiled and edited by Rev. V. Ohanian and A. Ketibian, Mekhitarist Publication, 2018, p. 238.

րը կանխել են¹: Հայերի մեղավորության վարկածը շրջանառվում է նաև նույն թերթի 1895 թ. նոյեմբերի 13-ի համարում: Այս անգամ ևս տեղեկությունը պաշտոնական է, որում մասնավորապես նշվում է, որ Դիարբեքիի խռովությունների և հրդեհի միակ մեղավորը հայերն են, ինչի հետևանքով շուկայի խանութների 90 տոկոսն ավերվել էր, ինչպես նաև այրվել էին մուսուլմաններին պատկանող գրեթե բոլոր ապրանքները²: Ավելի քան տարօրինակ է այն փաստը, թե ինչու և հայերը պետք է հրդեհեին շուկան, որտեղ հիմնական խանութները պատկանում էին իրենց: Ավելին, ինչպես կարող էր տուժել մուսուլմաններին պատկանող գույքը, երբ խոշոր առևտրականները Դիարբեքի-ում ևս հիմնականում հայեր էին: Պարզ էր, որ նման հեղինակավոր լրատվամիջոցի էջերում տեղ գտած ապատեղեկատվությունը չէր կարող երկար շարունակվել, և արդեն իսկ հաջորդ օրերին տեղեկություն է հայտնվում առ այն, որ հայերի նախահարձակ լինելուն առնչվող տվյալները սուտ են: Մասնավորապես, 1895 թ. նոյեմբերի 17-ին “The New York Times”-ում նշվում է, որ Կ. Պոլսում Միացյալ մամուլի ներկայացուցչին Սվազում ԱՄՆ-ի հյուպատոս Մ. Ջեյթը հաղորդել է, որ հայերի ագրեսոր լինելու վերաբերյալ թուրքերի տվյալներն իրականությանը բացարձակապես չեն համապատասխանում, և որ հայերը կոտորվել են դիտավորյալ³:

Թերթի հաջորդ համարներներից մեկում ակնհայտ է, որ խմբագրությունը բավական լքջորեն է վերաբերվում հնարավոր ապատեղեկատվությանը: Այսպես, 1896 թ. հունվարի 6-ին թերթում հրապարակվում է Կ. Պոլսից դեկտեմբերի 22-ին Վաշինգտոն ուղղված մի լրատվություն առ այն, որ իբր ամերիկացի միսիոներները շնորհակալություն են հայտնում օսմանյան զորքին իրենց պաշտպանելու համար հայ ապստամբներից: Այս առնչությամբ թերթում նշվում է, որ դա անհեթեթություն է, թե ինչպես կարող էին միսիոներները շնորհակալություն հայտնել զորքին իրենց պաշտպանելու համար, երբ ոչ մի միսիոներ չի հաղորդել, որ տեսել է հայ ապստամբներին կամ լսել նրանց մասին⁴:

Հայերի նախահարձակ լինելու զրպարտանքից զատ, իշխանությունները փորձեցին հիմնական պատասխանատվությունը բարդել քրդերի վրա, ուստի հետևեցին այդուհետ նմանատիպ հաղորդագրություններ. օրինակ, “The Times” թերթի Կ. Պոլսի թղթակիցը գրում է, որ դեսպանատանը տեղեկագիր է ստացվել այն մասին, որ Դիարբեքի-ում նախահարձակ են եղել քրդերը, որոնք «ինքնաբերաբար եւ անգթօրէն յարձակում են գործել հայերի վրա՝ կոտորելով նրանց կանանց և երեխաներին և աւարելով ու հրկիզելով նրանց

¹ The Armenian Genocide: Prelude and Aftermath, p. 238.

² Նույն տեղում, էջ 242-243:

³ Նույն տեղում, էջ 247:

⁴ Նույն տեղում, էջ 358:

տներն ու խանութները»¹։ Իհարկե, այս տարբերակը կարող էր ընկալվել իբրև իրականությանն ավելի համապատասխանող, քանի որ քրդերի հարձակումները կամ ավարառությունները հազվադեպ չէին, բայց իրականությունն ավելի սարսափելի էր։

Խնդիրը, սակայն, այն էր, որ հայկական կոտորածների պատասխանատվությունը բարդվում էր ոչ այնքան քրդերի, այլ իշխանությունների, ոստիկանության, ամբողջ բնակչության վրա։ Ավելին, տեղական իշխանությունները ոչ միայն չէին միջամտել կոտորածների դադարեցմանը, այլև եղել էին դրանց մասնակիցը, ինչի մասին հավաստում են համիդյան կոտորածներին առնչվող գրեթե բոլոր սկզբնաղբյուրները։ Ըստ քարոզիչ Ջ. Ֆիլյանի՝ Դիարբեքիի կոտորածի ամբողջ ընթացքում «քաղաքապետն ու մյուս պաշտոնյաները զինվորների հրամանատարի հետ այս ընթացքում մզկիթում նստած լսում էին նահատակվող հայերի ճիչերն ու բղավոցները և ծիծաղում ու կատակում էին մեծ հաճությամբ՝ զինվորներին հրամայելով իրենց տներ տանել առավել արժեքավոր իրերը»²։

Պատահական չէ, որ պաշտոնական հայտարարություններին չէին վստահում նաև օտարերկրյա դիվանագետները։ Այն ժամանակ, երբ Դիարբեքիի խռովությունները մեծ վեզիրը բացատրում էր մզկիթում հայերի նախահարձակ լինելով, Մեծ Բրիտանիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Մ. Հերբերտը համոզված էր, որ այդ տեղեկությունը ճիշտ չէ³։ Իշխանությունների նման գործելակերպի սնանկությունն ապացուցում է նաև իրադարձությունների ժամանակակից Ա. Թափիերը. «Նահանգային իշխանություններին ուղարկած սուտ հեռագրերի հրապարակմամբ փորձ էր արվում Եվրոպային և Ամերիկային հավատացնել, որ հայերն են հրահրել այս կոտորածները՝ հարձակվելով մուսուլմանների վրա նրանց աղոթքի ժամանակ»⁴։ Հայերին որպես սադրիչ ներկայացնելու իշխանությունների փաստարկն այնքան ստահող էր, որ քննարկման առարկա չէր կարող դառնալ։ Ա. Թափիերը գրում է, որ անաչառ օտարերկրացի ականատեսների ընդհանուր վկայությունն այն է, որ որոշ բացառությամբ, հայերը ոչ մի սադրանք թույլ չեն տվել, իսկ նրանց մեղադրող տեղական իշխանությունների տեղեկագրերը շինծու են։ Հեղինակը հարց է տալիս. եթե հայերն են հարձակվել, ապա որտեղ են թուրքերի դիերը, մինչդեռ հենց իշխանություններն են հիշատակում հազարավոր հայ և մի քանի թուրք զոհերի մասին։ Վերջիններս մեկ կամ երկու բնակավայրերում են եղել, որոնց զոհվելը հայերի ինքնապաշտ-

¹ Տե՛ս «Նոր-Դար», 1895, նոյեմբերի 16, թիվ 202։

² **Filian G. H.**, Armenia and Her People or the Story of Armenia by an Armenian, Hartford, 1896, p. 297-298.

³ **Kirakossian A.**, British Diplomacy and the Armenian Question, from the 1830s to 1914, Princeton, 2003, p. 239.

⁴ **Tupper A.**, Around the World with Eyes Wide Open. The Wonders of the World Pictured by Pen and Pencil, New York, 1898, p. 418.

պանության հետևանքն է, ինչպես Դիարբեքիրում¹: Բհարկե, մյուս բնակավայրերի համեմատ՝ Դիարբեքիրում սպանված մուսուլմանների թիվն ավելի էր, այն հասնում էր 195-ի: Ի դեպ, նրանցից 70-ը սպանվել էր յուրայինների կողմից թալանածը բաժանելիս²:

Ցավալի է, որ կոտորածների իրական պատկերը կարող էր խաթարվել, ճշմարտությունն աղավաղվել օսմանյան իշխանությունների նախաձեռնած ապատեղեկատվության պատճառով: Այս առումով հարկ է անդրադարձ կատարել մեկ այլ՝ մեր ժամանակակից հեղինակ Ջ. Վերհեյջի աշխատությանը, որը նվիրված է 1895 թ. կոտորածներին Դիարբեքիրում: Հեղինակը, որն ի սկզբանե կանխակալ վերաբերմունք ունի Դիարբեքիրի կոտորածների նկատմամբ, գրում է. «Քանի որ հիմնականում մուսուլմաններն էին ագրեսորները, և մեծ թվով հայեր սպանվեցին, այս ամենը որակվեց որպես (հայկական) կոտորածներ»³: Տարօրինակ է նրա միտքը, քանզի ինչպես, եթե ոչ հայկական կոտորածներ պետք է բնութագրվեր այս իրադարձությունը: Ավելին, հենց Վերհեյջը հավաստում է, որ «Դիարբեքիրում կոնֆլիկտը հատկապես դաժան էր, և հսկայական վնաս հասցվեց ունեցվածքին»⁴: Միաժամանակ նա Դիարբեքիրի դեպքերը համեմատում է 1894 թ. Սասունի կոտորածների հետ և գտնում, որ դրանք և Դիարբեքիրի 1895 թ. «ճգնաժամը», ինչպես նա որակում այդ ջարդերը, ունեին երկու հիմնական պատճառներ. քրիստոնյա հայ բնակչության բողոքը տեղական իշխանությունների դեմ և վեց նահանգներին վերաբերող բարեփոխումների հայտարարությունը: Նշենք, որ տեղական իշխանությունների դեմ բողոք ներկայացրել են բոլոր քրիստոնյաները, սակայն, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, կոտորածների թիրախում նախևառաջ հայ բնակչությունն էր:

Վերհեյջը ևս անվստահելի է համարում օսմանյան որոշ «սկզբնաղբյուրների» տվյալներն առ այն, որ հայերն են նախահարձակ եղել և հարձակվել մզկիթների վրա⁵: Մակայն հեղինակը վերապահում ունի այս խնդրի առնչությամբ: Նա ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Դիարբեքիրում շատ էին մուսուլման զոհերը, քան այլ բնակավայրերում, ինչը, նրա կարծիքով, հետևանք չէր հայերի կազմակերպած ինքնապաշտպանության, ինչպես կարծում էր Թափփերը: Հետևաբար, Վերհեյջն այս տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները չի բնութագրում իբրև հայերի «տիպիկ կոտորածներ», որոնք տեղի են ունեցել 1895 թ. աշնանը արևելյան նահանգներում⁶:

¹ Tupper A., նշվ. աշխ., էջ 419:

² «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 112.

³ Verheij J., Diarbekir and the Armenian Crisis of 1895 // Social Relations in Ottoman Diyarbekir: 1870-1915, ed. J. Jongarden and J. Verheij, Leiden, Boston, 2012, p. 86.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 136:

⁶ Նույն տեղում:

Կարծում ենք, նման դիտարկումը մակերեսային է և չի արտացոլում կոտորածներին նախորդած մթնոլորտի հիմնական պատճառները. դրանք ավելի խորքային էին, քան մի առանձին բնակավայրում տիրող լարված մթնոլորտը: 1894-1896 թթ. դրանք ընդգրկեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը, որոնց ընթացքում սպանվեցին շուրջ 300 000 հայեր, բռնի կրոնափոխ արվեցին տասնյակ հազարավոր անձինք, անօթևան ու առանց գոյության որևէ միջոցի մնացին տասնյակ հազարավոր մարդիկ, ոչնչացվեցին բազմաթիվ եկեղեցիներ և դպրոցներ: Սա վկայում է այն մասին, որ կոտորածները ծրագրված էին օսմանյան կենտրոնական իշխանությունների և համակարգված ու իրականացված տեղական իշխանությունների կողմից, և ինչն ավելի կարևոր է՝ կոտորածների ընթացքում թիրախավորված էր հենց հայ բնակչությունը:

Այլ հարց է, որ կոտորածներին նախորդած շրջանում Դիարբեքիրում տիրող լարված մթնոլորտը կարող էր մուսուլմաններին ավելի մեծ ատելությամբ համակել քրիստոնյաների և նախնառաջ հայերի նկատմամբ, ինչը դրսևորվեց կոտորածի ժամանակ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշատակված մեկ-երկու հարյուր մուսուլման զոհերի առկայությունը Դիարբեքիրում հետևանք էր նախ այն դիմադրության, որն արձանագրվեց այս բնակավայրում կոտորածին ի պատասխան, երկրորդ՝ զոհերի մի մասը սպանվեց հենց նույն մուսուլմանների կողմից թալանը բաժանելու վեճերի ընթացքում: Այստեղ տեղին է հիշատակել Դիարբեքիրի կոտորածների ականատես Գ. Մեյրիեին. ըստ նրա մեկնաբանության՝ խիղճը ստիպում է վստահությամբ հավաստել, որ սպանությունները Դիարբեքիրում իրականացրել են մուսուլմանները, և ոչ մի առիթ չկար դրանք սկսելու համար: Նա նաև հավելում է, որ քրիստոնյաները զենքի դիմել են միայն ինքնապաշտպանական մարտերի համար, երբ հարկադրված են եղել կիրառել դրանք՝ ավելին, ոստիկանությունը և զորքերը միջամտել են զոհերին հարվածելու համար¹:

Կոտորածի հետևանքները

Ձ. Ֆիլյանը մեջբերում է 1895 թ. նոյեմբերի 20-ին Դիարբեքիրից գրված մի նամակ, որտեղ նշվում է այդտեղ իրականացված կոտորածի դաժանության մասին. «Բռնությունները, որ տեղի ունեցան նոյեմբերի 1-ին, 2-ին, 3-ին, չեն համապատասխանում քաղաքակիրթ աշխարհի պատմությանը: Ես չեմ կարծում, որ դրանք կարող էին լինել նույնիսկ հեթանոս երկրներում, որտեղ ժողովուրդը բարբարոս է: Եթե նրանք սպանվեին գնդակներով, դա կլիներ հանկարծակի, բայց հեշտ մահ. բայց նրանց կոտորեցին կացիներով՝ մասե-

¹ «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 110-111.

րի բաժանելով և սրերով անցքեր թողնելով մարմինների վրա»¹: Բնական էր, որ նույնքան սարսափելի էին և ծանր կոտորածների հետևանքները:

Ամփոփենք Դիարբեքիի կոտորածի մարդկային կորուստները: Այս առումով ևս կարևորվում են Գ. Մեյրիեի տեղեկագրերը, որը ներկայացնում է կոտորածի պատկերը Դիարբեքիի քաղաքում թվերի տեսքով: Ըստ նրա տվյալների՝ հայ գրիգորյաններից սպանվել էր 1000, հայ կաթոլիկներից՝ 10, սիրիացի յակոբիտներից հայտարարվել էր սպանված՝ 36, սակայն իրականում կար 150 զոհ, սիրիացի կաթոլիկներից սպանվել էր երեք, քաղդեացիներից՝ 14, հույներից՝ երեք, բողոքականներից՝ 11 մարդ: Քաղաքում կային նաև բազմաթիվ վիրավորներ: Ընդհանուր առմամբ, այստեղ անհետ կորած էր հայտարարվել 1000 մարդ, գյուղաբնակներից ևս 1000 մարդ էր սպանվել ու անհետացել, որոնք քաղաքում էին աշխատում: Բնականաբար, այս մարդկանցից եթե ոչ բոլորը, ապա մեծ մասը ևս հայեր էին²: Հետագայում արդեն շրջանառվում են սպանվածների թվաքանակները՝ 2000-ից 5000-ի սահմանում: Նույն Գ. Մեյրիեն տեղեկագրի մեկ այլ հատվածում նշում է, որ երեք օր տևած կոտորածների զոհ է դարձել ավելի քան 3000 քրիստոնյա³:

Ըստ Կարմիր խաչի առաքելության վիճակագրության՝ Դիարբեքիում սպանվել էր շուրջ 2000 մարդ, իսկ խանութների մի ամբողջ թաղամաս ավերված էր ու թալանված: Սա այն դեպքում, երբ քաղաքում վնասները համեմատաբար ավելի քիչ էին, քան շրջակա գյուղերում, որտեղ թալանվել էին յուրաքանչյուր շարժական գույք, իր, ինչ հնարավոր էր, նույնիսկ դռներ, պատուհաններ, կտուրների փայտանյութ: Հյուպատոս Հալուորդի տվյալներով՝ Դիարբեքիում և շրջակայքում կար 60 000 կարիքավոր⁴: Ամերիկացի միսիոներ Է. Ռիզզը ներկայացնում է ցուցակ՝ կոտորածների զոհերի թվական տվյալներով, ըստ որի՝ Դիարբեքիում սպանվել էր 2500 անձ, որոնք ըստ ամերիկացի միսիոներների՝ սպանվել էին զինվորների, քրդերի, թուրքերի կողմից⁵: Արման Կիրակոսյանը ներկայացնում է եվրոպական և ամերիկյան սկզբնաղբյուրների հիման վրա կազմված՝ համիդյան կոտորածների զոհերի մոտավոր թվաքանակը, ըստ որի՝ մասնավորապես Դիարբեքիում սպանվել էր 3000 մարդ⁶: Ըստ բողոքական քարոզիչ Է. Բլիսի՝ Դիարբեքիում կոտորվել է շուրջ 2500 անձ⁷:

Սկզբնաղբյուրներում կան սպանվածների ավելի մեծ թվաքանակներ, մասնավորապես, ըստ «Արմենիա» թերթում տպագրված մի հաղորդագրության՝ «մասնաւոր աղբիւրներէ կը հաղորդեն եւրոպական լրագիրներին թէ

¹ Filian G. H., նշվ. աշխ., էջ 297:

² «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 111.

³ Նույն տեղում, էջ 112:

⁴ Report America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, 1896, p. 86.

⁵ Rev. Pierce J. W., Story of Turkey and Armenia, Baltimore, 1896, p. 486.

⁶ Kirakossian A. J., նշվ., աշխ., էջ 260:

⁷ Rev. Bliss Ed., Turkey and the Armenian Atrocities, Fresno, 1982, p. 464.

Քիւրտերը 5000 հոգիի չափ ըսպաններ են Տիգրանակերտի մէջ: Ոստիկաններն ալ Քիւրտերին հետ միացած կրակ ըրեր են քրիստոնեաներին վրայ»¹: Մեկ այլ աշխատության մեջ բերված է միսիոներներից մեկի՝ իր ուսանողներին հղած՝ 1895 թ. նոյեմբերի 30-ի թվակիր մի նամակ, որտեղ նշված է. «Դիարբեքիրում երեք օրվա ընթացքում կոտորվեց ավելի քան 5000 մարդ: Բացի նրանցից, ովքեր սպանվել էին՝ շատերն առնանգվել են, վիրավորվել. վախը, հիվանդությունը, սովը, ցուրտն ավելացնում են այլ 5000 և տասնյակ հազարավորների, որոնք երբեք չեն իմանա, թե որն է հարմարավետ տունը, խաղաղ գիշերը»²: Սպանվածների նույն՝ 5000 թվաքանակն է հիշատակում Ջ. Ֆիլյանը³:

Ամփոփելով եղած տվյալները՝ նշենք, որ Դիարբեքիրում կոտորածներին զոհ են գնացել 3000-ից 5000 մարդ՝ մեծ մասամբ հայեր, ընդ որում նրանց մի մասը քաղաքաբնակներ չէին, այլ այդտեղ էին աշխատանքի բերումով: Մյուս կողմից, կոտորածի հետևանքները չէին սահմանափակվում սպանվածների նշված թվաքանակով, քանի որ դրան գումարվում էին հարյուրավոր-հազարավոր մահացածներ, որոնք վախճանվում էին ծայր առած հիվանդություններից, անոթությունից, ցրտից, ապրած ցնցումներից և վախերից: Ուշագրավ է այն հանգամանքը, որ եթե նահանգի տարածքում բազմաթիվ էին բռնի իսլամացման դեպքերը, ապա քաղաքում իրավիճակն այս առումով ավելի բարվոք էր: Գ. Մելրիեն հիշատակում է 50 կանանց ու աղջիկների առնանգման մասին⁴, թեև կարելի է ենթադրել, որ այդ թիվը չի կարող ամբողջությամբ արտացոլել իրական պատկերը:

Ինչ վերաբերում է նյութական վնասներին, ապա, ըստ Ֆրանսիայի փոխհյուպատոսի՝ Դիարբեքիրում թալանվել էր ընդհանուր առմամբ 1701 տուն (փաստաթղթում վնասները ներկայացված են ըստ տարբեր հարանվանությունների՝ բողոքականներ, գրիգորյաններ, հայ կաթոլիկներ, յակոբիտներ և այլք), որոնցից 1500-ը պատկանում էր գրիգորյան հայերին, 36-ը՝ կաթոլիկ հայերին: Նաև թալանվել ու հրկիզվել էր ընդհանուր առմամբ 2448 խանութ, որոնցից 2000-ը պատկանում էր գրիգորյան հայերին, 65-ը՝ կաթոլիկ հայերին⁵: Ըստ Դիարբեքիրի բնակիչներից մեկի հուշագրության՝ քաղաքում այրվել էր 1200 խանութ, թալանվել՝ 2000-ից ավելին և 1500 տուն, «քրիստոնեից ունեցածին հարիւրէն 95ը կոտորուած է. մեկ հաշուով մը 10000000 ոսկիի կը հասնի քաղաքիս քրիստոնեից կորուստը»⁶: Ըստ «Արմենիա» թերթի մեկ այլ, ավելի վաղ հրատարակված համարում տեղ գտած հաղորդագրության՝

¹ «Արմենիա», 1895, նոյեմբեր 9, էջ 4:

² Rev. Pierce J. W., նշվ. աշխ., էջ 430-432:

³ Filian G. H., նշվ. աշխ., էջ 296:

⁴ «Армянский вопрос по документам французской Желтой Книги», с. 112.

⁵ Նույն տեղում, էջ 111:

⁶ «Տեղեկագիր Տիգրանակերտէն» // «Արմենիա», 1896, փետրուար 15, էջ 2:

Դիարբեքիրում և շրջակա բնակավայրերում թալանի ու հրդեհի հետևանքով եղել է չորս միլիոն օսմանյան ոսկու (90 միլիոն ֆրանկ) վնաս¹:

Ինքնապաշտպանություն

Համիդյան կոտորածների պատմությանը վերաբերող գրականության մեջ շրջանառվում է Դիարբեքիրի դիմադրության վերաբերյալ նյութ, որը, բացառությամբ թուրքական պաշտոնական տվյալների, հիմնականում ներկայացվում է որպես դիմադրություն՝ ի պատասխան կոտորածների: Ամերիկացի միսիոներ Ֆ. Գրինը գրում է, որ «անակնկալի եկած ու անզեն հայերը դիմադրության փոքր փորձեր արեցին և այն վայրերում, ինչպես Դիարբեքիրն ու Գյուրունը, որտեղ ինքնապաշտպանության փորձեր եղան, նրանք տուժեցին ավելի, քան մյուս վայրերում»²: Իրավամբ, Դիարբեքիր քաղաքում որոշ ժամանակ հայ բնակչության մի փոքր հատված դիմադրեց թուրքերի հարձակումներին: Պաշտպանությունը հիմնականում եղավ նրանց տների, թաղամասերի տարածքում և, ցավոք, ավելի մեծ ծավալներ չընդունեց: Այլապես հայ զոհերի թվաքանակը գուցե ավելի քիչ կլիներ:

Դիմադրության շնորհիվ, ինչպես արդեն նշեցինք, սպանվածների թվում արձանագրվեցին նաև մուսուլման զոհեր: Միաժամանակ, Ջ. Վերհեյջը գտնում է, որ այլ բնակավայրերի համեմատ՝ Դիարբեքիրում արձանագրված մուսուլման զոհերի մեծ թիվը վկայում է այն մասին, որ հայերն անպաշտպան չէին և անձնուրաց կռվել են: Հեղինակը փաստում է, որ հայերի կորուստներն ավելի էին, քան մյուս քրիստոնյա ժողովուրդներին³: Տվյալ դեպքում նա ևս մեկ անգամ տուրք է տալիս թրքական պաշտոնական տեսակետներին՝ կրկին շրջանցելով ակնառու մի քանի փաստեր: Նախ, հայերը՝ անպաշտպան էին, քանի որ նրանց չէր թույլատրվում զենք կրել: Երկրորդ՝ փաստ է, որ, դրան հակառակ, մուսուլմանները, ընդ որում նաև հասարակ բնակչությունը, զինված էին: Մյուս կողմից, եթե հայերն անձնուրաց կռվել են, ինչո՞ւ են տվել այդքան զոհեր: Հավաստենք, որ մյուս բնակավայրերի համեմատ Դիարբեքիրում պաշտպանություն, անկասկած, եղել է, մի խումբ հայեր իրոք դիմադրել են, սակայն ոչ միայն խաժամուժին, այլ կազմակերպված ուժերին, որոնք զինված են եղել և որևէ արգելք չեն ունեցել իրենց ճանապարհին:

Ըստ «Արմենիա» թերթում տպագրված՝ Դիարբեքիրի կոտորածներին առնչվող մի վկայության՝ մեկ շաբաթ տևած մարտերի ժամանակ քաղաքը լի էր վիրավորներով և անօթևաններով: Այդ օրերին էր, որ կառավարության

¹ «Արմենիա», 1895, նոյեմբերի 27, էջ 3:

² **Greene F. D.**, Armenian Massacres: or the Sword of Mohammed, Philadelphia, 1896, p. 39. Տե՛ս նաև՝ **Tupper A.**, նշվ. աշխ., էջ 415:

³ **Verheij J.**, նշվ. աշխ., էջ 106:

կողմից տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված մի խումբ, շրջելով քաղաքի փողոցներով, ազդարարում էր, որ պետք է զենքերը հանձնվեն, և խաղաղություն հաստատվի: Սակայն խաղաղությունը վերականգնելու նպատակով վալին զինաթափ է անում քրիստոնյաներին՝ մուսուլմաններին թույլատրելով պահել իրենց զենքերը: Ոչ միայն հավաքում են քրիստոնյաների զենքերը, այլև ձերբակալում հայտնի քրիստոնյաների: Հաջորդում են հարցաքննություններն ու չարչարանքները բանտերում¹:

Ինչպես տեսնում ենք, Դիարբեքիի 1895 թ. կոտորածները որոշակի առանձնահատկություններ ունեցան, որոնցից մեկը, ի տարբերություն այլ բնակավայրերի, այն էր, որ հայ բնակչությունն այստեղ փորձեց դիմադրել հարձակմանը և պաշտպանվել: Ինչ վերաբերում է բռնի իսլամացմանը, որը հայերի դեմ ուղղված և համիդյան կոտորածներին ուղեկցող կարևոր մեխանիզմներից էր, ապա Դիարբեքիի քաղաքում, ի տարբերություն Դիարբեքիի գավառակի և Արևմտյան Հայաստանի այլ բնակավայրերի, իսլամացվածների թվաքանակը մեծ չէր: Տարիներ պահանջվեցին, որպեսզի կոտորածներից մեծապես տուժած հայությունը վերականգնի կորցրած տարրական պայմանները, վերանորոգի եկեղեցիներն ու վանքերը, մեծացնի կոտորածների ընթացքում որբացած երեխաներին:

Арпине Баблумян – Гамидовские истребления в Диарбекире в 1895 г.

При анализе общей картины резни армян в Диарбекире в 1895 г. становится очевидным тот факт, что был запланирован ряд действий, которые, в отличие от происходящего в других провинциях и поселений, обладали определенными особенностями. Прежде всего власти пытались выставить армян агрессорами, что на самом деле было попыткой оправдать кровавое нападение, совершенное властями для притеснения армян. По словам очевидцев, часть городской полиции, жандармов и солдат поддержала напавшую толпу. Во время резни в городе пострадали также и другие христиане, однако главной целью было истребление армянского населения. В результате массовой резни 1-3 ноября в Диарбекире было убито от 3000 до 5000 человек, большинство из которых были армяне. После резни и погромов много людей умерло от болезней, голода, страха и стресса. Многие остались без крова, без условий жизни. Что касается материального ущерба, то, по словам Г. Мейрие, французского вице-консула в Диарбекире, в городе был разграблен в общей сложности 1701 дом, из которых более 1500 домов принадлежало армянам, также было разграблено и подожжено 2448 магазинов, 2065 из которых принадлежали армянам.

¹ Մկրտիչ Տ., Ամիտայի արձագանգներ, ԱՄՆ, 1950, էջ 220-222:

Arpine Bablunyan – *The Hamidian Massacres in Diarbekir in 1895*

Having analyzed the overall picture of the massacre in Diarbekir in 1895, we concluded that there were series of planned actions, which, unlike other provinces and settlements, had certain features. First of all, the authorities tried to distort the picture by misrepresenting Armenians as attackers, which was an attempt to justify the bloody attack carried out by the authorities in order to oppress the Armenians. According to eyewitnesses, some of the city's police, gendarmes and troops contributed to the massacres. There were other Christian residents in the city who also suffered during the massacre, however, the target was the Armenian population, which suffered greatly during the days of the massacre. At least 3,000 to 5,000 people were killed during the massacre in Diarbekir in November 1-3, the majority of them were Armenians. After the massacres, many people died of diseases, hunger, fear and stress. Many people were left homeless, without living conditions. As for the material damage, according to French vice consul in Diarbekir G. Meyrier, a total of 1701 houses were looted in Diarbekir, of which more than 1500 houses belonged to Armenians. A total of 2448 shops were looted and set on fire, 2065 of which belonged to Armenians.

Ներկայացվել է 24.08.2020

Գրախոսվել է 31.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱԽԱՆՈՎԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր – Ալեքսանդր Խախանով, Վրաստան, Մոսկվա, համալսարան, արևելագետ, Լազարյան ճեմարան, հայոս, Քարթլոս, մշակույթ, երկխոսություն

Ծագումով վրացի հայտնի արևելագետ Ալեքսանդր Խախանովը իր բազմաթիվ գրքերում ու հոդվածներում յուրովի ներկայացրել է հայոց պատմության, հոգևոր մշակույթի և հայ ժողովրդի նիստուկացի առնչությունները վրաց նույնական երևույթներին՝ «ազգակցությանը»: Սույն հոդվածում, անդրադառնալով գիտնականի կյանքին ու գործունեությանը, միաժամանակ փորձում ենք պարզաբանել հումանիտար ոլորտի հայկական և վրացական նույնական գիտաճյուղերի միջև (փիլիսոփայություն, պատմություն, հնագիտություն, բանասիրություն, ազգագրություն, կրոն) խախանովյան զուգադրություններ անցկացնելու օրինաչափությունն ու սկզբունքները, դիտարկումներն ու բնութագրումները, ի հայտ բերած ընդհանուր եզրերը:

Ալեքսանդր Սոլոմոնի Խախանովը [Խախանաշվիլի] գիտության վաստակաշատ գործիչներից է, հայտնի՝ նաև տարբեր լեզուներով ստեղծագործելու բացառիկ ունակությամբ, հարուստ և բազմաժանր ժառանգությամբ, ցավոք, նաև գիտական կարճատև կյանքով:

Ծնվել է 1864 թ. հունվարի 3-ին Վրաստանի Գորի քաղաքում, քահանայի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի գավառական դպրոցում, ապա ուսումը շարունակել Թիֆլիսի թիվ 1 դասական գիմնազիայում, որը 1884 թ. ոսկե մեդալով ավարտելուց հետո մեկնել է Մոսկվա, սովորել համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում՝ այստեղ ևս դրսևորելով գերազանց առաջադիմություն: 1888 թ. բուհն ավարտելուց հետո Ալ. Խախանովը պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի որոշումով պահվել է գիտամանկավարժական աշխատանքի նախապատրաստվելու համար, բայց նույն ուսումնական տարվա սկզբին հրավիրվել է Լազարյան ճեմարան՝ վրաց լեզու դասավանդելու (Լազարյան ճեմարանը 1827 թ. վերանվանվել էր *Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ*): 1894 թ. նշանակվել է արդեն ճեմարան-ինստիտուտի պրիվատ-դոցենտ, 1898 թ. ընտրվել գիտական խորհրդի քարտուղար, միաժամանակ վրաց գրականություն և Վրաստանի պատմություն է դասավանդել Մոսկվայի համալսարանում, զուգահեռաբար՝ ժամանակակից ռուս գրականություն և ռուսաց լեզու նաև մայրաքաղաքի կանանց գիմնազիաներում: Ալ. Խախանովի ժառանգու-

թյան կարևոր մաս է կազմում «Բրոքհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանում» տպագրած վրացի գրողների դիմանկարների շարքը¹: Այս շարքը և նյութական ու հոգևոր մշակույթի վերաբերյալ պատմաբանասիրական բազում գրքեր ու հոդվածներ նա գրել է ռուսերեն, ֆրանսերեն², գերմաներեն³ և վրացերեն՝ ամենը փաստերի և տեղեկությունների հերթականությամբ, քաղաքական ու մշակութային հարաբերությունների բանիմաց քննությամբ, որով ձեռք է բերել մեծ համբավ, համարվել ժամանակի ամենագարգացած մարդկանցից մեկը:

Ունենալով գիտելիքների հարուստ պաշար՝ Ալ. Խախանովը նմանապես ուսումնասիրել է Վրաստանի տնտեսական խնդիրները, ֆեոդալիզմի յուրահատկություններն ու նշանակությունն այդ երկրում, վրացական թագավորության մասնատման և փոքրիկ իշխանությունների բաժանման պատճառները:

Նա վրաց գյուղացիության մեջ հարուստ և աղքատ շերտերի, թավադության խավի առաջացման խնդիրները առաջին անգամ փորձել է գիտականորեն վերլուծել, դրանք հիմնավորել երկրի տնտեսությամբ, իրողությունները կապել Ռուսաստանում ու Եվրոպայում ավատատիրության զարգացման հետ և բխեցրել այդ կարգերից:

Զգալի աշխատանք է կատարել նաև հնագիտության բնագավառում. հնություններ հայտնաբերելու նպատակով կազմակերպել է արշավախմբեր և ակտիվորեն մասնակցել դրանց պեղումներին, շրջագայել Վրաստանի ամբողջ տարածքում: Գտածոն հետազոտել և ամփոփել է «Հնագիտական արշավներ Կովկասում՝ 1892, 1893, 1895 թթ.» հատուկ ժողովածուում⁴: Նույն նպատակով ճանապարհորդել է մի շարք երկրներում՝ Անգլիա, Իտալիա, Ֆրանսիա և այլուր: Ռուսերեն լեզվով հրատարակել է «Ակնարկներ վրաց գրականության պատմության»⁵ քառահատոր, առաջին համակարգված հիմնարար աշխատությունը, որն ընդգրկում է քննարկվող թեման հնագույն ժամանակաշրջանից մինչև XIX դարի վերջը:

Փարիզի միջազգային ցուցահանդեսի բացման առիթով Ալ. Խախանովը ձեռնարկել, շարադրել և ֆրանսերեն լույս է ընծայել իր գիտական ձեռքբե-

¹ Գրողներին նվիրված հոդվածներից են՝ «Шота Руставели», «Царица Тамар», «Георгий Победоносец», «Вахтанг VI», «Амиреджиби», «Николоз Бараташвили», «Даниил Чонкадзе», «Георгий Эристави (Эристов)», «Александр Казбеги (Мочхубаридзе)»:

² Ֆրանսերեն լույս է ընծայել **Khakhanov A.**, Histoire de Géorgie, Paris-Tiflis, 1900 ; *idem* : La situation des Arméniens dans le royaume de Géorgie // « Journal asiatique », mars-avril 1898, և այլ գրքեր ու հետազոտություններ:

³ Գերմաներեն տպագրված աշխատանքներից հայտնի են՝ „Ueber den gegenwertigen Stand der grusinischen Philologie“ և „Grusisches Bruchstück der Kalilagu. Dimnag“ („Wiener Zeitschr. f. d. Kunde d. Morgenl“, t.VII, XIV):

⁴ «Археологические экскурсии на Кавказ» 1892, 1893 и 1895 гг., Москва, 1897. Տե՛ս նաև «Экспедиции на Кавказ», Москва, 1897:

⁵ **Хаханов А. С.**, Очерки по истории грузинской словесности, т. 1-4, Москва, 1901.

რომანებრივ და მსკრტ ' Ⴖრასთანჲ ამწოღჳსკან Ⴖყათმორჳთონრ¹, ნერათნელჳლ ჳღასკან ღნოაღჳრ მათჳანსნერ: Ⴖრავ Ⴖჲჳსანაღჲთოჳრჳს Ⴖყათმორჳს ჲამარ ნმანაჳს ნზანასკაჲჳგ ჳნ სრა «Ⴜსკელგასკან Ⴖოიღარნერ»² ჳ «Ⴖრავ აღნჳსკანასკან ასკთერ ու თოჲმასკან გოიღასკანერ»³ ჳრკასჲრჳთონსნერ:

Ալ. Խախანովն ასკთჲჳოռն აზჲასთასკგლ ჳ ჳჳოռჳსკან, ոուսასკან («Русские ведомости», «Русская мысль», «Этнографическое обозрение», «Вестник Европы», «Журнал для всех», «Жизнь», «Вестник всемирной истории», «Кавказский вестник»), კოჳსაჳსკან ჳ აჳ Ⴖარრერასკანსნერჲ, ჲსჯაჳს ნას Ⴖრავსკან ႶერႶერჲს («მწყგმსო», «ივერია», «კვალი»)⁴: სა Ⴖარღაჳსანლ ჳ, Ⴖ ჳ Ⴖრასთანრ Ⴖყათმამზასკოჳრჳჲს აოოიმო ჲსჯ აოოაღრწავ ჳ ուნსგლ Ⴖოუსასკან კაჳსოჳრჳსნრ 1801 Ⴖ მჲასჳოռჳლელღ ჲსოო: ჳასკანზასკან ჳნ «Ⴖოოოჳოღასკან Ⴖოტეღაჲჲ ჲსოჳერრ Ⴖრავ თარტეგოჳრჳს მსღ»⁵, «Իմերեթի արքա Սողոմոն Երկրորդ»⁶, «Ⴖოოოათჲრასკან ჲრასკონჳრ Ⴖრასთანოიმ მჲსჯ Ⴖოოსასთანჲს მჲასჳოռჳლელ»⁷, «Ⴖრავჲსნერჲ რნასკოჳრჳს ჲნასგოჳს საჲმანსნერ Ⴖოჳრ Ⴖსჲაჳოიმ»⁸ ჲსთაგოთოჳრჳსნერ: Ս. Պավլիաշվիլი Ⴖადკანონოჳ Ⴖრავ ჲრასკანოჳრჳს მსღ მაჳრნსჲ ჳღჳო Ⴖოოაღჲს ანგამ თაჳაგოჳლ ჳნ ღართასასნასკან რანასთლღოჳრჳსნერ⁹:

Ալ. Խախանովը եղել է Մոսկվայի «Կայսերական հնագիտական կազմակերպության» (1889), «Ռուսաստանի պատմություն և հնություններ սիրողների կայսերական կազմակերպության» (1901), «Ⴖրասთანჲ Ⴖყათմასკան ჳ აգღაგրასკან կազմასკերაჳოჳრჳს» (1907), «Ⴖოուսასკან რანასჲოուოჳრჳს սჲოოոնერჲ կազմასკերაჳოჳრჳს» (1909) ჲსკასკან ანოჳამ, მასნასკგლ ჳ არსლագետნერჲ მჲჯაგღაჲსკან Ⴖსჲასოოოჳ Ⴖზჲასთანჳსნერჲს Ⴖსნოიმ (1894) ჳ Ⴖარჲგოიმ (1897): Իր სჲოჳასკან მჲჯոგნსერო Ⴖ911 Ⴖ. Մոսկվայოიმ ჲჲմնաოրლ ჳ «Ⴖრავსკან գჲთოჳრჳს, არჳსო ჳ գրასკანოჳრჳს ոուოიმնասჲოოոնერჲ ճնსկերოჳրჳსնր», ոոր ղესկაճარლ ჳ ჳ որთლ ანგ ჳ կავրლ რոճանոჳსკაჲჳგ Ⴖարაჳამոնჳსნერ ու ոჳსასჲոսოჳრჳსნერ: ԵႶ ჲაճლենք,

¹ Khakhanov A., Histoire de la Géorgie, Paris, 1901.

² «Гуджары церковные», с приложением очерка о положении грузинкой церкви, Кутаиси, 1891.

³ Хаханов А. С., Грузинские дворянские акты и родословные росписи. (Материалы для истории Грузии). Изд. с предисл. и примеч. А. С. Хаханова, Москва, 1893.

⁴ ჳანგოიღაჲსკან აზჲასთანჳსნერჲგ ჳნ. «ქართული აპოკრიფები».- ჟ. «მწყგმსო», 1893, № 19, გვ. 11-13, 1894, № 2, გვ. 9-11; აზრი Ⴖოოგესოოის Ⴖომაშეკის, ქართველთა და სომეხთა შესახებ.-გაზ. «ივერია», 1894, 13 Ⴖქტ., № 217, გვ. 3-4; აზრი Ⴖოოგ. ჳომმელისა ქართული ენის შესახებ.-«კვალი», 1894, № 35, გვ. 6; მეგრული ენა ქართულს ჳოტერატურასა და მწერლობაში.- გაზ. «ივერია», 1897, 2, ნოემბ., № 227, გვ. 3-4:

⁵ «Следы народной поэзии в грузинской летописи», Тифлис, 1890.

⁶ «მევე იმერეთისა სოლომონ II», ტ. 1-2, Ⴖფილისი, 1904-[19]13 წ.წ.

⁷ «Ⴖატონყმოზა საქართველოში რუსეთთან შეერთებამდის», ქუთაისი, 1910 წ.

⁸ «Древнейшие пределы расселения грузин по Малой Азии», Москва, 1890, 1892 и Тифлис, 1903.

⁹ Տե՛ս «კლდე», 1913, № 8:

որ անվանի արևելագետը գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագրերի խմբագրակազմերի անդամ էր, ղեկավարում էր բազմաթիվ ասպիրանտների ու ասիստենտների ատենախոսություններ, ապա պարզ կդառնա նրա բազմաբեղուն գործունեության ընգրկումն ու ծավալը:

1902 թ. Ալ. Խախանովին հանձնարարվել է գրել Լազարյան ճեմարանի մասնագիտական երկու հաստատությունների՝ Դասական գիմնազիայի և Արևելյան լեզուների ֆակուլտետի հիմնադրման 30-ամյա պատմությունը, որը նա պատվով է իրականացրել¹: Դրանից բացի, նա հետագայում ճեմարանի կրթական և հետազոտական գործունեությանն է նվիրել ևս մեկ ուսումնասիրություն²:

Արևելագիտության հեղինակավոր մասնագետը, որքան հայտնի է, հայագիտական որևէ աշխատություն չի թողել (նրա երկերի մատենագիտական ցանկերում նման վկայություն չկա), բայց Վրաստանի պատմությանը, վրաց գրականությանն ու լեզվին, վրաց ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված երկերի ծանոթագրություններում, լուսանցքներում, տողատակերում լրացուցիչ տեղեկություններ է հաղորդել նաև նույն գիտակարգերի հայկական աղբյուրների վերաբերյալ, երբեմն՝ հայերեն, երբեմն՝ գրադարձ, երբեմն էլ՝ թարգմանաբար, և ըստ զուգադրական կանոնների՝ հանգել է բանիմաց եզրակացությունների, որոնք հարուստ նյութ են բովանդակում տարբեր գիտաճյուղերի հետազոտությունների համար: Ամեն դեպքում մակերեսային չի կարելի համարել նրա գիտելիքները հայկաբանության առումով: Հեղինակը պատմաբանասիրական այնպիսի աշխատանքներ է կատարել, որ մանրագնին ուսումնասիրություն կատարելու դեպքում դրանք կարող են նոր հոդվածներ գրելու ելակետային արժեք ունենալ տվյալ բնագավառի մասնագետների համար:

Դեռևս 1900-ական թվականների վերջերին Ալ. Խախանովը ծրագրել էր իր աշխատանքներն ի մի բերելու և առանձին գրքերով հրատարակելու գործը: Նախաձեռնությունը, սակայն, անկատար մնաց նրա վաղաժամ մահվան պատճառով:

Ճեմարանական տարիներին մտերմանալով հայ գործընկերների հետ և ձեռքի տակ ունենալով մատենադարանական հարուստ ձեռագրեր, տպագրված գրքեր, մամուլ և այլ նյութեր՝ Ալ. Խախանովը հետաքրքրություն է դրսևորել հայոց պատմության, հայ գրականության և արվեստի, առհասարակ, Հայկյան աշխարհի նկատմամբ³: Եթե հետազոտությունների ժամանակ

¹ «Тридцатилетие специальных классов Лазаревского Института Восточных языков», Москва, 1903.

² «Труды по востоковедению Лазаревского института», Москва, 1904, вып. XIX.

³ Խախանովի հայագիտական իմացության պտուղները քաղել ենք նրա ռուսերեն հոդվածների ու աշխատությունների ծալքերից: Մեր խորին համոզմամբ՝ առաջադեմ գործիչն իր քայլով ցանկացել է ծառանալ XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայոց դեմ թշնամանք

նա պարբերաբար խորամուխ է եղել հայկական սկզբնաղբյուրների մեջ, որոշ ծանուցումներ լրացրել հայ ժողովրդական բանավոր խոսքի նմուշներով, վանքերի, ամրոցների, հուշարձանների, ձեռագիր մատյանների ու այլ հնությունների նկարագրությամբ, ապա այլևայլ մեկնաբանություններ հուշում են, որ անձամբ կամ աշխատակիցների ուղեկցությամբ շրջագայել է Հայաստանում, մասնավորապես՝ Երևանի նահանգում, Նոր Բայազետի գավառում, Նախիջևանի ամբողջ տարածքում, ինչպես նաև Վրաստանի հայաշատ վայրերում և անհրաժեշտ տեղեկություններ ամբարել տարածաշրջանում հարևանությամբ բնակվող հայ, պարսիկ, քուրդ, թուրք ժողովուրդների մենթալիտետի և նույնահունչ ու նույնաբնույթ երևույթների մասին: Մասնավորապես Նոր Բայազետի գավառի Երանոս գյուղում կատարած ազգագրական գրառումների հիման վրա նա հրատարակել է մի հետաքրքիր ուսումնասիրություն¹: Նախ անդրադարձել է Նոր Բայազետ անվան ծագմանը, ապա ներկայացրել իր տպավորությունները տեղացիների հարսանեկան ծեսերի, երգերի ու պարերի, կրոնական արարողությունների, հավատալիքների բնույթի, ընտանիք ստեղծելու ավանդույթի և ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի պարտականության մասին: Հեղինակի բնորոշմամբ՝ «գերդաստանի գլուխը» տղամարդն է՝ **տանուտերը**, որի իրավունքների մասին, սակայն, չատ չի խոսում: Փոխարենը հավուր պատշաճի անդրադառնում է ընտանիքի իգական սեռի՝ չափահաս թե անչափահաս, ներկայացուցիչների «մեծավորի»՝ **տանտիկնոջ** իրավունքներին: Վերջինիս «իշխանությունը» անխտիր տարածվում է հասուն տարիքի անձանց վրա, նրանց է կարգադրություններ անում՝ հարսներ թե աղջիկներ, ո՛վ պետք է կերակուր պատրաստի, ո՛վ սեղան գցի, ո՛վ կով կթի, ո՛վ գուլպա գործի, ո՛վ անկողին բացի, ո՛վ սենյակ հավաքի և այլն: Մեղանշողին կարող է պատժել զրկելով ճաշից: Տանուտերը երբեմն կարող է առարկել կամ ուղղորդել տանտիկնոջը, բայց «առհասարակ նա չի խառնվում կնիկների գործերին»²:

Հիշատակության արժանի «Ուրվագծեր վրաց գրականության պատմության»³ գրքում Ալ. Խախանովն ուշադրություն է դարձրել Սայաթ-Նովայի եռալեզու քնարին: Բայց մինչ բանաստեղծի խաղերին անցնելը նախապես քննում է վրացական էպոսը և պարականոն գրվածքները (ապոկրիֆ), պատմական ազդեցության շերտադասվածքով այն համադրում է հայկական, հունական, սլավոնական ապոկրիֆների հետ և որոշակի հետևությունների հանգում:

հրահրող վրացի որոշ մոլեռանդ ազգամուլների դեմ՝ թերևս քաջ գիտակցելով, որ հայերի դեմ նրանց գրածներն անհիմն մեղադրանքներ են:

¹ Տե՛ս **Хаханов А. С.**, Из жизни армян Новобаязетского уезда, Эриванской губернии // «Этнографическое обозрение», 1893, № 2, с. 155-163:

² Նույն տեղում, էջ 159:

³ **Хаханов А. С.**, Очерки по истории грузинской словесности, выпуск 3-й, литература XIII-XVIII вв., Москва, 1901.

Հայ եռամեծ աշուղ-բանաստեղծի կյանքին ու գործունեությանը նա նվիրել է ընդամենը երեք էջ (118-120) և նրա մասին գրել է. «Աղա-Մահմադ խանի կողմից Թիֆլիսը գրավելու ժամանակ սպանվեց Վրաստանի նշանավոր երգիչ, երաժիշտ Սայաթ-Նովան: Նա Հերակլ II-ի պալատական տրուբադուրն էր: Հարյուր տարի առաջ Թիֆլիսում Սայաթ-Նովայի անունը փառքով ու պատվով հնչում էր ամենուր՝ արքունի պալատից մինչև «խալխի» խրճիթը: Նա աղքատ հայորդի էր, արհեստով ջուլիակ, կոչումով՝ երգիչ, երգահան: Պատանեկան-երիտասարդական տարիներին խնջույքասեր երգիչ էր, առաջացած տարիքում՝ կնոջ մահից հետո, ձեռնադրվել է կուսակրոն քահանա, ի վերջո՝ կյանքը զոհաբերեց որպես նահատակ. սպանվեց խաչը ձեռքին՝ թշնամու մուտքը հայոց եկեղեցի¹ արգելելու համար: Սայաթ-Նովան թուրքերի պահանջին՝ ուրանալ Քրիստոսին և դառնալ մուսուլման, և սպառնալիքին՝ նրանց իսկ լեզվով պատասխանել է շատ խրոխտ. «Չըխմանամ քրիստոսի, դյոնմանամ իսադան» («Եկեղեցուց չեմ հեռանա, Հիսուսին չեմ ուրանա»): Եվ դրանք նրա վերջին խոսքերն էին: Սայաթ-Նովան իր երգերում պատկերել է սիրո վայելքը, գովերգել սիրած կնոջ հմայքն ու կատարյալ գեղեցկությունը, նա սիրո մեծ երգիչ է: Սայաթ-Նովան գրել է ոչ միայն հայերեն, այլև վրացերեն ու թուրքերեն, որոնք դեռևս անտիպ են»², և երգչի ռուսերեն թարգմանություններից հինգ խաղ է հրամցրել ընթերցողին³:

«Հայերի կացությունը վրացական թագավորությունում»⁴ հոդվածում Ալ. Խախանովը մասնավորապես գրում է. «Հաճախ դժբախտությունը միակ շաղախն է, որի վրա նոր շենք է բարձրանում..., և Վրաստանի ու Հայաստանի ուղիները մեզ պատմում են այդ երկու ժողովրդի, նրանց տանջանք-տառապանքների, ավերված շենքերի ու պղծված սրբավայրերի մասին»⁵:

Ալ. Խախանովն այստեղ վկայում է, որ վրացական տարեգրություններում հայերի մասին առաջին վկայությունները կապված են նրանց կողմից քրիստոնեություն ընդունելու հետ, չնայած հայերը և վրացիները գրեթե միաժամանակ են ընդունել քրիստոնեություն, բայց 451 թ.՝ Քաղկեդոնի ժողովից հետո, հայերն առանձնացան, որը, սակայն, նրանց հարաբերություններում սրման պատճառ չդարձավ, ավելին՝ վրացական նահանգներից մեկում տարածվեց «գրիգորյանական» հավատքը: Այնուհետև՝ ճիշտ է՝ ապարդյուն

¹ Խոսքը Թիֆլիսի հայոց Սուրբ Գևորգ եկեղեցու մասին է, որի գտնվելու վայրը և արտաքին պատկերը տեքստի տողատակում ներկայացնում է ինքը՝ Ալ. Խախանովը. «Վայր իջնելով Մայդան (շուկայական հրապարակ Թիֆլիսում՝ Ալ. Խախ.)՝ կտեսնես հարթ կտուրով, կապույտ գմբեթով մինչ այսօր կանգուն հայոց եկեղեցին. ինչ-որ ժամանակ այն գտնվել է Թիֆլիսի բերդամրոցի բնագծում»:

² **Хаханов А. С.**, Очерки по истории грузинской словесности, с. 219.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 220:

⁴ **Хаханов А. С.**, Положение армян в грузинском царстве // «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1897, с. 657-661.

⁵ Նույն տեղում, էջ 658:

եղան վրաց թագավորներ Բագրատ IV-ի (958-994), Դավիթ Շինարարի (1089-1125) և Թամար թագուհու (1184-1207) նրանց եկեղեցիները միավորելու փորձերը, բայց այս դեպքում ևս նախկին բարեկամական կապերը չխաթարվեցին, ընդհակառակը՝ Դավիթ Շինարարի գահակալության օրոք հայերը գտնվում էին կառավարության բարյացակամ հովանավորչության ներքո: Հենց Դավիթ Շինարարը, օգտվելով Խաչակրաց արշավանքներից, ոչ միայն իր երկիրն ազատագրեց թուրք-սելջուկներից, այլև գրավեց Հայաստանի մայրաքաղաք Անին և ավերված պետության շահերից ելնելով՝ հայերին վերաբնակեցրեց Վրաստանում՝ նրանց համար կառուցված քաղաքներում: Վրաց տարեգիրները, ինչպես նաև հայ պատմիչները (օրինակ՝ Մատթեոս Եդեսացին) վկայում են, որ Դավիթ Շինարարը, հայերի հանդեպ տածելով սեր ու բարյացակամություն, այցելում էր նրանց եկեղեցիները և օրհնություն ստանում հայ քահանաներից¹:

Վերոհիշյալ հարցերից բացի, Ալ. Խախանովը սևեռուն ուշադրության առարկա է դարձրել նաև Հայոսի և Քարթլոսի մասին ասքին. «Հայ և վրաց ժողովուրդները դեռևս վաղ անցյալից պատմության համար պահպանել են դիցաբանական մնայուն արժեք: Հին վրացական տարեգրությունն սկսվում է հայերի և վրացիների ծագման մասին լեգենդով, ըստ որի՝ Հայոսն ու Քարթլոսը Թորգոմի որդիներն են՝ հարազատ եղբայրներ, Հաբեթի սերնդի շարունակողները...»²: Նա նաև հավելում է, որ պատմության ամբողջ ընթացքում դա խաղացել է որոշակի դեր, որ վիպական այդ պատումը հիմնված է որոշակի փաստերի վրա. եղբայրության գաղափարը առաջադիմական է. նրանց պատմական ուղին է նպաստել նման գրույցների ծագմանը:

Օտար նվաճողների դեմ համատեղ պայքարի գաղափարը երկու ժողովուրդների համար կարևոր խնդիրը լինելով՝ դարերի ընթացքում եղել է առաջադեմ գործիչների ուշադրության կենտրոնում: Վրացի պատմիչ Լեոնտի Մրովելի³ մտահղացումը թեև առասպելաբանության ժանրից է, բայց գեղեցիկ է (Ալ. Խախանովը նույնպես ընդունում է դա), այդուհանդերձ ժողովուրդների ազգակցական կապի միտքն արժանի է ուշադրության: Դարեր շարունակ ապրելով հարևանությամբ՝ ընդհանուր են եղել մեր ժողովուրդների հաջողություններն ու անհաջողությունները, հաղթանակներն ու պարտությունները, վիշտն ու ուրախությունը: Պատմիչի նպատակն է հավատ ներշնչել հայերին ու վրացիներին՝ որպես եղբայրներ միավորվելու և ուս ուսի դիմակայելու հարավից ու հյուսիսից հաճախակի հարձակվող թշնամիներին, իսկ դա շատ ավելի հրատապ էր հենց միջնադարում: Պետք է

¹ St' u **Хаханов А. С.**, Положение армян в грузинском царстве, с. 658:

² Նույն տեղում, էջ 659:

³ Լեոնտի Մրովելին XI-XII դդ. պատմիչ է, «Քարթլիս ցխովրեբա» («Քարթլիի կյանքը») ժողովածուի համահեղինակ, Վրաստանի պատմությունն սկսում է Հայաստանի և Վրաստանի՝ Հայոսի և Քարթլոսի ծագումնաբանության լեգենդով:

ღუსთ არძანაჲსი გნახათელ ლეონთი შრომელჲსი, 'ნმან გაჟაჲარ სერმა-
ნელთ ს ჯათაგოდელთ ჰამარ, որ ჰამახონჲ ღრ ჰაჲ ს ჲრავგ ძოჲოდორჲს
განსკოჲსიანთ ს ჯახერჲს: 'სკათი თინენათჲლ ალ. 'თაქანთჲ გორბონსთ-
ჲსიანთ თარჲსერ, 'აჲთ ჰარგჲ 'თაქანთჲსიანთ მთხეგონთ ჲთჲსაჲს არძანჲ ჲ
ჰამრნჲჲსთორ გოდესთი:

ჯარონასკოჲსიანთ მხე ჰესთაგოთოჲს აჲს მჲთჲს ჲ არბარბონთ, Მრ Მრავ-
გასკანს კათაჲაროჲსიონთ 'ჰოგადოჲსიონთ ჲრ გოგაჲერონთ ჰაჲერჲს ჰანჲესა,
ორთჲს გჲოდერონთ Მრავგჲსერჲს ჰესთ 'თათნ ჲჲს ააჲროთ, 'თსკ Მაჲაჲსერონთ,
აჲლ Მთარასკანსერჲს ჰამმამათოჲსამ, მჲ თესასკ 'თჲსნათაროჲსიონთ ს
ათანადანოჲსიონთსერ ჲჲს Მაჲელთმ¹:

ბერბელთ Მრავ აჲათმჲსერჲს ერკერ, 'ნა ანერკჲსა ნოთმ ჲ, Მრ Მრავ არ-
ჲსანერ ჰაჲ ს Მრავ Მნასკოჲსიანთ მჲჲს ერერ თარეროჲსიონთ ჲნ ჲრელ 'ნრანჲ
ჰაჲერჲს რნადელ ჲნ ჰაჲათჲს ადათოჲსიონთ, Მაჲაჲსკანს ს Მაჲა-
ჲსკანს ჰაჲათარ 'თრათონჲსერ (თოჲჲ, ანოოოთ, Მრასთათონთ Მნასკ-
ჲთ ჰაჲერჲს მათჲს ჲ): ჲაჲერ ჲაჲელთმ ჲჲს 'თრენგ კოთნჲ ადათოჲსიონთ:
ჲესთარჲჲ ჲ, Მრ Მრავგჲსერ, 'თ სკჲჲსნ ჲნელთ Მოჲაჲათ Მრჲსთონჲსერ,
ჰასკაჲოჲთმ ჲჲს მჲაჲს მთოთჲსანსერჲს, Მაჲ Მჲ ათანადანაგად ჰაჲ
ელელგონთ ს 'ნრა ჰაჲათაგაჲსერჲს: ჲაჲერჲს ათარელასკანოჲსიანთ გოგა-
ჰნთ XVI Მართმ Მრასთათონთ, ათანგ Მრს ჲარგელჲ, თარადჲლ ჲ 'ნას კა-
ჲოჲსკოჲსიონთ: ბეროთ თარერ ჲელელგჲსერჲს აჲათკანელთ Მათოთ 'ჰაჲა-
ჲასკანს კამ Მრავგაჲასკანს 'თნელ, ჲრ 'თანგართმ ჰაჲ ს Მრავგ თოჲსერჲს
თ Მოჲსკნერჲს სჲრახარჲლ, ამთონანთ, კაგმელ რნთანჲსერ ს ათელბელ
აგჲასკანს კაჲერ: აჲელჲს 'ნრანჲ თინენ რნჲსთორ სრერ, 'თოთ ჲჲს
აგჲაჲს თოჲოჲსერ, ჰადაჲს სერთონთ ჲჲს 'ნას მჲაჲანგ ჲგონთ²:

ჲაჲერ ჲასნასკელ ჲნ Მრასთანჲს კათაჲარმანთ გორბერჲს: ჲერასკ II-
ჲ Მამანასკ XVIII Მარჲ Მერგერჲს გორბოთ Მრენჲთ³ გაჲრ Ჰოჲს Მოჲსანგ-
ჲთმ ჲრ Მოთონ, Მაჲ Მსთ ჲოჲსელჲ Მორგანთჲს კაგმად Მოთ კანთნასკარგჲ
გაჲრ აესოთ ჲ Მოჲსანგჲლ Მჲ Მნ Ჰოჲს Მოთონ, აჲლ რნთანჲსჲს აჲაგჲს, აჲს
ღ 'ჰაჲ Მრენთჲრ Მოთგნახეროჲსიონთ თაჲს ჲ Მაგაჲოთ ჲოჲაჲსერჲს:
Მოჲოთოჲსიონთ არჲონჲჲთმ 'თოჲრახაროჲს ჲ Მათონთ 1801 Მ. Მოთგჲ
XII-ჲ მახჲს ჰესთ, Მაჲ ს აჲსაჲს, 'თსაჲს ნოთმ ჲ ჰელჲსკელ, Მათოთ
ლადაგოჲს Მკაჲთმ ჲ არჲონჲჲთმ ჰაჲერჲს თინგად აგელგოჲსიანთ მათჲს:

შოჲს Მარერჲს 'თ Მერ გჲაჲი Მერელ ჲნ ააჲროთ 'ნას გრასკან-მჲასკო-
ჲაჲსიანთ კაჲერ: Მრავ გორბჲსერ ჲარგმანთმ კამ Მსთ ჰაჲსკანს ნმო-
ჲსერ რნოჲსინასკთ³ ჲნ Მრენთჲრასკანს, აჲათმადგრასკანს კარნოოჲსიონთ
თინგოთ მჲ ჲარჲ ერკერ, ჰათკანსკანს ჲ შჲსოჲარ Მოჲს «'თათასთანა-

¹ Хаханов А. С., Положение армян в грузинском царстве, с. 659.

² სე'უ ჲთჲს თელთმ, ჲგ 661:

³ შანრამასს თნ'უ აბუღაჲე Მ., სომხურ-ქართული ლიტერატურული ურთეროთბო
IX-X საჲსუნებოთ, თბოლსო, 1944:

գիրք հայոց»-ը: «Հայերի հանդեպ լինելով արտակարգ սիրալիր,– նշում է հետազոտողը,– դատարաններում օգտագործում էին Հայոց օրենքների այս ժողովածուն, որը վրացերեն է թարգմանել Վախտանգ արքայագնը»¹:

Ինչպես վկայում է հեղինակը, զինվորական և վարչական պաշտոնները նույնպես գրեթե հավասար չափերով տարածվում էին թե՛ վրացի, թե՛ հայ մասնագետների վրա, ընդ որում՝ հայերը Վրաստանին և վրացական բանակում ծառայում էին բոլորանվեր, ըստ ամենայնի արդարացնում իրենց և ըստ արժանվույն գնահատվում այդ նվիրվածության համար: Հատուկ վստահության արդյունք է և այն իրողությունը, որ հայ երիտասարդները զորակոչվում էին նաև արքունական և պետական անվտանգության զորամասերում ծառայելու²:

Մեծ եռանդ ու նպատակալացություն դրսևորելով՝ ժամանակի ընթացքում հայերը կարողացան հսկայական հարստություն կուտակել, ինչի արդյունքում նաև բարձր դիրքերի հասան պետական ապարատում: Նրանք Թիֆլիս, Գորի, Թելավի, Ախալցխա, Սղնախ քաղաքները Վրաստանում դարձրին առևտրական խոշոր կենտրոններ: Նրանց հարստանալը և պաշտոններ զբաղեցնելն այնքան գրավիչ էր դեռևս XVIII դարում, որ վրաց արքայորդիները, իշխանագուհիներն ու ազնվական փեսացուները ձգտում էին հարսնացուներ ընտրել հայ հարուստ ընտանիքների աղջիկներից³:

Վրաստանում բարձր դիրքի հասած հայազգի նշանավոր գործիչներից Ալ. Խախանովը հիշատակում է Թամար թագուհու արքունիքի մեծահամբավ խորհրդական Զաքարիա Մխարգրձելիին (Երկայնաբազուկ), ավելի ուշ՝ ռազմական գործիչ, գեներալ մայոր Երեմիա Արծրունուն և ուրիշների, բայց հայերի ծառայություններն ու գործունեությունը միայն հրամանատարական կամ վարչական պաշտոններով չէին սահմանափակվում:

Մյուս խնդիրը վերաբերում է Վրաստանում հայերի նկատմամբ անհանդուրժողականության կամ ոչ բարեկամական քարոզի դրսևորումներին: Մրան տուրք տվողներն ու աջակցողները, իհարկե, հիմնականում աղբյու-

¹ National Security Concept of Georgia, հասանելի է՝ <https://mod.gov.ge/uploads/2018/pdf/NSC-ENG.pdf>, (մուտք՝ 7 մայիսի 2020 թ.)

ջանցի կամ աղբբեջանամետ ուժերն են, սակայն հայերի նկատմամբ ատելության խոսքի պրոպագանդան իր սև գործն անում է: Այն արտահայտվում է նաև գիտության ոլորտում^{1,2}: *Կարծում ենք, որ այս ամենը հետևանք է նաև Վրաստանում հայերի նկատմամբ ձևավորված որոշակի բացասական կարծրատիպերի, որոնք հենվում են մրցակցության, պատմական վատ հիշողության գործոնների վրա:*

Տարածքային հակամարտությունների շուրջ ընկալումները: Վրաստանի ազգային անվտանգության ռազմավարությունում Ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկվում է տարածաշրջանում խաղաղության պահպանման ու ամրապնդման տեսանկյունից: Հայաստանն ու Վրաստանը թեպետ փորձում են չանցնել այն պայմանավորվածությունների սահմանը, որոնք կանխորոշում են չեզոք մոտեցումներ Ղարաբաղյան հակամարտության և Աբխազիայի ու Հարավային Օսիայի հիմնախնդիրների վերաբերյալ, այնուհանդերձ ոչ միշտ է կողմերին հաջողվում դա անել: Դեռևս 2001 թ. երկու երկրների միջև ստորագրված բարեկամության մասին պայմանագրով, իսկ հետո արդեն ղեկավարների մակարդակով պարբերաբար հնչեցրած հայտարարությունների տրամաբանությամբ կողմերը չպետք է տարածքային հակամարտությունների խնդրով միջազգային ասպարեզում գործեն միմյանց դեմ: Ընդհակառակը՝ պետք է ձգտեն առաջնորդվել կառուցողականության և տարածաշրջանում կայունության ամրապնդման հրամայականով: Մասնավորապես, վերոնշյալ պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսվում է, որ կողմերը պետք է գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը հակամարտությունների խաղաղ կարգավորմանն աջակցելու համար՝ համապատասխան միջազգային իրավունքի նորմերի և հանուն տարածաշրջանային կայունության և խաղաղության: Պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը պարտավորվում են չձեռնարկել որևէ գործողություն և չաջակցել որևէ գործողության, որոնք ուղղված կլինեն մյուս կողմի դեմ³: Կողմերը չպետք է թույլ տան իրենց տարածքում այնպիսի խմբերի և կազմակերպությունների ձևավորում, որոնք կարող են վտանգ ստեղծել մյուս կողմի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության համար կամ կարող է տնտեսական վնաս հասցնել մյուսին: Սակայն մենք հաճախ ենք ականատես լինում, երբ վրացի պաշտոնյաները գործում են այս թեզերին ոչ համահունչ: Մասնավորապես, քիչ չեն դեպքերը, երբ Աղբբեջանի ու Թուրքիայի գործընկերների

¹ Почему Грузия во всем винит армян?, հասանելի է՝ Подробности: <https://regnum.ru/news/polit/2102955.html>, (մուտք՝ 7 մայիսի 2020 թ.)

² Что способствует антиармянскому мышлению в Грузии, հասանելի է՝ <http://jnews.ge/?p=39952>, (մուտք՝ 7 մայիսի 2020 թ.)

³ «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիր, հասանելի է՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=22078>, (մուտք՝ 24 սեպտեմբերի 2020 թ.)

հետ հանդիպումների ընթացքում նշվում է, որ Վրաստանը ճանաչում է Արցախն Ադրբեջանի տարածքային ամբողջականության մաս, կամ կողմերը հայտարարում են իրենց տարածքի 20 տոկոսի զավթման մասին: Ի դեպ, մեր սուբյեկտիվ դիտարկմամբ՝ այս 20 տոկոսի էֆեկտը Ադրբեջանին և Վրաստանին մոտեցնող ևս մեկ գործոն է եղել: Եթե Վրաստանը խոսում է «ռուսական օկուպացիայի», ապա Ադրբեջանը՝ նրա դաշնակից «Հայաստանի կողմից օկուպացիայի» մասին: Այս խնդրում վրացական դիրքորոշման հարցում էական ազդեցություն էին ունենում նաև Արցախի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների՝ Աբխազիա ու Հարավային Օսիա կատարած այցելությունները: Պաշտոնական Երևանը շատ ավելի զուսպ է Աբխազիայի ու Հարավային Օսիայի հարցերում: Ավելին, 2008 թվականից մինչ այսօր ՀՀ բոլոր ղեկավարները հստակորեն փաստել են, որ պաշտոնական Երևանը պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Կառուցողական չեզոքությունը հայկական կողմը պահպանում է նաև միջազգային ասպարեզում: Ղարաբաղյան հակամարտությունում լարվածության մեծացումը Վրաստանը դիտարկում է նաև տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության մեծացման տեսանկյունից: Ուստի կարծում ենք, որ Արցախում հարաբերական խաղաղությունը բխում է Վրաստանի շահերից:

Ի՞նչ սպասել Վրաստանից Արցախում պատերազմի պայմաններում: 2020 թ. սեպտեմբերի վերջից Արցախում Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմի պայմաններում ավելի պարզորոշ են երևում այն բացերը, որոնք կան հայ-վրացական հարաբերություններում և որոնց ուղղությամբ կողմերը շատ անելիքներ ունեն: Առաջին խնդիրը վերաբերում է Վրաստանի տարածքով տարանցիկ բեռնափոխադրումներին: Այս հարցում պաշտոնական Երևանը ակնկալում է, որ Թբիլիսին պետք է գործի հավասարակշռված. եթե Վրաստանը թույլատրում է, որ Ադրբեջանն իր տարածքով անցկացնի ռազմական նշանակության բեռներ, ապա նույն հնարավորությունը պետք է տրվի Հայաստանին: Իհարկե, սրան հասնելու համար մեզանից դիվանագիտական հսկայական ջանքեր են պահանջում, քանի որ Վրաստանն Ադրբեջանի ու Թուրքիայի հետ ունի ռազմավարական նշանակության պայմանագրեր, որոնք առաջին հերթին վերաբերում են երեք երկրների տարածքով անցնող էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգության պաշտպանության խնդրին¹:

Չնայած վերոնշյալին՝ պաշտոնական Թբիլիսին վստահեցնում էր, որ ռազմական գործողությունների մեկնարկից հետո ժամանակավորապես կասեցրել էր իր տարածքով ռազմական նշանակության բեռնափոխադրումները դեպի Հայաստան և Ադրբեջան: Այդ մասին հայտարարել էր երկրի Ան-

¹ Տե՛ս **Դավթյան Է.**, Էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգությունը Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության համատեքստում, հասանելի է՝ http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15616&sphrase_id=75052 (մուտք՝ 10 հոկտեմբերի 2020 թ.)

վտանգության խորհրդի ղեկավար Վախթանգ Գոմելաուրին¹: Միննույն ժամանակ, Վրաստանը որոշում էր կայացրել ոչ մի ձևով չխոչընդոտել իր օդային տարածքով ուղևորափոխադրումներին և օդային ու ցամաքային տարածքներով քաղաքացիական նշանակության բեռնափոխադրումներին: Մակայն մամուլում և սոցիալական ցանցերի հայկական տիրույթում հաճախ են շրջանառվում լուրեր այն մասին, որ Վրաստանը այս կամ այն կերպ խոչընդոտում էր իր ցամաքային տարածքով դեպի Հայաստան բեռնափոխադրումները, ինչպես նաև շարունակվում էին Վրաստանի տարածքով ռազմական նշանակության բեռնափոխադրումները դեպի Ադրբեջան: Որպես դրանց պատասխան, Վրաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Լաշա Դարսալիան հանդես եկավ հայտարարությամբ՝ հերքելով այդ մեղադրանքները և պնդելով, որ Վրաստանը հավատարիմ է հոկտեմբերի 3-ի երկրի Անվտանգության կոմիտեի որոշմանը²: Վերջինս նաև նշել էր, որ իրենց տարածքով անցնող բոլոր ինքնաթիռները պաշտոնապես գրանցված են որպես քաղաքացիական չվերթներ իրականացնող: Ավելի քան վստահ ենք, որ Ադրբեջանը կարող էր ռազմական բեռնափոխադրումներ իրականացնել նաև քաղաքացիական նշանակությամբ գրանցված չվերթներով: Մենք խնդիր ենք տեսնում նաև հայկական սոցիալական տիրույթում: Այստեղ երբեմն տարածվում են կեղծ լուրեր, որոնք հակավրացական տրամադրություններ են ձևավորում և որից տուժում են հայ-վրացական հարաբերությունները, կամ դրանցում նոր բացեր են առաջանում:

Պաշտոնական Թբիլիսին կարծում է, որ Ղարաբաղյան հակամարտությունը կարող է վնասել ոչ միայն տարածաշրջանի կայունությանը՝ այդպիսով վնասելով Վրաստանի տնտեսությանը, այլև առաջացնել ներքաղաքական խնդիրներ իր երկրում: Այնտեղ ապրում են մեծ թվով հայեր և ադրբեջանցիներ: 2019 թ. Հայաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին այս կապկցությամբ նշել է, որ Վրաստանի էթնիկ հայերն ու ադրբեջանցիները պետք է համերաշխ ապրեն³: Արցախում ընթացող պատերազմի առնչությամբ Վրաստանի նախագահը հայտարարել էր նաև Թբիլիսին՝ Հայաստանի ու Ադրբեջանի միջև բանակցությունների հարթակ դարձնելու իրենց պատրաստակամության մասին⁴:

¹ Грузия запретила транспортировку грузов военного назначения в Армению и Азербайджан, հասանելի է՝ <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9619131>, (մուտք՝ 22 հոկտեմբերի 2020 թ.)

² Վրաստանը շարունակում է պնդել՝ իր տարածքով ռազմական բեռներ չեն տեղափոխվում, հասանելի է՝ <https://www.azatutyun.am/a/30890724.html>, (մուտք՝ 22 հոկտեմբերի 2020 թ.)

³ Армяне и азербайджанцы в Грузии должны жить мирно, հասանելի է՝ <https://ru.armeniasputnik.am/politics/20190313/17682464/armyane-i-azerbajdzhancy-v-georgia-zhivut-mirno-zurabivshili-o-konfliktah-v-regione.html> (մուտք՝ 24 հոկտեմբերի 2020 թ.)

⁴ Тбилиси готов стать площадкой для переговоров Армении и Азербайджана, հասանելի է՝

Վերոնշյալ փաստերը վկայում են պաշտոնական Թբիլիսիի՝ Ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու իրական ցանկությունների մասին: Սակայն, հաշվի առնելով վերջին տասնհինգ տարիների ընթացքում պաշտոնական Թբիլիսիի՝ հիմնախնդրում առավելապես պրոադրբեջանական դիրքորոշման փաստը, կարծում ենք, որ Վրաստանը ոչ միայն այսօր, այլև հետագայում ես, ելնելով Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների մակարդակից, ինչպես նաև իր տարածքային հիմնախնդիրների փաստից, չի կարող ունենալ հավասարակշռված ու անկողմնակալ դիրքորոշում Ղարաբաղյան հիմնախնդրում: Միննույն ժամանակ, Վրաստանին սպասվում են անվտանգային նոր մարտահրավերներ: Ադրբեջանն Արցախի դեմ կովելու համար Սիրիայից իր տարածք է բերել երկու հազարի հասնող արմատական իսլամիստական վարձկաններ^{1,2}: Պատերազմի ավարտից հետո Ադրբեջանին չի հաջողվելու նրանց ամբողջությամբ հեռացնել երկրից, որոնց մի մասը, հնարավոր է, փորձի անցնել Վրաստանի տարածք: Ստացվում է, որ Վրաստանն այս պահին լռելյայն համակերպվում է այն փաստի հետ, որ իր սահմանների մոտ տեղակայվել են իսլամիստ ահաբեկիչներ:

Ամփոփելով փաստենք, որ Վրաստանի հետ հարաբերությունները մեզ համար ռազմավարական առումով խիստ կարևոր են: Այդ հարաբերություններում հնարավորություններն իրացված են ոչ ամբողջապես, ավելին՝ կա աշխատելու հսկա բաց տարածք: Կարծում ենք, որ Վրաստանի հետ խնդիրները կամ որոշ հարցերում դիրքորոշումների տարբերությունները մեզ ոչ թե պետք է հեռացնեն միմյանցից, այլ պետք է փորձենք գտնել ճանապարհներ դրանք հարթելու ու շահերը մերձեցնելու ուղղությամբ:

Роман Карапетян – *Современные армяно-грузинские отношения в контексте политики безопасности Республики Армения*

Отношения с Грузией приобрели стратегическое значение во внешнеполитической повестке дня Республики Армения. Однако с годами в отношениях между двумя странами возникли разрывы, которые привели к ряду проблем. Среди них разные подходы к внешней политике, определенные опасные представления об Армении и армянах в Грузии, позиции сторон в территориальных конфликтах и так далее. На развитие отношений между Арменией и Грузией также влияют многие внешние

<https://ru.armeniasputnik.am/caucasus/20201003/24742400/Tbilisi-gotov-stat-ploschadkoy-dlya-peregovorov-Armenii-i-Azerbaydzhana---Zurabishvili-.html>, (մուտք՝ 24 հոկտեմբերի 2020 թ.)

¹ Turkey sent terrorists from Syria to Karabakh – Assad, հասանելի է՝

<https://www.teletrader.com/turkey-sent-terrorists-from-syria-to-karabakh-assad/news/details/53394484?internal=1&ts=1603899693298>, (մուտք՝ 25 հոկտեմբերի 2020 թ.)

² Russia warns that Nagorno-Karabakh could become Islamist militant stronghold, հասանելի է՝

<https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan/russia-warns-that-nagorno-karabakh-could-become-islamist-militant-stronghold-idUSKBN26R0T2>, (մուտք՝ 25 հոկտեմբերի 2020 թ.)

факторы и вызовы, в том числе плохие российско-грузинские отношения и армяно-азербайджанский конфликт. Основная задача представленной статьи – выявить все факторы, которые обуславливают или формируют армяно-грузинские отношения или являются препятствием для их развития. В контексте масштабной войны, развязанной Азербайджаном в Арцахе в 2020 году, эти вопросы становятся еще более актуальными.

Roman Karapetyan – *Armenian-Georgian Current Relations in the Context of Security Policy of the Republic of Armenia*

Relations with Georgia have acquired strategic importance on the foreign policy agenda of the Republic of Armenia. However, over the years, there have been some gaps in relations between the two countries, which have led to a number of problems. Among them are the different approaches to foreign policy, certain dangerous perceptions about Armenia and Armenians in Georgia, the approaches of the parties to territorial conflicts, and so on. The development of relations between Armenia and Georgia is also influenced by many external factors and challenges, including the bad Russian-Georgian relations and the Armenian-Azerbaijani conflict. The main task of the presented article is to identify all the factors that condition or shape the Armenian-Georgian relations or are an obstacle for their development. In the context of the large-scale war unleashed by Azerbaijan in Artsakh in 2020, these questions become even more important.

Ներկայացվել է 19.10.2020

Գրախոսվել է 30.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆԻ «ՉՍՊԻԱՑԱԾ ՎԵՐՔ» ՎԵՊԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԹՈՒՂԹ

Բանալի բառեր – Ստեփան Ալազաջյան, «Չսպիացած վերք», Կ. Պոլիս, վեպ, թուրքական բռնապետություն, եվրոպական տերություններ, դիվանագիտություն, հայկական վիլայեթներ, բարենորոգումներ, բռնազաղթ, Ֆնդիճաք, Մեռնյաններ

Բոստոնի «Նոր օր» թերթում 1995 թ. ապրիլի 22-ին տպագրած իր խոսքում Ստեփան Ալազաջյանը (1924-2010) վկայում է, որ «Չսպիացած վերք» վեպը գրելու մտահղացման ազդակները եղել են Հալեպի Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցու արխիվում իր մեծ հոր ու նրա եղբայրների՝ սպանդից փրկվելու օգնության խնդրանքով Հալեպի հոգևոր առաջնորդին ուղղված գիրը հայտնաբերելը, ապա՝ հայ գրողների ու մտավորականների հետ իր՝ Ստամբուլ այցելության ժամանակ Բալկանյան ու Համաշխարհային առաջին պատերազմների տարիների մի քանի թուրքական արաբատառ թերթերի նյութերին ծանոթանալը. «Իմ նոր վեպի՝ «Չսպիացած վերք»-ի մտայղացումն այդ օրն էր, առիթը՝ այդ փոքրիկ, մատիտով գրուած նամակն ու Վոսիտրի ափի այս տեսարանը»¹:

Դեռևս 1971 թ. Բեյրութի «Զարթոնք» թերթի աշխատակից Նազարեթ Թոփալյանին տված հարցազրույցում ապագա ծրագրերի վերաբերյալ հարցին Ալազաջյանը պատասխանել է, որ ավարտելու վրա է «Չսպիացած վերք» վեպը՝ նվիրված Կիլիկիայի բնակավայրերից մեկի՝ Ֆնդիճաքի հերոսամարտին. «Այն հարցերը, թե ինչո՞ւ ֆնդտրճաքցիները չտեղահանուեցան, այլ կռուեցան մինչև վերջին շունչը, սոսկ ինքնապաշտպանութեան բնոյթ չէին կրեր, այլ կը դրսևորէին հայ ազատասիրութեան ոգին... Չէ՞ որ անոնք գիտէին, թե իրենց փոքրաթիւ քանակով, կանոնաւոր զօրքի բացակայութեան, կարող չէին յաղթելու թշնամիին, որ հազարապատիկ ուժ ուներ և կանոնաւոր բանակ:

Ապա ինչո՞ւ կռուեցան, հարցեր՝ որոնք և՛ պատմութեան, և՛ գեղարուեստական արձակի համար պէտք է դաստիարակչական և ճանաչողական մեծ արժէք ունենան»²:

¹ Ալազաջյան Ստ., Հայ մամուլի էջերում, Քալիֆոռնիա, 2008, էջ 269:

² «Զարթոնք», 9 դեկտեմբերի 1971:

Վերհանվող թեման նոր չէր գրողի ստեղծագործական աշխարհում: Կարելի է ասել, որ Ալաջաջյանի գործերի մի զգալի մասը խաբսխված է մեր ազգային ու քաղաքական հենց այդ խնդիրներին: Նրա առաջին հաջողված գործերը («Անապատում», «Պարտություն» և այլն) արդեն ընդգրկում էին այդ ասպարեզի բարդ խնդիրների արծարծումներ: Հայ ժողովրդի գոյապայքարի թեման հետագայում ևս մշտապես մնաց գրողի ուշադրության կիզակետում և մինչև անգամ այն գործերում, որոնք առաջին հայացքից թվում է, թե այլ «ասելիք» ունեն:

Երբ Ալաջաջյանը ձեռնարկեց 1912-1915 թթ. դեպքերին վերաբերող «Չսպիացած վերք» վեպի շարադրումը, հրապարակի վրա էր և արդեն լայն ճանաչում էր գտել նրա «Եղեգները չխոնարհվեցին» վեպը, որը ժամանակագրական ընդգրկումով, փաստական վկայակոչումով և գեղարվեստորեն ներկայացնում էր Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարիների դեպքերի ու նաև 1921 թ. թուրք-ֆրանսիական համաձայնությունների խարդավանքների և դրանց հետևանք՝ Ջեյթունի վերջին հերոսամարտի պատկերները:

Վեպում Ալաջաջյանն օգտագործել է պատմական տարալեզու փաստաթղթեր՝ գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հայերեն մամուլի հարուստ հավաքածուներից:

Եռահատոր այս վեպի առաջին հրատարակության (1989 թ.) առթիվ ընթերցողին ուղղված «Այս վեպը...» վերնագրով իր խոսքում հեղինակը գրում է. «Համաշխարհային առաջին պատերազմում Մերձավոր Արևելքի իրադարձությունների պատմությանը նայել եմ փաստերի աչքերով և պատմության աչքերով՝ իմ ժողովրդի ճակատագրին: Չեմ մեղանչել: Գիտակցել եմ, որ իմ ժողովրդի հանդեպ կատարվել է մի մեծ անարդարություն, և այդ անարդարությունն էլ պարտավորեցրել է ինձ գրել այս վեպը:

... Ամեն մի կերպար, իրավ, մի անձնավորություն է, ամեն դրվագ ու դեպք՝ ճշմարիտ մի պատահար, ուրեմն, ճշմարիտ մի պատմություն է այս վեպը:

... անիրավված ժողովրդի զավակն եմ ես, և այդ զավակի պարտքի հատուցումն է այս վեպը:

... արտասուքից բխող փոքրիկ սփոփանք է այս վեպը...»¹:

«Ճշմարիտ մի պատմություն...», «պարտքի հատուցում...», «արտասուքից բխող փոքրիկ սփոփանք»: Արդյո՞ք ասված չէ ամեն բան, որ բնութագրում է վեպը: Եվ իրոք, շուրջ 1500 էջից բաղկացած այս վեպը ընթերցողի համար լուսաբանում է մեր ժողովրդի անցած ուղու ամենաճակատագրական ժամանակահատվածներից մեկում՝ այս անգամ՝ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին ծրագրված և պատերազմի ըն-

¹ Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. I, գիրք 1-ին, Երևան, 1989, էջ 5-6:

թացքում իրականացված այն բռնությունների ու նախաձիռի հավաստի պատմությունը, որը բաժին հասավ արևմտահայությանը, և որն էլ «*պարտքի հատուցման*» գերագույն գիտակցությամբ ու արտասովխառն զգացումների տպավորիչ պատումով մեզ է ներկայացնում Ալաջաջյան գրողն ու պատմիչը, ազգագրագետն ու աշխարհագրագետը, քաղաքագետն ու գեղագետը:

Քիչ գրքեր կան, որ պատկերում են «*անպատմելին*»՝ հայոց գաղթն ու աքսորը: Ալաջաջյանը ստանձնել է այդ դժվարին գործը՝ լավ գիտակցելով, որ *եղենը անպատում է, որ եղենը հնարավոր չէ պատմել*: Այդուհանդերձ, գրողը՝ որպես ժողովրդի այդ անպատմելի սպանդի հետևանքներն իր վրա զգացած ազնիվ հոգի, այդ մասին գրում է որպես աքսորն ու մահը վերապրող իսկական արվեստագետ:

Ուղղակի զարմանք է հարուցում շրջանի իրադարձությունների, մանավանդ՝ մեծ տերությունների կատարած քաղաքական խարդավանքների և դիվանագիտական նենգությունների, թուրքական բռնակալության բուն էության, երկրում գործված նախաձիռների, ինչպես նաև արևմտահայոց կյանքի այն իմացությունը, որ հեղինակը դրսևորում է վեպի ամբողջ շարադրանքի ընթացքում: Այս առումով կարևոր նշանակություն են ունեցել ոչ միայն այլևայլ երկրների պատմություններից, մամուլից քաղված տվյալներն ու դիվանագիտական աղբյուրներից ձեռք բերված վկայությունները, այլև անձնական կյանքի այն ճանապարհը, որը վիճակվեց անցնել ծագումով արևմտահայ, ճակատագրի բերումով սփյուռքահայ և սրտի կանչով հայրենադարձ Ստեփան Եղիայի Ալաջաջյանին:

Ալաջաջյանը XX դարի 50-60-ական թթ. խորհրդահայ գրական այն սերնդի ներկայացուցիչներից մեկն էր, որն իր գրականությամբ ու մշակութային գործունեությամբ անուրանալի ավանդ ունեցավ մեր ազգային գիտակցության նոր վերելքի գործում, իր ստեղծագործություններով ու արծարծած թեմաներով ուղղակիորեն ազդեց երբեմն հակասական, երբեմն պարուրաձև ընթացող մշակութային ու գաղափարախոսական ոլորտների վրա, ասպարեզներ, որտեղ իր իսկ խոսքերով ասած՝ «... *մերթ փառքն էր առավել, մերթ՝ ցավը*»:

Գրական նախափորձերը կատարելով դեռևս 15 տարեկանում՝ Ալաջաջյանը փորձել է մուսաների աշխարհ մտնել չափածո խոսքով: Հալեպում տպագրել էր «Վշտի ծաղիկներ» գիրքը: Իսկ երբ 22 տարեկանում՝ 1946 թ., հայրենադարձվեց, բանաստեղծությունը «*նեղ*» եղավ նրա մտքի թռիչքներին, և շատ շուտով մեկը մյուսի հետևից լույս տեսան նրա արձակ գործերը՝ «Անապատում» (1953), «Պարտություն» (1957), «Այգիների աշխարհում» (1961), «Փյունիկ» (1962), «Առանց հայրենիքի» (1963), «Արծիվն ու հովիվը» (1964): Ստեղծագործական այս ճանապարհին ի վերջո հանգեցրեց «Եղեգները չխոնարհվեցին» երկհատոր վեպի հզոր երկունքին (1966, 1967), որին հաջորդեց 1975 թ. տպագրած «Մաղլենն ապրում է Փարիզում» գիրքը: Ստեղծագործական երկրորդ փուլը որոշ առումով պայմանավորված էր գրողի առողջական դժվարին խնդիրներով:

1978 թ. տպագրվեց նրա այդ վիճակի տրամադրություններն արտահայտող «Անառագաստ նավակներ» գիրքը, ապա լույս տեսան «Ապառաժները արտասվել գիտեն» (1980), «Ոսկեգույն ծիրկաթին» (1981), «Վիրավոր եղջերուն» (1984) գործերը:

1989, 1990, 1993 թթ. լույս տեսած «Չսպիացած վերք» եռահատոր վեպը Ալաջաջյանի տաղանդի նոր փայլատակումը եղավ, որտեղ արտահայտվեց գրական այն մեծ ձիրքը, որը ստեղծագործական բեղուն տարիների արդյունք էր:

Ալաջաջյանի կյանքի հաջորդ փուլը, ստիպողական դեպքերի բերումով, սփյուռքյան շրջանի արտահայտությունն է: 1973 թ. Մոսկվայում կրելով ձայնավարների վիրահատություն, որը, ցավոք, դրական արդյունք չտվեց, 1992 թ. նա ստիպված մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես), որտեղ խմբագրեց «Առագաստ» գրական ամսագիրը: Բուժումներին զուգահեռ Ալաջաջյանը այստեղ ևս շարունակեց գրական գործունեությունը՝ իր «ձայնը» լսելի դարձնելով նաև ամերիկյան հողում, դրսևորելով անմնացորդ հայրենասիրություն ու հայասիրություն, և ստեղծվեցին «Լուսավորյալ խորաններ» (1993), «Ատրուշաններ» (1995), «Ճամփեզրի վրա» (1998), «Վաթսունականներ» (2002), «Հայ մամուլի էջերում» (2008) գրքերը:

Ալաջաջյանի գրած սցենարներով են «Հայֆիլմում» նկարահանվել «Կտոր մը երկինք» (1980) և «Ճերմակ անուրջներ» (1984) կինոնկարները:

Տաղանդավոր գրողը նաև թարգմանիչ էր, և նրա թարգմանությամբ են տպագրվել Վիլյամ Շեքսպիրի, Ժան Պոլ Սարտրի, Հերբերտ Ուելսի, Վիլյամ Սարոյանի և մի շարք այլ ականավոր հեղինակների գործեր:

Երբ լույս տեսավ Ալաջաջյանի «Չսպիացած վերք» եռագրության առաջին հատորը, հեղինակն արդեն ոչ միայն ճանաչված, այլև վաստակ ունեցող գրող էր, ում գործերի մի մասը լույս էր տեսել օտար լեզուներով՝ ռուսերեն, պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն, չեխերեն...:

Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպն իր արժանի տեղն ունի XX դարի մեր գրականության այնպիսի անուրանալի գործերի կողքին, ինչպիսիք են Երվանդ Օտյանի՝ հայոց եղեռնապատումն արտացոլող «Տասներկու տարի Պոլսեն դուրս», «Արյունոտ հիշատակներ» հուշագրությունները, Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասքը, Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը», Վազգեն Շուշանյանի «Երկիր հիշատակաց», Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմները, Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ», Սերո Խանգադյանի «Խոսք Հայաստանի լեռներ» վեպերը, Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը»...: Գործեր, որոնցում գեղարվեստական բարձր վարպետությամբ պատկերվում են մեր ժողովրդի նկատմամբ թուրք մարդասպանների իրականացրած բռնությունները, ջարդերը, հայրենի բնօրրանից արտաքսումները: Եվ, ինչպես մյուս հեղինակները, Ալաջաջյանը ևս իր խոսքի պաթոսն ուղղել է ոգեղեն ուժի, մեր ազգային նկարագիրը բարձր պահող բարոյական արժեքների բացահայտումներին, որոնք ապրեցրել են

ժողովրդին ու հայ մարդուն մեր պատմության դժվարին քառուղիներում:

Ալաջաջանի այս վեպը խորքային կամուրջներ ունի նաև Ֆրանց Վերֆե-լի «Մուսա լեռան քառասուն օրը» երկի հետ, որի պատկերած աշխարհը և իրադարձությունները ժամանակային առումով մոտ են ազգային գոյամար-տի նույն իրողություններին: Եթե այս ամենին հավելենք այն փաստը, որ այս տարի՝ 2020 թ. օգոստոսին, լրանում է Կիլիկիայում (Ադանայում) հայերի և քրիստոնյա մի քանի տեղաբնակ ժողովուրդների կողմից հրապարակված Անկախության հռչակագրի 100-ամյակը, ապա պատահական չէր, և դեռ ավելին՝ անհրաժեշտություն էր դարձել մեր օրերում այս հրաշալի վեպի վե-րահրատարակությունը, որը և հովանավորել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշա-թաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»:

«Զսպիացած վերք» վեպն իր հղացմամբ ու կառուցվածքով բազմաճա-րային և բազմահանգուցային գործ է, թեմատիկ առումով՝ պատմական-քա-ղաքական, պատկերային եղանակով՝ գեղարվեստական: Հյուսվածքի այս բազմազանությունը Ալաջաջանին հնարավորություն է ընձեռել անդրադառ-նալ իրականության մեջ տեղի ունեցած տարաբնույթ իրադարձությունների, հասարակական ու ազգային կյանքի բազում խնդիրների, մարդկային մտա-ծումների, ապրումների, դատումների, հոգեբանության և գործունեության բնութագրական դրսևորումների: Վեպում պատկերված են պատմական մի շարք անձինք, որոնք էական դերակատարություն են ունեցել այդ շրջանի իրադարձություններում: Գրողը շրջանառության մեջ է դնում տասնյակ ու հարյուրավոր տեղանուններ, փողոցների ու թաղերի, տաճարների, վանքե-րի, սրբավայրերի, մզկիթների, ինչպես նաև աշխարհագրական այլևայլ ան-վանումներ, որոնք հազեցնում են ներկայացվող դեպքերը, պատումը դարձ-նում որոշակի ու հավաստի: Այդպես արևմտահայ աշխարհի մասին մեզա-նում գրել են երկու հեղինակներ՝ Հակոբ Մնձուրին և Խաչիկ Դաշտենցը, որոնց ստեղծագործությունները, գրականություն լինելուց զատ, Հայաստան երկրի անդաստանի ու լեռնաշխարհի իրական վավերագրությունն ու գե-ղարվեստական քարտեզագրումն են, խորին խորհուրդը բնաշխարհիկ հայ մարդու կյանքի:

Ալաջաջանի վեպի սյուժեն ծավալվում է Բեռլին-Բոսֆոր-Բաղդադ (կարճ՝ ԲԲԲ) երկաթուղու շինարարության հետ կապված իրողությունների պատկերմանը զուգահեռ, սակայն բուն նպատակը Թուրքիայի մայրաքաղա-քում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների, հայաբնակ գավառ-ներում ծավալված դեպքերի վերհանումն է, Կիլիկիայի հայաբնակ մի փոք-րիկ գյուղի՝ Ֆնդիճաքի հերոսամարտի ցուցանումը, այդ ամենի հետ կապ-ված՝ եվրոպական տերությունների նենգ քաղաքականության ու թուրքական բռնակալության ճիրաններում տառապող արևմտահայության դաժան ճա-կատագրի բացահայտումները: Հեղինակային ասելիքը հստակ է. կառուցվող երկաթուղին, երկրներն ու ժողովուրդներին իրար կապելու միջոց լինելու փոխարեն, պետություններին և ազգերին իրար հակադրելու ու միմյանց դեմ

պատերազմելու ուղիներ է հարթում, ստեղծում շահադիտական մի մթնոլորտ, որից օգտվում են ինչպես պատերազմ հրահրող առանձին ուժեր, այնպես էլ բռնապետական իշխանությունները: Պատերազմ, որն իրար դեմ է հանել նաև նույն ազգերին պատկանող հազարավոր մարդկանց՝ հրեաներին, հայերին, հույներին, սիրիացիներին..., ովքեր կռվում էին թշնամական բանակների հակադիր ռազմաճակատներում և իրար սպանում:

Աշխարհի նոր վերաբաժանման համար մեծ պետությունների սանձազերծած պատերազմը*, ի վերջո, ողբերգական պիտի լիներ հատկապես հայ ժողովրդի համար: Դարանակալ Թուրքիան, որը մինչ այդ էլ հայահալած քաղաքականություն էր վարում, հնարավորություն ստացավ նոր թափով իրականացնել իր բռնատիրական նկրտումները՝ ոչ միայն սահմանափակել ու արգելքներ հարուցել թուրքական կայսրության մեջ ապրող արևմտահայության առջև, այլև իրականացնել «Թուրքիան թուրքերին» և առաջին հերթին՝ «Թուրքիան առանց հայերի» վաղուց փայփայած մարդատյաց ու ազգատյաց քաղաքականությունը, որը հասնում էր մինչև այն աստիճանի, որ պիտի ոչնչացվեին նաև... այլազգի մուսուլմանները**:

Թուրքերի վարած այդ քաղաքականությանն ուղղակիորեն աջակցում էր Գերմանիան, քողարկված ձևերով նպաստում էին ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի ու Ֆրանսիայի պետական շրջանակները:

Թուրքիան «գերմանացվում»*** էր ոչ միայն զինամատակարարմամբ (այդ թվում՝ ռազմանավեր), սպայակազմերով և զինվորներով, այլև գերմանական դպրոցներ, որբանոցներ, ռազմական բուժօգնականներ ու բուժանձնակազմեր, որբախնամ կազմակերպություններ, մամուլի օրգաններ և այլ կառույցներ ստեղծելով: Տնտեսական, ռազմական, կրթական, հովանավորչական նման ներխուժումն այլ բան չէր, քան քաղաքական տիրակալություն, որի դրսևորումներից մեկը ԲԲԲ երկաթուղու կառուցումն էր, որը, ինչպես նշում է վեպի հեղինակը, հավասարագոր էր Թուրքիային շղթայելուն՝ հեռահար մի նպատակ, որը, ի տարբերություն Անգլիայի՝ տարածաշրջանին նավերով տիրելու ծրագրերի, երկաթգծով մխրճվելով պիտի կատարվեր:

Ալաջաջանի վեպը հենց այդ իրողությունն է վերհանում և պատմական հիմնավորումներով ու գեղարվեստական միջոցների կիրարկմամբ ցույց տալիս, որ ԲԲԲ երկաթե ուղին հայ ժողովրդի համար երկաթե շղթա ու մահվան ևս մի ճանապարհ դարձավ:

* Միայն Ռուսաստանը զորակոչել էր շուրջ 15 միլիոն մարդ (տոդատակերի բոլոր ծանոթագրություններն իմն են – Ա. Ա.):

** Նպատակ կար քրդերին ևս թուրքացնելու, բայց, քանի որ նրանք զինված էին, առայժմ նրանց օգտագործում էին իրենց շահերի համար:

*** Գերմանիայի և Հունգարիայի միացյալ թագավոր Զիգսմունդի ձեռնարկած խաչակրաց արշավանքը XIV դարում օսմանցիների դեմ պարտությամբ էր ավարտվել, բայց գերմանացիները երբեք չէին հրաժարվել Թուրքիան իրենց ազդեցության տակ պահելու ծրագրերից:

Եվրոպական տերությունները արևմտահայության հանդեպ իրականացվող թուրքական ոճրագործությունների նկատմամբ, Ալաջաջանի պատկերավոր խոսքով՝ «*արձանիկների կեցվածք*» էին ընդունել, արձանիկներ, որոնցից մեկի անունը Անգլիա էր, մյուսինը՝ Ֆրանսիա: Ինչպես գրում է վեպի հեղինակը. «... *ձայն չլսող, բան չտեսնող, չզգացող, չմտածող անշարժ արձանիկներ*»¹: Այդ արձանիկներից մեկի մասին Ալաջաջանը կգրի նաև, թե տեսնես աշխարհում կա՞ մի ժողովուրդ, որ սիրի անգլիացիներին:

Հայկական ջարդերի այդ մշտական «*հանդիսատես-դիտորդները*» երբեմն էլ «*միջամտել*» են, բայց միջամտել են ջարդերից հետո՝ միշտ հյուսելով խարդավանքների նորանոր հանգույցներ: Չէ՞ որ մեծ տերությունները միշտ էլ գոհում են իրենց սիրողներին՝ իրենց չսիրողներին սիրաշահելու համար: Այդպես էր, որ այդ տերությունները թուրքերին երբեք չլքեցին, ավելին, ամեն ինչով ուժեղացրին նրանց: Այդպես էր, որ Անգլիան Դարդանելում կռվում էր՝ ոչ թե այն գրավելու, այլ ռուսներին Բոսֆորը գրավելու հնարավորությունից զրկելու համար: Իսկ Ֆրանսիան գրավված Կիլիկիան հետո պիտի Թուրքիային նվիրեր: Ռուսաստանը ևս շահագրգռված չէր հայկական բարենորոգումներով, քանի որ կվերանային այն պատրվակները, որոնցով նա ուզում էր իրականացնել դեռևս Պետրոս Մեծից սկսած իր մեծապետական ծրագրերը՝ բյուզանդական երբեմնի մայրաքաղաքի՝ Կոստանդնուպոլսի* գրավումը:

Նույնանման նվաճողական ծրագրեր ունեին ոչ միայն Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիան ու Ֆրանսիան, որոնք ոչ մի կերպ չէին հանդուրժելու Ռուսաստանի մուտքը Միջերկրականի ջրեր, հունական Արշիպելագի կղզիներ ու Դարդանելի նեղուց, այլև կայզերական Գերմանիայի գլխավորությամբ գործող ավստրո-հունգարական ուժերը, որոնց սատարում էր նաև Իտալիան: Անհոգ լռություն էր պահպանում նաև Հռոմի պապը: Հաշվարկը պարզ էր. կաթոլիկ Ավստրիան նրա համար շատ ավելի մեծ նշանակություն ուներ, քան հայկական բարենորոգումների հարցը: Եվ այս ամենը խիստ ձեռնտու էր իր «*չեզոքությամբ*» միշտ նենգ Թուրքիային:

Հաշտ չէին ու միմյանցից հողային պահանջներ ունեին Ռումինիան, Սերբիան, Հունաստանը, Բուլղարիան, Չեռնոգորիան: Կային նաև Պաղեստին պետության ստեղծման հարցը, Լիբանանի ու Ալբանիայի պահանջները, Եգիպտոսի ու Եմենի անկախության խնդիրները: Այս հարաբերություններում գաղտնի ու բացահայտ կնքվում էին պայմանագրեր, թեև բոլորն էլ գիտեին, որ ոչ մի համաձայնագիր խաղաղություն չի բերելու, ավելին, ոչնչացնում է նախորդ կնքվածները և նախապատրաստում հաջորդ պատերազմը: Ռազմական վերոհիշյալ միությունները, պետություններն ու իշխա-

¹ Ալաջաջան Ստ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 4-րդ, Երևան, 2019, էջ 588:

* Ռազմական քարտեզներում այն նշվում էր Ցարգրադ անվամբ:

նությունները* դավում էին միմյանց և դավաճանում: Ավելի քան վատթարագույն իրադրություն էր Թուրքիայում: 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքերի կառավարությունն իր երկու՝ Իթիլաֆական ու Իթթիհադական թևերով, որոնց միջև հակասությունը հասնում էր ընդհուպ սպանությունների, և որոնց, ինչպես գրում է Ալաջաջանն իր վեպում, *հայրություն* էին անում «*բոլոր եվրոպական տերությունները*», սանձազերծել էր բալկանյան պատերազմը, որի արդյունքում 1912 թ. և 1913 թ.** Թուրքիան պարտություն կրեց, և այդ երկրներից՝ Սերբիայից, Բուլղարիայից, Մակեդոնիայից Թուրքիա ներգաղթած մուսուլմանական զանգվածները (մուհաջիրները) իրենց վրեժը սկսեցին լուծել տեղի քրիստոնյա բնակիչներից: Նրանց հրահրում էին իշխանությունները՝ դրանում տեսնելով իրենց մշակած ծրագրերի իրականացման միջոցներից ևս մեկը: Ալաջաջանը գրում է, որ արյունարբու այդ զանգվածների գործողությունների մեղավորները նաև մեծ տերություններն էին, քանի որ նրանք չէին կարող չկռահել, որ Բալկաններից քշվածները վրեժի իրենց ծարավը պետք է հագեցնեին թուրքաբնակ քրիստոնյաների արյունով:

Բեռլինի վեհաժողովից հետո (1878 թ.), երբ ստորագրվեց 61-րդ հոդվածը, ըստ որի՝ բարենորոգումներ պետք է կատարվեին հայոց կյանքում, սուլթանն էլ ավելի սաստկացրեց հալածանքները. հայ եկեղեցական սահմանադրության արգելում, ազգային ժողովի նիստերի արտոնագրկում, հայկական դպրոցներից *հայ ժողովրդի պատմության ուսուցման վերացում*, «Հայաստան» բառի օգտագործման արգելք թերթերում, գրքերում, բեմերում:

Բալկանյան պատերազմի ընթացքում բարենորոգումների հարցը նոր զարգացումներ ստացավ: 1914 թ. փետրվարի 8-ին ստորագրվեց, այսպես ասած՝ «Բարենորոգումների օրենքը», ըստ որի՝ նաև վերահսկիչ-կառավարիչներ պիտի գային Եվրոպայից: Հոլանդացի Վեսթենեկն ու նորվեգացի Հոֆը պետք է տասը տարով դառնային հայաբնակ գավառների կառավարիչներ: Առաջինը՝ Տրապիզոնի, Սեբաստիայի և Էրզրումի, երկրորդը՝ Վանի, Բաղեշի, Խարբերդի և Տիգրանակերտի: Ի հակակշիռ այդ ամենի՝ թուրքական դաժանությունները ծավալվեցին «*բարենորոգման*» ենթակա հենց այդ շրջաններում: Դրա դրսևորումներից մեկն էլ եղավ նույն ժամանակամիջոցում գաղտնի կնքված գերմանա-թուրքական համաձայնագիրը, ըստ որի՝

* Անտանտի բլոկի մեջ մտնող Ռուսաստանի կառավարության ղեկավարը՝ վարչապետը, ազգությամբ գերմանացի էր, Նիկոլայ II-ի կինը ևս գերմանական ծագում ուներ, ցարական պալատում կային և այլ բարձրաստիճան գերմանացիներ, իսկ Ռուսաստանում ապրում էին շուրջ 2.5 միլիոն գերմանացիներ, և սա այն դեպքում, երբ ռազմաճակատների առաջին գծում իրար էին խոշտանգում ռուս և գերմանացի զինվորները:

** 1913 թ. հունվարին տեղի ունեցած ներկուսակցական «*հեղափոխության*» հետևանքով իշխանության ղեկն իթիլաֆականներից (համաձայնականներ) անցավ իթթիհադականներին (միութենականներ), որոնք շատ ավելի հայատյաց էին:

Անատոլիայի հայերը պետք է Միջագետքի անապատները աքսորվեին: Ստորագրված «*բարենորոգումների*» դրույթներից և ոչ մեկում չկար «*հայ*» բառը: Այնտեղ նշվում էր «*թուրք*» և «*քրիստոնյա*» բնակիչներ: Արևելյան Անատոլիայում, հայերից բացի, քրիստոնյա այլ ժողովուրդներ չկային: Մինչդեռ, մի կողմից գրվում էր ազգությունը, մյուս կողմից՝ կրոնը: Այլ խոսքով, թուրքերը չէին ընդունում, որ գոյություն ունի հայ ազգ: Նրանք հայերին պարզապես անվանում էին «*մեր հողում բնակվող քրիստոնյա բնակիչներ*»: Թուրքիան, բարենորոգումների նկատմամբ արտաքուստ դրսևորելով համակերպություն, իրականում հզոր դիմադրություն էր ցուցաբերում բոլոր երեք մեծ տերությունների դեմ, քանի որ այդ երեքի միջև առկա էին մեծ հակասություններ: Եվ հենց այդ հակասություններն օգտագործելով՝ Թուրքիան որոշ զիջումներ էր կատարում Անգլիային ու Ֆրանսիային՝ դրանով, ոչ միայն նրանց միջոցները ծառայեցնելով իր տնտեսության շահերին, այլև սիրաշահելով, նրանց հեռու էր պահում հայկական հարցերից:

Թուրքիան արդեն պատմական փորձ էր ձեռք բերել, թե ինչպես կարելի է խաբել մեծ տերություններին, ինչպես և «*բավարարել*» փոքր ժողովուրդների արդարացի պահանջները: Թուրքական բռնակալության դեմ դեռևս 1875-1876 թթ. ըմբոստացած սերբերի և բուլղարների նկատմամբ կիրառված ջարդերի պատճառով Անգլիան, Ռուսաստանը և Ավստրիան Աբդուլ Համիդից պահանջել էին իրենց երաշխավորությամբ բարենորոգումներ կատարել, և սուլթանը, դիմելով խորամանկության, հայտարարեց միապետության ավարտ ու սահմանադրական իշխանության հաստատում: Բոլորը գոհ մնացին:

1864-1868 թթ. Թուրքիայում կայացած վարչական բաժանումներից մեկը անվանվում էր «Էրմենիստան վիլայեթ», որն ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի որոշ տարածքը միայն: Բաժանումն այնպես էր արված, որ հայերը մեծամասնություն չկազմեն և միացվեն այլ վիլայեթների՝ Քրդստանի և այլոց: 1878 թ. և 1880 թ. նոր բաժանումներ կատարվեցին նույն նպատակով, իսկ 1886 թ. Արևմտյան Հայաստանը բաժանվեց վեց վիլայեթների (նահանգների)՝ Էրզրումի, Խարբերդի, Վանի, Բիթլիսի, Սեբաստիայի, Տրապիզոնի:

Թուրքալեզու ժողովուրդների միասնական պետություն ստեղծելու նվաճողական ծրագրի ճանապարհին հայերին բարենորոգումներ տալը կնշանակեր նրանց նախապատրաստել ինքնուրույնության: Այդ իսկ պատճառով թուրքերը տարբեր կեղծիքների ու օրինազանցությունների էին դիմում՝ հայ ժողովրդի քանակը քիչ ցույց տալու համար: Պետական տուրքեր չվճարածներին, զինվորական ծառայության չգրանցվածներին, պետական անձնագիր և կայուն բնակավայր չունեցողներին, հայ բողոքականներին ու կաթոլիկներին, երկրից ժամանակավորապես դուրս գտնվողներին, բանտերում հայտնվածներին և այլևայլ զանազան շեղանքների նրանք չէին ընդգրկում հայերի թվաքանակի մեջ:

Ալաջաջյանն իրավացիորեն նշում է, որ, ելնելով աշխարհում ընթացող

դեպքերի տրամաբանական ընթացքից, մեծ տերությունների գիշատիչ քաղաքականությունը չէր կարող չհանգեցնել նոր պատերազմի: Եվ Թուրքիան, որ անպայմանորեն ներգրավվելու էր այդ պատերազմի մեջ, որևէ բարենորոգում չէր կատարի և որևէ եվրոպացի կառավարչի չէր հանդուրժի: Արևմտյան Հայաստանի ստեղծումը եվրոպական հսկողության տակ ոչ մի կերպ ցանկալի չէր նաև Ռուսաստանին, քանի որ այն կովկասահայ ուժերին պիտի մղեր արևմտահայերի հետ միացման և Ռուսաստանից անկախացման: Ռուսաստանի հովանավորությամբ Արևմտյան Հայաստանի անկախացումն էլ անհանդուրժելի էր եվրոպական տերությունների համար, քանի որ դա նշանակում էր Ռուսաստանի մուտք թուրքական տարածքներ: Եվ եթե սրան էլ ավելացնենք, որ ինքը՝ Թուրքիան, ոչ մի կերպ չէր հանդուրժի նման միավորի ստեղծումը, որը գայթակղիչ կլիներ թուրքաբնակ այլ ժողովուրդների համար, ապա պարզ է, թե ինչ վախճան կարող էր ունենալ որևէ բարենորոգում:

Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը վերջ դրեց չսկսված բարենորոգումներին: Եվ պատահական չէ, որ հավատքով ու ազգայնապես մոլեռանդ հարյուրավոր թուրք պաշտոնյաներ, խավարամիտ մոլլաներ և ուլեմաներ նշանակվեցին հայկական շրջանների կառավարիչներ: Ձինապարտ, թե զինագերծ, փրկագին վճարած, թե արտոնագիր ունեցած 20-ից մինչև 45 տարեկան բոլոր հայ տղամարդկանց* բանակ գորակոչեցին՝ մի կողմից թուլացնելով բնակավայրերի պաշտպանունակությունը, մյուս կողմից՝ ֆրանսիական և անգլիական ճակատները հեռու լինելու պատրվակով՝ նրանց մղելով հենց ռուսների դեմ կռվելու: Ձորակոչը անգիջում էր մանավանդ հայ ուսուցիչների, մտավորականների, թերթերի աշխատակիցների, կրոնավորների, իրավաբանների նկատմամբ: Հայաբնակ գավառներ ուղարկվեցին ոստիկանական լրացուցիչ ուժեր, որոնք լոկ ոստիկաններ չէին, այլ ոստիկան-զինվորներ, որ հավաքագրվել էին բալկանյան պատերազմում պարտություն կրած թուրք զինվորներից, ովքեր վրեժ պիտի լուծեին քրիստոնյա բնակիչներից իրենց պարտության համար: Ըստ կանխագծված ծրագրերի՝ այս ամենին հաջորդելու էր տեղահանությունը: Բայց, քանի որ տեղափոխումները կապված էին ծախսերի հետ, թուրքերը շատ հաճախ բնակիչներին չէին հեռացնում իրենց բնակավայրերից և հաշվեհարդարը տեսնում էին հենց տեղերում:

Թուրքերը միայն մարդկանց չէ, որ արտաքսում էին: Նրանք թալանում էին տները, ունեցվածքը, ջնջում տապանագրերը, վերացնում հայերեն արձանագրությունները եկեղեցիների պատերից, քանդում դպրոցները, ավերում սրբատեղերը: Այս ամենն է, որ, ինչպես վերոյում բնութագրում է Զավեն պատրիարքը, ամբողջ Թուրքիան դարձել էր «*ակեղթամա*» (եբրայերեն՝ արյան լիճ), Հայաստանը վերածել մահաստանի՝ ամայացնելով բարեբեր

* Թուրքական բանակ են գորակոչվել շուրջ 300 000 հայեր:

հովիտները, այրելով փարթամ անտառները:

Թուրանական անձիր կայսրության հասնելու մարմաջով բռնված՝ թուրքերն իրենց ճանապարհին քանդում ու ավերում էին ամեն բան, ինչը որ խոչընդոտ էր նպատակին հասնելու համար: Եվ այն, ինչ չէին անում կանոնավոր զորքերի թնդանոթներն ու հրացանները, լրման էին հասցնում թուրք, ավշար, չերքեզ, քուրդ, լեզգի, ալբան, մեղրեք, դրուզ, մելեև, բեշեն, քիլդան, օրջա և այլ մանր ու մեծ ցեղախմբերը և խառնախմբերը, որոնք, իրենց ձեռքն առած կացինը, բահն ու բրիչը, ոչնչացնում էին հայոց բնակավայրերի հետքերն ու այնտեղ բնակվող մարդկանց ստեղծած տները և այգիները:

Օրագրի իրականացման համար գործում էր միայն մեկ օրենք. ամեն ինչի օրենքը ուժն է, և ուժը օրենքից էլ վեր է, ու դա հանգեցնում էր նրան, որ սպանությամբ նվաճելը և սպանությամբ ապրելը հավատքի արժեք էին դարձել:

Մարդատյաց այդ կարգախոսն իրականացնելու համար ամեն ինչ պատրաստ էր՝ զենք, մոլեռանդ ու թալանչի ամբոխ, արյունարբու ոստիկանություն, կրոնական ատելություն: Իշխանությունների հաշվարկը հստակ էր. երբ չեն լինի հայեր, չի լինի *«հայկական հարց»*: Չէ՞ որ մեռածները չեն խոսում: Եվ հայաստանությունը դարձավ ուխտ առ Մուհամմեդը, որն արտահայտվեց այն համոզման մեջ, որ անհավատների արյունը արժեք չունի, որ հայ սպանելը դրախտ գնալու ուղիղ ճանապարհն է, որ հայը հողի վրա չպիտի ապրի, նրա տեղը հողի տակ է:

Վեպում Ալաջաջյանը ցույց է տալիս, որ երիտթուրքերի պարագլուխներն առաջին իսկ օրերից էին ուրացել ազատության, հավասարության ու եղբայրության այն կարգախոսները, որոնցով եկել էին իշխանության: 1908 թ. հռչակած սահմանադրությունը թղթի մի կտոր էր, որի նպատակներից մեկը տեղական կազմակերպություններին ու հակաթուրք ուժերին իրենց թաքստոցներից դուրս բերելն էր՝ նրանց հետ հաշվեհարդար տեսնելու համար: Այդպես եղավ և 1913 թ., երբ կառավարությունը Պոլսի, Իզմիրի, Մալաթիայի, Էրզրումի, Մեֆաստիայի, Խարբերդի և հայաբնակ այլ քաղաքների հայերից պահանջեց գրավոր ներկայացնել հայոց գրերի գյուտի և տպագրության տարեդարձներին նվիրված տոնակատարությունների* կազմակերպիչների ու մասնակիցների անվանացուցակները: Ցուցակներ, որոնցով և առաջնորդվեց թուրք ոստիկանությունը 1915 թ. ապրիլյան իր ձերբակալություններում՝ հաստատելով նաև այն իրողությունը, որ արվեստի ու մշակույթի այդ ցուցադրությունը իրենց կողմից երբեք չի կարող ներվել **:

Ալաջաջյանը վեպում գրում է, որ մինչ Առաջին համաշխարհայինի նախաշեմին, արևմտահայությունը զբաղված էր իր ազգային տոնախմբություն-

* Տոնակատարությունները անցկացվեցին նաև գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, հունարեն:

** Պատրիարքարանում գրանցված այլ ցուցակների հիման վրա Ստամբուլից արտաքսվեցին կամ ձերբակալվեցին նաև հայ պանդուխտները:

ներով, դաշտագնացությամբ ու մատաղօրհնություններով, տպագրում էր իր ազնվական գրողների՝ Վահան Թեքեյանի «Հրաշալի հարություն», Տիգրան Զյոկյուրյանի «Վանքը», Հակոբ Միրունու «Դեպի տաճարն հրաշքին» և այլ գրքեր, Կովկասից եկած հայ դերասանների ուժերով Կ. Պոլսում Լևոն Շանթի «Հին աստվածների» բեմադրությունը դիտելով, «Պըտի շանի» թատրոնում Կոմիտաս վարդապետի դեկավարած «Հայ գուսան» երկսեռ երգչախմբի համերգները լսելով, որն ունկնդրի հոգում «... *մերթ ալիքի ծփանք է տեսլավորում, մերթ՝ հովի ծիծաղը եթերում, մերթ՝ զեփյուռի շոյանքով անցումը ծաղիկների վրայով, մերթ կտրիճների նծույզների հեքը, որ, սուրալով Սիփանա սարն ի վեր, միանում են իրար...*»¹, այդ նույն ժամանակ թուրքերը զորակոչ էին հայտարարում, կնքում թուրք-գերմանական դաշնագիր, տարագրման ծրագրեր մշակում, բանտերից ազատում հանցագործներին՝ նրանց հանձնարարելով սպանել հայերին՝ հայ ծնված լինելու միակ մեղադրանքով:

... Եվ սերբերը «*ճիշտ*» ժամանակին Սարանոյում սպանեցին ավստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանտին... ու չէր կարող չսկսվել 1914 թ. արյունոտ օգոստոսը, որ պիտի երկարաձգվեր մինչև 1918 թ.՝ իր մեջ առնելով միլիոնավոր մարդկանց մահեր:

Աշխարհն այրվելու էր ամբողջ չորս տարի: Թուրքիան, իհարկե, պաշտոնապես հաղորդեց, որ ինքը մնալու է չեզոք, բայց հենց նույն օրը հայտարարեց ընդհանուր զորահավաք, որը շատ շուտով պիտի դառնար զորակոչ, և թուրքական մամուլի օրգանները պիտի տպեին. «Բալամնե ր, ի զեն»: Ուրեմն, պատերազմ: Պատերազմ հայրենիքի ու կրոնի* թշնամիների դեմ, որը նշանակում էր պատերազմ բոլորի դեմ, ովքեր իրենց կրոնակիցները չէին:

Բայց հավատքի պատերազմը՝ Ջիհադը (կրոնական սուրբ պատերազմ), քրիստոնյա ռուսների՝, ֆրանսիացիների՝, անգլիացիների՝, իսկ գուցե իրենց դաշնակից Գերմանիայի՝ դեմ էր հայտարարվում: Իհարկե՝ ո՛չ: Իհարկե, այն ուղղված էր Թուրքիայի ներսում ապրող քրիստոնյաների դեմ: Ինչպես գրում է Ալաջաջյանը, այդ աշխարհը սևանում էր, և այն վեր պահող արևն անգամ ճաքճքում: Քաղաքական այդ փլուզումը պատկերավոր ուժեղ փոխաբերությամբ է արտահայտում Ալաջաջյանը. «*Մի եզերքով սևանում էր, ամպոտվում, հանգում, ինչպես մոխրացող կրակը: Նրա կլոր կազմվածքի կեսն արդեն գունազրկվեց, ստացավ Արմաշի հողերի գույնը, և այդ գույնը տարածվեց: Արևը դարձավ մահիկ*»²:

Ըստ էության, թուրքական իշխանությունները սուլթանական Թուրքիայի նույն հին դիմակն էին կրում. տարբերությունն այն էր, որ քրիստոնյա բալկանյան երկրներից 1912-1913 թթ. կրած պարտությունը շատ ավելի կրոնա-

¹ Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 2-րդ, Երևան, 2019, էջ 186-187:

* Պատերազմող տասնյակ երկրների մեջ Թուրքիան միակն էր, որ կրոնի պատերազմ էր հռչակել:

² Ալաջաջյան Ստ., Չսպիացած վերք, հ. II, գիրք 2-րդ, էջ 264:

մուլ, ազգայնամուլ ու վրեժխնդիր էր դարձրել նրանց:

Գրողը նկատել է տալիս, որ Թուրքիան միշտ նույն Թուրքիան է, և անկախ այն բանից, թե ով կլինի իշխանության դեկի մոտ, այդ երկրի պահվածքը նույնն է մնալու, որը վեպում արտահայտվում է նաև երկրի վարչապետ Շևքեթ փաշայի խոսքերով. *«Մեջքիդ գորք ու դրամ ունենաս, սեփական քաղաքականություն վարես: Ուրիշ պետություններից պարտքով քաղաքականություն չմուրաս, ոչ էլ՝ փոխառություն»*¹:

Տարբեր, բոլորովին տարբեր բաղձանք ու երազանք ունի հայ պատասխանատու այրը, որը վեպում արտահայտվում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի մտորումներով. *«Մի պատառ հող ունենաս, որ քոնը լինի, մեջքին լեռ ու բլուր ունենա: Ներքևում ձոր լինի, միջով գետակ անցնի: Իջնես ձորը, ջուր բերես դույլով, կժով, ջրես հողը՝ ակոս առ ակոս, միայն թե մի պատառ սեփական հող ունենաս»*²:

Այստեղ չէ՞ հայ ազգի թերությունը, և այստեղ չէ՞ հայ ժողովրդի ուժը:

1915 թ. ապրիլյան եղեռնի նախօրեին թուրքական թերթերը նպատակադիր գրում էին ռուսական զորքերի կատարած *«հնադարյան վայրագությունների»* մասին, ռուսներին մեղադրում մուսուլման խաղաղ բնակչության նկատմամբ կիրառած հնարավոր *«ռճիրների»* համար, Ռուսաստանը բռնապետություն համարում, որն իբր ուզում էր իրենց բռնի կերպով *բարենորոգումներ* պարտադրել: Եվ որ այդ ամենին միշտ էլ մասնակից են եղել հայերը:

Ալաջաջյանն իր վեպում օգտագործում է նաև հարուստ վավերագրական փաստաթղթեր: Անդրադառնանք դրանցից միայն մեկին*:

Խոսքը վերաբերում է թուրքական իշխանությունների կողմից հայերին իրենց բնակավայրերից տեղահանելու 1915 թ. մայիսի 20-ին ընդունված «Ժամանակավոր օրենքին», որտեղ հանձնարարվում էր զորաբանակին և զորաբաժիններին *«զինված ուժերով»* պատիժներ կիրառել և *«արմատապես ոչնչացնել»* կառավարության հրամաններին ու *«միջոցառումներին»* ընդդիմացողներին: Չմանրամասնելով այս օրենքի մի շարք կողմեր՝ նշենք միայն մի քանի կետեր: Օրենքի կիրառումը հանձնարարված էր ոչ թե իշխանության ցածր օղակներին, այլ ռազմական ուժերին, և այն էլ՝ զենքի կիրառմամբ: Թուրք իշխանությունները պատերազմի հենց սկզբից զինաթափել էին հայերին, զինել թուրքերին, քրդերին ու մուսուլման տասնյակ այլ ցեղերի, բարձրացվել էին հարկերը, տարվել էին անասունները, փակվել էին թերթերը: 1914 թ. (հոկտեմբերի 13) հայտարարվել էր ջիհադ^{*}, բոլոր թուրքերին դարձնելով միջահիդդեն (կրոնական մարտիկ): Մոլեռանդ այդ ամբոխին խոս-

¹ Ալաջաջյան Մու., Չսպիացած վերք, հ. I, գիրք 2-րդ, Երևան, 2019, էջ 221:

² Նույն տեղում, էջ 220:

* Այդ փաստաթղթի մանրամասների վերաբերյալ հեղինակը 1990 թ. գրել է իր առանձին հոդվածում (տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1990 թ. ապրիլի 22-ի համարում):

* Թուրքիան վերջին անգամ ջիհադ էր հայտարարել 300 տարի առաջ՝ XVII դարում:

տացվել էր դրախտ՝ եթե շատ քրիստոնյա սպանի, սկսել էին անվանափոխել հայկական բնակավայրերը, օրենքի ընդունումից առաջ՝ դեռևս ապրիլին, արդեն աքսորվել էին հայ մտավորականները, տեղահանվել^{**} էին գավառաբնակ հայերը, որոնք զանգվածաբար քշվում էին «*օրենքում*» ասված «*այլուր*», ասել է՝ Միջագետքի անապատները, որի վերաբերյալ ընդունված որոշման մեջ գրված էր «*փոխադրել*» ոչ թե առանձին անհատների կամ խմբերի, այլ «*գյուղերի և քաղաքների բնակչությանը*» և այն էլ՝ այդ ամբողջ բնակչությանը մեղադրելով «*լրտեսական գործունեության կամ դավաճանության*» մեջ։ Եվ, ուրեմն, ո՞վ պիտի դիմադրեր այդ ամենին, եթե ոչ հենց այդ աքսորվող ու թալանվող հայր։ Ուրիշ ո՞ւմ դեմ էր հայտարարված ջիհադ, եթե թուրքական մամուլը անթաքույց գրում էր, որ այն օտար պետությունների դեմ չի հայտարարվում՝ ոչ քրիստոնյա Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի և ոչ էլ իրենց դաշնակից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի։ «*Օրենքը*» ընդունված էր «*ժամանակավոր*», բայց Թուրքիայի համար ժամանակավոր ոչինչ չկա, ինչպես որ չկա ոչ մի սրբություն, երբ հարցն իրենց է վերաբերում։ Այդ օրենքը գործում է նաև մինչև այսօր ու կասեցված չէ ոչ մի հրամանով։

Թեև ջիհադի մասին բացահայտ աղաղակում էին իթթիհադի ղեկավարները, թերթերը, մզկիթների աշտարակներից՝ մոլլաները, բարձրաձայն խոսում էին հրապարակներում, բեմերում, հավաքույթներում, աղոթավայրերում, սակայն Թուրքիան ձեռնարկել էր նաև ամեն ինչ՝ քողարկելու համար այդ ամենը. արգելված էր օտարերկրացիների ճամփորդությունը երկրի ներսում, մամուլում չէին տպագրվում վիլայեթներում կատարվող իրադարձությունների վերաբերյալ նյութեր, սպրդած առանձին հաղորդագրություններն իսկույն հերքվում էին, արգելքի տակ էին առնված հեռահաղորդագրություններն ու նամակները։

Ուշագրավ է, որ 1915 թ. ապրիլի 24-ին հաջորդած երրորդ օրը՝ 27-ին, սուլթան Մեհմեդ Ռեշադն իր ծննդյան տարեդարձի առթիվ ներում շնորհեց բանտերում գտնվող հազարավոր գողերի ու ոճրագործների, որոնցից ռազմական ավագակային խմբեր կազմվեցին։

Իր վեպի շատ էջերում Ալաջաջանը ամենայն մանրամասնությամբ է ներկայացնում հայ Գողգոթան։ Նորից ու նորից հաստատում, որ հայերի տեղահանությունը շարունակվեց պատերազմի ամբողջ ընթացքում, մատնանշում, որ այն սպանդի ձևերից մեկն էր՝ քաղաքականապես ավելի քողարկված։ Դատարկված բնակավայրերում հայերի տները գրավվում էին մուսուլման վաչկատունների կողմից, իսկ ունեցվածքի այն մասը, որ չէր թալանվում, գրանցվում էր որպես պետության սեփականություն։ Ամիսներ տևող ճամփորդությունից, քաղցից ու ջրի պակասից, համաճարակներից, «*անհայտ*» չա-

^{**} Տեղահանության սկիզբը դրվել էր դեռևս գերմանա-թուրքական գաղտնի պայմանագրով՝ ԲԲԲ երկաթուղու շինարարության համար հայ բանվորական ուժը օգտագործելու նպատակով։

րագործների, մոտակա բնակավայրերից եկող մուսուլման բազմությունների հարձակումներից, ովքեր ոչ միայն ուտելիքն ու շորերն էին տանում, այլև երեխաներին՝ նրանց իսկույն նեթ թուրքական, քրդական, արաբական անուններ տալով, մանավանդ այն երեխաներին, ովքեր ի վիճակի չէին հիշելու իրենց ծնողներին, գաղթականների շարքերը նվազում էին, սպառվում։ Ոստիկանները հատկապես հանել էին տալիս գաղթականների կոշիկները, որպեսզի նրանք ի վիճակի չլինեն քայլելու և ոտքերին ստացած ծանր վերքերից շուտ մահանան։ Այդ զանգվածներին դիտավորյալ տանում էին անջուր վայրերով, քայլեցնում էին այնքան, որ այլևս փախչելու ուժ չունենային, ծնողներին էին վաճառում նրանցից իսկ նախապես զոդացված երեխաներին։ Անապատները գնալով բաց շիրիմ էին դառնում, և այլևս ավելորդ էր դարձել այդ մարդկանց սպանելը, քանի որ նրանք առանց դրա էլ մահանում էին։

Ալաջաջյանը անդրադառնում է մանավանդ «*հայտնի*» չարագործների՝ Էնվերի, Թալեաթի, Շյուքրիի, Հալիմի, Ջեմալի և այլոց գործունեությանը, բացահայտում նրանց մարդասպան, կրոնական ու ազգայնամոլական այն դատողությունները, որոնք նրանց բուն էությունն են հատկանշում։ Այդ մարդասպանների ներկայությունը զգալի է նաև վեպում գործող ամեն մի ոստիկանի ու պաշտոնյայի մեջ։

Միամտություն է կարծել, որ եթե իթթիհադը չանցներ իշխանության գլուխ, չծագեր Առաջին համաշխարհային պատերազմը, ռուսները չհեռանային իրենց գրաված տարածքներից, անգլո-ֆրանսիական ուժերը չպարտվեին Դարդանելում, տեղահանություն ու եղեռն չէր լինելու։

Ամեն բան ծրագրված ու մանրակրկիտ մշակված էր ի սկզբանե։ Չլինեին վերոհիշյալ իրողությունները, այլ առիթներ կհնարեին թուրքերն իրենց գերագույն նպատակներին հասնելու համար։ Քննություն չի բռնում նաև այն տեսակետը, թե հայ ժողովուրդը ռուսասեր լինելու համար ոչնչացվեց։ Մի թե Թուրքիան իր ծրագրերն իրականացնելու ճանապարհին այս անգամ պատրվակ չէր բերելու հայի ֆրանսասիրությունը կամ անգլասիրությունը։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հեղինակը ձգձգել է պատումը, չափից ավելի ծանրացել քաղաքական, ռազմական ու ազգային խնդիրների վրա։ Սակայն այդ ամենն ունի իր հիմնավորումը. սոցիալական, ազգային ու ֆիզիկական բռնությունների հենց այդ հարատև շղթան էր, որ հայ մարդուն ստիպեց թողնել իր մաճն ու վարը և ձեռքն առնել զենք՝ պաշտպանելու համար ոչ միայն իր կյանքն ու ինչքը, այլև մարդկային ու ազգային արժանապատվությունը։

Այդպիսի իրականության և նրա մեջ հայտնված հայ մարդկանց ու ժողովրդի մասին է այս վեպը, որ, առանցք ունենալով մի գերդաստանի՝ Մեռոնյանների պատմությունը, իր ամբողջության մեջ մեզ է ներկայացնում թուրքերի կողմից XX դարասկզբի առաջին տասնամյակներում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված այն սարսափելի գործողությունները, որոնք ողբերգական եղան ինչպես տարածքային ու ֆիզիկական, այնպես էլ՝ նյու-

թական ու մշակութային կորուստների իրենց անդառնալի հետևանքներով:

Խոսելով վեպի ժանրային առանձնահատկությունների մասին, պետք է ասել, որ այն Մովսես Խորենացու և V դարի մեր մյուս պատմագիրների ավանդների յուրօրինակ մի դրսևորումն է, որտեղ գեղարվեստն ու պատմությունը հանդես են գալիս միահյուսված, ոչ միայն իրար լրացնող, այլև իրար բացահայտող որակական դրսևորումներով: Այս առումով Ալաջաջանը որքան մատուցման ձևով գեղագետ, նույնքան էլ ասելիքի բովանդակությամբ պատմաբան-վերլուծաբան է: Պատումի այդ միահյուսումն էլ պայմանավորում է վեպի ժանրային բնույթը, որ դասական է ու նոր, հնուց եկող ու նաև ժամանակակից:

Վեպի նման կառուցվածքը հեղինակին հնարավորություն է տվել ասելիքի ծիրը ընդլայնել: Ըստ էության, նա գրում է մի մեծ դժոխքի, հայկական դժոխքի մասին, պատկերում այդ գեհեճում հայտնված արդար ու ազնիվ մարդկանց, որ իրենց արգավանդ երկրից քշվում են մինչև Դեր-Զորի ամալությունները: Այդ համապատկերում իմաստավորվում են հայ լեզու, մշակույթ, բարքեր, ընտանիք, ավանդույթներ արժեքները, որոնց հանրագումարը ազգային ոգի ասվածն է՝ ժողովուրդ հասկացության անփոխարինելի հատկանիշը:

Վեպում հաճախ է շեշտադրվում, որ ոչ միայն Ֆնդիճաքի անտառները, այլև ամբողջ երկիրն է երաշտի մեջ: Վեպում կա մի հատված, որտեղ պատկերվում է հայ հավատացյալների մեկնումը Ուխտասար՝ օրհնված լաթեր թաթախելու սարն ի վեր անցնող խոնավ ամպերի մեջ: Այդ լաթերը հագցնում են խաչափայտի վրա և այն կոչում «Անձրևահարս» (հիշենք, որ վեպի 3-րդ հատորը վերնագրված է «Անտառների անձրևահարսը»): Բայց այդպես էլ ո՛չ Ֆնդիճաքի և ո՛չ էլ անապատներում տոչորվող տաքագիր զանգվածների վրա փրկարար անձրևի կաթիլներ չեն թափվում:

Ճիշտ է ասված, որ ապրում է այն ժողովուրդը, որն իր պատմությունից առաջ չի մահանում: Իսկ ապրելու համար, գոյատևման համար հիմքեր են անհրաժեշտ՝ պետականություն, դպրություն, մշակույթ, լեզու, հավատք ու եկեղեցի, և այդ բոլորի պահպանման համար ուժ ու զենք է պետք:

Միջազգային արդարության սկզբունքն ուժի իրավունքն է: «*Ե՞րբ են այս ճշմարտությունը հասկանալու հայերը*», – ասում է վեպի գերմանացի հերոսներից մեկը՝ Ֆայնբերգը: Ըստ նրա՝ հայերը ո՛չ իրենց և ո՛չ էլ ուրիշների պատմությունից դասեր չեն քաղում, չեն զինվում ու չեն սիրում զենքը, սիրում են խաչը և իրենց ազատությունը սպասում են ուրիշներից:

Ալաջաջանն անդրադառնում է նաև այն հարցին, որ քիչ չէին այն հայերը, ովքեր մտածում էին, թե զենք վերցնելը հավասարագոր է բնաջնջման, և անապատների միջով, քաղցի, համաճարակների ու թալանի ճամփով անցնելը դեռ մահ չէ:

Պարսկա-թուրքական բռնապետական 500 տարիների ընթացքում, իրոք որ, հայն այդպես էլ զինասեր չէր դարձել ու մնացել էր հողասեր: Հող, որ

հավատք էր, քաղցրություն ուներ, ապրեցնում էր նրան ու բերկրանքով լցնում հոգին, հայրենի հող, որ երգ էր նաև ու մեղեդի: Բայց հենց այդ հող հայրենին պաշտպանել հնարավոր էր միմիայն զենքի ուժով:

Թուրքիայի ստեղծած բռնությունների ու արյան ծովում կարո՞ղ էին հայերը միասնաբար դիմադրել, միասնական ճակատ ստեղծել, ընդհանուր թշնամու դեմ ամուր բռնուցք կազմել: Սա մի հարց է, որ ակամայից ծագում է վեպի ընթերցման ժամանակ, մի հարց, որին դեռ այսօր էլ դժվար է միանշանակ պատասխանել: Թեև Զեյթունը, Մուսալեռը, Ամանոսը, այդ թվում և Ֆնդիճաքը, կարողացան զենք բարձրացնել, անժխտելի է այն իրողությունը, որ լեռներով ու անտառներով իրարից կտրված, մուսուլմանական բնակավայրերով բաժան-բաժան արված հայաբնակ կղզյակներն այդպիսի հնարավորություն չունեին, եթե անգամ մի կողմ դնենք այն փաստը, որ թուրքական իշխանությունները հյուսել էին կառավարական ու ոստիկանական ուստայներ՝ որևէ շարժում կամ միացում թույլ չտալու համար:

Ալաջաջյանը թեև իրավացիորեն գրում է, որ հայոց գոյատևման մեծագույն զենքը *«այբուբենն է, որ կենաց լույս է արձակում»*, այդուհանդերձ, հեղինակային ասելիքը վեպում հանգում է նրան, որ ազգային գոյատևման համար կարևոր է նաև երկաթե զենքը, որը *«մահաբեր գնդակներ է արձակում»* թշնամու վրա:

Կովելով ապրել, ապրել՝ կոփվր շարունակելու, մահին մահով հատուցելու, մեռնելու և ոչ թե սպանվելու համար, սա հենց այն վճռականությունն ու ազատասիրությունն է, որ վեպում ժողովրդին տանում է պայքարի: Եվ պատահական չէ, որ մայր հողն ու անտառը դառնում են ֆնդիճաքցիների վերջին հանգրվանը: Այն ֆնդիճաքցիների, որ անիծում էին Աստծուն ու հենց Աստված կանչելով գոհվում: Կովողներից շատերը, այո՛, մեռնում են, բայց այնտեղ, որտեղ չկովեցին, կրկնակի՝ մահ ընդունեցին:

Լոս Անջելեսում լույս տեսած «Ստեփան Ալաջաջյան. Վաստակաւոր եւ Արգասաբեր Գրագէտը» վերնագիրն ունեցող իր գրքույկում այդ մասին իրավացիորեն գրում է նաև սփյուռքահայ մտավորական ու բարերար Օշին Քեշիշյանը՝ հերոսական այդ պայքարը բխեցնելով նախ և առաջ՝ ապրելու, արժանապատվությամբ մեռնելու, և, դրանով իսկ, գոյատևելու *«անգուսպ տենչէ մը թելադրուած»*¹ լինելու հանգամանքից: Մեռնելով հաղթել մահին, բայց պետք էր նաև ապրելով հաղթել մահին: Եվ ուրեմն, ով զենք էր վերցնելու, նա էր ապրելու և չէր թաղվելու քարհանքերում, չէր խեղդվելու ճահճուտներում, չէր մորթվելու ձորերում:

Ազգային գոյատևման, իրենց հող ու ջրի սիրով լցված ժողովրդի արժանապատվության փրկության համար զենք վերցրած, մշակույթ ստեղծած, ընտա-

¹ Քեշիշյան Օ., Մտ. Ալաջաջյան. Վաստակաւոր եւ արգասաբեր գրագէտը, Լոս Անջելես, 2009, էջ 18:

նիք ու ավանդույթ հարգող, բարոյական բարձր չափանիշներով օժտված և ամեն երեկո պատարագ հնչեցնող մարդկանց կյանքի պատմություն այս վեպը նաև մերժման խոսք է՝ ուղղված ամեն սպանդի ու ավերման, ջարդի և բռնության, որպեսզի «Օձապտույտ երկաթուղին» որպես Անակոնդա վիշապօձ չփաթաթվի հայ մարդու մարմնին, հայոց աշխարհի «Հովիտները չամայանան», հարազատ բնաշխարհի «Անտառների անձրևահարները» հարատևեն:

Հանրագումարային ձևակերպումով՝ փաստավավերագրական պատկերումների և պատմագեղարվեստական բացահայտումների համապատկերում Ստ. Ալաջայանի «Չսպիացած վերք» վեպը սերունդների խորհրդածությանն է հանձնում հայ ազգի թերության և հայ ժողովրդի ուժի՝ այսօր էլ արդիականությունը չկորցրած խնդիրը:

Հայ ժողովրդի ամբողջ պատմության ընթացքում արշավող ու տեղացի թշնամիները կարևորը համարել են հայերի ֆիզիկական ոչնչացումը, որը հանգեցնելու էր ամեն հայկականի վերացման: Մերօրյա թշնամիները (որոնք միշտ նույնն են) հակառակ ծայրից են ձգտում հասնել իրենց նպատակներին՝ ոչնչացնել լեզուն, հավատը, մշակույթը, ընտանեկան բարքերը, և հայությունը ինքնին կոչնչանա, քանի որ կվերանա ոգին, որ ազգի ամեն ինչն է՝ երեկը, այսօրը, վաղը:

Арцрун Авагян – Роман Степана Аладжаджяна «Незажившая рана» как историко-художественный документ

В статье обстоятельно рассматриваются события национально-общественной жизни начала XX века, политические и геополитические сдвиги, отраженные в трилогии Степана Аладжаджяна «Незажившая рана», состоящей из более чем 1500 страниц. Сюжет романа разворачивается на строительстве железной дороги Берлин-Босфор-Багдад, на оборонительном сражении в одном из Киликийских поселений – Фндичаке. Посредством аналитических обобщений затрагиваются военный, политический, национальный и различные человеческие аспекты, которые до сих пор остаются актуальными и дают повод для размышлений.

Artsrun Avagyan – Stepan Alajajyan's Novel "Unhealed Wound" as a Document of Historical and Artistic Value

The article presents a comprehensive analysis of the national and social events, political and geopolitical movements of the beginning of the XX century based on Stepan Alajajyan's three-volume novel "Unhealed Wound" which is more than 1,500 pages long. Depicting the construction of the Berlin-Bosporus-Baghdad railway along with the heroic self-defense battle fought by Fnditchak, one of the settlements of Cilicia, the novel touches upon various military, political, national and human realities through artistic and analytical generalizations, which are still very actual today and give food for thought.

Ներկայացվել է 08.08.2020

Գրախոսվել է 15.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ» ԵՎ ՌԱՓՍՅԵԼ
ՊԱՏԿԱՆՅԱՆԻ «ՔԱԶ ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆԻ ՄԱՀԸ» ՊՈԵՄՆԵՐԻ
ԶՈՒԳԱՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր – աշխարհաբար, պատմաքաղաքական ճակատագիր, հերոսական անցյալ, Ավարայրի ճակատամարտ, հայ ազգային-ազատագրական պայքար, դիմառնություն, երգասաց բլրուլ

Հայ գրականության և մշակույթի պատմությունը հարուստ է հանճարեղ անհատներով, սակայն քչերին է հաջողվել իրենց բազմաշնորհ ունակություններով հավասարապես փայլել հայագիտության տարաբնույթ հարթակներում: Այդ եզակի երևելիներից մեկը հայ նոր գրականության պատմության և հայագիտության համապատկերում կարևոր տեղ զբաղեցնող Ղևոնդ Ալիշանն (1820-1901) է:

«Բոլոր բանաստեղծների Նահապետը»*, լինելով հայ աշխարհաբար պոեզիայի հիմնադիրը, ինչպես նաև այդ ասպարեզի ականավոր ներկայացուցիչներից մեկը, անխոնջ նվիրվածությամբ շարադրեց նաև հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության բազմաթիվ ծավալուն հատորներ, որոնք հատկանշվում են հայ ժողովրդի պատմական անցյալի գրեթե բոլոր ժամանակաշրջաններին և բնագավառներին առնչվող փաստերի հսկայական նյութով: Այս իմաստով ուշաբժան են Ավ. Բահակյանի՝ սրտաբույժ հուշերի պատառիկները. «... առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը... Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն»¹:

Հայ գրականության Նահապետի ծննդյան 200-ամյա հոբելյանին նվիրված ներկա ուսումնասիրության մեջ արդիական մոտեցումների, պատմահամեմատական և գուգադրական մեթոդների կիրառմամբ դիտարկելու ենք նրա «Պլպուլն Ավարայրի» պոեմը:

Ալիշանը, իր բանաստեղծական ինքնատիպ ժառանգությունը ստեղծելով 1840-1852 թթ., հետագայում այն ամփոփեց 1857-1858 թթ. հրատարակված «Նուագք» ընդհանուր խորագիրը կրող բանաստեղծական ժողովածուի հինգ՝ «Մանկունի», «Մաղթունի» և «Բնունի», «Հայրունի», «Տերունի», «Տիսրու-

* Ղ. Աղայանի բնորոշումն է: Տե՛ս «Տարագ», 1890, ապրիլ, թիվ 4:

¹ Բահակյան Ավ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Երևան, 1977, էջ 10-11:

նի» հատորներում¹: Հատկանշական է, որ նրա բանաստեղծական ժառանգության մեջ շահեկանորեն առանձնանում է «Հայրունի» հատորում տեղ գտած «Երգք Նահապետի»՝ աշխարհաբարով գրված տասնմեկ պատմահայրենաշունչ քերթվածներից բաղկացած շարքը: Քերթվածաշարը պատմական բեկումնային նշանակություն ունեցավ ոչ միայն բանաստեղծի, այլև հայ գրականության համար, որովհետև Ալիշանը, կենսականության արձագանքներով վերախմաստավորելով Մխիթարյան միաբանության կլասիցիստական պոեզիայի լեզվամտածողությունն ու ձևաբովանդակությունը, ուրվագծեց մեր բանաստեղծության զարգացման հետագա ճանապարհը:

Ուշարժան է, որ Մ. Նալբանդյանը, 1859 թ. ամռանն այցելելով Փարիզի Մուրադյան վարժարան, հանդիպել է Ղ. Ալիշանին: Վերջինս 1858-1861 թթ. ընթացքում զբաղեցնում էր Փարիզի Մուրադյան վարժարանի տեսչի պաշտոնը: Հետագայում Նալբանդյանը, իր «Հիշատակարանում» պատմելով այդ ծանոթության մասին, խստորեն քննադատում է Մուրադյան վարժարանի ծայրահեղ կրոնական մթնոլորտը, խտրական վերաբերմունքը *«բուն հայկական կամ ավետարանական հայերի զավակների»* նկատմամբ², մինչդեռ Ղ. Ալիշանին ներկայացնում է միայն դրվատանքով. *«Ինձ շատ հարգելի է հայր Ղևոնդի անձը... Այս արժանապատիվ անձը ծանոթ է հայոց ազգին մանավանդ Նահապետի անունով: Հ. Ղևոնդ Ալիշանյանցը ունի բանաստեղծական քանքար և այդ քանքարը կարող էր ավելի պարզ և վառ երևել, եթե արեղայական սևաթույր վերարկուն չլիներ խափանառիթ»*³:

Հայ նոր գրականության արշալույսին Մ. Նալբանդյանը, վերստին անդրադառնալով Ալիշանի քերթվածներին և սրատեսությամբ որսալով նրա բանաստեղծության կենսահաղորդ ազդակները, *«Կրիտիկա. «Սոս և Վարդիթեր»»* աշխատության տողատակի ծանոթագրություններում վերջինիս մասին գրում է. *«Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածները - «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը. ...չափաբերական քերթվածոց մեջ, արժանավոր վարդապետը ախոյան չունի. եթե մենք լռենք, Ավարայրի բլրուլը կխոսի...»*⁴:

Գրասեր հասարակությունը Ալիշան բանաստեղծի մասին առաջին անգամ իմացավ 1847 թ. ամռանը, երբ «Բազմավեպում» «Նահապետ» ստորագրությամբ տպագրվեց անսահման հայրենասիրությամբ տոգորված նրա

¹ Տե՛ս Հ. Ղևոնդեայ Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Նուազք, Ա, Մանկունի, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, ՌՅԶ-1857, Նուազք, Բ, Մաղթունի, Բնունի, ՌՅԶ-1857, Նուազք, Գ, Հայրունի, ՌՅԷ-1858, Նուազք, Դ, Տերունի, ՌՅԷ-1858, Նուազք, Ե, Տիրունի, ՌՅԷ-1858:

² Տե՛ս Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985, էջ 358-359:

³ Նույն տեղում, էջ 365:

⁴ Նույն տեղում, էջ 524:

«Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը¹, իսկ նույն թվականի աշնանը՝ նաև «Պլպուլն Ավարայրի» պոեմը²:

Ո՞վ էր այս «Նահապետը»³, որտեղի՞ց էր նա գալիս և ի՞նչ էր ցանկանում հաղորդել ներկա և ապագա սերունդներին: Գրական ծածկանվան ընտրությունը պատահական չէր. Ալիշանը տակավին քսանյոթ տարեկան էր, սակայն ուզում էր նահապետի տարիքին հարիր ողջախոհության և իմաստության դիրքերից նոր սերունդներին պատմել իր հայրենիքի գեղեցկությունների, ինչպես նաև դառնաղի պատմության մասին և նրանց պատգամել անհազ հայրենասիրություն: Ալիշանը, ստեղծելով «Հայութեան մեծ-հայրիկի, հայ հին փառքերուն ոսկին արդի աւերակներուն մոխիրին մեջէն փնտռող, հայ ազգին բոլոր պարծանքներն ու ցաւերը, յոյսերը երգող, ողբացող, օրհնող Օերունիի տիպարը», մտքով և սրտով միշտ երիտասարդ մնաց մինչև իր կյանքի մայրամուտը⁴:

Հեռավոր Սուրբ Ղազար կղզում ապրող և ստեղծագործող Ալիշանին մտահոգում էր իր ժողովրդին պատուհասած պատմաքաղաքական ծանր և դառնաղետ ճակատագիրը: Ի՞նչ էր սպասվում հայ ժողովրդին, եթե նա օրինակ չվերցնէր հերոսական անցյալից և նույն ոգով ու առնականությամբ չպայքարէր ներկայում: Անցյալի մասին մտորումները Ալիշանին տանում են V դար, և նրա աչքի առջև հառնում է 451 թ. Ավարայրի ճակատամարտը, որը հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջերից է:

Ավարայրի խորհուրդը հայ ժողովրդի գիտակցության մեջ դաջվեց որպես ազատության և անկախության համար մղվող պայքար: 387 թ. Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև անհամամասնորեն բաժանված Հայաստանի համար այդ ճակատամարտն ուներ զուտ բարոյական նշանակություն: Հայ ժողովուրդը իր համառ կամքի և հերոսական պայքարի շնորհիվ հաստատեց ոչ միայն իր հարատև գոյության իրավունքը, այլև առաջ մղեց ինքնուրույն մշակույթ ստեղծելու դժվարին գործընթացը: Թեև հայ ժողովուրդը չհաղթեց այդ պայքարում, բայց, այդուհանդերձ, իր ցուցաբերած անձնուրաց պայքարի և հերոսականության արդյունքում ձեռք բերեց քիչ թե շատ խաղաղ երեսուն տարիներ: «Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»⁵,

¹ Տե՛ս «Բազմավէպ», 1847, յունիսի 15, թիվ 12, էջ 183-188:

² Տե՛ս «Բազմավէպ», 1847, հոկտեմբերի 1, թիվ 19, էջ 295-300:

³ Ղ. Ալիշանի գրական ծածկանվան մասին սպառիչ բացատրությունները տե՛ս **Զրբաշյան Էդ.**, Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը // «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, թիվ 2, էջ 22-46:

⁴ Տե՛ս «Անահիտ», 1902, ապրիլ, թիվ 4, էջ 79:

⁵ **Եղիշէի**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 119: Որովհետև ո՛չ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերը պարտություն կրեցին: Տե՛ս **Եղիշէ**, Ե դար, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1994, էջ 86:

անաչառ դատողությամբ եզրակացնում է Եղիշեն:

Ավարայրի խորհուրդը քննարկելիս հարկ է նկատել, որ Վարդանանք իրենց նահատակությամբ անձնագոհության և հայրենասիրության օրինակ դարձան ապագա սերունդների համար: Ավարայրի նշանակությունը ավելի խորքային բովանդակություն ունի, ըստ որի՝ ժողովրդի մեջ դաստիարակվում է հավաքական ուժի, ազգային արժեքների գնահատման, դրանց շուրջ համախմբման և վերջիններիս պահպանության համար գոհաբերության պատրաստ ոգի և գիտակցություն, որը, օրախնդիր լինելով XIX դարի առաջին քառորդում, որոշ իմաստով խիստ արդիական է նաև այսօր, որովհետև հայ ժողովուրդը դեռևս չի նահանջել իր ապագա սերունդներին մի բուռ հայրենիք կտակելու սուրբ առաքելությունից:

V դարից մինչև XIX դարի առաջին քառորդը շատ ժամանակ էր անցել, սակայն հայ ժողովուրդը դեռևս չէր խաղաղվել դարավոր պատերազմներից: Ռուս-պարսկական, ռուս-թուրքական արյունահեղ պատերազմներն ավերել էին Հայոց աշխարհը, իսկ նրա որդիներին՝ դարձրել գաղթական: Թեև ժամանակները և թշնամիները փոխվել էին, սակայն նույնն էր մնացել ազգապահպանման համար մղվող պայքարը: Հայ ժողովուրդը երազում էր մեկընդմիջտ ազատագրվել թուրք-պարսկական ծանր տիրապետությունից և վերադառնալ բնականոն զարգացման ընթացքին: Այս բոլոր տենչերն ու երազանքները, թևածելով Ղ. Ալիշանի մտքում, ուրույն դրսևորում ստացան «Պլպուլն Ավարայրի» պոեմում:

Ալիշանը, այստեղ կիրառելով հայ գրականության մեջ արդեն հայտնի դիմաոճության, այն է՝ բնության երևույթները շնչավորելու գեղարվեստական հնարանքը, «գրուցում է» լուսնի հետ.

*Ո՞նց գաս իմ լուսնյակ, հեզիկ ու հանդարտ
Համաափյուռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ,
Եվ ի Նահապետ, որ մըտոք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ Ավարայր,
Ուր քաջ ու աննրման հարք մեր հայկազունք
Ընկան գետ հըսկա, կանգնեցան գվարթունք...¹*

Լայն իմաստով սա այդքան էլ զրույց չէ, այլ մի հեղինակային մտորում: Ալիշանը ամեն կերպ փորձում է իր խոհերին և մտածումներին հաղորդակից դարձնել լուսնին: Եթե Նահապետը «մըտոք մոլար» է շրջում Ավարայրի դաշտում, ապա նույն բախտն է վիճակվել նաև լուսնին, այն տարբերությամբ միայն, որ վերջինս, լինելով երկնքի հավերժ ճամփորդ, «երկնուց ի վար» տեսել է Հայոց աշխարհի հերոսական անցուդարձերը:

Շարունակելով կիրառել գեղարվեստական նույն եղանակը՝ Ավարայրի

¹ Ալիշան Ղ., Երկեր, բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Շտիկյանի, Երևան, 1981, էջ 43 (այս հրատարակությունից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն շարադրանքում՝ փակագծի մեջ նշելով միայն էջը):

ճակատամարտի և նրա հերոսի մասին խորհրդածող Նահապետը դիմում է նաև «տրտում ու արյունուտ» Տղմուտ գետին, «Մակուա քարեն» և «ծեր Մասյաց սրբազան սարեն» եկող «հովիկին», իսկ վերջում՝ «այրած սրբտերու բարեկամ» սոխակին.

*Դու այլ, ո՛վ Տղմուտ, տրտում ու արյունուտ
Որ լալով ոլրիս ի մեջ շամբերուտ,
Եվ հովիկդ՝ որ գաս ի Մակուա քարեն
Կամ ի ծեր Մասյաց սրբազան սարեն...
... Ո՛հ դու բարեկամ այրած սրբտերու,
Խոսնակ գիշերո, հոգյակ վարդերու,
Երգե՛ պըլպուլիկդ, երգե՛ ի սարեդ,
Զանմահ քաջքն հայոց՝ երգե հոգվույս հետ... (էջ 43-44):*

Հաջորդող տողերում ակնհայտ է դառնում, որ «քաղցրագրուցիկ պլպուլը» Եղիշեի հոգին է: Նա, ձմեռն անցկացնելով անապատում, ամռանը գալիս է Ավարայրի դաշտ և ձայն տալիս Վարդանին: Գողտրիկ այս պատկերի միջոցով Ալիշանն իր պոեմում գեղարվեստականացրել է Ավարայրի ճակատամարտի երկու հերոսներին, որոնց հայրենասիրական ամրակայուն գաղափարները դարեր ի վեր ուսանելի էին հայերի համար:

Ալիշանի պոեմի տպագրությունից տասնչորս տարի անց՝ 1861 թ., «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում Գամառ-Քաթիպա¹ գրական անունով լույս է տեսնում «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը»² պոեմը: Հատկանշական է, որ հայկական ռոմանտիզմի վաղ շրջանի առաջավոր այս ներկայացուցիչները, հայ ժողովրդի ծանր օրերի շուրջ ունենալով նույն մտահոգությունները, ընտրել են պատմական միևնույն դրվագը, սակայն բոլորովին տարբեր մոտեցումներ կիրառել դրա նկատմամբ: Ինչպես Ալիշանի, այնպես էլ Պատկանյանի համար V դարի դրվագը միջոց էր իրենց օրերի խնդիրներին պատասխաններ գտնելու համար:

Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, ի տարբերություն «Պլպուլն Ավարայրի» քերթվածի, ունի հատուկ առանձնացված

¹ Ռ. Պատկանյանը 1854 թ. Մոսկվայում հիմնադրում է «Գամառ-Քաթիպա» անունով հայ գրական առաջին ընկերությունը, որի անունը կազմվել էր գաղափարակից ընկերների (Գևորգ, Մնացական, Ռափայել) անունների՝ ԳաՄաՌ սկզբնատառերով ու ա հոդակապով և Քանանյան, Թիմուրյան, Պատկանյան ազգանունների՝ ՔաԹիՊա սկզբնատառերով: 1857 թ. նյութական դժվարությունների պատճառով հայ հանրությանը որոշակի ծրագրով գրագիտացնելու, նրան հայրենասիրական ոգով դաստիարակելու և ազգային-ազատագրական պայքարի նախապատրաստելու նպատակներով ոգեշնչված այդ ընկերությունը դադարեցրեց իր գործունեությունը, իսկ «Գամառ-Քաթիպա»-ն դարձավ Ռ. Պատկանյանի գրական ամենատարածված անուններից մեկը: Նա հանդես է եկել նաև «Աշուղ Կարապետ», «Մյուլուկ», «Ախտամերկյան» և այլ ծածկանուններով: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Հովակիմյան Բ.**, Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 115, 59, 402, 48:

² Տե՛ս «Կռունկ հայոց աշխարհին», 1861, յուլիս, թիվ 7, էջ 313-330:

«Նախերգանք», որտեղ քնարական հերոսը՝ «մուսային պարկեշտ որդեգիր» Ռ. Պատկանյանը դարձյալ դիմաոնության եղանակով հետաքրքրվում է «երկնից կամարի գեղ» լուսնի այլալված դեմքի գաղտնի պատճառներով.

*Ո վ լուսի՛ն, լուսի՛ն, էլ քանի՞ էդպես
Դալկացած, տրժգույն, տըխուր երևես.
Այդ թխպոտ ամպե՛րն քեզ զարհուրեցին,
Բոցոտ կայծակնե՛րն քեզ այլայլեցին.
...Մի՞ թե նախանձից թափել է գույնըդ,
Չէ՛, ուրիշ գաղտնիք ունիս սրբոտմըդ:
Ասա՛ ինձ, լուսին, ասա սրտաբաց,
Ինչո՞ւ է, ինչո՞ւ դեմքըդ այլալված...¹*

«Դալկացած և տրժգույն» լուսինը դարեր շարունակ երկնքում «ունայն շրջելով», փնտրել էր «ըզգայուն հոգվով» այն մեկին, որին կարող էր պատմել իր սրտի գաղտնիքը: Նախկինում ոչ ոք հայացքը երբեք չէր հառել լուսնին և չէր հետաքրքրվել նրա տխրությամբ, մինչդեռ լուսինը «մայրագույթ խնամքով» պահել է այլոց գաղտնիքները: Լուսնի սրտին ծանրացած անամոք ցավը ընկալելի է միայն սփոփանքի կարոտ բանաստեղծին.

*Լուսինը դող-դող ամպեր ճեղքելով,
Ինձ պատասխանեց լալագին ձայնով.
«Լըսե՛, մուսային պարկեշտ որդեգիր
(Թե՛ գըլխուս անցքին ես հետաքրքիր),
Շատ դարեր դես ու դեն ունայն շրջելով
Քեզ միայն զըտա ըզգայուն հոգվով:
Բայց մինչև այսօր չի գտա ոչ ոք
Որ իմ տխրության տաներ քիչ մի հոգ.
Ոչ ոք չը խըլեց դարդը իմ սրտից
Շատ դար ինձ ոչ ոք չեղավ կարեկից...
...Ի՞նչ սեր ես խընդրում մարդկության ցեղից,
Ե՞րբ վարդ է քաղվել տատասկոտ տեղից,
Մերը նըմանից պետք է պահանջել» (էջ 61):*

Այս երկու պոեմները հատկանշվում են գրական աղերսներով, որն ավելի ակներև է հայի ծագումնաբանությունն ամբողջությամբ ներկայացնող ալիշանական երկտող բնաբանից.

*Ի հոն են ծնել մեր հարքն առաջին,
Որ ետ Ադամա զաստված օրհնեցին (էջ 62):*

Թե՛ Ալիշանի և թե՛ Պատկանյանի համար լուսինը պատմության լուռ վկան է: Երկու տեղերում լուսինն է պատմում Ավարայրի ճակատամարտի

¹ Պատկանյան Ռ., Երկեր, Երևան, 1980, էջ 60 (այս հրատարակությունից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն շարադրանքում՝ փակագծի մեջ նշելով միայն էջը):

մասին: Պոեմների գուգադրական վերլուծությունն ի հայտ է բերում մի շատ էական տարբերություն. Ալիշանի օրերի լուսինը ներկայանում է *«ամպի տակ բացխփիկ խաղայր»* տեսքով, այն է՝ ամբողջությամբ չէր ծածկվել սև ու մռայլ ամպերով և ժամանակ առ ժամանակ լուսավորում էր Հայոց աշխարհը, մինչդեռ Պատկանյանի հետ *«գրուցող»* լուսինը հազվադեպ էր երևում մարդկանց: Լուսնի պատմության ավարտից հետո Պատկանյանն *«ամեն իրիկուն»* սպասում էր նրա *«խաղաղ ծագելուն»*: Գեղարվեստական պատկերների ակնհայտ տարբերությունները կրում էին բանաստեղծների կենսական միջավայրերի կնիքները. եթե Ալիշանը, հայրենիքից հեռու լինելով, Թորգոմյան որդիներին պատկերացնում էր Վարդանի հերոսական ողջախոհությամբ, ապա Պատկանյանը քիչ թե շատ մոտ էր Հայաստանին և տեսնում էր, որ իր սերնդակիցները, կորցնելով նախնիների հերոսական ոգին, սկզբում հպատակվում էին թուրք-պարսկական, իսկ հետո՝ ռուս-թուրքական տիրապետություններին:

Հարկ է նկատել, որ Ալիշանը հակադիր համեմատություններով է նկարագրում Ավարայրի վճռորոշ ճակատամարտի նախընթաց խռովահույզ, արտաքուստ հանգիստ, բայց ներքուստ չարագուշակ գիշերն ու պատերազմող կողմերին.

Կես գիշերն առել էր գիշերավար,

Լուսնակն ամպի տակ բացխրփիկ խաղայր.

Մինչ հովըն շըրջկոտ կախ թևոքն անտառ

Օդոց և ծառոց հանգիստ կու կարդայր...

... Մեկ գունդն է պարսից հազար ու հազար

Որոնց վրա ամպ տարածի խավար.

Մեկ գունդն այլ հայոց է՝ թըվով ցանցառ.

Լուսնի լույսով գենքըն փայլին վառ վառ (էջ 45):

Հայոց և պարսից բանակների՝ ալիշանական վերոհիշյալ հակապատկերը հավաստում է այն մասին, որ հայ ժողովուրդը, երբեք չնահանջելով քրիստոնեական իր հավատից, միշտ արդարացի պայքար է մղել իր ազգային դիմագծի պահպանման համար, և նրա գոյության ուղին միշտ լուսավորվել է այդ անշեջ և մշտաբթուն պահող լույսով: *«Ալիշանը սիմվոլացրել է երկու իրարամերժ ուժերի՝ ազատության և բռնության հակամարտը, ընդգծելով Ավարայրի դաշտում հայ ժողովրդի մղած պայքարի առաջավոր, ազատագրական բնույթը»*¹, – իրավացիորեն նկատում է Ա. Ինճիկյանը:

Այլ է պատկերը Ռ. Պատկանյանի պոեմում: Նա անհուն կսկիծով ներկայացնում է «Լուսնի պատմությունը»: Հայ ժողովրդի ներդաշնակ կենցաղի և երբեմնի շեն ու նորոգ քաղաքների նկարագրություններից հետո լուսինը ավելի գորշ ու մռայլ գույներով է պատմում այն գիշերվա մասին, որի լուսա-

¹ Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1962, էջ 491:

բացը հատկանշվելու էր Վարդանանց սխրագործությամբ.

Սև ծուխ է պատել հայոց երկրնքին,

Գեղեր, քաղաքներ տված կրրակին,

Անողորմ էրվում, տոչորվում էին,

Բոցեղեն լեզուքն հասնում ամպերին,

Դժոխք էր տեսիլն խեղճ հայոց երկրին... (էջ 63):

Ալիշանի պոեմում առերևույթ երևացող հանգստությունը հարաբերական է. թե՛ պարսկական և թե՛ հայկական բանակաները նախապատրաստվում էին հաջորդ առավոտ կայանալիք վճռական ճակատամարտին: Գիշերվա կեսին լուռ ու մտասույզ Վարդան Մամիկոնյանը շրջում է դաշտում: Այդ պահին նա մտածում էր նենգամիտ թշնամու դեմ պատերազմի պատրաստվող վաթսուն հազար քաջ հայրենասերների մասին: Այս պատերազմը առաջինը չէր. Վարդանը նույն զգուշավորությամբ *«հիսուն հաղթանակք»* էր շահել *«քրրտընքով»* և դուրս շարտել ոսոխին հայրենիքի սահմաններից: Մակայն այդ փորձառությունը չէր խանգարում Վարդանին, որ նա ևս մեկ անգամ վերլուծեր ստեղծված ծանր և օրհասական իրադրությունը:

Վարդան Մամիկոնյանի մտասույզ կերպարի ալիշանական գեղարվեստականացումն աչքի է ընկնում կրկին հակադրամիասնությամբ, այսինքն՝ արտաքին հանգստությունը հակադրված է ներքին անհանգստությանն ու լարվածությանը: Հեղինակը, նուրբ քնարականությամբ զարգացնելով պոեմը, հասցնում է այն աստիճանի, որ ընթերցողի մտապատկերում ստեղծվում է գիշերային Ավարայրի մռայլ տեսարանի շարժանկարը, որը քիչ գրողների է հաջողվում: Այս իմաստով գրականագետ Ս. Շտիկյանը իրավացիորեն գրում է. *«Հեղինակը հաջողությամբ կարողացել է հասնել այն բանին, որ շարադրանքի ընթացքում առերևույթ հանդարտության ներքո, ստեղծվի հոգեբանական զգալի լարում, հուզումնալից վիճակ, և այդ ամենը առանց մնացորդի փոխանցվի ընթերցողին»*¹:

Վարդան Մամիկոնյանը Պատկանյանի համար ամենից առաջ մարդ է՝ իր բոլոր առավելություններով և թերություններով հանդերձ: Նա, լինելով առողջ բանականության տեր անհատ, լավ է գիտակցում իր ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման ճոճվող վտանգը: Ժողովրդի սերն ու հարգանքը երբեք չմեծամտացրին Վարդանին: Վերջինս չի մոռացել ժողովրդի նկատմամբ ունեցած սպարապետական սուրբ պարտավորությունը: Դիտելի է, որ քաղաքական գործչի նրա նկարագիրն ու մարդկային տեսակը շատ ընդհանուր եզրեր ունեն: Նա չէր կարող իր անձնական հանգամանքներին տուրք տալ և բախտի քմահաճույքին թողնել իր ժողովրդին: Վարդանը, մի կողմ թողնելով իր անձն ու ընտանիքը, ազգի կենաց-մահու խնդիրը իր և զինակիցների համար *վճռեց կա՛մ հաղթանակի, կա՛մ մահվան ելքի երդումով*.

¹ Շտիկյան Ս., Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, էջ 131:

*Չըկարաց տանել նորա վեհ հոգին
Կրոնի հալածմունք սիրելի ազգին
Թըրոսն ու խաչով տվեց մեծ երդում –
Հաղթել կամ փառքով ընկնել գոռ դաշտում (Էջ 64-65):*

«Պլպուլն Ավարայրի» պոեմի երկրորդ գլխում էպիկական շնչով ներկայացվում է բուն ճակատամարտի հերոսական նկարագրությունը: Երկու բանակները գլխակորույս բախվում են միմյանց, և մարդկային ոտնատրոփից թնդում է Ավարայրի դաշտը: Մարդկային այս ամբոխի միջով սրընթաց անցնում է հայոց սպարապետը, որը, ավելի ոգևորելով բանակի զինվորներին, նրանց նորանոր սխրանքների ոգի է տալիս, իսկ նրանց, ովքեր հուսահատվել էին, Վարդանը հորդորում էր քաջ ու անսասան մնալ:

Պատկանյանի պոեմում Վարդանի՝ «*իր բուռ քաջերուն*» դիմելու «*դեմծիծաղ*» խոսքն ունի մի փոքր ավելի հուզախառն և զգացմունքային բնույթ, որը պայմանավորված է ոչ միայն իր ընտանիքի, այլև հայության հետագա ճակատագրի մասին մտորումներով.

*Առանց հայրենյաց մեզ մույթ է աշխարհ,
Հայաստան էր մեր միակ մըխիթար.
Կորավ Հայաստանն, էլ ի՞նչ հույս մընաց,
Մեր կյանքն ի՞նչ է, թե ոչ սուգ ու լաց.
... Ասաց ու լռեց: Երկու աչերից
Ցողացին արցունք՝ ինչպես ցող երկնից.
Ուժգին ա իս քաշեց անվեհեր սրբուն
Բայց այդ ախր չէր թըշնամու ահեն:
Գո լցե թե հիշեց նա այդ րոպեին
Տանը անպաշտպան թողած ընտանին
Որ շուտով կընկնին ձեռքը թշնամուն,
Այդ ազատ կյանքեն կերթան գերություն.
Գո լցե նա լացեց Հայի վիճակին,
Անկումը գահին, կորուստը թագին
Որ հազար ու բյուր կըրելով ցավեր,
Անկործան պահեց նոցա շատ դարեր (Էջ 66-67):*

Հատկանշական է, որ Ալիշանի պոեմը գերծ է մնացել հայկական և պարսկական բանականների արյունալի տեսարանների անհարկի նկարագրություններից, որովհետև նա կարևորում էր ոչ թե երկուստեք կորուստները, այլ հայրենասիրական ոգու փոխանցումը: Այս տեսանկյունից համոզիչ է Ս. Շտիկյանի այն տեսակետը, ըստ որի՝ Ալիշանին հաջողվել է գեղարվեստական վարպետությամբ պատկերել Ավարայրի ճակատամարտը և խուսանավել իր ժամանակին տարածված այն սխալ մոտեցումից, որ հայերը միայն անխնա կոտորել են պարսիկներին և արյան գետեր հոսեցրել: Ալիշանն իր պոեմում առաջին պլան է մղում հայրենասիրությունը: Նրա գաղափարների ելակետը այն մտայնությունն է, որ հայերը ամենից առաջ պայքարել են

իրենց հայրենիքի ազատության համար¹:

Ինչպես Ալիշանի, այնպես էլ Պատկանյանի պոեմներն ավարտվում են Վարդան Մամիկոնյանի մահով: Ալիշանը ներկայացնում է պատերազմից հետո խաղաղված ռազմադաշտը, որի վրա թնածում է մեռելային լռությունն ու մահվան ուրվականը: Խավար և մեռելահոտ գիշերային լռության մեջ հայտնվում է Ավարայրի «պլպուլը»՝ Եղիշեն: Երկարատև փնտրտուքից հետո նա հազարավոր դիակների միջից վերջապես գտնում է Վարդան Մամիկոնյանի դին ու գլուխը խոնարհած կանգնում նրա առջև, և համատարած լռության մեջ տարածվում է Եղիշեի՝ սիրտ կեղեքող ողբը.

*«Ո՛հ, ես ի ճակտիդ վրա երդնում, Վարդան,
Կանչեց Եղիշե, որ ձեռքն աստվածյան,
Հոն մեծ փոխարեն է գրեր քո մահվան,
Թե բյուր դարք անցնին, դու մընաս Վարդա՛ն»* (Էջ 61):

«Պըլպուլն ի թըփեն», դյութվելով «սիրաձայն հոգու» երգով, դարեր շարունակ փոխանցում է Վարդանանց նահատակների հերոսության երգը.

*Ասաց Եղիշե. հետ արուսեկին
Փախավ ծածկեցավ սիրաձայն հոգին...
Պըլպուլն ի թըփեն սովրեցավ Վարդան
Կանչե գրուն գիշերըն՝ Վարդա՛ն, Վարդա՛ն... (Էջ 61):*

Հետաքրքիր պատմություն ունի «Պլպուլն Ավարայրի» պոեմի վերջին քառատողի մշակումը: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Ալիշանը պատահականորեն չէր ընտրել պատմական թեման. պատմությունից դասեր քաղելու պատգամը ուղենշում էր պատմության քառուղիներում ժողովրդական հիշողությամբ հարատև գոյատևելու ճանապարհը: Այս տեսանկյունից պոեմի վերջնամասը պետք է լիներ ավելի խոսուն և ամբողջական:

Պոեմի առաջին տպագրության ժամանակ այդ երկտող հատվածը հնչում էր այսպես.

*Կանչե՛ պըլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Արդեօք գուխտ մահուն սուրբ՝ յիշե՛ Վարդան²:*

Այս հատվածի «գուխտ մահուն սուրբ» արտահայտությունը, ընդգրկելով կրոնի համար նահատակության և դրա փառաբանման բովանդակությունը, փոքր-ինչ ստվերում էր պոեմի հիմնական գաղափարը: Պոեմի այդօրինակ վերջաբանը, խիստ սահմանափակելով առաջադրված խնդրի շրջանակը, չէր համապատասխանում պատմական բուն իրականությանը և ոչնչով չէր առնչվում Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի դրությանը: Եթե Ալիշանը այդպես թողներ պոեմի ավարտը, ապա կստացվեր, որ Վարդանը նահատակվել էր ոչ թե իր հայրենիքի փրկության, այլ կրոնի համար:

¹ Տե՛ս Շտիկյան Ս., նշվ. աշխ., էջ 132-133:

² «Բազմավեպ», 1847, հոկտեմբերի 1, թիվ 19, էջ 300:

1858 թ. Ալիշանը, «Պլպուլն Ավարայրի» պոեմը հրատարակելով «Նուագք»-ի հատորներում, վերջին քառատողը շարադրում է այսպես.

*Կանչէ՛ պըլպուլիկ, կանչէ՛ յԱւարայր,
Որ Վարդան հայի յերկնուց այլ ի վայր,
Յիշէ՛ զՀայաստան ըզսիրելին վայր,
Հայաստան յիշէ՛ զՎարդան իւր յամայր¹:*

Թեև այս հատվածը նախորդի համեմատությամբ հաջողված էր, սակայն ուներ ակնհայտ թերություններ: Անմշակ էին հատկապես երկրորդ և երրորդ տողերը, որոնք դեռ կրում էին կրոնի համար գոհվելու մտայնությունը: Ըստ Ալիշանի՝ *պոեմի վերջում երգասաց բլբուլի ձայնը ծանր մրափից արթնության և զգոն լինելու կոչ է լինելու հայության համար, իսկ Վարդանը երկնքից ողբեղնելու և հսկելու է իր սիրելի Թորգոմյան սերունդների դարավոր երթը:*

Այսպիսով՝ Ալիշանը երկար մտորումներից հետո «Նուագք» ժողովածուի «Հայրունի» հատորի երկրորդ՝ 1867 թ. հրատարակության ժամանակ «Պլպուլն Ավարայրի» պոեմը վերահրատարակում է խնդրո առարկա քառատողի հետևյալ բանաձևմամբ.

*Կանչէ՛ պըլուլիկ, կանչէ՛ հոգեձայն,
Որ յերկնուց ի վայր հայի և Վարդան,
Յիշէ՛ զՀայաստան տուն իւր սիրական,
Հայաստան յիշէ՛ զիւր Կարմիր Վարդան²:*

Թեև Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը նույնպես ավարտվում է Վարդանի մահվան և թաղման նկարագրությամբ, սակայն ուշարժան է հայոց սպարապետի հետնորդների մասին պատկանյանական ընկալումը: Ըստ Պատկանյանի՝ վերջիններս ոչնչով նման չեն իրենց քաջ նախնուն: Հեղինակը, ընկնելով չափազանցությունների, ինչպես նաև պատմական ակնհայտ սխալների խորխորատները, Վարդանանց պատերազմից հետո հայ իրականության մեջ ոչ մի սխրանք այլևս չի տեսնում.

*Կորավ Դյուցազներ, կորավ Հայաստան,
Զի հայոց միակ հույսն էր քաջ Վարդան.
Թըշվառ հայ ազգին նորա վեհ սիրով
Էլ այնուհետև չըսիրեց ոչով:
Դարք հետև-հետև գընացին, անցան,
Հիշատակ Քաջին յուրքը մոռացան,
Հեշտության կենաց և գանձի մոլար
Ազնիվ նըպատակն մոռացան իսպառ (էջ 77):*

Ճիշտ է, Պատկանյանի սերնդակիցները քիչ էին աղերսվում V դարի համախմբված գաղափարական պայքարի ակունքներին, սակայն այդ «գանձի»

¹ Հ. Դեոնդեյա Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Նուագք, Գ, Հայրունի, էջ 280:

² Հ. Դեոնդեյա Մ. Ալիշանեան Մխիթարեան Վարդապետի, Նուագք, Գ, Հայրունի, Վենետիկ, ի Սուրբ Ղազար, ՌՅԺԷ-1867, էջ 332:

մոլշար» հասարակության ընդհանուր համապատկերի վրա նշմարվում էին այնպիսի անհատներ, որոնք պատրաստ էին գոհվել հանուն հայրենիքի: Այս անփառունակ իրավիճակի հետևանքով Պատկանյանի օրերի լուսինը հինավուրց և միշտ արդիական իր պատմությունն ավարտում է հոռետեսական տրամադրությամբ.

*Թո՛ղ լըռե՛մ, լըռեմ, ազնիվ պատանի,
Այս թըշվառ անցքեն միտքըս սասանի,
Քանի կը հիշեմ՝ սիրտըս խոցոտի,
Ու ճըմլած հոգիս վրիժու բոցոտի:
...Իսկ Հա՛յր... վա՛յ նրա դառը օրերուն,
Ի՞նչ ունի, բայց թե լոկ նեթ անուն,
Որը և հաճախ ինքը ամոթից
Զըզված մերժում է իրա վըրայից (էջ 78):*

Պատկանյանի պոեմն ունի նաև վերջաբան, որտեղ հեղինակն ամփոփում է իր գաղափարական ասեկիքը: Լուսնի «տըխրամած» դեմքը ռոմանտիկ բանաստեղծին միշտ հիշեցնում է իր ժողովրդի ներկա ծանր վիճակը: Ըստ Պատկանյանի՝ այդ թշվառ և ողբերգական վիճակի ելքը մեկն է. *իբր սերնդակիցները պետք է ականջալուր լինեն իրենց նախնիների հայրենասիրական սիրանքներին և այդ ամենով ոգեշնչվեն ներկա դառնադետ օրերում*: Այս մտայնությամբ նա խորհրդանշական պատկերով վերջին անգամ դիմում է լուսնին, որ գոնե նա իր պատմությամբ վառ պահի նախնյաց փառքը և վկայի վերջիններիս հայրենասիրության մասին.

*Ա՛խ, ցոլա՛, փայլե՛, տըխրադեմ լուսին,
Գուցե, քու փայլից փայլ տաս և հային.
Պատմե՛ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ի՛նչպես կորավ հայ ազգի գահը,
Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը – աշխարհ Հայաստան (էջ 78):*

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է ասել, որ Ավարայրի խորհուրդը յուրաքանչյուր ժամանակաշրջանում նորովի է մեկնաբանվում և երբեք չի կորցնում իր արդիականությունը: Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմը նոր և թարմ խոսք էր Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանության ճնշող կամարների ներքո: Այս և Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմները դարձան հայկական ռոմանտիզմի երախայրիքները: Թեև ակնհայտ են աշխարհայացքներով և կենսական միջավայրերով տարբերվող հեղինակների ընկալումների որոշ ընդհանրություններ և տարբերություններ, սակայն, այդուհանդերձ, թե՛ Ղ. Ալիշանը և թե՛ Ռ. Պատկանյանը բարբառում են հայրենասիրության, միասնականության, ազգային ոգու պահպանման և անցյալից ոգեշնչվելու մշտարդիական հարցերի մասին:

**Татевик Мерджанян – Сопоставительный анализ поэмы Гевонда Алишана
«Аварайрский соловей» и поэмы Рафаэла Патканяна «Смерть храброго Вардана
Мамиконяна»**

Данное исследование посвящено 200-летию юбилею Гевонда Алишана (1820-1901). Автор рассматривает поэму Г. Алишана «Аварайрский соловей» в параллели с поэмой Р. Патканяна «Смерть храброго Вардана Мамиконяна», применяет современные подходы, сравнительно-исторические и сопоставительные методы. Примечательно, что оба автора, исходя из различий своего мировоззрения и жизненной среды, изобразили различные аспекты и идеи Аварайрской битвы. По Алишану, история Вардананц на протяжении веков вдохновляет армян, в то время как Патканян ошибочно пессимистично полагал, что его поколение отделилось от патриотического духа. Тем не менее, несмотря на все достоинства и недостатки, два этих произведения армянского романтизма занимают свое достойное место в истории новой армянской литературы.

**Tatevik Merdzanyan – *The Parallel Study of the Poems “The Nightingale of Avarayr”
by Ghevond Alishan and “The Death of Brave Vardan Mamikonyan”
by Raphael Patkanian***

The present study is dedicated to the 200th anniversary of Ghevond Alishan (1820-1901). The author observes Gh. Alishan's poem “The Nightingale of Avarayr” in parallel with R. Patkanyan's poem “The Death of Brave Vardan Mamikonyan” with the application of modern approaches and historical and comparative methods. It is noteworthy that the two authors, coming out of their historical and political worldviews and differences of their environments, presented the idea of the Battle of Avarayr differently. According to Alishan, Vardanants history has inspired Armenians for centuries, while Patkanyan mistakenly believed from a pessimistic point of view that his contemporaries had retreated from their patriotic spirit. Nevertheless, despite their advantages and disadvantages, the two works of Armenian romanticism have a worthy place in the panorama of modern Armenian literature.

Ներկայացվել է 11.08.2020

Գրախոսվել է 24.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

**ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ
«ԿՐԱԿԵ ՇԱՊԻԿԸ» ՎԵՊԱԿՈՒՄ**

Բանալի բառեր – Ջապել Եսայան, «Կրակե շապիկ», պատում, ինքնակենսագրական վիպակ, կերպարակերտում, պատկերային համակարգ

Հայ գրականագիտության անկոխ արահետներից է Ջապել Եսայանի պատումի ուսումնասիրությունը: Նրա կերտած ստեղծագործությունները ևս, պատմական ժամանակաշրջանով պայմանավորված, արժանացել են մերթ համընդհանուր ճանաչման և մեծարման, մերթ ենթարկվել են քննադատության ու արգելանքի, մերթ պարուրվել պատմության անթափանց շղարշով:

XIX դարավերջին և XX դարասկզբին արևմտահայ մամուլը բուռն հետաքրքրություն ցուցաբերեց ու դրվատանքի արժանացրեց իր գրական առաջին փորձերը կատարող Ջապել Եսայանին (այն ժամանակ՝ Հովհաննիսյան). նրան ջերմությամբ ողջունեցին Արշակ Զուպանյանը, Արտաշես Հարությունյանը, Թեոդիկը և այլք, որոնք միանգամից նկատեցին հոգեբանարվեստագետի ստեղծած կերպարների համոզիչ ու իրական լինելը, մատնացույց արեցին գրագիտուհու առինքնող և անսեթևեթ ոճը, որը հետագայում հարստացավ եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գեղարվեստի լավագույն ավանդույթներով:

Խորհրդահայ իրականության մեջ գրականագիտական միակ ամբողջական ու իրապես հաջողված փորձը թերևս Սևակ Արզումանյանի Ջապել Եսայանին նվիրված մենագրությունն է¹, որտեղ միասնաբար ներկայացված են գրողի կյանքն ու ստեղծագործությունը: Խորհրդային կադապարված գաղափարախոսությամբ պարուրված այդ ուսումնասիրության մեջ հասկանալի պատճառներով, սակայն, հավուր պատշաճի չէին կարող ներկայացվել հեղինակի գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները:

Հայ ժամանակակից գրականագիտության մեջ, որտեղ, հուրախություն մեզ, ուսումնասիրողն այլևս կադապարված չէ որևէ գաղափարախոսությամբ, նոր հետաքրքրություն է առաջացել Ջապել Եսայանի նկատմամբ. վերահրատարակվում են նրա գրքերը, հոդվածները, թվայնացվում և էլեկտրոնային տարբերակով ընթերցողին են ներկայացվում հեղինակի կենսագրական տվյալները: Այս ժամանակահատվածում Եսայանի մասին ուշագրավ խոսք է ասվում գրականագետ Ալ. Մակարյանի «Ջապել Եսայանի «Սիլիտարի պար-

¹ Տե՛ս Արզումանյան Ա., Ջապել Եսայան, Երևան, 1965:

տեգներ»-ը» ծավալուն հոդվածում¹, որտեղ, սխալված չենք լինի, եթե նշենք, որ ներկա իրականության մեջ առաջին անգամ գիտականորեն պատճառաբանված ու լրջամտորեն վերլուծվում է Եսայանի գեղարվեստը, և ընթերցողի ուշադրությունը սևեռվում է այն նորարարությանն ու թարմությանը, որը հայ գրականության մեջ մտցրեց Սորբոնի համալսարանի գրականության և փիլիսոփայության դասընթացներին մասնակցած ու ժամանակի եվրոպական գրականությունը գոց իմացող հայոց թերևս ամենամեծ գրագիտուհին:

Հիշյալ երկու աշխատություններն այսօր շահեկանորեն օգնում են պատկերացում կազմելու Եսայանի՝ գրականության մեջ ունեցած մեծ ավանդի և վիթխարի ժառանգության մասին, ցույց են տալիս նրա պատկերավոր մտածողությունն ու գեղարվեստական բարձր ճաշակը: Այդուհանդերձ, մինչ օրս ընթերցողն ամփոփ պատկերացում չունի Եսայանի՝ պատմական թեմաներով գրված երկերի մասին, որոնք իրականության և գեղարվեստի զարմանալի միաձուլմամբ ներկայացնում են Օսմանյան կայսրությունն ու Խորհրդային Հայաստանը, ծանոթ չէ սոցիալական թեմայով գրված նրա երկերին, որտեղ բեկվում են մարդկային ամենատարբեր ճակատագրերը, և կնոջ իրավունքների ու դրանց ավանդական ընկալումների մասին ներկայացվում են դրամատիկ պատմություններ և այլն: Նշենք նաև զանազան արխիվներում պահվող նրա նամականու և հրապարակախոսության մասին, որոնց միջոցով ամբողջանում է Զապել Եսայանի՝ Չոպանյանի բնորոշմամբ՝ «արևմտահայ գրականության ամենեն ամբողջ հաջողության» կերպարը:

Պատմության գնահատականը

1930-ականների սկիզբը, երբ անհատի պաշտամունքը դեռ ավերիչ ազդեցություն չէր ունեցել մտավորականության վրա, Խորհրդային Հայաստանում ապրող և ստեղծագործող Զ. Եսայանի համար կարծես հարմար ժամանակահատված էր տարիների հեռվից վերստին գեղարվեստականացնելու անցյալը, արթնացնելու մանկական հուշերը և կատարելու պատմության գնահատումը, իսկ դրա լավագույն արտահայտչաձևը ինքնակենսագրական պատումն էր, որի մասին Մ. Բախտինը գրել է. «Ինքնակենսագրության օբյեկտը ոչ միայն սեփական անցյալի աշխարհն է՝ հասուն գիտակցականի և հասկացման լույսի ներքո՝ հարստացված ժամանակային հեռանկարներով, այլև այդ աշխարհի նախկին գիտակցումը և գնահատումը»²: Սրան ավելացնենք նաև, որ 1920-1930-ական թվականների խորհրդահայ գրականության մեջ աննախադեպ հետաքրքրություն առաջացավ ինքնակենսագրական պատումի նկատմամբ. մեկը մյուսի հետևից լույս տեսան Ստ. Զորյանի, Գ.

¹ Տե՛ս **Մակարյան Ա.**, Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզներ»-ը // **Եսայան Զ.**, Միլիտարի պարտեզները, Երևան, 2018, էջ 154-197:

² **Бахтин М.**, Вопросы литературы и эстетики, Москва, 1975, с. 455.

Մահարու, Ա. Բակունցի և այլոց ինքնակենսագրական երկերը, որտեղ հեղինակները կարոտով ու վառ գույներով (իսկ երբեմն նաև իդեալականացված) էին ներկայացնում անցյալը՝ փորձելով գեղարվեստի շնչով վերակառուցել իրենց կորուսյալ մանկությունն ու հայրենիքը: Եվ ահա այս համապատկերում Ջ. Եսայանը 1934 թ. տպագրեց «Կրակե շապիկը» վերտառությամբ վիպակը, որը հիշյալ հեղինակների ինքնակենսագրական երկերից էականորեն տարբերվում է իր հանրային-քաղաքական նշանակությամբ և պատկերվող երևույթների պատմական գնահատմամբ:

«Կրակե շապիկը» ժամանակակից բանվորական կյանքի ռեալիստական փայլուն արտացոլումն է: Հեղինակին հաջողվել է հերոսների բավական նեղ շրջանակում պատկերել իր ժողովրդի կյանքն ու կենցաղը: Եսայանն իր պատումն սկսում է առանց ավելորդ նախաբանի, զգացական պատմության, որի շնորհիվ ընթերցողը միանգամից հավատ է ընծայում ստեղծագործությանը և դառնում պատմական դեպքերի ականատեսը: «Այն ժամանակ հազիւ տասը տարեկան էի, – գրում է նա: – Մենք կը բնակէինք Սկիւտար, միայարկ, խարխլած ու փայտաշեն տուն մը, որ կը գտնուէր Բիւլբիւ Տէրեսիի վերելը երկարող տուներու մէջ»¹:

Սա եսայանական պատումի առաջին առանձնահատկությունն է, հեղինակ-ընթերցող ուղիղ կապն ստեղծող հիմնավոր քայլը: Հատկանշական է, որ վիպակի տպագրման ժամանակ գրողն ուներ արդեն բավական իմաստություն ու փորձ, նախորդ տարիներին օգտվել էր պատումի արտահայտման բազմաթիվ ձևերից և նպատակահարմար էր գտել տասնամյակներ առաջ տեղի ունեցած դեպքերը ներկայացնել այս ձևով:

Աղքատության ու թշվառության խորհրդանիշ *կրակե շապիկը* հազաձների մեջ մարել են ուրախության և հոգեկան անդորրի այնքան ցանկալի կայծերը: Ոսկեծամ, անհոգ, աշխարհի ցավերին ու անարդարություններին անհաղորդ, շատ անգամներ կարոտով, երջանկությամբ և վերապրելու սրտաբուխ ցանկությամբ նկարագրվող մանկությանը հեղինակը հակադրել է չքավորության, հիվանդության ու անմարդկային պայմաններում ընթացող մանկության դառը հուշերը: «Չեմ հիշեր մայրական գորովոտ բույր մը, կամ ժպիտ մը: Ա՛յ, թող ըսեն ինչ վոր կուգեն թող խոսին ու գրին մանկության քաղցր հիշողություններու վրա... Ատոնք անծանոթ են անոնց, վոր ակռաները սեղմած, կուրծք կուրծքի անդադար կկովին կյանքի դժվարություններու դեմ», – տարիներ անց պետք է գրեր հեղինակը՝ հաստատելով այն պարզ իրողությունը, որ կրակե շապիկ հազաձների մեջ բնականաբար չէին կարող գոյատևել քնքշանքն ու գորովը, զգացմունքներին տրվելու ցանկությունը:

Բանվորի հասարակ ընտանիքում կատարվող դեպքերը հուզիչ են ու տպավորիչ, սակայն միայն սրանց նկարագրությամբ չէր կարող բավարար-

¹ Եսայան Ջ., Կրակե շապիկը, Երևան, 1934, էջ 1:

վել ըմբոստ հոգի ունեցող արձակագրուհին: Տեսնելով տիրող անարդարությունները և ապրելով սոցիալական սուղ պայմաններում՝ վիպակի հերոսները որոշում են պայքարել, միավորվել մեկ դրոշի շուրջ՝ վերականգնելով կորսված արժեքները: Ահա այս վերջին իրողության համար տասնապատկվում են վիպակի արժանիքները, որի շնորհիվ նրա ստեղծագործությունը դեռ երկար ժամանակ կմնա արդիական և հոգեհարազատ: Նկարագրելով ժողովրդի թշվառ վիճակը և ցույց տալով դրա հաղթահարման ուղիները՝ Զ. Եսայանը կատարում է մի շատ կարևոր քայլ, և նրա գրականությունը՝ որպես մի անխարդախ հայելի, ժողովրդի իրական կյանքը արտացոլելուց զատ կոչ է անում դուրս գալ պայքարի, համախմբվել՝ ազատվելով կրակե շապիկից: Ահա սրանով Եսայանը կատարեց այն քայլը, որի բացթողման համար «Կրիտիկա. Սոս և Վարդիթերի» աշխատության մեջ Մ. Նալբանդյանը քննադատում էր Պ. Պռոշյանին¹, այն է՝ նմանատիպ մտքերը՝ պայքարի դուրս գալու մասին, եղել են գրականության պատմության անբաժանելի մասնիկը և բոլոր ժամանակներում արդիական են մնացել: Նաև սա է վիպակի հարատևության առհավատչյան:

Ի դեպ, թուրքական իշխանությունների դժնի լծի տակ կքա՞ծ ժողովրդի ծանր վիճակի մասին Զ. Եսայանը պատմում է նաև իր սովորածավալ «Բարպա Խաչիկ» վեպում, որտեղ պատանի Միհրանի՝ երկրում տիրող անարդարությունների և ապօրինությունների մասին տված հարցերին կար միայն մեկ պատասխան՝ սա Թուրքիան է: Այս երկու ստեղծագործությունները միմյանց լրացնում են. հիշյալ վեպի հերոսներից մեկը, գտնվելով հոգեկան տվայտանքների մեջ, մեծ ցավով ասում է. «Մենք այս երկրին մեջ բուռ մը մարդիկ ենք, որ ակոսաներիս սեղմած, մեր արյունեն արյուն քաշելով կդիմանանք կոր հույներու, ֆրենկներու մրցումին...»²:

Կերպարվեստը

Հավատարիմ մնալով ժանրի պահանջած սկզբունքներին, այն է՝ սահմանափակ թվով հերոսներ և դեպքերի համեմատաբար սեղմ պատկերում՝ արձակագրուհին արժարժել է համամարդկային նշանակություն ունեցող խնդիրներ՝ համոզված, որ իրենց բաժին հասած ծանր բախտի ընձեռած հոգեմաշ պտուղների համը զգում են նաև հազարավոր այլ մարդիկ աշխարհի բոլոր կողմերում: Քննելով վիպակում գործող անձանց կերպավորման հարցը՝ նկատենք, որ Եսայանական գրեթե բոլոր կերպար-հերոսները ինքնարտահայտվում են իրենց գործողություններով, և հեղինակը շատ քիչ է նրանց գնահատականներ տալիս: Այլ կերպ ասած՝ ընթերցողը կերպարների բարո-

¹ Տե՛ս **Նալբանդյան Մ.**, Կրիտիկա. «Սոս և Վարդիթերի», Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1983, էջ 169:

² Տե՛ս **Եսայան Զ.**, Բարպա Խաչիկ, Երևան, 1966, էջ 130:

յական արժեհամակարգին ծանոթանում է՝ հետևելով նրանց գործողություններին, ուստի ստեղծագործության դիպաշարը և կերպարների հոգեբանական համոզականությունը կքննենք միասնաբար:

Ստեղծագործության կենտրոնական հերոսներից է հիշյալ ընտանիքի մայրը՝ Նունիկը, որը վիպակի սկզբում պատկերված է մռայլ, խիստ, կյանքի հոգսերի տակ կքած կնոջ կերպարում: Նա, ըստ երևույթին, կրակե շապիկի օղակներում տանջվող առաջին հերոսն է, որն ընտանիքի ամենօրյա ապրուստը հոգալու համար պայքարի դուրս ելած մարդկանց առաջին շարքերում էր կանգնած, գաղափարական պայքարի, ազատատենչ գաղափարների առաջամարտիկն ու լավագույն ջատագովն էր: Այստեղ կինը չի կատարում երկրորդական դեր, և իր ծավալած գործունեության կարևորությունը երբեք չի ստորադասվում: Հեղինակին հաջողվել է տիպականացնել կերպարը՝ նրա մեջ ներմուծելով այն ժամանակվա հայ կնոջ և Օսմանյան կայսրության այլազգի քաղաքացու լավագույն գծերը: Ավելին՝ գնալով որոշակի սրացումների և բևեռացումների ճանապարհով՝ Եսայանը ցույց է տվել, թե ինչպես են ծանր իրականության տակ կքած կնոջ միջոց վերանում քնքշանքն ու նրբությունը: Այսպիսով՝ ի դեմս Նունիկի, այս վիպակում գործ ունենք տիպականացված կամ հավաքական կերպարների հետ:

Նունիկի կերպարը լրացնելու է գալիս ընտանիքի հայրը՝ պահպանողական հայացքների տեր մի մարդ, որի ուսերին էր ծանրացած ընտանիքի գոյատևման խնդիրը, մարդ, որն ամեն հնար գործադրում էր ընտանիքի հանապազօրյա կարիքները հոգալու համար, ինչի շահերը ելնելով՝ սովորաբար չէր հաճախում գինետներ և դրանով ընտանիքի անդամներին բախտավոր զգալու երջանկություն էր պարգևում: Իսկ վերջիններս իրենց համեմատում էին այն ընտանիքների հետ, որոնց «հայրը գինետունը կթողուր վաստակը»: Աստիճանաբար լայնանում է խեղված ճակատագրեր ունեցողների շրջանակը: Կարպիսը՝ վիպական գործողություններն իր անունից վարող հերոսը, դպրոցում ծանոթանում է Պետիկի հետ, որը պատմում է իր հորեղբայր Արտաշեսի մասին, որի անվան հետ է կապվում ազգային-ժողովրդական վերածնունդը: Վիպակում Արտաշեսն աստիճանաբար դառնում է բանվորական շարժման պարագլուխն ու առաջին դեմքը: Նա վիպակի ընտրյալ հերոսն է, որին նմանվել է ցանկանում Կարպիսը՝ աշխարհում արդարություն հաստատելու համար: Թեև վիպակը, ինչպես արդեն նկատեցինք, հայկական ռեալիզմի դրսևորումներից է, սակայն Կարպիսը կարծես ռոմանտիկ հերոս է, որի բախումը իրականության հետ ավելի ցայտուն է:

Եսայանը, շատ լավ հասկանալով իր կերտած գրական հերոսների հոգեբանությունը, կարողացել է խորացնել դրանց վերլուծության շրջանակները: Ցույց տալով կերպարների՝ առանց ավելորդ պճնանքի և սեթևեթանքի աստիճանաբար խորացող ընթացքը (դա բնորոշ էր արևմտահայ կին հեղինակ-

ներին)՝ Հակոբ Օշականն իրավացիորեն գրում է. «Տիկին Եսայան հոգեբանական վեպին անվիճելի վարպետն է»¹:

Նկարագրվող դեպքերը տեղի են ունենում ձմռանը. բանվորական ընտանիքներն ի վիճակի չեն լինում ածուխ գնել տան ջեռուցման համար, նմանատիպ պայմաններում հիվանդանում և մահանում է ընտանիքի երեխաներից մեկը՝ ավելի բորբոքելով ընտանիքի՝ կրակե շապիկից ազատվելու տենչը: Ահա այսպիսի պայմաններում սկսում են նշմարվել պայքարի առաջին կայծերը, բանվորական ընտանիքները հանգանակություն են կազմակերպում ածուխ գնելու համար, նրանց գաղափարական առաջնորդը դառնում է Արտաշեսը, որը զբաղվում է ածուխի ձեռքբերման աշխատանքներով: Գործողություններին դրամատիզմ հաղորդելու և միագծությունից պաշտպանելու համար հեղինակը մի հետաքրքիր բեկում է մտցնում իր պատումի ընթացքի մեջ. դեպքերի զարգացման թելադրանքով Արտաշեսը որոշ ժամանակ առանց զգուշացնելու բացակայում է համայնքից՝ իր մոտ ունենալով ածուխի համար հավաքված գումարը: Դա զանազան մեկնաբանությունների տեղիք է տալիս. ասեկոսներ են տարածվում Արտաշեսի՝ խաբեբա լինելու մասին, սակայն ժողովրդական շարժման ընտրյալ առաջնորդը, հավատարիմ մնալով իր խոստմանը, բերում է այդքան ցանկալի վառելիքը՝ հույսի նոր հորիզոն բացելով բանվորների տեսադաշտում: Անկասելի էր ազատատենչ ժողովրդի կազմակերպած շարժումը, սակայն կատարվում է այն, ինչը մի նոր ուղղություն, նոր հնչեղություն է հաղորդում վիպակին. վրա են հասնում ոստիկանները, ձեռքակալում բանվորներից մի քանիսին, հետախուզում և գտնում են ածուխի պահեստները՝ ամբողջ վառելիքը խլելով ժողովրդից: Սա արդեն պետության միջամտությունն էր բանվորների ձեռնարկած աշխատանքներին, որոնք բնավ հակասօրինական չէին, այսինքն՝ թուրքական իշխանությունները պետական մակարդակով էին ճնշում հայ աշխատավորի՝ բարեկեցիկ կյանքով ապրելու ձգտումը... Պատահական չէ, որ պատկերվող դեպքերից տասնամյակներ անց՝ 1920 թ. օգոստոսին, Կիլիկիայում հայ որբերի հարցերով զբաղվող ազգային պատվիրակության կազմում գտնվող Ջ. Եսայանը նույն պատվիրակության նախագահին գրում էր. «Թուրքական ռեժիմի վերադարձած հողամասի մը մեջ ոչ կարող ենք մեր ազգային հաստատությունները պահել, ոչ մտավորական կյանք ունենալ և ոչ ալ պահել այնտեղ այնպիսի անձնավորություններ, որոնք կոչված են ժողովուրդին դասիարակությունը լրացնել, մեկ խոսքով մենք պետք է հրաժարինք մեր ազգային կյանքեն և հպատակություն հայտնենք թուրքերուն և ջանանք իջնել իրենց մակարդակին, որպեսզի վերջիվերջո հանգիստ թողուն մեզ. այդ պարագային ալ անշուշտ չի պիտի պակսին կասկածները և դավե-

¹ Օշական Հ., Հայ գրականություն, Երուսաղեմ, 1942, էջ 484:

րը, որոնք շարունակական վտանգի մեջ պիտի պահեն հայ ժողովուրդը»¹:

Վիպակում խիստ բնութագրական ձևով է ներկայացվում նաև հայ հոգևորականի կրավորական կերպարը: Ճիշտ է, դա կատարվում է ընդհանրական կերպով, և ըստ պատշաճի չի ներկայացված որևէ հոգևորականի ամբողջական կերպար, սակայն հեղինակը կարողացել է ներկայացնել հայոց թշվառության և անգործության պատճառներից մեկը:

Կրակե շապիկը թեժանում էր՝ այրելով համանուն վիպակի հերոսներին, բայց կար ավելի ցավալի մի երևույթ. Արտաշեսին մատնել էր իր եղբայրը՝ Պետիկի հայրը, ինչի համար Պետիկը, չցանկանալով տեսնել հոր երեսը, հեռանում է տնից: Սրանով մատնացույց են արվում ազգային դժբախտություններից ամենաճակատագրականները՝ երկպառակությունն ու մասնատվածությունը, միասնական գաղափարի բացակայումը: Ժողովրդական շարժումը մարում է, և որոշ ժամանակ անց սուլթանը ներում է շնորհում, ձերբակալված բանվորները վերադառնում են իրենց տները՝ բացի Արտաշեսից և երկու վարժապետներից, որոնց ուղարկում են այլ գավառներ՝ մեկուսացնելով Սկյուտարից՝ կատարվող դեպքերի կենտրոնից: Հուսալքության քողը, սակայն, ըստ երևույթին, երբեք չի պարուրում հերոսներին. վիպակի վերջում դեպքերն ամփոփվում են հետևյալ նախադասությամբ. «Յեվ անգամ մըն ալ ցասումի արցունքներ ժայթքեցին մորս աչքերեն»: Այո՛, արցունքները պարունակում են ոչ թե հուսալքում և հնազանդություն, այլ ցասում, ուրեմն դեռ ամեն ինչ չէ, որ ավարտված է, դեռ պատգամ կա՝ ուղղված սերունդներին, ցասումն անպայման աչքերից տեղափոխվելու է կապանքազերծ բազուկներ, որոնք կերտելու են ազատատենչ ժողովրդի՝ կրակե շապիկից ազատված գալիքը...

Ժամանակին քննադատությունը նշել է, որ Եսայանը «լավ չի պատկերացնում իր հերոսների փրկության ուղին՝ միաժամանակ հավաստելով, թե «Կրակե շապիկը» ապացույց է, որ տաղանդավոր արձակագրուհին ստեղծագործական իր բեկումն ավելի խորացնելով կարող է վերարտադրել ավելի խոշոր և արժեքավոր գործեր»²: Արդյո՞ք անաչառ է գրականագետ Մ. Մկրյանը: Վիճելի է: Չէ՞ որ եթե ուշադիր հետևենք վիպակի դիպաշարին, կտեսնենք, որ Եսայանը ներկայացնում է շատ կոնկրետ գործողություններ, որոնք իրական հեղափոխության հիմքը պետք է լինեն: Շատ որոշակի են այդ քայլերը

- նույն իրավիճակում գտնվող մարդկանց համախմբում մեկ դրոշի շուրջ.
- պայքարի համար հասարակության բացարձակ հեղինակությունը վայելող առաջնորդի առկայություն.
- հավատ այդ առաջնորդի նկատմամբ.

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 430, ց. 1, գ. 337, թ. 18:

² Մկրյան Մ., Զապել Եսայանի «Կրակե շապիկը» // «Գրական թերթ», 1934, թ. 14:

- շրջապատում գտնվող բոլոր հնարավոր բանասարկուների և զրպար-տիչների քայքայիչ ազդեցությանը չենթարկվելու հոգեկան արիություն:

Մ. Մկրյանին, ըստ երևույթին, չէր բավարարել այն հանգամանքը, որ Եսայանը հերոսների փրկության ուղին չէր կապում խորհրդային իրակա-նության հետ, ինչը 1930-ական թվականներին խիստ արդիական էր, սակայն միանշանակ է, որ այս կերպ պետք է խիստ գաղափարականացվեր և գեղար-վեստագրվեր վիպակը:

Գեղարվեստը

Ստեղծագործության համակողմանի վերլուծությունը բերում է այն հա-մոզման, որ հեղինակը միայն իր կենսագրությունը շարադրելու նպատակ չի հետապնդել. ունենալով գեղեցիկի բացառիկ ընկալում՝ Եսայանը կարողացել է ստեղծել գեղագիտական նշանակություն ունեցող պատկերներ: Բնության տեսարանները, մարդկային դրամատիկ առօրյան, երազանքների և գորշ իրականության բախումը, ենթարկվելով գեղագետի գրչին, ընթերցողի դիմաց ներկայանում են իբրև բանաստեղծական պատկերներ, առանց որոնց ան-հնար է պատկերացնել գրական երկը. հեղինակը կենսական շատ մոտիվներ ներմուծում է նկարագրությունների, ցավի, մարդկային տառապանքի հնչյուն-ների միջոցով: Պատումի յուրահատկությունը դրսևորվում է նաև այն պարզ, ոչ խճողված նախադասություններում, որոնցով հեղինակը, ապահովելով ան-միջական կապ իր և ընթերցողի միջև, չի խորանում անիմաստ մանրամաս-նությունների մեջ՝ միաժամանակ վիպակի ընձեռած հնարավորությունների սահմանում ամբողջովին պատկերելով ամբողջ ժամանակաշրջանն ու տիրող բարքերը: Ստեղծագործության ամեն տողում պարզորոշ երևում է կրթված և մտավոր բացառիկ կարողություններ ունեցող արվեստագետ հեղինակը, որը, լինելով գրականության՝ իբրև խոսքարվեստի մեծագույն վերաբեր, կարողա-ցել է խոսքը հասցնել ճիշտ նշանակետին՝ ընթերցողի սրտին:

Ազնվությունն ու օբյեկտիվ վերլուծությունը, իհարկե, պահանջում են ասել, որ վիպակը բնավ չի հավակնում գերծ մնալ որոշ թերություններից ու բացթողումներից. ստեղծագործության հերոսների ուղին (բայց ոչ ամբողջ վիպակի ընթացքն ու առավել ևս ավարտը) կարծես կանխորոշված է. նրանք բոլորը ծառայում են մեկ նպատակի: Ազգային-ժողովրդական վերածնունդը կերտող հերոսներից շատերը, ցավոք, չեն երևում իրենց ընտանեկան միջավայրում, նրանց ծավալած գործունեության ընթացքի արահետը երբեք չի բեկվում, վերելքների ու անկումների, նվաճումների ու կորուստների ճա-նապարհն այդպես էլ խորթ է մնում նրանց: Ահա այս ճանապարհին էր, որ հեղինակը պետք է հարստացներ գրական հերոսներին բնորոշ հոգեբանա-կան վայրիվերումները, ինչը կապահովեր դրամատիկ և ազդեցիկ դիպաշար:

Հատկանշական է, որ վիպակը տպագրվելուց ընդամենը երկու տարի անց այն թարգմանվում է ռուսերեն և ադրբեջաներեն (անկասկած է, որ

թարգմանությունների շրջանակը կրնալայնվեր, եթե չարգելվեր գրական այս մեծ նվաճման տարածումն ու ուսումնասիրումը)՝ սրանով ապացուցելով, որ Կ. Պոլսի հայ բանվորների ճակատագիրը հարազատ է այլ ժողովուրդներին ևս, իսկ այդ ճակատագրերը գրական դիպաշարի միջոցով ներկայացնող գրագիտուհու համբավը չի շրջանակվում մի ժողովրդի ունեցած սահմաններում: Ահա այստեղ է, որ տեսանելի է դառնում վիպակի գեղագիտական կողմի կարևորությունը, որի ընկալումը նույնական է բոլոր ժողովուրդներին մոտ: Ակնհայտ է, որ վիպակը ազգային գրականության ծնունդն է. նրա յուրաքանչյուր էջում պարզորոշ երևում են հային բնորոշ հոգեկան ըմբոստություններն ու ցավերը, անխոնջ պայքարն ու նվիրումը, մորմոքն ու կսկիծը, սակայն այս փաստը բնավ չի շրջանակում նրա տարածման ուղիներն ու վայրերը. հայտնի է, որ իսկական գրականությունը միայն ազգային ձևի մեջ է դրսևորում իր համամարդկային բովանդակությունը:

Վիպակի գեղարվեստական արժանիքներից են նաև այն նախադասությունները, որոնց շնորհիվ կենդանի գույներ են ստանում նկարագրվող դեմքերն ու դեպքերը, առարկաներն ու երևույթները. պատմելով հոր մասին՝ հեղինակը նկարագրում է նաև նրա կոշիկները, որոնք ասես լրացնում են հոր կերպարը. «Յեվ ինչ որ իր աչքերը չեյին արտահայտեր, ինչ որ իր շրթները չեյին արտասաներ, կարծես կգրվեյին այդ կոշիկներու վրա. իր հոգիի շարժումները, իր թագուն ըմբոստությունները և իր անսահման գորովանքը իրեններուն համար կդրոշմվեյին այդ ցավագին, այդ տրտում կոշիկներու վրա»: Ժողովրդի կենցաղի նկարագրություններն ամբողջացնում են առածասացվածքները. «Հարուստին խորոզը (աքլոր) անգամ հավկիթ կածե»: Հեղինակը կարողացել է հերոսներից մեկի դիպուկ նկարագրությամբ ցույց տալ ամբողջ ժամանակաշրջանը և մուսուլմանի ծանր լծի տակ կքաժ ժողովրդի ողբերգական ներկան. «...բռնի կմահմետականացնեն, տուրքերու գանձումի պատրվակով կկեղեքեն, կթալլեն, կսպանեն, աղջիկները կփախցնեն...», և այս ամենը, կրկնում ենք, վիպակում ներկայացված է ոչ թե հեղինակի մերկապարանոց և ուղիղ խոսքով, այլ իբրև ստեղծագործության հերոսներից մեկի մտորում, ինչը հարստացնում և գեղարվեստականացնում է Զապել Եսայանի պատումի արվեստը:

Айк Оганнисян – Эпоха и люди в романе Забел Есаян «Огненная рубашка»

«Огненная рубашка» – это автобиографическая повесть З. Есаян, в которой автор представил жизнь армян и армяно-турецкие отношения в Константинополе. Роман выделяется своей системой образов и оценкой исторических событий. «Огненная рубашка» имеет важное значение для оценки творчества З. Есаян – репрессированного и в настоящее время мало изученного автора.

Hayk Hovhannisyan – *The Era and People in the Novel “Shirt of Fire” by Zabel Yesayan*

“Shirt of Fire” is an autobiographical novel by Zabel Yesayan where the author represents the life of Armenians in Constantinople and Armenian-Turkish relationships. The novel transcends artificial illustrations and historical events parallel to the development of the events. The main importance of the novel “Shirt of Fire” is the author herself and her less analyzed creations.

Ներկայացվել է 09.07.2020

Գրախոսվել է 16.08.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

**ՁԻԱՊԱՏԿԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

***Բանալի բառեր** – պատկերի հոգեբանական շերտեր, պատկերակերտման առանձնահատկություններ, գեղագիտական միավոր, պատկերի խոհափիլիսոփայական տարածություն*

Հրանտ Մաթևոսյանը իր հարցազրույցներից մեկում նշել է. «Բակունցը բեկանեց այդ «մասինը», նա գրում է ոչ թե ժողովրդի մասին, այլ ժողովրդի միջից: Ներսիս լինելու այս սկզբունքը ես, որքան դա իմ հնարավորությունների սահմաններում էր, փորձեցի տարածել օրգանական ու անօրգանական աշխարհի ամբողջ տարածքի վրա: Դա նշանակում է գրել ոչ թե ծառի մասին, այլ ծառի միջից, ոչ թե ձիու մասին, այլ ձիու ներսից... Երբ գրում էի իմ Ալիսյին, ես ինքս Ալիս էի: Զգում էի Ալիսյի նման: Հիմա էլ ինձ երբեմն թվում է, որ ես ավելի շատ ձի եմ, քան մարդ...»

Ամենից քիչ ես ձգտում եմ մարդկայնացնել իմ կենդանիներին՝ Գոմեշին, Նարինջ զամբիկին, Ալիսյին: Ես ձգտում էի նրանց ինձ չնմանեցնել, այլ ինքս նմանվել¹:

Աշխարհը ներսից նայելու և ներսից արժևորելու մոտեցումը դառնում է մաթևոսյանական պատկերակերտման համակարգի հիմքը: Այս դիտանկյունից է կառուցվում նաև Մաթևոսյանի գեղագիտական տիրույթի կարևորագույն բաղադրիչ տարրերից մեկի՝ ձիապատկերի հոգեբանական, խոհափիլիսոփայական տարածությունը: Աշխարհը, բնությունը, մարդը, կենդանին՝ հավերժող տիեզերքի այս տարրերը, ունեն գոյատևումի գրեթե նույն փիլիսոփայությունը. նախաստեղծ վիճակում յուրաքանչյուր տարր կեցության իր տարակերպ դրսևորումների մեջ ունեցել է լինելիության նույն իրավունքը, ու նրանցից յուրաքանչյուրի մեջ բնությունը նույնքան անաղարտ և մաքուր է եղել: Մարդ-բնություն-կենդանի կապը կենսափիլիսոփայության նույն օրինաչափություններն է ունեցել: Այլ է արդեն կեցության ճանապարհի վայրիվերումներով պայմանավորված՝ այդ փիլիսոփայության աղարտումը: Այս է պատճառը, որ առարկան, երևույթը ճանաչելու համար պետք է թափանցել նրա ներսը, հոգու, էության, շնչառության ներքին ծալքերը: Իսկ այդ թափանցումի ամենախոր շերտում բոլորը նույնն են. մարդը, կենդանին իրենց մեջ

¹ Մաթևոսյան Հ., «Ես ես եմ», Երևան, 2005, էջ 201-221:

կրում են անադարտ բնության հեքը, նրա շնչառության բոլոր ելևէջումները: Ու քանի որ մարդը լինելիության իր ճանապարհին հաճախ է հեռացել այդ նախնական մաքրամաքուր վիճակից, կենդանին ավելի մոտ է մնացել նախաստեղծ բնության օրենքներին, այդ է պատճառը, որ Մաթևոսյանը ձիապատկերի մեջ ոչ թե կենդանիներին է մարդկայնացրել, այլ մարդուն տարել դեպի կենդանական աշխարհ՝ պատկերի մեջ տարբալուծելով հույզերի հոգեբանական խոր տարածքներ:

Մաթևոսյանի գեղագիտական տիրույթում ձիապատկերը կարելի է դիտարկել որպես խորհրդանիշ, իսկ ըստ Յուրի Լոտմանի՝ «խորհրդանիշը և՛ արտահայտման, և՛ բովանդակության պլաններում միշտ որոշակի տեքստ է ներկայացնում, այսինքն՝ օժտված է որոշակի միասնական-ներփակ նշանակությամբ... Խորհրդանիշի մեջ միշտ ինչ-որ հնամենի բան կա: Ցանկացած մշակույթ հնության գործառույթ կատարող տեքստերի շերտի կարիք ունի: Խորհրդանիշերի այսպիսի ընկալումը պատահական չէ. դրանց առանցքային խումբը, իրոք, խորապես հնավանդ բնույթ ունի և հասնում է մինչև նախագրային դարաշրջան, երբ որոշակի նշաններ իրենցից ներկայացնում էին տեքստերի ու սյուժեների սեղմ հուշամարգական ծրագրեր, որոնք պահպանվել են կոլեկտիվի բանավոր հիշողության մեջ»¹: Լոտմանյան գնահատման այս դիտանկյունից հայ մշակույթի մեջ ձիապատկերը՝ որպես հոգեբանական տարածական միավորի խորհրդանիշ, տեսանելի է նաև մեր մտածողության դեռևս հնագույն ժամանակներում: Հայ բանահյուսական տարբեր ժանրային դրսևորումներում կան ձիապատկերի նկարագրություններ, որոնք խորհրդանշում են կյանքի, մարդկային հարաբերությունների որոշակի հոգեբանական իրավիճակներ: Օրինակ՝ հայկական հեքիաթներում տարածված է եղել հրեդեն ձիու պատկերը՝ որպես երազանքի, անհասանելի թվացող ցանկության խորհրդանիշ: Հայկական ժողովրդական էպոսում սյուժետային գործողությունների զարգացման ընթացքում առանցքային դեր ունի ձիապատկերը. Քուռկիկ Ջալալին դառնում է մի ամբողջ ժողովրդի ազատատենչ ձգտումների և երազանքների խորհրդանիշ: Ձիապատկերը հետագայում տեսանելի է դառնում նաև հայ գեղարվեստական մտածողության մեջ՝ դառնալով պատումի գեղագիտական-հոգեբանական տարածական միավոր: Օրինակ՝ Համաստեղի «Մպիտակ ձիավորը», Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպերում ձիապատկերը դառնում է ազտաբաղձության, քաջության, հայրենանվիրումի խորհրդանիշ, Ակ. Բակունցի «Մպիտակ ձին» պատմվածքում ձիապատկերի տարածն դրսևորումները դառնում են տարբեր հոգեվիճակների խորհրդանիշ:

Մաթևոսյանական պատումում ձիապատկերը ունի խոհափիլիսոփայական, հոգեբանական տարաշերտ խաչաձևումներ: Մեծ է պատկերի ներքին

¹ Լոտման Յ., Միֆ. Անուն. Մշակույթ, Ստեփանակերտ, 2012, էջ 110:

տարողությունը. ձիապատկերի մեջ երևում են գյուղական կյանքի բազմազան տեսագծերը, վարպետորեն զուգորդվում են մարդու և ձիու մտորումները, երազանքներն ու հիասթափությունները, կարոտներն ու ցանկությունները: Ձիապատկերի հոգեբանական դաշտը գոյավորվում է գյուղաշխարհի կենսաձևերի և այդ եզերքի մարդու աշխարհընկալման զուգորդումներով: Պատկերի մեջ առօրեական իրավիճակը տրոհվում, ճյուղավորվում և հասնում է գոյի տևական, հարընթաց ոլորտներ: Ձիապատկերը՝ որպես գրողի պատկերային համակարգի գեղագիտական միավոր, հաճախ դառնում է պատումի ատաղձը, որի վրա հյուսվում է մաթևոսյանական կենսափիլիսոփայությունը: Ձիապատկերը մաթևոսյանական պատումում ունի հետաքրքիր կառուցվածքային տրոհում՝ նժույգ-զամբիկ-հովատակ-բեռնաձի (դիտարկումները կատարվում են ըստ «Բեռնաձիեր» շարքի): Ձիապատկերի կառուցվածքային այս շերտերում տեսանելի է Մաթևոսյանի աշխարհայացքի և կենսափիլիսոփայության ծիրը:

Մաթևոսյանական պատումում ձիապատկերը ունի իմաստային հետաքրքիր զարգացումներ: «Խորհրդանիշի իմաստային կարողությունները միշտ ավելի ընդարձակ են դրանց կոնկրետ իրացումից: Կապերը, որոնց մեջ խորհրդանիշը իր արտահայտման միջոցով մտնում է այս կամ այն նշանագիտական միջավայրի հետ, չեն սպառում նրա բոլոր իմաստային արժեքները: Հենց դա էլ ձևավորում է այն իմաստային պահուստը, որի օգնությամբ խորհրդանիշը կարող է անսպասելի կապերի մեջ մտնել՝ փոխելով իր բնույթը ու անկանխատեսելիորեն ձևափոխելով տեքստային միջավայրը»¹: Մաթևոսյանական ձիապատկերի կառուցվածքային տարաձևումները՝ **նժույգ-զամբիկ-հովատակ-բեռնաձի**՝ որպես հոգեբանական դրսևորումների խորհրդանիշ, իմաստային փոփոխությունների ընթացք ունեն: Ձիապատկերի հոգեբանական հետազոծի նախակետը նժույգ-ձի պատկերային միավորն է, որի խոհական ընկալումների տիրույթում շեշտադրվում են մարդկային երազանքը, իրականությունից վեր՝ երազի թևերին ճախրող հույզերն ու սպասումները, հոգու՝ դեպի գեղեցիկը հավերժական սլացքը: Ձիապատկերի կառուցվածքային վերջին հանգրվանը՝ բեռնաձին, դառնում է հոգնաբեկ աշխատավորի, իր հող ու ջրին անքակտելի կապերով ագուցված ռանչպարի խորհրդանիշ. մարդ, որն իր ուսերին է տանում աշխարհի բեռը՝ դառնալով յուրօրինակ մի բեռնաձի: Իսկ նժույգ-բեռնաձի պատկերների միջտարածական տիրույթում կան ձիապատկերի այլ զուգորդումներ՝ զամբիկ, հովատակ, քուռակ, և ձիու հոմանիշային այս շարքը պատկերի մեջ դառնում է մարդկային հարաբերությունների բացահայտման միջնորդավորված օղակ, որոնցից յուրաքանչյուրում երևում են մարդկային հոգու տարբեր շերտեր, աշխարհայացքային տարբեր մոտեցումներ:

¹ Լուսման Յ., նշվ. աշխ., էջ 112:

Երազի և իրականության, պատրանքի և դառը ճշմարտության, գեղեցիկի և ցավի բախումից ծնվող մարդկային հոգու դրաման է մաթևոսյանական ձիապատկերի հոգեբանական տարածքում: Իսկ հույզերի այդ ճանապարհի նախակետի՝ նծույզի հոգեբանական շեշտադրումը սկսվում է պատումի խորագրից՝ «**Նծույզս, նծույզս**»: Ինչու՞ է պատմվածքի խորագրում նծույզ բառը կրկնվում, ինչու՞ է երկու դեպքում էլ գործածվում **ս** ստացական հոդը: Սովորաբար գրական երկի խորագիրը դառնում է ստեղծագործության մեջ շեշտադրված գաղափարական հարցադրումների բացահայտման բանալին: Մաթևոսյանը թեև ամբողջ պատմվածքում չի գործածում նծույզ բառը, բայց գրական երկի խորագրի նման անվանումով շեշտադրում է այն միտքը, որ թեև ծմակուտյան աշխարհում իր հող ու ջրին նվիրյալ յուրաքանչյուր հողագործ իր տեսակի մեջ յուրօրինակ մի բեռնաձի է, բայց նրանց մեջ եղել է կամ կա այն խենթ ու կրակոտ նծույզի տեսիլքը, որը յուրաքանչյուրի համար խիստ անհատական է: Նրանցից յուրաքանչյուրը հոգու նվիրական անկյուններում պահում է երազ-նծույզի ցնորք-պատրանքը՝ որպես հեռունեքում մնացած, երազի թևերին ճախրող ցանկություն, երազանք, որը տխուր ու հոգսաշատ ներկայի գորշ գույների մեջ անհամատեղելի է: **Ս** ստացական հոդը պատկերի մեջ ձեռք է բերում յուրաքանչյուրի հուզաշխարհի խիստ անձնական հոգեբանական տիրույթ. պատկերի գեղագիտական այս հնարքը շեշտադրում է և՛ սիրահարված պատանի հեղինակի վաղվա օրվա իր երազանքի միայն իրենը դարձնելու ձգտումը, և՛ Փոքր հորեղբոր՝ Թիֆլիսի քաղաքային կյանքի փոթորկուն ալիքների մեջ ծփացող անհասանելի սիրտ՝ Կարինեի երազ պատկերի հավերժ զգացողության խորհուրդը, և՛ հեղինակի մոր՝ քաղաքին մոտիկ գյուղի աղջկա՝ քաղաքային կյանքի պատրանքի անընդհատ վերհիշումը, և՛ հեղինակի հոր՝ դեպի Մախաչկալա ձգվող պատանեկան երանելի հուշերի արթնացումը: Նրանցից յուրաքանչյուրը, կքած առօրյա հոգսերի ծանր բեռն տակ, միևնույնն է, իր հոգու խորքում ունի իր երազանքների նծույզը...

Նծույզ-ձիապատկերի խորհուրդը առավել ընդգծվում է Փոքր հորեղբոր հուզաշխարհի ելևէջումների զուգորդումներում: Հեղինակը ցույց է տալիս հերոսի՝ մինչ գյուղաշխարհի գրված ու չգրված օրենքների համաձայն բեռնաձի դառնալը այդ կարգավիճակին ամրագրվելու հոգեբանական նախնական ճանապարհը: Իսկ այդ ճանապարհին մարդկային հույզերի հոգեբանական անցումները գրեթե միշտ համահունչ են նծույզ-բեռնաձի հոգեբանական անցումային տարածությանը, որտեղ տեսանելի են երազի և իրականության հակադրությունը, հոգու լուսավոր երազանքների և կյանքի առօրյա խնդիրների բախումը:

Փոքր հորեղբայրը հինգ տարի Թիֆլիսում ծառայելուց հետո վերադարձել է գյուղ՝ իր հետ բերելով մեծ աշխարհի շնչառության երանելի զգացողության պատրանքը, տեսլացած երազ աղջկա՝ Կարինեի սիրատոչքը հայացքի տաք ելևէջումները: Նրա հույսերն ու սպասումները փշրվում են՝ բախվելով

տխուր իրականության պահանջներին: Գյուղական կյանքի հրամայականը՝ վերադառնալ գյուղ, ստանձնել ծեր ծնողների խնամքն ու հոգատարությունը, ընտանիքի առօրյա հոգսերի բեռը, փշրում է հերոսի երազի ճախրանքը, ու կամաց-կամաց նրա մեջ մեռնում է լուսավոր երազների նծույզը... Մաթևոսյանական պատումում նծույզից բեռնաձի կեցության ձևերի անցումը կատարվում է դրամատիկ հոգեվիճակների զուգորդումներով: Հեշտ չէ Փոքր հորեղբոր մեջ մարում նծույզայինը: Պատումի հենց սկզբում տեսնում ենք նրա մեջ արթնացած երազ նծույզի պայքարը իրականության դեմ. նա թեև երեք ամիս է՝ գյուղում է, բայց մասնակից չի դառնում գյուղական կյանքի ընթացքին, շարունակում է կրել զինվորական հագուստը՝ այդ կեցվածքով հակադրվելով միջավայրին: Եվ իրականության տխուր գույներից ծառս է լինում նրա ներաշխարհի նծույզը՝ կռիվ տալով նախագահի, դպրոցի տնօրենի, հարազատների դեմ... Պատումում ձիապատկերը դառնում է հերոսի հոգեբանական անցումների արտահայտման տարածական դաշտ: Փոքր հորեղբայրը երամակից ընտրում է չորս տարեկան մի ձի, որը իր նման հիսուներեք ձիերի մեջ տարբերվում էր իր սլացքով, իր անսանձ պոռթկումով, ինչպես «շիկացած ածուխ»: Պատմվածքում «**շիկացած ածուխ ձի, հանգած ածուխ ձի**» պատկերներում որոշյի փոփոխությունը իր մեջ խտացնում է հերոսի հոգեվիճակը: Հերոսի հուզաշխարհում ալեվետող զգացողությունները շիկացման, այրումի աստիճանի փոթորկում են նրա ներաշխարհը: Նա հույս ունի, որ յուրայինները կհասկանան իրեն՝ թույլ տալով հեռանալ գյուղից դեպի երազ ափեր: Սակայն նա անկարող է անտեսել յուրայինների հորդորները, և կյանքի չգրված օրենքները հանգցնում են հոգու կրակը: Երբ անզգույշ ծառս լինելուց վնասվում է ձիու ոտքը, նա ուզում է կանգնել. «Կանգնում էր՝ ոտքը ծավլում ու տակից փախչում էր, և նա խուլ թրմփում էր խոտերի մեջ: Երամակը լեռների ուսագծերին խաղ էր անում, կանչում էր նրան չափ ընկնելու, և նա պտտվում էր տեղում, իրեն ու գետինը մաշում էր: Եվ լողում էր քրտինքի մեջ»¹: Ցավի, գալարումի, անգործության, ինքն իր և աշխարհի դեմ անկարողությունից տառապում է հերոսի հոգին. «Միտքը բոլորովին ուրիշ տեղ էր: Ծուխն աչքերից քշելով, նա բան էր կակագում. - Քրտնել էր, քրտինքի մեջ լողում էր: Կապտասպիտակ էր, չէ. մզացել, դարձել էր համարյա թե սև, քրտինքից» (էջ 321): Ու բախվում են աշխարհի գույները՝ հեռուներից կանչող Կարինեի ցնորք պատկերը, մեծ եղբոր անվերջանալի հորդորները: Հերոս-ձիապատկեր զարգացումներին զուգահեռ՝ բացվում է մարդկային հոգու դրաման. վիրավոր ձիուն պետք է սպանել – սա է կյանքի օրենքը, երազ Կարինեին պետք է մոռանալ – սա է իրականության հրամայականը: Եվ մեծ եղբոր հրամանով փոքրը սպանում է ձիուն, իսկ դա կատարվում է ցավի

¹ Մաթևոսյան Հ., Երկեր, հ. 1, Երևան, 1985, էջ 321 (այս գրքից մեջբերումների հղումներն այսուհետև կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջը):

տակ անզգայացած, անգործությունից անկացած. աշխարհն ու հեռաստանները անտեսանելի ու անընկալելի էին նրան. «Եվ իրեն խլացրած՝ չլսելով արտույտների ճախրը, և իրեն բթացրած՝ չզգալով հովի գնգոցը լեռնային վճիտ օդում, Փոքր հորեղբայրը գնաց դեպի ձին» (էջ 323): Եվ ձին սատկեց, երազը մարեց... Բայց պետք էր նաև ձին քերթել... Ձիապատկերի հաջորդող հատվածում՝ ձիու սպանելուց մինչև ձին քերթելը, բացվում են հերոսի հուզաշխարհի բարդ շերտերը, հակադիր հոգեվիճակներից ծնված հոգեցունց զգացողությունները: Յուրայինների կողմից պարտադրված այդ քայլերին զուգահեռ՝ մեծ եղբոր հորդորներին ունկնդիր՝ բացվում են հերոսի տառապանքի ակունքները, որտեղ ցավը ճնշող գույն ունի, երազի հարկադիր մոռացումը՝ դառնության զգացում: Եղբայրների վեճը դառնում է երազի և իրականության բախման հոգեբանական ատաղձ, որին միահյուսվում են ձիապատկերի զարգացումները: Լալիս է Փոքր հորեղբոր հոգին. Կարինե, Թիֆլիս, երազ... դրանց ի հակադրություն՝ գյուղական կյանք, ծնողների խնամք, Լուսիկ... Հոգեվիճակների այս բախմանը զուգահեռ՝ շարունակվում է ձիու և մարդու ճակատագրերի միաձուլումը: Փոքր հորեղբայրը մեծի հրահանգով սրում է կացինը, դառնացած բարձրանում լեռը և գրեթե խելագար՝ քերթում ձին: «Եվ չկային նրա համար հովի գնգոցը, արտույտների ճախրը, արտույտների երգը: Եվ լեշակեր բորենու պես ետ տալով հողը, նա քերթեց ձին» (էջ 326): Ձիապատկերի այս նկարագրական տարածքը դառնում է հերոսի երազի կորստի վերջին հանգրվան. աշխարհի գույներին ու ձայներին անհաղորդ՝ երազաթափ է լինում մարդկային հոգին, փշրվում է երազ տեսիլքը, մարում է մարդու մեջ նժույգը... Հակադրվում են երազն ու իրականությունը, մեծ եղբոր հորդորներից մարում, լռում, հանգչում է Կարինեի տեսլացած պատկերը, և իրականության թելադրանքով վեր է հառնում գոյատևումի ներքին հրամայականը. տեսիլք Կարինեի կանչին հակադրվում է Լուսիկի հողեղեն, իրականության գույներով պարուրված պատկերը... Եվ կեցության այս ձևի մեջ առաջներում աննկատ Լուսիկը դառնում է նրա կողակիցը, բայց երազ-նժույգի պատրանքը միշտ մնում է հոգու նվիրական մի անկյունում: Այդ է պատճառը, որ երբ պատումի վերջում՝ տարիներ անց, պատանի հեղինակը հիշեցնում է նրան կապույտ ձիու մասին, վերջինս հիշողության մարմրող ծալքերում դեռ ուներ նրա տեսլացած պատկերը, թեև իր արածը համարում էր «քուռակային»: Այսինքն՝ կեցության ճանապարհի այս կետում, արժևորելով լինելիության իր խորհուրդը, նա գիտակցում է, որ ճշմարիտը իր հողի վրա, բեռնաձիու հոգսի տակ կքաճ, հավերժող ճանապարհի հաստատումն է: Զգացումների հոգեբանական նույն անցումներն ունի նաև պատանի հեղինակի մայրը. «Նա մեկընդմիշտ կորցրել էր քաղաքի հույսը և ուզում էր լինելուց հետո կարգին գյուղացի լինել: Բայց ահա քաղաքային թանկ հիշողությունները խնայել էին տալիս մուգ դարչնագույն ունքերով այդ աղջկան: Նա մորս աղջկությունն էր» (էջ 319): Այո՛, երազ աշխարհի հակառակ ափին կան առավել հզոր արժեքներ. «Եղբոր ձեռքը եղբոր թիկունքին էր,

երկուսով նայում էին մի կետի, այդ կետը իրենց ներսում էր, և այդպես ուս ուսի՝ շատ էին նման ընտանեկան հին լուսանկարի» (էջ 318): Նրանցից յուրաքանչյուրը, դառնալով մի բեռնաձի, առօրյա հոգսերի բեռնան տակ կքած, կեցության իր ձևն է հաստատում. հյուսվում է գյուղաշխարհի կենսափիլիսոփայությունը՝ ստեղծարար աշխատանքի անմեկնելի բերկրանքով, արարման խորհրդի ուժով...

Նշեցինք, որ ձիապատկերի զարգացումների հետագիծը՝ նժույգ-զամբիկ-հովատակ-բեռնաձի, հարընթաց շարժ ունի: Ձիապատկերի հաջորդ հոգեբանական շերտը՝ **զամբիկ-հովատակ**, հոգեբանական զարգացումների հետաքրքիր ընթացք ունի: «Նարինջ զամբիկը» պատմվածքում ձիապատկերի նախնական դրսևորումներում տեսանելի է առհասարակ բնության մեջ երկու հակադիր սեռերի՝ էգ և արու (ձիապատկերում՝ զամբիկ և հովատակ), հարատև կապի խորհուրդը՝ որպես արարումի, տեսակի շարունակության, լինելիության ճանապարհի նախակետ: Այդ կապը ամուր թելերով ձգում է երկու սեռերի բնագոյային արթնացումները՝ որպես բնությունից ժառանգած վեհագույն ցանկություն, որը հզոր է և՛ կենդանական աշխարհում, և՛ մարդկային հարաբերություններում: Մեռային պահանջների խաչաձևումները դառնում են ձիապատկերի հոգեբանական ատաղձը՝ շեշտադրելով կեցության այդ պահի զարմանահրաշ խորհրդի ուժը: Պատկերի հիմքում էգից եկող ֆիզիկական գրգիռների արթնացումն է արուի մեջ, որը հաստատում է բնության անխախտելի օրենքը՝ արական և իգական սկիզբ ունեցող տեսակների սեռային մերձեցում՝ որպես տեսակի հարատևման նախապայման: Եվ բնության մեջ տեսակի շարունակման բնագոյային կանչը դառնում է ձիապատկերի հոգեբանական տարածական կենտրոնը, իսկ տեսակի պահպանման բնության մեջ նախասահմանված ձևը՝ էգի ու արուի սեռային մոդումների բարձրակետը՝ բեղմնավորման ձգտումը՝ պատկերի ներքին շնչառությունը: Պատումում նարնջագույն հովատակի՝ դեպի էգ ձին սլացքի նկարագրությունը դառնում է յուրօրինակ գեղանկարչական պատկեր: Գրականագետ Վ. Գաբրիելյանը, մաթեմատիկական խոսքը որակավորելով որպես բանաստեղծական արձակ, գրում է. «Բայց ահա նարնջագույն հովատակի հարձակումը ուրիշ մի բեռնաձիու վրա, նրա վարգը բանաստեղծական գեղեցիկ մի պատկեր է»¹:

«Հուրհրատող նարինջը այդ կանաչ աշխարհի մեծ արեգակի տակ վառվելով թռչում էր դեպի էն խեղճ բեռնաձին, ասես քամին հրդեհ էր քշում, և պղնձագույն պոչը հագիվ էր պոկվում, հագիվ էր հասցնում նրա ետևից: Եվ առջևի սպիտակ ոտքը երևում-կորչում, երևում-կորչում էր քանդվող-սարքվող խաչվածքների մեջ: Եվ բոցե բաշը քրքրվում էր նրա վրա: Այս սարից այն սարը լսում էիր հզոր թոքերի թակոցը կողերին: Այսպես հեռվից՝ զարհուրելի

¹ Գաբրիելյան Վ., Դիտարկումներ գրականության ճանապարհին, Երևան, 2018, էջ 169:

սիրուն էր նրա ճեպը» (էջ 329): Եվ այս պատկերին հաջորդում է մարդկային բնական մղումը. «-Ու իս, մարդ ձի պիտեր» (էջ 329): Ձիապատկերից լսելի դարձող ազատության բնագոյի, կրքի, այրումի շնչառությունը ցանկալի է մարդ արարածին. անսանձ վայելումի, հոգու և ազատության կանչի նույն մոլեգին բախումները կան մարդկային հոգում: Հոգեվիճակի գրեթե նույն կետում մարդու և ձիու պատկերակերտման զուգորդումներ տեսնում ենք նաև Չարենցի «Ասպետական» ռապսոդիայում, որտեղ կնոջ գեղեցկության և նրանից բխող անսանձ կրքի խորհուրդը ընդգծվում է կնոջ և ձիու համեմատության գեղագիտական տիրություն. բեղվինի խարույկներ հիշեցնող սևաչյա գեղուհուն համեմատում է սևաչյա հուր նծույզի հետ, որի «քայլքը հրաթև-թռիչք էր դաշտերում ավազե...»¹:

Մաթևոսյանական ձիապատկերում բացվում են արու և էգ տեսակներին բնորոշ կեցության ձևերի սահմանները՝ ներառելով բնության նույն տեսակները ունեցող բոլոր տարրերին: Նարինջ զամբիկը՝ որպես էգի նախնական բնագոյային ձևերը խտացնող պատկեր, դառնում է իգականության կանչի կրողը՝ որպես ազատ սլացքի, խենթ փոթորկումների, հուզառատ տարածությունների խորհրդանիշ: Պատումում գյուղացիների կողմից Նարինջ զամբիկին բռնելու դրվագը վերաճում է լայն ու խոր ընդգրկումներով պատկերային միջավայրի, որտեղ բախվում են ազատության բնական մղումն ու այն սանձելու վայրի մոլուցքը: Ձիապատկերն ունի ներքին շարժ, որի մեջ բախվում են ազատությունը կորցնելու տագնապն ու ազատությունը սանձելու ուժգնացող մղումը: Եվ բնության շնչառության խենթ գալարումների մեջ տեսանելի է դառնում մաթևոսյանական աշխարհընկալման շեշտադրումը: «Առջևի ոտքերը տակից փախչում էին կողքանց-կողքանց, և կանաչի հավիտենական ծածկույթը ոտքի տակ պլոկվում էր: Նա երամակի շուրջն՝ այդպես օդ էր կապել, և այդ բոլորակը նրա պտույտներով դառնում էր սև՝ տարիների ճանապարհ: Այդպես տևեց տասը րոպե, քսան րոպե, երեսուն րոպե, հետո մենք մոտեցանք՝ նա կծկվեց: Լարվեց, լարվեց ու բացվեց: Պոկվեց երամակից ու գնաց: Նրա փախչելը մեր մեջ կարծրացնում էր բռնելու ցանկություն: Եվ մեր բոլորիս մտքում մենք բռնող էինք, նա՝ փախչող: Եվ աշխարհի բոլոր թերությունները այն բանից էին, որ նա բռնված չէր» (էջ 333): Մոտ մեկ էջ ընդգրկող ձիապատկերը, որը կառուցվում է մոտեցող վտանգը զգացող ձիու խելապտույտ վարգի նկարագրությամբ, ավարտվում է մաթևոսյանական կենսափիլիսոփայության ինքնատիպ շեշտադրումով: Բռնողի և բռնվողի, ճախրողի և այդ ճախրանքը կասեցնողի, երագողի և այդ երագանքը փշրողի բախումների բնութագրումը դառնում է ընդհանրական իրողություն բնության և աշխարհի բոլոր երևույթների համար: Կեցության ձևերի հարատև պայքարի մեջ միշտ առկա է այդ խորհրդավոր կապը. բախվում են

¹ Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 326:

բնության տարբեր ուժերի և տարրերի ինքնահաստատման ձգտումները. մեկի ցանկության իրականացումը մյուսի երազանքի կործանման շարունակությունն է, այո, աշխարհի բոլոր թերությունները հենց այս կետից են սկսվում: Կենսափիլիսոփայության նույն շեշտադրումներն ենք տեսնում նաև Ակ. Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքում: Սպիտակ ձին համանուն պատմվածքում խորհրդանշում է անարդարության, կեղծիքի, խաբեության ուժը, Ցուլակ ձին՝ արարումի, արդար աշխատանքի արժեքը, իսկ կապտավուն մի ձի, որը երամակի ձի էր և երկար, ծալվեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վագում էր հրապարակով՝ ջանալով փրկվել իրեն բռնել ցանկացող զինվորների պարաններից, խորհրդանշում է ազատության անսանձ ձգտումը: «Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր, որ ձին ճեղքեր զինվորների շղթան և հրեղեն հրաշքի պես աներևութանար, թռչեր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երգը»¹:

Մաթևոսյանական ձիապատկերում աստիճանաբար խտանում են գույները, ուժգնանում է պատկերի ներքին ոլորտը. ձիու վարզը դառնում է դեպի ազատություն տենչացող ոգեղեն ուժի խորհուրդը, որը պատրաստ է փշրել ամեն կապանք ու խոչընդոտ ազատության բաղձալի ափերը հասնելու համար. «Երամակը հոսում էր նրա հետևից, իսկ նա փախչում էր երամակից, և ոտքերն սկսեցին նրա տակ բազմապատկվել: Ոտքերը նրա տակ շատացան, շատացան, շատացան, մինչև որ այլևս ոտքերը չէին երևում, շարժում չէր երևում, ինչ որ է՝ սլացքը ոտքերով չէր. երկրի երեսով սահում էր մի դեղին բոց: Միայն ափսոս, որ երկրից չէր կտրվում...» (էջ 333): Շարժուն, գունեղ, բառային կրկնությունների ուժգնացումներով հագեցած ձիապատկերը դարձյալ ավարտվում է մաթևոսյանական փիլիսոփայության ընդգծված շեշտադրումով. երկրային տարածքներում երազ ազատության բաղձալի ճախրանքը կեցության առօրեական ձևերի մեջ խեղդվում է, կորցնում է տիեզերական տարածքներ հասնելու ուժը: Այո, ափսոս, որ երազ ցանկության ազատության ալիքներում ճախրանքը ընդհատվում է երկրային արժեքների գնահատումների տիրություն: Չամբիկ ձին անպտուղ է, գյուղացու կեցության ճանապարհին անցանկալի: Ձին հայտնվում է քաղաքում՝ կրկեսում: Սպանվում է նրա մեջ ազատ հեռաստանների, անձայրածիր արտերի, զրնգուն հովերի կանչը: Լինելիության նոր ձևի մեջ նա օտար է ինքն իրեն, իր աշխարհին, իր էությանը: Նրա մեջ մարել են հեռուներում մնացած եզերքի կեցության ձևերի մեջ ամրակայված զգացողությունները՝ հովատակի սարսափը ջրերի մեջ, չարաճճի երեխաներից ծեծվող, բռնից քրքրվող բեռնաձիու անհանգստությունները, դեպի կանաչ տարածքները սլանալու ցանկությունը. նա ապրում էր առանց ինքն իրեն... Օտարվեց, որովհետև չձնեց,

¹ Բակունց Ա., Երկեր, հ. 1, Երևան, 1976, էջ 304:

չբարձվեց, չտնքաց... նրա մեջ մեռավ բեռնաձին...

Կենսափիլիսոփայության այս հենքի վրա Մաթևոսյանը ստեղծում է **նժույգ-բեռնաձի** գուգահեռը՝ հաստատելով բեռնաձիու՝ որպես ստեղծարար կյանքի խորհրդանիշը: Բեռնաձին՝ որպես գաղափարական խտացման տարածական դաշտ, առավել տեսանելի և շեշտադրված է «Ալխոն» պատմվածքում: Մաթևոսյանական ձիապատկերի տարաշերտ կառույցներում առավել ընդգրկուն է բեռնաձիու պատկերը՝ որպես աշխատանքի և արարումի վեհագույն խորհուրդը խտացնող ուժ, հոգսաշատ կյանքին դիմակայելու և ազգայինի պահպանման խորհրդանիշ: Ձիապատկերի՝ որպես պատկերակերտման գեղագիտական միավորի մոտեցումը ինքնանպատակ չէ. այն ասելիքի շեշտադրման տարածական դաշտն է: Ձիապատկերի ձևակառույցները, ինչպես յուրաքանչյուր պատկեր, միշտ էլ ձևավորվում են շեշտադրման որոշակի սկզբունքով: Ժողովրդական կյանքի ակունքներից սնվող մաթևոսյանական կենսահայեցողությունը խտացված է ձիապատկերի ենթաշերտերում: Պատումում բեռնաձիու պատկերի կառուցվածքային ամբողջության մեջ մեծ խորհուրդ է ստանում գեղագիտական մի միավոր՝ մենախոսությունը, որը տեսանելի է միայն բեռնաձիու պատկերում: Այստեղ ձիապատկերը հյուսվում է մարդու և կենդանու ներաշխարհային հույզերի խաչաձևումներով: Պատումի սյուժետային գործողությունների առանցքում Ալխո ձիու և գյուղացի Գիքորի մենախոսություններն են: Հետաքրքիրն այն է, որ Ալխոյի և Գիքորի մենախոսությունների կենսափիլիսոփայության ծիրը գրեթե նույնն է: Ալխոն և Գիքորը, որը թեև գոյատևումի ճանապարհին ունեցել է սայթաքումներ, աշխարհագնահատման նույն հարթության վրա են: Պատումում ձիապատկերը հյուսվում է մարդուն ու աշխարհը արժևորելու խոհափիլիսոփայական հենքի վրա: Աշխարհի գնահատումների դիտարկումները ինքնատիպ զարգացում են տալիս ձիապատկերին: Հետաքրքիր է պատումում ձիապատկերի ներքին ձգողական դաշտը. ոչ թե ձին է իր մտորումներով ու աշխարհընկալումներով մոտենում մարդուն, այլ հակառակը՝ մարդը՝ ձիուն. սա է Մաթևոսյանի աշխարհագնահատման ուղղությունը: Իսկ այս ճանապարհին մարդը, ավելի մոտենալով բնության անադարտ ակունքներին, մաքրագործվում է: Սյուժետային զարգացումներին, դեպի Ղազախ տանող ճանապարհի ոլորանների կծկումներին գուգահեռ՝ շեշտադրվում են Ալխոյի և Գիքորի աշխարհաբժնորման մոտեցումները, որոնք երևում են նրանց մենախոսություններում: Իսկ այդ մոտեցումները երևույթների գնահատումների շատ հարթակներում նույնանում են, որը կատարվում է մադու՝ դեպի կեդանու՝ բեռնաձիու ներաշխարհային թափանցումների արդյունքում: Գիքորը, գոյատևումի իր ճանապարհին հաճախ բախվելով մարդկանց արատավոր երևույթներին, երբեմն ինքն էլ գնալով զարտուղի ճանապարհով, այնուամենայնիվ ներսում կատարվող այդ բախումների արդյունքում հասկանում է, որ ինքը ևս մի բեռնաձի է, և իրեն այնքան հարազատ է զգում Ալխոյին: Եվ այդ կետից նրանց աշխարհագնահատման մեկնակետը նույնա-

նում է: Նախ՝ աշխատանքը՝ արարումի խորհուրդն է դեպի հավերժի ճամփան տանող միակ ուղին: Գետափին տեսնելով անգործ աղջիկների մի խումբ՝ Ալխոն թախծում է. «... վիթխարի մարդաթողը անում էր իր փափուկ պտույտները արևի տակ: Եվ այդ ամենը հանգած ու հզոր էր, ինչպես չաշխատող ջրաղացի ջուրը, ոտքի վրա փտող ծառը, տակին փռված արտ չունեցող արևը» (էջ 164): Թախծում է Ալխոն, որովհետև այդպես ճիշտ չէ կառուցվում կյանքի ընթացքը, որովհետև ծուլությունը՝ այդ «վիթխարի մարդաթողը», խեղում է գեղեցիկ կյանքի անընդհատ նորոգող ու ստեղծարար ուժի խորհուրդը: Ձիու լուռ մտորումները բարձրաձայնվում են Գիքորի կողմից՝ որպես անբան աղջիկներին ուղղված հորդոր-պատգամ՝ գեղեցիկի արարման գույներով զարդարել կյանքի ճանապարհը: Գիքորը մերժում է անգամ հարազատներին, ովքեր մեղկ կյանքի ուղին են ընտրում: Գիքորի աշխարհագնահատման այս գիծը առավել ընդգծվում է ձիապատկերի կառուցվածքային շերտերում: Բեռան տակ կքած ձին հասկանում է, որ ճշմարիտը իր անցած ու անցնելիք ճանապարհն է, որովհետև անկախ հարատև բեռան ծանրությանը, այն թոթափելու ցանկությանը, անկախ «պայտվելու սարսուռին և պայտվածի միամիտ գոռոգությանը», անկախ հեռուներից կանչող զամբիկի կարոտին և հովատակի վայրի հարձակումներին՝ ինքը պետք է անցնի այս մեծ աշխարհի մեջ իր բաժին ճանապարհը, իրեն սահմանված տարիների ընթացքը ստեղծողի, արարողի օրհնանքով լեցուն պետք է լինի: Կեցության այս ձևը նա ժառանգել է իր նախնիներից: «Կանչեց ինքնագոհ Աստված Ալխոյի հոր հոր հոր հորը, ասաց. «Ահա, Ալխոյի պապ, ես արարեցի քեզ կառուցիկ ու խելոք, փռեցի կանաչ մարգագետինները քեզ համար, հնարեցի գայլը, որ դու վագես ու մնաս կառուցիկ, և մարդը քեզ պահապան, ահա ձի, քանի՞ տարվա կյանք ես ուզում» (էջ 169): Աստծուց շնորհի ստացած երկրային ճանապարհը Ալխոյի պապի, Ալխոյի հոր, իր համար, անկախ դժվարություններին, երբեմն մարդու անցանկալի արարքներին ու գործին, երկնային պարգև է՝ ապրված դժվարություններին շաղախված արարումի բերկրանքի խնդությամբ գունագարդված:

Ձիապատկերի խոհական տարածքի գազաթնակետն է դառնում Ալխոյի աղոթք-ցանկությունը. «Լինե՛ր մի կանաչ հովիտ, մեջը մի հատ աղբյուր», ոչ ոք չիմանար այդ հովտի տեղը, ոչ ոք չիմանար, որ այդ ձին Ալխոն է, իսկ կանաչ տարածության մեջ լինել մի կարմիր զամբիկ, և միաձուլվելին կյանքի գույներն ու ձայները: «Արածեր Ալխոն կանաչ հովտում, պառկեր կանաչ բուրմունքի մեջ, սպիտակ ամպեր լողային վերևով, լինել տխուր ու գեղեցիկ: Ու հետո բռնեին գայլերը. կուշտ ու բարի Ալխոն նրանց չտանջեր, ինքը չտանջվեր, իսկ նրանց տար ուտելու, թող ուտեին» (էջ 176):

Գոյատևումի բարդ ու դժվարին ճանապարհ անցած Ալխոն, որը նաև ինքը Մաթևոսյանն է, ինչ-որ տեղ դառնում է թումանյանական խոհի կրողը. «Լինել հեռու մի անկյուն»..., որտեղ մարդն ինքն իր հետ, բնության յուրաքանչյուր տարրի հետ լինել հաշտ ու խաղաղ: Իսկ այդ աղոթք-ցանկությունն

ավարտվում է նվիրումի մեծագույն զգացումով, նվիրում հարազատին, օտարին, աշխարհին: Շաղ տալով հոգու լույսերը, ջերմացնելով աշխարհը՝ հանգիստ ու խաղաղ հանգչել – սա է Մաթևոսյանի լինելիության բանաձևը. ով՝ որպես յուրօրինակ մի բեռնաձի, անխոնջ տանում է հավերժի իր բեռը դեպի հոգու լույսերը...

Այսպիսով՝ ծմակուտյան աշխարհի կենսափիլիսոփայությունը, շաղախված գյուղական կենցաղի ճշմարիտ գույներով, դառնում է մաթևոսյանական պատումի գեղագիտական աստղձր, իսկ այդ տիրություն ձիապատկերը դառնում է գրողի պատկերային համակարգի բաղադրիչ տարրերից մեկը, որը՝ որպես խորհրդանիշ, ունի խոհական, հոգեբանական մեծ տարածություն՝ տարաշերտ տրոհումներով: Զիապատկերի նծույզից բեռնաձի անցումային դրսևորումներում գերիշխում է բեռնաձիու փիլիսոփայությունը՝ որպես հայի գոյապատումի հավերժական ամրակուռ խարիսխ...

**Арменуи Арзуманян – Значение образа лошади в эстетической системе
Гранта Матевосяна**

Образ лошади в эстетическом понимании Г. Матевосяна имеет философские и психологические многослойные переплетения. Огромно внутреннее содержание образа. В образе отражены различные стороны сельской жизни, мастерски переплетаются размышления, мечты и разочарования, воспоминания и желания человека и лошади. Психологическое окружение образа лошади формируется при помощи жизненных форм сельского мира в сочетании с человеческим мировоззрением. В данном образе каждодневная ситуация разветвляется и достигает границы бесконечности. Образ лошади как единица образной системы часто становится основой произведения, в которой сосредотачивается матевосяновская биофилософия.

**Armenuhi Arzumanyan – The Value of the Image of the Horse in the Aesthetic System
of Hrant Matevosyan**

The image of the horse in the aesthetic system of H. Matevosyan has philosophical and psychological interlacing. The inner content of the image is huge. The image shows different sides of the rural life, masterfully intertwines reflections, dreams and disappointments, memories and desires of the man and the horse. The psychological environment of the horse image is formed by the life forms of the rural world combined with the human outlook. In the image, the everyday situation is branched out and reaches the border of infinity. The image of the horse as a unit of the image system often becomes the basis of the work on which the biophilosophy of H. Matevosyan is intertwined.

Ներկայացվել է 06.06.2020

Գրախոսվել է 13.06.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՑԱԼ

Բանալի բառեր – Հ. Աճառյան, Ա. Այտընյան, միջին հայերեն, արևմտահայերեն, գրաբար, լեզու, բայեր, խոնարհում, խոնարհման համակարգ, անկատար ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ

Հարցին առնչվող ուսումնասիրություններում հաճախ է խոսվել այն մասին, որ ի վերջո գրական արևմտահայերենը անմիջական ժառանգորդն է գրական հայերենի զարգացման միջին հայերեն կոչված շրջափուլի: Իբրև ապացույց այդ տեսակետի հաստատման՝ այլևայլ հարցերի անդրադառնալիս բերվում են օրինակներ՝ լեզվական տարբեր մակարդակներում արձանագրվող իրողություններ, որոնք ընդհանուր են միջին հայերենի և գրական արևմտահայերենի համար: Բայց պետք է խոստովանել, որ մինչև օրս հատուկ ուշադրության առարկա չեն դարձել այն բազմաթիվ լեզվական փաստերը, որոնք ընդհանրական կամ նույնական են միջին հայերեն-արևմտահայերեն լեզվական համակարգերում: Խնդրի ուսումնասիրությունը առավել արդիական ու, այսպես ասած, անհրաժեշտական է դառնում այն պնդումի կամ գիտական տեսակետի համապատկերին, որ ի վերջո գրական հայերենի պատմական զարգացման ընթացքում մեր ունեցած երկու գրական լեզուների՝ գրաբարի և աշխարհաբարի կողքին միջին հայերենը ոչ այլ ինչ է, եթե ոչ աշխարհաբարի մի ճյուղի՝ արևմտահայերենի ձևավորման շրջափուլը: Տեսակետը կարող է առավել համոզիչ լինել և հաստատվել միայն այն դեպքում, եթե հիմնավոր ուսումնասիրության ենթարկվեն այդ երկու լեզվավիճակների՝ միջին հայերենի և արևմտահայերենի բնորոշ լեզվական իրողությունները, քննարկվեն դրանց զարգացումներն ու փոխանցումները լեզվի բոլոր մակարդակներում: Այդպիսի աշխատանք առ այսօր չի կատարվել: Առաջ քաշած տեսակետը մեր նախորդ ուսումնասիրության մեջ փորձել ենք հաստատել ընդհանուր դիտարկումներով և լեզվական փաստերի միգուցե և նվազ քանակով¹: Հարցը, սակայն, ինչպես ասացինք, հատուկ ուսումնասիրության կարիք ունի:

¹ Տե՛ս **Ավետիսյան Յու.**, Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը, Երևան, 2016:

Սույն հոդվածով մենք փորձում ենք ներկայացնել հարցի ամենակարևոր դրսևորումներից մեկը՝ արևմտահայերենի սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակների ձևավորման և զարգացման ընթացքը:

Դրական խոնարհում: Դասական քերականության մեջ ընդունված է արևմտահայերենի բայի խոնարհման համակարգում առանձնացնել չորս եղանակ՝ **ըղձական, սահմանական, հրամայական և հարկադրական:** Սահմանական եղանակի ժամանակաձևեր են համարվում ինը (անկատար ներկա և անկատար անցյալ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ, հարակատար ներկա և հարակատար անցյալ, ապակատար ներկա և ապակատար անցյալ, անցյալ կատարյալ), որոնցից ութը վերլուծական են, մեկը՝ պարզ:

Արևմտահայերենում սահմանականի **դրական խոնարհման** ներկան և անկատարը կազմվում են **կը/կ՝** եղանակիչով և միջին հայերենից փոխանցված ստորադասականի համապատասխան ձևերից: Ունեն համադրական կազմություն, ինչպես գրաբարում և միջին հայերենում՝ **կը + ըղձական ապառնի** (կը կարդամ, կը գրեմ, կը խօսիմ) և **կը + ըղձական անցյալ** (կը կարդայի, կը գրեի, կը խօսեի): **Կը** է դրվում նաև **շպ, սկ, ստ, գր, զգ, սթ, սք** և նման հնչյունակապակցություններով սկսվող բայերից առաջ (կը զգամ, կը սպասեմ, կը շտապեմ): Ձայնավորից առաջ **կը** մասնիկի **ը** ձայնավորը սղվում է (կ՛երգեմ, կ՛ըսեմ, կ՛ուզեմ): Երեք բայերի դեպքում ներկան և անցյալը կազմվում են **կու** մասնիկով, ինչպես միջին հայերենում էր (կու գամ, կու լամ, կու տամ, կու գայի են): Ձևակազմական այս համակարգը ամբողջությամբ արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից՝ մասնակի տարբերություններով, որոնք կներկայացվեն ստորև:

Նախ՝ **կը/կու** մասնիկի մասին, որը հայ քերականագիտության մեջ համարվում է աշխարհաբարի սկիզբը ազդարարող քերականական ցուցիչ:

Այս մասնիկի ծագման վերաբերյալ եղել են բազմաթիվ կարծիքներ: Մենք նույնպես անդրադարձել են հարցին, և ավելորդ ենք համարում վերստին քննարկել այն, մանավանդ որ այս դեպքում բուն ձևավորման խնդիրը վերջին հաշվով մեր հիմնական նպատակին քիչ է առնչվում. քննարկվող հարցի տեսանկյունից առավել էական է լեզվական այդ իրողության գործածության ժամանակագրության և տարածման հարցի դիտարկումը:

Գրաբարի սահմանական անկատար ներկայի և անցյալի ձևերը տակավին ոսկեդարյան գրաբարի շրջանում բազմիմաստ էին. կիրառություններում հստակ արտահայտում էին նաև ստորադասական/ըղձական և պայմանական եղանակների իմաստներ: Բնականաբար այդ երկրորդական իմաստները միջին հայերենի հենց առաջին շրջանում առավել ընդգծվեցին: «Այսպիսով, գրաբարի սահմանական ներկան դարձավ միաժամանակ թե՛ սահմանական ներկա, թե՛ ապառնի և թե՛ ստորադասական: Երեք տարբեր պաշտոններով գործածությունը բնականաբար տեղիք պիտի տար շփոթության և

իմաստի երկդիմության: Այս խառնակության առաջն առնելու և լեզվի գոնե երկու հիմնական եղանակները իրարից զանազանելու համար հնարվեց **կու** մասնիկը...»¹:

Կու(կը) մասնիկի գործածության առաջին դեպքերը արձանագրվում են XII դարի մատենագրության մեջ, այսինքն՝ միջին հայերենի, այսպես կոչված, սկզբնավորման շրջանից սկսած՝ այդ կազմությունը արդեն իսկ ձևավորվել էր, ու թեև այդ մասնիկը, «որն որ արդի լեզուին գլխաւոր կերպարանափոխն ընողն եղած է»², XII դարից առաջ մեր մատենագրության մեջ չի հանդիպում, բայց ամենայն հավանականությամբ գործածության մեջ այնուամենայնիվ եղած պիտի լինէր: Այդպիսի կարծիք ունի Ա. Այտընյանը. «Մենք **ԺԲ** դարու մէջ կը գտնենք առաջին անգամ այս **կու** մասնիկս. սակայն անտարակոյս է որ նոյն ատեն յանկարծ չբուսաւ, ինչպէս որ հարկաւորութիւնն ալ յանկարծ չէր զգացուած»³: Նույն կարծիքին է նաև Հ. Աճառյանը. «**Կու** մասնիկի գործածությանն առաջին վկայությունները մենք գտնում ենք **ԺԲ** դարից, բայց անշուշտ նա ավելի հին էր...»⁴: Բոլոր դեպքերում, **կու** մասնիկը «զարմանալի արագությամբ» սկսում է տարածվել «հայ բարբառների ընդգրկման գրեթե բոլոր վայրերում»⁵: Եվ ըստ էության չկա միջին հայերենով ստեղծագործող որևէ քիչ թե շատ ճանաչված հեղինակ, որը քերականական այդ մասնիկի գործածությունը չունենա իր մատենագրության մեջ: Սկզբնապես առավել տարածված էր **կու** ձևը, բայց հենց XII դարում և առավել ևս դրանից հետո լայնորեն սկսեցին գործածվել նաև **կը**-ն ու դրա հնչյունափոխված տարբերակը՝ **կ'**-ն՝ ձայնավորով սկսվող բառերից առաջ: Այս փոփոխությունների պատճառը հավանաբար արտասանական ավելի հեշտ ու բարեհունչ տարբերակների ընտրությունն էր. հազիվ թե կարելի է պնդել, որ, օրինակ, **կը խօսիմ, կը բանամ** ձևերը ավելի դյուրին չեն արտասանվում, քան **կու խօսիմ-ը, կու բանամ-ը**: Մանավանդ ձայնավորով սկսվող բառերից առաջ **կու**-ի արտասանությունը բնավ էլ դյուրին չէ (**կու անսամ, կու աշխատէր, կու ասեմ, կու ըլլամ**), առավել ևս **ու**-ով սկսվող բառերի դեպքում (**կու ուզեմ, կու ուտեմ, կու ուրախանամ**): Այդ իսկ պատճառով, ինչպես արդեն ասացինք, դեռ միջնադարից գործածության մեջ մտավ նաև **կու/կը** մասնիկի հնչյունափոխված՝ ապաթարցով տարբերակը (**կ'**)՝ ինչպես՝ *Խել Յովհաննէս Թուկուրանցի / Չօրն ի բուն ընդ այլ կ'ասես (Չովհաննէս Թուկուրանցի, ՄՀՔ, 204); -Ոչ կ'առնում ի ծոցս ի քուն, ոչ տէպթուր տամ, երթաս ի տուն, / Հանցեղ երերուն պահեմ, մինչ որ գայ լոյս առաւոտուն (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 217); Լաւ*

¹ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա, Երևան, 1959, էջ 389:

² Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 75:

³ Նույն տեղում, էջ 75-76:

⁴ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 395:

⁵ Տե՛ս Զառուկյան Գ., Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 88-89:

մարդ էս անոր **կ'ասես**, որ բանայ գրեթանն համով (ն.տ., 218); Տեսայ իմ հոգուս հոգին, որ **կ'երթար** հետ մէկի մըն ալ. / Ձեռկունքն ի վերան ձգել ու գանգատ **կ'անէր** մէկի մ'ալ (ն.տ., 219); Կուլայ, գօրն ըզքն 'գ **կ'ուզէ**, չի'առնէր այլ մարդու տօլապ (ն.տ., 224):

Արևմտահայերենի քննարկվող ժամանակաձևերի դրական խոնարհման երկրորդ բաղադրիչը **գրաբարյան ներկայի և անցյալի ձևերն են**, որոնք միջին հայերենում կրեցին որոշակի փոփոխություններ՝ արդեն որպես ստորադասական եղանակի համապատասխան ձևեր: Վերջնականապես ձևավորված տարբերակները գրական արևմտահայերենին փոխանցվեցին աննշան փոփոխություններով: Այսպես:

Միջին հայերենի **ստորադասական ապառնին**, որից կազմվում է արևմտահայ աշխարհաբարին հատուկ անկատար ներկայի ձևը, գրաբարի անկատար ներկայից ունի մասնակի տարբերություններ. բոլոր լծորդության բայերի համար գրաբարի սահմանական ներկայի երրորդ դեմքի **–մք** վերջավորությունը փոխվում է **–նք**-ի՝ **գրեմք-գրենք, խօսիմք-խօսինք, կարդամք-կարդանք**: Ըստ որում, այս հնչյունափոխությունը, որը կատարվել էր բառի արտասանությունը հեշտացնելու համար, Հ. Աճառյանի վկայությամբ, հանդիպում է նաև գրաբարում: Իսկ միջին հայերենի համակարգում դրանք արդեն հնաբանություններ էին, քանի որ, ըստ լեզվաբանի, եթե «բուն կիլիկյան ոճով է խոսակցությունը, միշտ գտնում ենք **նք** և ոչ **մք**: Բացի սրանից, –շարունակում է նա,– նույնիսկ այն հեղինակների մոտ, որոնք գրաբար են գրել, երբեմն երևան է գալիս **նք** ձևը, որ նշան է, թե այդ հեղինակների սովորական լեզուն **նք** ձևով էր»¹:

Պահպանվում է հոգնակի երկրորդ դեմքի՝ **–է**-ով գրությունը՝ **գրէք, երգէք**: Ի դեպ, միջին հայերենում պահպանվում են նաև լծորդությամբ պայմանավորված ընդհանրությունները գրաբարի հետ, ինչպես նաև ըղձական ապառնիի եզակի երրորդ դեմքի՝ գրաբարին հատուկ **–է** վերջավորությունը՝ **գրեմ, գրես, գրէ**, որը արևելահայերենում **ե** լծորդության ներգործական (ներգործաձև խոնարհմամբ) և չեզոք սեռի բայերի եզակի երրորդ դեմքում դարձավ – **ի՝ գրեմ, գրես, գրէ**: Այս վերջավորությամբ ձևեր սկսեցին երևան գալ **վաղ աշխարհաբարի արևելահայ բարբառների** ներկայացուցիչների երկերում:

Ա լծորդության բայերի երկրորդ դեմքի **–այք** վերջավորությունը (կարդայք, խաղայք) միջին հայերենում աստիճանաբար վերածվում է հնաբանության և **այ>ա** փոխոյությունամբ դառնում է **–աք** (կարդաք, խաղաք), որն էլ նույնությամբ փոխանցվում է արևմտահայերենին:

Ստորադասական/ըղձական եղանակի ապառնիի համար ևս միջին հայերենում գործող գրաբարյան ձևերին զուգահեռ (ինչպես այլ դեպքերում)՝ կանոնական էր նաև ստորև ներկայացված հարացույցը.

¹ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 402-403:

Ըղծական ապառնի

գրեմ գրենք(-եմք) խաղամ խաղանք(-ամք) խօսիմ խօսինք(-իմք)
 գրես գրէք խաղաս խաղաք(-այք) խօսիս խօսիք
 գրէ գրեն խաղայ խաղան խօսի խօսին

Այս հարացույցը (առանց փակագծերում նշված գրաբար ձևերի) նույնությամբ փոխանցվեց գրական արևմտահայերենի խոնարհման համակարգ. միջին հայերենի ստորադասական/ըղծականի այս ձևերը կազմությամբ և իմաստով համապատասխանում են արևմտահայերենի ըղծականին: Միջին հայերենում սրանց իմաստային առանձնահատկությունը միայն այն էր, որ բազմիմաստ էին. նույն ձևերով արտահայտում են նաև գրաբարի ներկայի և ըղծական ու պայմանական ապառնիների իմաստներ, մինչդեռ գրական արևմտահայերենում դրանք մենիմաստ են. ունեն միայն ստորադասական/ըղծականի իմաստ: Արևմտահայերենի անկատար ներկան, որը, ինչպես արդեն ասվեց, ձևավորվեց միջին հայերենում՝ **կը** եղանակիչի և ստորադասական ապառնիի միությամբ, նույնությամբ համընկնում է միջին հայերենի նույն ժամանակաձևին:

Միջին հայերեն՝ *կու/կը գրեմ, -ես, -է, -ենք/-եմք, -էք, -են*
կու/կը խօսիմ, -իս, -ի, -ինք/-իմք, -իք, -ին
կու/կը կարդամ, -աս, -այ, -անք/-ամք, -աք/-այք, -ան

Արևմտահայերեն՝ *կը գրեմ, -ես, -է, -ենք, -էք, -են*
կը խօսիմ, -իս, -ի, -ինք, -իք, -ին
կը կարդամ, -աս, -այ, -անք, -աք, -ան

Իմաստային դաշտում ունենք հետևյալը:

Ե՛վ միջին հայերենում, և՛ արևմտահայերենում այդ ժամանակաձևը ունի իմաստային նույն յուրահատկությունները:

Առաջնային կամ հիմնական իմաստն այն է, որ ցույց է տալիս խոսելու պահին հաստատապես կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն:

Արևմտահայերենում ներկայի ձևերը երկրորդաբար ունեն նաև **ապառնիի իմաստ**: Այս կիրառությունը ևս գալիս է միջին հայերենից: «Ապառնիի համար միջին հայերենում առանձին ձև չկա,– գրում է Հ. Աճառյանը,– գործածվում է սահմանականի ներկան (**կու** նախամասնիկով միացած) և կամ **կամիմ** բայի հետ միացած անորոշը: Օրինակ **կու տամ** «պիտի տամ», ես **կու ասեմ** ու **կու ցուցնեմ** ալանի ու յերևան»¹: Բնագրային օրինակներ՝

միջին հայերեն՝ *Կամե՛ց դու ինձ հոգի՛ւ ես կու կամիմ քեզ, / «Հոգի» ասայ. դու ինձ. ւ՛ ես կու ասեմ քեզ (ՀԹՏ, 145); Մտիկ կանես այլոց ձեռնի, / Թէ՛ շալակս ո՛վ հաց կու բեռնի, Գիշեր, ցերեկ աղօթք կանես, / Թէ՛ տէր աստուած, ո՛վ կու մեռնի (ՆՀ, 137); Վաղը մերկ մարմինդ կու ծածկեն հողով, /*

¹ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 402-403:

Վերայ գերեզմանիդ դնեն դագաղն (ն.տ., 165); Այսօր ալ կու խմենք, / Վաղն ալ կու խմենք....(Իգնատիոս Համթեցի, ՈԻՄՀԲ, 237);

արևմտահայերեն՝ Ո՛հ, ո՛հ, սխալ է սակայն հաշիւդ: Ես կը կտրեմ այդ ծառը, կը կտրեմ արմատէն: **Կը կամենամ՝** եւ դուն կը դառնաս ոչի՛նչ մը: Կը հասկնա՛ս, ոչի՛նչ մը. ոչի՛նչ (Լևոն Շանթ, ՀԿԳ, 260); Վաղը, իմ բարի Անտոնիոս, այս աշունի անտառէն ճամբորդի գաւազանս կը կտրեմ, այս մենաւոր հիւղին դուրը բաց կը ձգեմ, ու ճամբայ կ'իյնանք դէպի իմ հայրենի գիւղն աւերակ – ես ու դուն: **Կ'անցնինք** Մուսուլէն, Ուրֆայէն, **կ'անցնինք** լեռներու ճամբէն, կը քնանանք բնութեան հետ, **կ'արթննանք** արշալոյսէն առաջ ու **կը քալենք** – ես ու դուն (Համաստեղ, ՀԿԳ, 161):

Արևմտահայերենն ունի սահմանական ներկայի մի երկրորդ ձև, այսպէս կոչված՝ **շարունակական ներկա**: Յույց է տալիս խոսելու պահին շարունակաբար կատարվող գործողություն: Կազմվում է՝ բուն սահմանական ներկային ավելացնելով **կոր** մասնիկը՝ **կը խօսիմ կոր, կ'ըսեմ կոր, կ'երթամ կոր**: Այս մասնիկի ծագման վերաբերյալ տարակարծությունները համոզիչ են առավել կամ պակաս չափով: Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից ուշագրավ է, սակայն, այն հանգամանքը, որ միջին հայերենում ծագած այս կազմությունը նույնպէս փոխանցվեց արևմտահայերենին: Ճիշտ է, հավանաբար հիմք ունենալով Ա. Այտընյանի թեթև ակնարկը (իբրև թե թուրքերենի ազդեցությամբ առաջացած իրողություն է. «նոր դարերուս մէջ **էոր** տաճկ. մասնիկն եղած է **կոր**»¹)՝ լեզվակիրառողները զգուշություն են դրսևորում արդի գրական գրավոր խոսքում դրա գործածության հարցում, բայց, մինևուայն է, այդ մասնիկը այսօր էլ շատ ակտիվ կիրառություն ունի խոսակցական արևմտահայերենում և գրական բանավոր խոսքում: Սա ևս բայական այն յուրահատուկ կազմություններից է, որ արևմտահայերեն է մուտք գործել միջին հայերենից, որտեղ հավանաբար հաստատվել և լայնորեն կիրառվել է արևմտահայ բարբառների ազդեցությամբ: Գեղարվեստական գրականության մէջ գործածվում է հերոսների խոսքի ոճավարման համար, ինչպէս՝ *Օր քստ օրէ կը տկարանաս կոր, Արշակ (Յակոբ Պարոնեան, ՀԱ 2, 64); Անդի՛ն կը դառնամ: Գիտեմ, դեռ կը նայի կոր, որպէս թէ հա՛յրս ըլլար...(Ինտրա, ՀԿԳ, 254); Հրամմեցէ՛ք, հրամմեցէ՛ք, օրիորդ Արեւ, Չէ Ժանօն կը սպասէ կոր, մերսի (Գրիգոր Պըլտեան, «Նշան», ՀԿԳ, 304); Ճի՛շդ Փառանձեմին կը նմանիս... հարկա՛ւ՝ հայ ըլլալդ քիթէդ-բերնէդ կը վազէ կոր. հեմէն ըսի, քի մեր արիւնէն ես (Շահան Շահնուր, «Պճեղ մը անուշ սիրտ», ՀԱ, 91):*

Միջին հայերենի **ստորադասական անցյալը**, որից **կը** մասնիկի հավելումով կազմվում է անկատար անցյալը, գրաբարի անկատար անցյալի ձևերից ունի որոշակի տարբերություններ: Այսպէս:

¹ Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 76:

Գրաբար՝

ա լծորդության բայեր՝ է և ի լծորդության բայեր (վերջ. նույնանում են)

կարդ-այի, կարդ-այիր, կարդ-այր գր-էի, գր-էիր, գր-էր խօս-էի, խօս-էիր, խօս-էր

կարդ-այաք, կարդ-այիք, կարդ-ային գր-էաք, գր-էիք, գր-էին խօս-էաք, խօս-էիք, խօս-էին

խօս-էին

Միջին հայերեն

ա լծորդության բայեր՝ է և ի լծորդության բայեր (վերջ. նույնանում են)

կարդ-այի, -այիր, -այր/-ար գր-էի, -էիր, -էր խօս-էի, -էիր, -էր

կարդ -այաք/-այինք, -այիք, -ային գր-էաք/-էինք, -էիք, -էին խօս-էաք/-էինք, -էիք, -էին

Ինչպես տեսնում ենք հարացույցից, գրաբար-միջին հայերեն ձևակազմական տարբերությունը, ըստ էության, երկու կետում է՝

1) **ա լծորդության բայերի եզակի երրորդ դեմքում՝ կարդ-այր/-ար,**

2) **ա, է, ի լծորդության բայերի հոգնակի առաջին դեմքում՝ կարդ-այաք/-այինք, գր-էաք/-էինք, խօս-էաք/-էինք¹:**

Առաջինի դեպքում միջին հայերենը ի սկզբանե գործածել է երկու տարբերակներն էլ՝ -այր և -ար վերջավորությամբ², ինչպես կտեսնենք ստորև բերված օրինակներում: Բայց ահա Արսեն Այտընյանը շատ հետաքրքիր բա-

¹ Ու լծորդությունը, ինչպես ասվել է, գրական արևմտահայերենում չունի համակարգային դրսևորում. չկա ու լծորդության որևէ բայ, որը արդի արևմտահայերենում ունենա խոնարհաման ամբողջական հարացույցը: Նույնիսկ ամենից գործածական **թողուլ** բայը չունի ըղձական անցյալի (**թողուի, թողուիր, թողուաք, թողուինք** են) և հետևաբար դրանից բաղադրվող անկատար անցյալի (**կու թողուի, կու թողուայր, կու թողուաք, կու թողուիք** են) և անցյալի ապառնիի (**պիտի թողուի, պիտի թողուայր, պիտի թողուաք** են)՝ գրաբարին և միջին հայերենի բնորոշ ձևեր: Դրանք դուրս են մղվել գրական արևմտահայերենից, դարձել են հնաբանություններ:

² Որքան էլ զարմանալի է, վերջերս հրատարակված «Հայոց լեզվի պատմություն» աշխատասիրության մեջ որպես միջին հայերենի սահմանականի անկատար անցյալի եզակի երրորդ դեմքի միակ գործածական տարբերակ է նշում **կու-ով** և գրաբարյան ստորադասական անցյալի եզակի երրորդ դեմքով կազմությունը՝ **կու լար** (տե՛ս **Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա.**, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2017, էջ 240): Հ. Աճառյանը միջին հայերենի սահմանականի հարացույցում վստահաբար ներկայացնում է երկու գուգահեռ տարբերակներ՝ **կու գողնա(յ)ր** (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 380), ապա մեկ այլ առիթով բացատրում է, որ **ր** ձայնից առաջ երևացող **յ-ն** «...մեռյալ տառ է և գրաբարի գրության հետևողություն: Այդպիսի դեպքերում **յ** չէր հնչում, օրինակ՝ **գողնայր, գտնոյր** կարդացվում կամ հնչում էին **գողնաք, գտնուր**: Դրա ապացույցն այն է, որ այս կարգի բառերը գրված կան նաև առանց **յ-ի**, ինչպես **կու լար** (Karst, 280), և երկրորդ՝ որ արդի հայերենումն էլ հնչում ենք առանց **յ-ի**» (նույն տեղում, էջ 403-404): Նույն տեսակետը պաշտպանվում է միջին հայերենի պատմության ակնարկներում, և բերվում են բնագրային օրինակներ՝ **չի դիմանար** (Ամիրդովլաթ Ամասիացի, ԱՄԳՀՊ, 378), **կու որսար** (ն. տ., 382), **չի գնար** (Հովհաննես Թլկուրանցի, ն. տ., 381): Շարադրանքում մենք ևս բերել ենք -ար-ով կազմության օրինակներ միջնադարի հեղինակներից:

ցատրություններ է տալիս մյուս լծորդությունների նշված ձևերի վերաբերյալ՝ կատարված փոփոխությունները համարելով ավելի ուշ շրջանի երևույթ և պատճառները տեսնելով միակերպության կամ «ընդհանուր պարզման» սկզբունքի մեջ: Փոփոխությունը, ըստ Այտընյանի, կատարվել է անցյալ կատարյալի և անկատար անցյալի վերջավորությունների նույնությունը կամ նմանությունը գեղջելու համար: Երևույթը, որը լեզվաբանը անվանում է **Ն յաւելված**, այսպես է նկարագրվում. «Հոս դարձեալ միակերպութիւն ու բացայայտութիւն իրարու գործակից գտնուած են: **Ն յաւելուածը** սահմ. անկատարի եւ կատարեալի մէջ դէմքերու ճշդիւ զանազանութեան համար է եւ միանգամայն միակերպութիւնը պահելու համար: Քանի որ անկատարն ու կատարեալը միեւնոյն ձայնաւոր գրով պիտի սկսին ու լմննան մինչեւ ի վերջ, հարկ է որ՝ միակերպութեան սկզբանը հաւատարիմ մնալու համար եւ միանգամայն երկու յոքն. դէմքերուն մէջ խտիր մ'ընելու համար տեղ մը գիր մը աւելցուէր: Այսպէս՝ կ'ըսենք **եկանք, գործէինք**, փոխանակ՝ **եկաք, գործէաք**. (որ առանց **Ն յաւելուածոյ՝** կամ՝ դէմքերու խառնակութիւն կ'ելլէր կամ՝ ձայնաւորաց միօրինակութիւնը կը խանգարէր:) Աւասիկ հինն ու նորը.

Հին. *Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք, եկին.*

Նոր. *Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան:*

Հին. *Գործէի, ծէիր, ծէր. ծէաք, ծէիք, ծէին.*

Նոր. *Գործէի, ծէիր, ծէր. ծէինք, ծէիք, ծէին:*

Ն յաւելուածը յետին դարերու եկամուտ է: Դեռ գաւառներու մէջ կ'ըսուի տեղ տեղ՝ Կու **նստէաք կու լայաք: Զաւակնիս կարգեցաք ու եկաք**¹:

Ա. Այտընյանը ցավոք սրտի չի բերում **ա, ե, ի** լծորդության բայերի հոգնակի առաջին դեմքի գործածության բնագրային օրինակներ ո՛չ ուշ միջնադարից, ո՛չ էլ վաղ աշխարհաբարից: Մեր ձեռքի տակ եղած միջինահայերենյան մատենագրությունից մենք էլ համապատասխան օրինակներ չկարողացանք քաղել: Բոլոր դեպքերում, շատ հավանական է, որ Այտընյանի խոսքերով՝ **հին** ձևերի հետ գործածվել են նաև **նորերը** և ապա անցել արդեն XIX դարի գրավոր աղբյուրներ ու որպես արևմտահայ աշխարհաբարի կանոնական կազմություններ՝ արձանագրվել են լեզվաբանի քննական քերականության մեջ:

Այսպիսով՝ արևմտահայերենում ունենք հետևյալ պատկերը՝

Ըղձական անցյալ

գրէի գրէինք խաղայի խաղայինք սորվէի սորվէինք

գրէիր գրէիք խաղայիր խաղայիք սորվէիր սորվէիք

գրէր գրէին խաղար խաղային սորվէր սորվէին

Այս ձևերից էլ կազմվում է անկատար անցյալը: Բնագրային օրինակներ՝

Միջին հայերեն՝ Մորուքս դեռ ի յետ կու գար / Քառսուն տարի ջրով կացի / Փառչն կու տար գերեսս ի վար... (Ֆրիկ, ՄՀՔ, 194); Հետ սեւ արպպիկ

¹ Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 78:

կնոջ / **Կու խաղայր** եւ առնէր կատակ, երբ խելքն ի վրան **կու գայր**¹; Եւ ի Հնդկաց մէջ այս ուսումն քիչ էր եւ նուազ եւ վատուծ. եւ շատ չարչարանօք **կու ուսանէին** (Ամիրդովլաթ Ամասիացի, ՄՀՔ, 212); Ղումրին ի դաՖէսն երգէ խաղ ու պար, / Ի մէջ յորդորին բաղունք **կու լողար**²:

Արևմտահայերեն Աստուածածնին, երբ առաջին օրհնուած խաղողը **կը լեցուէր** սեղաններուն վրայ, կամ Վարդավառին՝ երբ ամենէն լուրջերը շէնշող **կը դառնային** եւ դոյլերով ջուր **կը թափէին** իրար վրայ: Յետոյ՝ Խաչի տօնը, աշնանամուտին, երբ ուխտի **կ'երթային** դէպի Արմաշի վանքը, եւ հոնկէ **կը բերէին** վայրի պտուղներ՝ յունապ, փշատ... (Զապէլ Եսայեան, ՀԱ 2, 38);Տխուր էի այդ հպումին, որ երեսներս **կը կրծտէր, կը շոյէր, կը գգուէր**;Անսպասելի արագութեամբ մը **կը հաստէր** միջոցը, **կ'իջնէր** աստիճաններէն, հեքիաթներու մէջ թափառող պարիկի նման (Գրիգոր Պըլտեան, ՀԿԳ, 301); Գէորգ Չաուշն էր, որ պողպատեայ ձայնով հարց **կու տար** առաջնորդիս:Ես մանրամասն **կը պատմէի** գիտցածներս հաճոյքով. ինք ուշադիր **կը լսէր** (Ռուբէն Տէր-Մինասեան, ՀԱ 2, 128-129):

Ժխտական խոնարհում: Արևմտահայերենում անկատար ներկան և անկատար անցյալը խոնարհման այս ձևում ունեն վերլուծական կազմություն. բաղադրվում են եւմ օժանդակ բայի ժխտականի ձևերից և ժխտման կամ ժխտական դերբայից:

Եւմ օժանդակ բայի ժխտական խոնարհումը ձևավորվում է չ ժխտական մասնիկով, որը ավելանում է դրականի ձևերին՝ սկզբից: Եզակի երրորդ դեմքում դրական խոնարհման է ձայնավորը փոխվում է **ի-ի**: Այս «զարտուղութեան պատճառը» Ա. Այտընյանը բացատրում է ժխտականի **ի** նախդիրի ազդեցությամբ. «կ'ըսենք կրճատմամբ՝ **Ինք չի լսեր, չի մնար**. իբր թէ **ինք չէ ի լսեր. չէ ի մնար**. կամ իբր թէ **չ'ի լսեր. չ'ի մնար**»³: Այսպէս.

Դրական խոնարհում (ներկա ժամանակ) (անցյալ ժամանակ)

<i>եւմ ենք</i>	<i>էի էինք</i>
<i>ես էք</i>	<i>էիր էիք</i>
<i>է են</i>	<i>էր էին</i>

Ժխտական խոնարհում (ներկա ժամանակ) (անցյալ ժամանակ)

<i>չեւմ չենք</i>	<i>չէի չէինք</i>
<i>չես չէք</i>	<i>չէիր չէիք</i>
<i>չի չեն</i>	<i>չէր չէին</i>

Այս հարացույցը նույնությամբ միջին հայերենից փոխանցվել է արևմտահայերենին:

¹ <http://digilib.aua.am/book/2350/2800/20962/Հայրեններ?term=%D5%AF%D5%B8%D6%82+%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B5%D6%80>

² <http://digilib.aua.am/book/93/93/1099/?lang=en&fbclid=IwAR0TWoCy2DBQG75XtrZUjcMqVKhDkiOgluhpvFxBwMWOXCwpYq05yeoySMk>

³ Տե՛ս Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 87:

Ժխտական դերբայը միջին հայերենում ձևավորվում է անորոշ դերբայից և չ ժխտական մասնիկով կազմված օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերից: Վաղ շրջանի միջին հայերենում ուներ չորս արտահայտություն. կազմվում էր՝

ա) ի նախդիրով և անորոշ դերբայով՝ (չէ) ի տալ, (չեն) ի պակասել, (չեմ) ի հասնիլ, (չեր) ի ճաշակել ևն,

բ) ի նախդիրով և անորոշ դերբայի լ>ր հնչյունափոխված ձևով՝ (չեմ) ի հայցեր, (չեր) ի տար, (չեր) ի լար ևն,

գ) օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայով՝ (չեն) ուտել, (չեն) ողորմիլ, (չեր) շարժիլ, (չեմ) գտնուլ ևն,

դ) օժանդակ բայի ժխտականով և անորոշ դերբայի լ ձայնորդի ք-ի հնչյունափոխված ձևով՝ (չես) լսեր, (չեմ) գար, (չես) ուրանար, (չես) լսեր, (չես) ուրանար ևն¹:

Միջին հայերենի զարգացման հաջորդ ենթաշրջանում (XV–XVII դդ.) առաջին երկու ձևերը գործածությունից դուրս են գալիս: Սա կապում են «այդ ձևերում գրաբարյան ներգոյականի գաղափարի կազմության մթագնման հետ»²: Երրորդ և չորրորդ ձևերը հեղինակները գործածում են ըստ նախապիրության, սակայն բոլոր այն հեղինակները, որոնք արևմտահայ բարբառների ներկայացուցիչներ են (Ամիրդովլաթ Ամասիացի, Նահապետ Քուչակ, Պաղտասար Դպիր ևն), ակնհայտորեն նախապատվությունը տալիս են չորրորդ ձևի գործածությանը, այսինքն՝ անորոշ դերբայի լ ձայնորդի ք-ի հնչյունափոխված ձևին: Ի դեպ, այդ զարգացումը անցել է երկար ճանապարհ: Նույնիսկ ուշ միջնադարում աշխարհաբարին մոտ լեզվով ստեղծագործող հեղինակների մոտ հաճախ հանդիպում են այդ բայաձևի տարբեր կիրառություններ: Եվ դա հնարավոր է նույնիսկ նույն տեքստում և նույն բայի պարագայում: Բերենք ընդամենը մեկ հատված XV դարի հեղինակ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գրքից, որտեղ, օրինակ, ժխտական դերբայը անկատարի կազմում գործածված է երեք տարբերակներով (տարբերակներով են կազմված նաև այլ բայեր. դրանք ընդգծված են). «Եւ այլ իմացիր, որ ի մէկ դէղ մըն հակառակ զաւրութիւն կու գտնուի, որ մէկ մէկի **չի նմանիր**. ի մէկտեղ կու ժողվի. եւ այս ուժս որ հակառակ է, եւ ամենայն տեղ **չի գըտնուիլ**, հակառակ մասունք կայ, որ մէկմէկի լման գործ չայնել, եւ մէկ ուժ մըն կու լինի դէղին՝ որ ամուր կու լինի բնութեամբ, եւ **չի բաժնի** մէկ մէկէ, եւ կու լինի, որ կու բաժնի. որպէս կաթն, որ զպանրին ջուրն հանես, եւ եղն եւ թանն յիրմէն կու բաժնի. եւ հենց որ պապունաճն երկու զաւրութիւն կայ, հալող եւ կապող, եւ յորժամ եփես՝ այս երկու զաւրութիւնն ի մէկ մէկէ **չի բաժնիլ** եւ **չի**

¹ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Խ. Ա. Երևան, 1972, էջ 316–320: «Բացասական բայերու ծագումը» ներկայացնելիս վերջին ձևի մասին Ա. Այտընյանը գրում է. «Յետոյ **ԺԳ** դարու մէջ կը գտնենք հիմակուան բացասականը առանց նախդրի **Չեմ վախնար, չես նախանձիր**» (Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 87):

² Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Խ. Ա. էջ 378:

փոխիլ այն պատճառովն, որ բնութիւնն ամուր է» (ՄՀՔ, 209):

Ձևավորման ու կանոնարկման երկար ճանապարհ է անցել նաև անկատար ներկայի ժխտական խոնարհման **չի** մասնիկը: Միջին հայերէնում **չէ ի** ժխտական ձևի փոփոխությամբ ձևավորված **չի**-ն¹, ճիշտ է, նշված դեմքում արդեն իսկ լայն գործածություն ունէր միջնադարի՝ աշխարհաբարին մոտ լեզվով ստեղծվող մատենագրության մեջ, սակայն դրա կանոնարկումը և կայուն գործածությունը տևական ժամանակ պահանջեցին: Նույնիսկ XIX դարի կեսերին էլ, ինչպես վկայում է ուսումնասիրողը, սովորական էր անկատար ներկայի՝ բայահիմքին միացած **չ** մասնիկով կազմությունը. «ստորադասական անկատարի նույն դեմքի ժխտականի համաբանությամբ՝ սահմանականի՝ ներկան էլ լավագույն հեղինակների մոտ ունենում է ժխտականի հետևյալ ձևը՝ «Ծաղիկ հանող տղուն գլխուն ալ սաւան մը կանցընեն, կը ծխեն, ծաղիկը **չսաստկանար** (փոխ.՝ **չի սաստկանար** – *ՅՆԼ. Ա.*) և շուտով կը չորնայ» (Բգ., 1846, էջ 106), «Բարեպաշտ ժողովուրդը այսպիսի սրբապիղծ ձեռնադրութեան մը **չկրնար** (փոխ.՝ **չի կրնար** – *ՅՆԼ. Ա.*) ներել» (Երևան, 1866, էջ 77), «Մարդս կը հետևի այս էակներուն երկրիս մէջտեղէն և մինչև երկինք, ուր կը կորնչին անոնք իրենց երիտասարդութեան մէջ, և երբ ալ **չտեսներ** (փոխ.՝ **չի տեսներ** – *ՅՆԼ. Ա.*) զանոնք, աչքը կարծես թէ շլացումէն կուրցած կը մնայ» (ԼՌ, 1867, էջ 38)²:

Բոլոր դեպքերում, օժանդակ բայի ժխտականով (անկատար ներկայի եզակի երրորդ դեմքում՝ նաև **չի**) և անորոշ դերբայի **լ** ձայնորդի **ր**-ի փոխված ձևերով անկատարի կազմությունները ուշ միջնադարում ակնհայտորեն գերակշռող գործածություններ էին: Հենց այս ձևերն էլ դարձան արևմտահայերենի անկատար ներկայի ժխտական խոնարհման ձևեր: Այսպես՝

Ժխտական խոնարհում

Միջին հայերեն (անկատար ներկա)

*Ա լծորդություն՝ չեմ կարդար, չես կարդար, չի կարդար
չենք կարդար, չեք կարդար, չեն կարդար*

Ե և ի լծորդություն՝

*չեմ գրեր, չես գրեր, չի գրեր չեմ խօսիր, չես խօսիր, չի խօսիր
չենք գրեր, չեք գրեր, չեն գրեր չենք խօսիր, չեք խօսիր, չեն խօսիր*

Արևմտահայերենի ժխտական խոնարհման անկատար ներկայի ձևերը ճշգրտորեն համապատասխանում են այս ձևերին:

Բնագրային օրինակներ՝

¹ Ա. Այտընյանը **չի**-ի ծագումը բացատրում է XI-XII դարերում երևան ելած նոր՝ «բացասական» ձևի փոփոխությամբ. ժխտական խոնարհումը կամ, ինչպես Այտընյանն է անվանում, բացասականը կազմվում էր «էական բայով եւ ի նախդրով. **Չէ ի հասանիլ, չէ հասանիլ, չի հասանիլ**...Նոյն ի նախդիրն է դարձյալ,– գրում է նա,– սահմ. ներկ. եգ. 3դ դեմքին զարտուղութեան պատճառը. կըսենք՝ կըճատմամբ **Ինք չի լսեր, չի մնար**. իբր թէ **ինք չէ ի լսեր, չէ ի մնար**. կամ՝ իբր թէ **չ'ի լսեր, չ'ի մնար**» (Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 87):

² Տե՛ս **Աճառյան Վ.**, Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971, էջ 274:

Միջին հայերեն՝ *Յայս աստնուորիս վերայ վատն իսկի մարդոյ չի մնար* (Հովհաննէս Երզնկացի, ՄՀՔ, 168); *Հրնցկուն պէլըման աղուոր չէ մ ստեղծեր երկուքն ի հիտրաց* (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 222); *Այս իմ նենգաւոր աչերս չի կենար մէկ պահ մի պարապ* (ն. տ., ՄՀՔ, 223); *Չեմ ելներ ես այս այգոյս, / Այս իմ նորատունկ այգոյս* (Գրիգորիս Աղթամարցի, 261); *Առնում հոտոտիմ անուշս*։ *Այլ չեմ ելներ ի յայգոյս, (ն. տ., 271); չի դիմանար, չի ելաներ, չեն գիտեր, չի ուտուիր, չի նմանիր* (Ամիրդովլաթ Ամասիացի, տե՛ս ԱՄԳՀՊ, 378),

Արևմտահայերեն՝ *Կարելորը ճիշդը չէ, կարելորը ճշմարիտն է...* Մարդիկ երջանիկ չեն, Կորին, ու չեն գիտեր պատճառը... (Վահէ Օշական, ՀԿԳ, 219); *Այնքան լեցուած եմ, որ չեմ կրնար պարպուիլ* (Շաւարշ Նարդունի, ն. տ., 163); *Բնաւ չեմ սիրեր առանձնութիւնը: ...Սիկարեթ մը չէ՞ք վատեր...* Սանկ աւելի հանգիստ չէ՞ք նստիք (Ռուպեր Հատէճեան, ն. տ., 174); *Անծանօթ աղջկան մը ժպտիլ գլխարկով բարեւել, եւայլն: Այս տեսակ բաներէ բնաւ չեմ ախորժիր* (ն. տ., 175); *Չեմ միջամտեր*։ *միայն՝ չմոռնաս այդ մասին շարադրութիւն մը գրել ինծի* (Պօղոս Սնապեան, ն. տ., 199)։

Ինչ վերաբերում է արևմտահայերենի անկատար անցյալի ժխտական կազմությանը, ապա այստեղ նույնությամբ պահպանվում է սկզբունքը. ձևավորվում է օժանդակ բայի ժխտական (չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին) + ժխտական ձևաբայ կաղապարով։

Միջին հայերեն (անկատար անցյալ)

Ա լծորդություն՝ չէի կարդար, չէիր կարդար, չէր կարդար

չէինք կարդար, չէիք կարդար, չէին կարդար

Ե լծորդություն՝

չէի գրեր, չէիր գրեր, չէր գրեր

չէինք գրեր, չէիք գրեր, չէին գրեր

Այստեղ դժվարանում ենք միայն մեկ ճշգրտում կատարել. արդյո՞ք միջին հայերենում ի լծորդության բայերը անկատար անցյալի ժխտականում փոխում են լծորդությունը և ձևով նույնանում են ե լծորդության բայերին, ինչպես ի սկզբանե գրական արևմտահայերենում էր¹։ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» երկհատորանոց աշխատության հեղինակները վկայում են, որ անցյալ անկատար ժամանակով ձևեր դժբախտաբար միջ-

¹ Խոսելով արևմտահայերենի անկատար ներկայի և անկատար անցյալի կազմության մասին՝ Ա. Այտընյանը նշում է, որ այդ ձևերը կազմվում են՝ «1. եմ էական բային բացասականովը, եւ 2. իւրաքանչիւր բային բացասական ձեւովը», և ապա՝ «Բայի մը Բացասական ձեւը կը շինուի՝ աներեւոյթին ծայրի լ գիրը քէի փոխելով. այսպէս՝ **Լսեր, սորվիր, կարդար, մոռնար**։ - **Չեմ րներ, չեն րսեր...**», ապա ավելացնում է, որ ի լծորդության ժխտականը «սահմ. անկատարի մէջ եր կը վերջաւորուի, (փխկ. **իր**, այսպէս. **Չէի սորվեր, (փխկ. Չէի սորվիր)**», իսկ եմ էական (օժանդակ) բայի եզակի երրորդ դեմքը «սովորութիւն եղած է րսել **Չի լսեր, չի խաղար, չի գողնար**. (փխկ. **Չէ լսեր, չէ գողնար, չէ տեսներ** րսելու)»։ (տե՛ս Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 82)։

նադարի մատենագրության մեջ (համենայն դեպս, իրենց ձեռքի տակ եղած աղբյուրներում) չեն հանդիպում¹, և ուստի դժվար է վստահաբար տալ այս հարցի պատասխանը: Մեր փնտրտուքը նույնպես արդյունքներ չունեցավ: Մակայն ենթադրվում է, որ ուշ միջնադարի մատենագրության մեջ այդ կազմությունները, այնուամենայնիվ, արդեն իսկ գործածական եղած պիտի լինեին, քանի որ վաղ աշխարհաբարի աղբյուրներում այդպիսի գործածության օրինակներ հանդիպում են:

Ինչ վերաբերում է արևմտահայերենի **եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ** պակասավոր բայերին, ապա դրական խոնարհման դեպքում դրանք միջին հայերենում պահպանել են գրաբարատիպ սահմանական ներկան և անցյալը, այսինքն՝ առանց **կը** եղանակիչի ձևերը՝ **եմ/էի, կամ/կայի, գիտեմ/գիտէի, ունեմ/ունէի, արժեմ/արժէի**: Միջին հայերենում գրաբարատիպ են նաև **կրնամ** բայի սահմանական ներկան և անցյալը՝ **կրնամ/կրնայի**: Ժխտական խոնարհման դեպքում դրանց մի մասը պահպանում է համադրական կազմությունը (**չեմ/չէի, չկամ/չկայի, չունեմ/չունէի, չարժեմ/չարժէի**), իսկ ահա **գիտեմ** և **կրնամ** բայերի ժխտականը, այլևայլ ձևերին (**չի գիտէ, չի կարէ, չէր ի գիտել** են) զուգահեռ, կազմվում է նաև ընդհանուր սկզբունքով՝ **չեմ + ժխտական դերբայ կադայաբարով**, որը ուշ միջնադարում լայն տարածում է ստանում:

Անկատար ներկա

<i>չեմ գիտեր չես գիտեր չի գիտեր</i>	<i>չենք գիտեր չէք գիտեր չեն գիտեր</i>
<i>չեմ կրնար չես կրնար չի կրնար</i>	<i>չենք կրնար չէք կրնար չեն կրնար</i>

Անկատար անցյալ

<i>չէի գիտեր չէիր գիտեր չեր գիտեր</i>	<i>չէինք գիտեր չէիք գիտեր չէին գիտեր</i>
<i>չէի կրնար չէիր կրնար չեր կրնար</i>	<i>չէինք կրնար չէիք կրնար չէին կրնար</i>

Այս հարացույցը նույնությամբ փոխանցվեց արևմտահայերենին: Միջին հայերենից ունեցած տարբերությունը ըստ էության այն է, որ արևմտահայերենում սա ընդունված կանոնական հարցույց է առանց զուգաձևությունների, մինչդեռ միջին հայերենում, ինչպես ասացինք, նշված ձևերը ուղեկցվում են նաև գրաբարատիպ կամ աշխարհաբարին ոչ բնորոշ զուգաձևություններով:

Անկատար ներկայի և անցյալի ժխտական ձևերի հետ կապված ուզում ենք մի կարևոր ճշգրտում կատարել: Ընդունված կարծիքի համաձայն՝ քանի որ արևմտահայերենում սահմանական եղանակի անկատար ներկայի և անկատար անցյալի ժխտականի ձևերը մասնակի համանունություն ունեն վաղակատար ներկայի և վաղակատար անցյալի ժխտական ձևերի հետ, ուստի գործառական մակարդակում վերջինները փոխարինվում են հարակատարի համապատասխան ձևերով: Նորմատիվ քերականության գրքերում սովորաբար ներկայացվում է հենց այդ կարծիքը²: Այդպիսի տեսակետ ենք արտահայ-

¹ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջ 381:

² Տե՛ս **Մաքսպետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006, էջ 162; «Հայոց լեզվի պատմություն», Երևան, 2017, էջ 281: Հարցին ավելի հանգամանորեն է անդրադարձել Հ.

տել նաև մենք բուհական ձեռնարկներից մեկում՝ ելնելով իրողության ուսուցման գործնական հարմարավետությունից¹: Սակայն քանի որ այս դեպքում խոսքը քննարկվող կառույցների ձևավորման և զարգացման մասին է, փորձենք ներկայացնել երևույթի գիտական ճշգրիտ պատկերը, որը հետևյալն է:

Արևմտահայերենում ժխտական խոնարհման համակարգում համանունությունը դրսևորվում է հետևյալ դեպքերում. 1) ձևով գրեթե ամբողջությամբ նույնանում են (կարելի է ասել՝ մասնակի համանուններ են)՝ **ե** լծորդության աններածանց բայերի ժխտական խոնարհման անկատար ներկան և վաղակատար ներկան, այսպես՝

Անկատար ներկա՝

չեմ գրեր, չես գրեր, չի գրեր; չենք գրեր, չեք գրեր, չեն գրեր

Վաղակատար ներկա՝

չեմ գրեր, չես գրեր, չե գրեր; չենք գրեր, չեք գրեր, չեն գրեր

Միակ տարբերությունը, ինչպես տեսնում ենք, եզակի երրորդ դեմքում է. անկատարի դեպքում դրական խոնարհման **է**-ն փոխվում է **ի**-ի, և ունենում ենք **չի** ձևը, մինչդեռ վաղակատարը պահպանում է անհնչյունափոխ տարբերակը՝ **չէ**:

2) Լիակատար համանունություն ունեն, այսինքն՝ բոլոր ձևերով համընկնում են **ե** և **ի** լծորդության աններածանց բայերի անկատար անցյալի և վաղակատար անցյալի ժխտականները, այսպես՝

Անկատար անցյալ՝

կը գրեմ - չեի գրեր, չեիր գրեր, չեր գրեր; չեինք գրեր, չեիք գրեր, չեին գրեր

կը խօսիմ - չեի խօսեր, չեիր խօսեր, չեր խօսեր; չեինք խօսեր, չեիք խօսեր,

չեին խօսեր

Վաղակատար անցյալ՝

գրեր էի - չեի գրեր, չեիր գրեր, չեր գրեր; չեինք գրեր, չեիք գրեր, չեին գրեր

խօսեր էի - չեի խօսեր, չեիր խօսեր, չեր խօսեր; չեինք խօսեր, չեիք խօսեր,

չեին խօսեր

Մյուս բոլոր բայերի դեպքում անկատարի և վաղակատարի ժխտական խոնարհման ձևերը տարբերվում են՝ պայմանավորված արևմտահայերենի ժխտական և վաղակատար դերբայների ձևային տարբերությամբ: Այսպես՝

Չոլաքյանը՝ նշելով ձևաբանական հնարավոր նույնությունները այս երկու ժամանակաձևերում, որոնք հավանաբար պատճառ են դարձել, որ «վաղակատար բաղադրեալ ժխտական ձևերը ինքնաբերաբար հետզհետե դուրս մղուին լեզուին ու փոխարինուին յարակատարի համապատասխան ձևերով (**գրեր եմ՝ չեմ գրած, գրեր էի՝ չեի գրած**), թեև քիչ յաճախականությամբ կը հանդիպի տեղ-տեղ՝ **եղեր է չէ եղեր** մարդ մը ու...» (**Չոլաքեան Յ.**, Արևմտահայերեն, Բ. գիրք, Երևան, 2019, էջ 95):

¹ **Ավետիսյան Յու.**, Արևելահայերենի և արևմտահայերենի գուգադրական քերականություն, Երևան, 2007:

ա լծ. պարզ բայեր	անկ. ներկա չեմ կարդար	անկ. անցյալ չէի կարդար	վաղ. ներկա չեմ կարդացեր	վաղ. անցյալ չէի կարդացեր
ա լծ. ն, են, ան ներած. բայեր	<i>չեմ մոռնար չեմ մօտենար չեմ միանար</i>	<i>չէի մոռնար չէի մօտենար չէի միանար</i>	<i>չեմ մոռցեր չեմ մօտեցեր չեմ միացեր</i>	<i>չէի մոռցեր չէի մօտեցեր չէի միացեր</i>
ե լծ. ն ներած. բայեր	<i>չեմ մտներ</i>	<i>չէի մտներ</i>	<i>չեմ մտեր</i>	<i>չէի մտեր</i>
ե լծ. պատճ. բայեր ի լծ. ն, չ ներած. բայեր	<i>չեմ հազցներ չեմ հասնիր չեմ փախչիր</i>	<i>չէի հազցներ չէի հասներ չէի փախչեր</i>	<i>չեմ հազցրեր չեմ հասեր չեմ փախեր</i>	<i>չէի հազցրեր չէի հասեր չէի փախեր</i>
ի լծ. պարզ բայերի ներկայի ձևեր:	<i>չեմ խօսիր</i>	<i>չէի խօսիր</i>	<i>չեմ խօսեր</i>	<i>չէի խօսեր</i>

Բնականաբար նույնը վերաբերում է նաև նույն կազմությունն ունեցող անկանոն բայերին և, իհարկե, տարարմատությամբ ձևերին, ինչպես՝

Անկ. ներկա և անկ. անցյալ	Վաղ. ներկա և վաղ. անցյալ
<i>կ' ուտեմ – չեմ ուտեր / չէի ուտեր</i>	<i>կերեր եմ – չեմ կերեր / չէի կերեր</i>
<i>կ' ըլլամ – չեմ ըլլար / չէի ըլլար</i>	<i>եղեր եմ – չեմ եղեր / չէի եղեր</i>
<i>կու գամ – չեմ գար / չէի գար</i>	<i>եկեր եմ – չեմ եկեր / չէի եկեր</i>
<i>կ' երթամ – չեմ երթար / չէի երթար</i>	<i>գացեր եմ – չեմ գացեր / չէի գացեր</i>
<i>կը դառնամ – չեմ դառնար / չէի դառնար</i>	<i>դարձեր եմ – չեմ դարձեր / չէի դարձեր</i>
<i>կը տանիմ – չեմ տանիր / չէի տաներ</i>	<i>տարեր եմ – չեմ տարեր / չէի տարեր</i>
<i>կ' ընեմ – չեմ ըներ / չէի ըներ</i>	<i>ըրեր եմ – չեմ ըրեր / չէի ըրեր</i>

Կրավորական բայերը՝ **գրուիլ, երգուիլ, կարդացուիլ** ևն, դրսևորում են քերականական նույն վարքագիծը, ինչ **ի** լծորդության աններածանց բայերը. խոնարհվում և բայաձևեր են կազմում **ի** խոնարհման աններածանց բայերի նման (խոսքում հազվադեպ հանդիպող ձևեր են), ինչպես՝

անկատար ներկա՝ կը կարդացուիմ – չեմ կարդացվիր, կը գրուիմ – չեմ գրուիր, վաղակատար ներկա՝ կարդացուեր եմ – չեմ կարդացուեր, գրուեր եմ – չեմ գրուեր:

Միջին հայերեն՝ Այս կարօտուս չի՛ դիմացուիր, միշտ ըզոհոգիս կու քաղէ (Պաղտատար Դպիր, ՀԴԲ, 284):

Արևմտահայերեն Չէ՛, չէ՛, Ատիկա չի գրուիր... Բայց եթե չես ուզեր գիտնալ» (Վահէ Օշական, ՀԿԳ, 220); ...Եւ բան մը հրմշտկած ու եկած-հասած էր այս լորձունքին մէջ, որ չէր կլլուեր... (Վեհանուշ Թերեան, ՀԿԳ, 222):

Բազմապատկական բայերը, որոնք արևմտահայերենում **ի, ա, ե** լծորդու-

թյան են (**թոչտիլ, կոտրատել, պատառոտել, սոտուրտալ** են), ձևափոխության են ենթարկվում համապատասխան լծորդությունների աններածանց բայերի պես:

Բնագրային օրինակներ՝

Միջին հայերեն

Անկատար. Հանց մեծամեծ ցատումն եցոյց, / Դեռ ի մեղաց **չենք վախենար** (Թորոս Տարոնացի, 14-րդ դ., ՄՀՔ, 201); **Չեմ ելներ** ես յայս այգոյս./ Յայս իմ նորաշեն տներոյս (ԳԱ, 281); Եւ այլ իմացիր, որ ի մէկ դեղ մըն հակառակ գաւրութիւն կու գտնուի, որ մէկ մէկի **չի նմանիր**. (Ամիրդովլաթ Ամասիացի, 15-րդ դար, ՄՀՔ, 209), ...որ յորժամ պիտենայ՝ տեղաց մըն այլ **չի փնտռեն**, կամ այլ յերկրէ բերեն, եւ հանապազ մարդն առողջ **չի կենար** (ն.տ., 212); Այս իմ նենգաւոր աչերս **չի կենար** մէկ պահ մի պարապ (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 223):

Վաղակատար. Զինչ հողածին կայր արարածս. / Որ **չէր դիպեր** այն պայային (Թորոս Տարոնացի, ՄՀՔ, 202); Նատար արար ի վրայ վարդին, / Ի մէկ տեղ **չէ հասեր** մուրատ. (ն.տ.); Կ'ասեմ խեղճ է քան կու ցաւի, Զատ **չէ կերեր**, կայ վեց տարի (Պարսամ Տաղասաց, ՄՀՔ, 226): Դեռ **չեմ կերեր** իմ յայս պտղոյս / Այս իմ նորատունկ այգոյս (ԳԱ, 282); Դեռ հոտ **չեմ առեր** վարդոյս, / Յայս իմ նորատունկ տնկոյս (ԳԱ, 282);զի այնոր համար որ ի վարպետէ չէ կարդացել, եւ թէ կարդացել է՝ նա **չէ հասկցեր** եւ կամ մոռացել է (Ամիրդովլաթ Ամասիացի, ՄՀՔ, 213):

Արևմտահայերեն

Անկատար. Մեկուն քոյրը, միւսին եղբայրը. ասոր մանուկն ու անոր մայրը. բայց ո՛չ մէկուն կինը – գիւղական պատշաճութիւնը **չի թոյլատրեր** (Մելքոն Կիրճեան, ՀԱ, 102); Մարդիկ երջանիկ չեն, Կորիւն, ու **չեն գիտեր** պատճառը; այսքան տարի: Ինչպէ՞ս բացատրել, եթէ արդեն **չես գիտեր** ...Ուրիշ բան **չէի կրնար** ընել;Ատիկա **չի գրուիր**... Բայց եթէ **չես ուզեր** գիտնալ... (Վահէ Օշական, ՀԿԳ, 219); Գառնիկ, տղա՛ս, որք է, մե՛ղք է, որբերը **չէ՛ն ցուցներ**...**Չէի լար**, բայց շրթներս կը դողային (Անդրանիկ Ծառուկեան, ՀԱ 1, 116); Մաման ա՛լ **չի սիրեր** զիս (Արամ Հայկազ, ՀԱ 1, 109):

Վաղակատար. Նշանածին մայրն է եկած միայն. խրոխտ՝ կը դիտէ իր կտրիճ փեսացուն, որուն պանդխտութիւնը **չէ յաջողեր** ազդել իր ամբողջ թոյնով (Մելքոն Կիրճեան, ՀԱ, 103);Որպէս թէ հա՛յրս ըլլար, մեռած հայրս, եւ իր այնքան ծանօթ նայուածքին ահեղ տառապանքով ինծի նայէր տակաւին. կարծես թէ **չէ մեռեր** այն նայուածքը...(Ինտրա, ՀԿԳ, 254); Ուրեմն դուն բան մը **չես հասկցեր** (Վահէ Օշական, ՀԿԳ, 219):

Ի դեպ, վաղակատարի ժխտականի ձևերը ուշ միջնադարի մատենագրության մեջ շատ ավելի հաճախ են գործածվել, քան դասական արևմտահայերենով ստեղծված գրականության մեջ, որտեղ արդեն չափազանց դժվար է գտնել նշված կազմությունների կիրառությունները: Դրանք, ինչպես արդեն ասվեց, փոխարինվում էին հարակատարի ժխտականի ձևերով:

Բոլոր դեպքերում, նշված ձևերը միջին հայերենում արդեն իսկ լայնորեն

գործածվում էին, և համանունության վերը նշված դրսևորումները նույնպես արտահայտություն են գտել միջին հայերենում: Եվ ինչպես այսօր, այն ժամանակ էլ դրանց ձևաբանական նույնության պարագայում իմաստային ճշգրտումը կատարվել է շարահյուսական մակարդակում՝ համատեքստից ելնելով: Այսպես՝ Գրիգորիս Աղթամարցու «Տաղ պիտանի եւ հոգեշահ» բանաստեղծության մեջ **չեմ խմեր** ձևի՝ քերականական երկու իմաստներից (**չեմ խմում** և **չեմ խմել**) վաղակատարի իմաստով գործածությունը ենթադրվում է համատեքստից. դա են հուշում տաղում վաղակատար ներկայի դրական խոնարհման (**եղեր է, բերեր եմ, տնկեր եմ, շիներ եմ** ևն) պաբերական գործածությունները.

Հնձան **եմ շիներ** այգոյս,

Կարաս **եմ շիներ** գինոյս,

Դեռ **չեմ խմեր** յայս գինոյս,

Կ'ասեն, թ' «Արե կ ե լ, այգոյս» (ԳԱ, 262):

Իսկ ահա XVI դարի տաղերգու Պարսամ Տաղասացի «Տաղ վասն ակոռ-յի» երգում **չեմ ուզեր** ձևը գործածված է ներկայի նշանակությամբ, ինչպես ենթադրել են տալիս համատեքստը և բերված հենց մեկ տողով շարադրանքը՝ *Խեղճ ակոռայեկ ողորմելի. / Վատ չեմ ուզեր ես այլ քեզի (ՄՀԲ, 226):*

Նույն պատկերը ունենք նաև արևմտահայերենում, երբ շարադրանքի բովանդակությունից ելնելով միայն հնարավոր է հաստատապես պնդել՝ գործ ունենք անկատարի՝, թե՞ վաղակատարի հետ: Այսպես. **չեմ կարծեր** ձևը արևմտահայերենում ունի երկու քերականական իմաստ՝ վաղակատար ներկայի (կարծեր եմ – չեմ կարծեր) և անկատար անցյալի (կը կարծեմ – չեմ կարծեր). Ա. Հայկազի «Մանչս կ'երթայ տունեն...» գեղարվեստական ակնարկի մեջ այն միանշանակորեն գործածված է անկատարի իմաստով (արևել.՝ **չեմ կարծում**), ինչպես՝ «- Քսան սենթը շա՛տ է / - Չէ՛, **չեմ կարծեր** թե շա՛տ է, ընդհակառակը՝ շատ քիչ է. չէ՞ որ շատ հեռու տեղեր պիտի երթաս...» (ՀԱ 1, 110):

Համանունության յուրահատուկ դրսևորում է նաև հետևյալը. անկատար ներկայի ժխտական եզակի երրորդ դեմքում ձայնավորով սկսվող բառերից առաջ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի **չի**-ն ձայնավորով սկսվող բառերից առաջ ենթարկվում է հնչյունափոխության. **ի**-ն սղվում է, որը գրավոր խոսքում արտահայտվում է ապաթարցով, ինչպես՝ **չի ըներ – չ'ըներ, չի օգներ – չ'օգներ, չի ըսեր – չ'ըսեր**: Նույնպիսի կազմություն ունի ըղձական անցյալի եզակի երրորդ դեմքի ժխտականը՝ միայն այն տարբերությամբ, որ **չ** ժխտական մասնիկը ավելանում է ուղղակի բայահիմքին, բնականաբար, առանց ապաթարցի, ինչպես՝ **ըներ – չըներ, օգներ – չօգներ, ըսեր – չըսեր** (իբրև անցյալի ձևեր՝ սրանք գրվում են **է**-ով): Արտասանական տարբերությունն այն է, որ անկատարի ձևերում շեշտվում է բառի ոչ թե վերջին (ինչպես ըղձականի դեպքում է), այլ առաջին վանկը. հմմտ. **եթե անիկա չըսեր** (ըղձ.՝ եթե նա չասեր), **եթե անիկա չ'ըսեր** (սահմ.՝ եթե նա չի ասում): Նշված հնչյունափոխությունը (**չի>չ'**) հավանաբար ավելի ուշ՝ աշխարհաբարյան շրջանում ձևավորված լեզվական փաստ է, ինչպես նկատում ենք XX դարասկզբի և

ավելի ուշ շրջանի արևմտահայ/սփյուռքահայ գրականության մեջ («Ամուսնական կեանքին համար անբաւական յատկութիւն մըն է աւ՝ եւ չնչին անհամաձայնութիւններ, որոնց պատճառը **չ'ըմբռնէր**, անպակաս են մեր մէջ...» (Գրիգոր Զոհրայ); «Եւ ալ **չ'երգէր** արինիս մէջ, / Կախարդ երգը Լիբանանի քնարերգակ շոճիներուն» (Լևոն Շանթ)) և պարբերական մամուլում («Վազքի մէջ ինչէ՞ր կորան, արելը **չ'ըսէր** բարեւ ինչ տեսակ արել է սա... անշուշտ արելը եւ զայն դիտողը մէկ միութիւն են: Բնական արելը ...»; «Ամէն մարդ շնորհակալ է, մէկը **չ'ըսէր**՝ մինչեւ հիմա ինչի՞ կը սպասէիք, որ ձեր հաւատարիմ փոքրամասնութեան դէմ գործուած պատմական ոճիրը ...»; «Անոր խօսքով՝ առաջընթացի բացակայութեան պատճառը Հայաստանն է, որ «խաղաղութիւն **չ'ուզէր**, այլ կ'ուզէ պահպանել «ստատուս ...»):

Բոլոր դեպքերում, մեր ձեռքի տակ եղած ուշ միջնադարյան մատենագրական աղբյուրներում այսպիսի կիրառության օրինակներ չեն հանդիպել: Քննարկվող ձևի նախավոր կիրառության մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս ուսումնասիրողներից Վ. Աճեմյանը իր «Գրական արևմտահայերենի ձևավորումը» աշխատության մեջ: Պարզվում է՝ XIX դարի կեսերին խնդրին անդրադարձել «Մեր» պարբերականը (Կ. Պոլիս, 1861). հաճախ հանդիպող շփոթը մեղմելու համար առաջարկվել է կանոնավորել ժխտականի նշված ձևերը. ստորադասական/ըդականի ձևերը կազմել **չ-ով՝ չկարդար, չխօսիր, չի-ն** վերապահել միայն բաղաձայնով սկսվող բայերի անկատար ներկայի եզակի երրորդ դեմքին՝ **չի կարդար, չի խօսիր**. ձայնավորով սկսվող բայերից առաջ **չի** մասնիկի **ի-ի** սղումով գործածել **չ՝ տարբերակը՝ չի ընդունիր>չ'ընդունիր, չի երթար>չ'երթար**: Այսպիսով՝ ստորադասական/ըդականի համար ունենք՝ **չերթար, չըներ**, անկատար ներկայի համար՝ **չ'երթար, չ'ըներ**: Եղել են ընդդիմախոսներ, սակայն Ա. Այտընյանի, Ս. Փափագյանի և այլոց համար առաջարկված մոտեցումը եղել է միանգամայն ընդունելի¹ և, ինչպես տեսանք, հետագայում գործնական լայն կիրառություն է ունեցել նաև արևմտահայ գրավոր մատենագրության մեջ:

Ունեմ և **կամ** բայերի դեպքում **չ-ն** ավելանում է հենց բայահիմքին, ինչպես՝ *Այլ Փիլիպպոս բժշկապետն անուանեաց զայն ազգն՝ որ չունի տաքութիւն՝ ծերոց հիւանդութիւն (Մխիթար Հերացի, ՄՀՔ, 161); Գլուխ չունիս տապանձանի. / Հասրաթ լինիս փախլավայի (Պարսամ Տրապիզոնցի, ՄՀՔ, 225); Եկել եմ գերի անկել, ճար չկայ որ մէկ մի թափէ (Հովհաննես Երզնկացի, ՄՀՔ, 166); Եւ թէ յոչ կամայ լինայ՝ հնար չկայ. զկէս գնոցն տայ ազգին՝ եւ տուգանք (Սմբատ Սպարապետ, ՄՀՔ, 191): Այն Երզրնկան ամուր քաղաք. / Բսկի չունէր առնէլու ճար (Թորոս Տարոնացի, ՄՀՔ, 201); Ի՞նչ անեմ, կամ ի՞նչ լինիմ, տէր չունիմ, որ զայ զիս ձենէ (Նահապետ Քուչակ, ՄՀՔ, 224):*

¹ Տե՛ս Աճեմյան Վ., նշվ. աշխ., էջ 276:

**Юра Аветисян – Связи среднеармянского и западноармянского языков
в системе изъяснительного наклонения: настоящее несовершенное и прошедшее
несовершенное**

Связь между среднеармянским и западноармянским языками очень тесная, она проявляется на всех уровнях языка. Это означает, что западноармянский язык является прямым наследником среднеармянского. Однако исследования по данному вопросу вряд ли можно считать достаточными для доказательства этой теории. В основном это общее рассмотрение вопроса, исследования ограничиваются анализом лишь некоторых сторон фонетики, лексики и тем более грамматики и не представляют собой системного анализа. Между тем как решение проблемы предполагает обстоятельный анализ хотя бы важнейших языковых или ключевых сторон. В данной статье делается попытка дать целостное и системное описание одной из таких сторон – настоящего несовершенного времени и прошедшего несовершенного времени изъяснительного наклонения. Описание дается в рамках связей среднеармянского и западноармянского языков в целях указания на тесную системную связь между ними и сходство армянского литературного языка с этими периодами.

**Yura Avetisyan – Middle Armenian-Western Armenian Transitions in Indicative
Mood: the Imperfect Present and Imperfect Past**

Middle Armenian and Western Armenian are very closely interconnected. This is manifested at all levels of language. This means that Western Armenian was directly derived from Middle Armenian. However, the studies carried out concerning this issue can hardly be considered sufficient to prove this point. The existing studies are mostly general observations and are limited to certain phonetic, lexical, and mainly grammatical realities, which were subject to non-systemic analyzes. Meanwhile, the solution of the problem presupposes at least a detailed study of key linguistic realities. In the present article, an attempt has been made to give a complete and systematic description of one of such realities, the Imperfect present and Imperfect past of the Indicative Mood, in the context of the Middle Armenian - Western Armenian interrelation, which tends to show the close systemic connection and commonalities of those stages of development of literary Armenian language.

Համառոտագրություններ

ԱՄԳՀՊ – Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972:

ԳԱ – Գրիգորիս Աղթամարցի, XVI դ., Երևան, 1963:

ՀԱ 1 – Հայրենի աղբյուր 1. ձեռնարկ լեզուի եւ բացատրեալ ընթերցանութեան, կազմ. Յ. Քիրքճեան, Մ. Գալայճեան-Քիրքճեան, Աթէնք, 2000:

ՀԱ 2 – Հայրենի աղբյուր 1. ձեռնարկ լեզուի եւ բացատրեալ ընթերցանութեան, կազմ. Յ. Քիրքճեան, Աթէնք, 2003:

ՀԴՔ – Հայ դասական քնարերգություն, Երևան, 1986:

ՀԿ – Հովհաննես Կարսենցի, Տաղարան. աշխատասիրությամբ՝ Շ. Նազարյան, Երևան, 1962:

ՀԿԳ – Հայ կեանք եւ գրականություն, կազմ. Յ. Քիրքճեան, հ. Բ, Երկրորդ բաժին, Աթէնք, 2007:

ՄՀՔ – Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա, Երևան, 2019:

ՆՀ – Նաղաշ Հովնաթան, Տաղեր, Երևան, 1983:

ՈԻՄՀԲ – Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, հ. 1, Երևան, 1986:

Ներկայացվել է 22.06.2020

Գրախոսվել է 30.09.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

**ԳՐԱԲԱՐԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ ԿԻՐԱԿՈՍ
ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ**

Բանալի բառեր – Կիրակոս Գանձակեցի, XIII դար, «Պատմութիւն հայոց», հոլովում, հոլովումներ, գրաբար, միջին հայերեն, հոլովման համակարգ

XIII դարի հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում արձանագրվել են հիմնականում գրաբարյան քերականական օրինաչափություններ, թեև հեղինակը ապրել ու ստեղծագործել է միջին հայերենի գործածության ժամանակահատվածում:

Մինչ Կիրակոս Գանձակեցու երկում արձանագրված հոլովման ձևերի առանձնահատկություններին անդրադառնալը հարկ ենք համարում համառոտակի ներկայացնել քերականության ընդհանուր պատկերը գրաբարում և միջին հայերենում, նաև տարբերությունները լեզվի զարգացման վերը նշված փուլերում, գրաբարի և միջին հայերենի հոլովման համակարգերի առանձնահատկությունները:

Միջին հայերենի հոլովման համակարգը զգալիորեն տարբերվում է գրաբարից հոլովումների քանակի ու հոլովման տարբեր տիպերի միջև բառերի բաշխման առումով: Թեև միջին հայերենում հանդիպում են ներքին թեքման պատկանող բառեր, սակայն գրաբարի համեմատությամբ դրանց թիվը խիստ նվազել է, իսկ մի մասը զուգահեռաբար հոլովվում է նաև արտաքին թեքմամբ:

Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում տարբերակում են արտաքին ու ներքին թեքումներ: Սակայն ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենում ներքին թեքումը սահմանափակ է գործածվում: Անունների գերակշռող մասը արտաքին թեքման է: Ներքին թեքման բազմաթիվ բառեր դարձել են արտաքին թեքման, իսկ մի մասն էլ, գործիական հոլովում ստանալով –**ով** վերջավորություն, փաստորեն ոչ բոլոր հոլովներում են ներքին թեքումը պահպանում:

Հոլովների կազմության օրինաչափությունները գրաբարում և միջին հայերենում ունեն տարբերություններ, որոնք պայմանավորված են նաև նրանով, թե հոլովի ըմբռնման վերաբերյալ տարբեր լեզվաբաններ ինչ մոտեցումներ ունեն: «Հոլովների իմաստների և շարահյուսական գործառնությունների տարբերակման, ձևերի կաղապարման սկզբունքները մշակվում էին ոչ այն-

քան բուն լեզվական նյութի, որքան նախապես հայտնի սխեմաների, մեծ մասամբ այլ լեզուների քերականական համապատասխան օրինաչափությունները անքննադատ ընդօրինակելու և հայերենի վրա ձևելու հիմքի վրա»¹:

Գրաբարի հոլովական համակարգում առանձնացնում են ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական հոլովներ: Ըստ գրաբարի որոշ քերականագետների՝ հոլով են նաև հատուկ հոլովակազմիչներ չունեցող պատմական, պարառական, ներգոյական և կոչական հոլովները: Սակայն կարծում ենք՝ տեղին չէ նախդիրների ավելացմամբ այդ բառաձևերը հոլով համարելը: Ըստ Գ. Զահուկյանի պնդման՝ դրանք հոլովներ համարելու դեպքում պիտի առանձին հոլովներ դիտվեին նաև նախդիրների հետ հոլովների այլ զուգորդումները²:

Միջին հայերենում տարբերում են ուղղական, սեռական–տրական, հայցական, բացառական, գործիական հոլովներ: Եզակի ուղղական և հայցական հոլովները ձևականորեն չեն տարբերվում, առանձնացվում են միայն հոգնակի հոլովման հարացույցի հիման վրա³:

Ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում անունների ուղղական հոլովի եզակին ձևաբանական որևէ ցուցիչ չի ստանում և մյուս թեք հոլովներին ու հոգնակի ուղղականին հակադրվում է հոլովի ու թվի 0 ձևույթով: Ներկայացնենք Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկի բնագրային օրինակներ:

«Ցուցանել հարանց՝ որդւոց, զի ծանիցեն, յագգ յայլ, որպէս **մարգարէն Դաւիթ** հրամայէ» (4): Եւ **Թովմայ վարդապետն, պատմագիր** տանն Արծրունեաց (7): «Եւ **Սամուէլ քահանայ** կաթուղիկէին Անույ» (8): «Այն, ասէ, **սկիզբն** է երկանց» **յայտնութիւն** որդւոյն կոքստեան...» (8): «**Հուր** անկաւ յերկնից և այրեաց զերկոսեանն» (20): «Իսկ **Վաղէս կայսր** չարամահ սատակեցաւ» (21): «Նոյնպէս և **գերեզման** սրբոյն **դեղ** է ամենայն ցաւոց և վտանգելոց» (56): «Եւ պարտեցաւ **կողմն** Մահմետի» (58): «Եւ այս **ամբաստանութիւն** անմասն է ի ճշմարտութենէ» (132)⁴:

Հոգնակի ուղղականը եզակիից տարբերվում է միայն թվանիշ ձևույթների առկայությամբ: Այն նույնպես հոլովանիշ ձևույթներ չի ստանում, դրանով հակադրվում է հոգնակի թեք հոլովներին: Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում արձանագրված հոգնակի ուղղական հոլովի բառաձևերի կազմությունը հարազատ է մնում նշված օրինաչափությանը, ինչպես՝ պատմագիրք (6), քահանայք (9), այլագգիք (174), նշխարք (194), որդիք (210) և այլն:

¹ **Աբաջյան Ա.**, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Երևան, 2006, էջ 4:

² **Զահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 353:

³ **Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 2007, էջ 50:

⁴ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, աշխ.՝ Կիրակոս Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 (այսուհետև օրինակների մոտ կնշենք միայն էջը):

Անդրադառնալով ուսումնասիրվող երկում ուղղական հոլովով դրված բառաձևերի շարահյուսական կիրառություններին՝ կարող ենք ասել, որ դրանք նախադասության մեջ կատարում են հիմնականում ենթակայի, ստորոգելիի, որոշի պաշտոն: Այդ են վկայում նաև վերը նշված օրինակները:

Միջին հայերենի եզակի հայցականը եզակի ուղղականի նման հոլովանիշ ձևությամբ ստանում, ձևականորեն ուղղականից տարբերվում է միայն զ նախդիր ստանալու հատկանիշով: Ներկայացնենք եզակի հայցականով բառաձևերի բնագրային օրինակներ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկից:

Որպէս վկայեցին գերնելի արանց **զգործ** և **զքաջութիւն** (5): Սուրբն Եղիշէ պատմէ **զքաջութիւն** Վարդանայ (6): Եւ տեսեալ, եթէ ոչ մեռանի յայնմանէ, տան նմա **դէղ** մահու (16): Զնա սպանին նենգութեամբ և յանձանց իւրեանց շիջուցին զբազմալոյս **ջահն** (16): Եւ առաքէ **տախտակ** մի, յորոյ վերայ նկարեալ էր պատկերն սատանայի ... (18): **Տովն** ընկենոյր ձուկն և փայտ (21): Նա պահանջեաց զրով **խոստովանութիւն** հաւատոյ (61): Արդ՝ երդումն տամ քեզ **զուխտադրութիւնն** աստուծոյ ... (63): Սա շինէ զսուրբ **քաւարանն** մեծապայծառ զարդոյ յԵրազգաւորս (77): Եւ շինեցին ի վերայ նորա **եկեղեցի** վայելուչ (81):

Միջին հայերենում, տրականաձև հայցականի դրսևորումներով պայմանավորված, անձի և իրի առումն արդեն ունի իր որոշակի արտահայտությունը: Անդրադառնալով ուղղականաձև և տրականաձև ուղիղ խնդրի տարբերակվածությանը՝ վստահաբար կարող ենք պնդել, որ ուսումնասիրվող երկում այս իմաստով միջին հայերենի դրսևորումներ արձանագրված չեն:

«Բայց Սանատրուկ, իբրև լուաւ **զմահ** նորա, սպանանէ զսուրբն Գրիգորիս, **զորդին** Վրթանիսի, **զեղբայր** Յուսկանն» (17):

Բերված օրինակը ասվածի լավագույն վկայությունն է:

Ինչ վերաբերում է հայցական հոլովով դրված բառերի շարահյուսական կիրառություններին, կարող ենք ասել, որ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված հայցական հոլովով բառաձևերի մեծագույն մասը նախադասության մեջ կատարում է ուղիղ խնդրի պաշտոն:

Գրաբարի **սեռական և տրական հոլովները** միջին հայերենում թե՛ իրենց կազմության, թե՛ շարահյուսական կիրառության առանձնահատկությունների տեսակետից գրեթե նույնացել են և հանդես են գալիս որպես մեկ հոլով:

Այժմ անդրադառնանք Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում գործածված սեռական–տրական հոլովաձևերին՝ ներկայացնելով բնագրային օրինակներ:

«Եւ **Եկեղեցոյ** պատմութիւնն, սկսեալ ի ծագմանէ **արեգականն արդարութեան**՝ զժամանակս թագաւորաց» (5): «Եւ զհամբերող նահատակութիւն սրբոցն **Խորենայ** և **Աբրահամու**, զոր ստուգութեամբ ցուցանէ այրն սքանչելի» (7): «Տօն է **գալստեան** ամենասուրբ **հոգւոյն** ի վերնատունն ի դասս առաքելոցն» (10): «Առաքէ տախտակ մի, յորոյ վերայ նկարեալ էր պատկերն **սատանայի**» (18): «Սա շինէ զսուրբ քաւարանն մեծապայծառ **զարդոյ** յԵրազգա-

ւորս» (77): «Եւ բագումք ուրացան զճշմարիտն աստուած վասն **երկիւղի մահուն**» (79): «Իսկ զկնի **մահուան խոստովանողին Սմբատայ** առնու զիշխանութիւնն Աշոտ, որդի նորա» (79): «Գրեաց զմեկնութիւն **աւետարանին Յովհաննու** լուսաւոր բանիւք» (79):

Նշենք, որ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված սեռական–տրական հոլովաձևով բառաձևերի մեծագոյն մասը հանդես է գալիս որոշչի և հատկացուցչի պաշտոններում, ինչպես նաև գործածվում է **վասն+սեռական–տրական** կադապարով՝ կատարելով վերաբերության անուղղակի խնդրի պաշտոն:

Բացառական հոլովը գրաբարի համեմատությամբ հիմնականում պահպանել է իր և՛ իմաստային, և՛ կառուցվածքային առանձնահատկությունները: Այն դրսևորում է նաև միջին հայերենին հատուկ որոշ իրողություններ: Կարելի է ասել, որ միջին հայերենում բացառական հոլովի կազմությունը գրաբարատիպ է: Այն է՝ պահպանվում է **ի** նախդիրը, եզակի թվում՝ նաև **է** հոլովակազմիչը: Ներկայացնենք բացառական հոլովով օրինակներ. յարարչէն (3), **ի** ծագմանէ (5), **ի** Սեղբոստրոսէ (5), **ի** մարդոյն (6), **ի** Քրիստոսէ (7), յազգէ (9), **ի** բարեպաշտութենէ (16), **ի** Տրդատայ (17), **ի** գեղջէ (18), **ի** Տաթևոյ (18), յախտէն (21), **ի** տեղուջէն (56), **ի** ծննդենէն (56), **ի** հրեշտակէ (57), **ի** հօրէ (61), **ի** գավառէ (77), **ի** քաղաքագեղջէն (82), յեկեղեցոյ (115), **ի** բեմէ (115), **ի** տաճարէ (115), **ի** խնդրոյ (116), **ի** քաղաքէն (116), յաշխարհէն (116), **ի** տօնի (131), **ի** ճշմարտութենէ (132), **ի** թագուհոյն (162):

Ինչպես ցույց են տալիս վերը նշված օրինակները, ուսումնասիրվող երկում բացառական հոլովով վկայված բոլոր օրինակները կազմված են գրաբարին բնորոշ օրինաչափություններով: Անկանոն որևէ դրսևորում նկատված չէ:

Նշենք, որ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված բացառական հոլովով բառաձևերի հիմնական մասը կատարում է տեղի պարագայի պաշտոն: Ներկայացնենք մի քանի բնագրային օրինակներ:

Եւ յետ այնորիկ կացոյց Տիրան յաթոռ քահանայապետութեան զՓառնէրեհ ոմն, **ի Տաթևոյ, ի գեղջէ** Աշտիշատոյ (18): Սա էր **ի գաւառէ** Կոտայից՝ **ի** գեղջէ Ովայից (77): Եւ ընկեց գնա **ի բեմէ** անտի **ի** յատակս տաճարին (115): Եւ հանին գնա արտաքս **ի տաճարէ** անտի (115): Սոքա երեքեանս էին **յաշխարհէն** Գանձակայ, ուստի և ես (116):

Հանդիպում են նաև բացառական հոլովի՝ շարահյուսական այլ պաշտոններում հանդես եկող ձևեր, ինչպես՝ «Իսկ իբրև լցաւ **ի ծննդենէն** (ժամանակի պարագա) Քրիստոսի ամք ՈԺԸ, յայտնեցաւ ոմն սուտ մարգարէ հեթանոսաց» (56): «Համառօտ պատմութեամբ և ընդարձակ մտօք **ի** նախնի **մարդոյն** (անջատման անուղղակի խնդիր) սկսեալ ...» (6): «**Ի հրեշտակէ** (անջատման անուղղակի խնդիր) սրբոյ լինել զայն» (57): «...Պատմէ **ի տօնի** (վերաբերության անուղղակի խնդիր) քաւութեանն» (131): «Եւ ... պատմէ զքաջութիւն Վարդանայ և զընկերաց նորա, որք յուսովն Քրիստոսի զանձինս **ի** մահ եղին և պսակեցան **ի Քրիստոսէ**» (ներգործող անուղղակի խնդիր) (7):

Գործիական հոլովը միջին հայերենում ի հայտ չի բերում ձևային առատություն և բազմազանություն: Եզակի գործիականի հիմնական հոլովանիշ ձևայինները նույնն են, ինչ գրաբարում՝ **ւ** և **բ**: Սրանցից առաջինը միջին հայերենում դադարել է գիտակցվել որպես անկախ հոլովակերտ, երկրորդը պահպանվել է սահմանափակ կիրառությամբ: Իսկ **-ով** վերջավորությունը գրաբարյան **ո**-ով հիմքերից տարածվել է նաև այլ հիմքերի վրա և միջին հայերենում այլևս դիրքային սահմանափակում չունի: Այս վերջավորությամբ գործիական է կազմվում հոլովման համարյա բոլոր տիպերին պատկանող անուններից, նաև ներքին թեքմամբ հոլովվող մի քանի բառերից:

Հարկ ենք համարում արձանագրել, որ XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում վկայված գործիական հոլովով բառաձևերը, ըստ հոլովակազմիչ ձևայինների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

-ով – 172 բառաձև, որից 146-ը անորոշ դերբայի գործիական հոլովի ձևեր են,

-բ – 192 բառաձև, որից 171-ը **-ութիւն** վերջածանցով բառերի գործիական հոլովի ձևեր են,

-ւ – 142 բառաձև,

-ու – 12 բառաձև:

Ինչպես երևում է բերված թվերից, ուսումնասիրվող երկում գերիշխում են գործիական հոլովի կազմության գրաբարյան օրինաչափությունները: Կիրակոս Գանձակեցու երկում վկայված գործիական հոլովի **-ով** վերջավորությամբ բառաձևերը պատկանում են հոլովման գրաբարյան տիպերին: Այլ հոլովումների պատկանող բառերի՝ **-ով** վերջավորությամբ բառաձևեր ուսումնասիրվող երկում արձանագրված չեն:

Բերենք գործիական հոլովով բնագրային օրինակներ:

«Իսկ այսմ ոչ է հնար այլազգ հասու լինել և իմանալ, բայց թէ բազում **աշխատութեամբ** և յերկար **ջանիւ**» (3): «Մաշել **տաժանմամբ** և յոյժ վաստակօք, զի թերևս գտցէ ինչ պիտանացու» (3): «**Յուսովն** Քրիստոսի զանձինս ի մահ եղին» (6): «Խաղաղական **մահությամբ** փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն» (17): «Տիրան ատէր զնա, յետոյ և սպան զնա այսպիսի **պատճառաւ**» (18): «Եւ գտին մանուկ մի գեղեցիկ **հասակաւ**» (19): «Հանապազ գործել զչարիս և **ջրով լոկով** ողորանիլ և սրբիլ» (59): «Նա պահանջեաց ի նոցանէ **գրով** խոստովանութիւն հաւատոյ» (61): «Եհար զնա արագաթն **նաւովն** և ջրասոյգ արար զամենեսեան» (160):

Ինչպես ցույց են տալիս ներկայացված օրինակները, Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում վկայված գործիական հոլովով բառաձևերի մեծագույն մասը կատարում է ձևի պարագայի պաշտոն: Բայց կան նաև այլ լրացումներ, ինչպես՝ որոշիչ, միջոցի անուղղակի խնդիր:

Միջին հայերենի համար յուրահատուկ երևույթ է **-օմ** վերջավորությամբ գործիականը, որը ծագումնաբանորեն կապվում է **-ամբ**-ի հետ: Ըստ Աճառյանի՝ գրաբարի **ա** ներքին հոլովման **-ամբ** վերջացող ձևերում **ա** ձայնավորը

շրթնայնանալով դառնում է օ՝ ձկօմբ: Երեք շրթնայինների ծանր արտասանությունից խուսափելով՝ ք-ն ընկնում է **օմբ>օմ**: Սակայն մեր ուսումնասիրած երկում գործիականի՝ այս վերջավորությամբ ձևեր արձանագրված չեն:

Միջին հայերենում ներգոյական հոլովի իմաստի արտահայտման հիմնական միջոցը դեռևս գրաբարում լայն տարածում ունեցող կազմությունն է՝ **ի նախդիր+եզակի տրական** և հոգնակի հայցական: Եզակի ներգոյականն ունի երկու տիպի վերջավորություն: Առաջինը՝ **-ում-ը**, որ վկայված է դեռևս գրաբարից, սկբնապես տարածվել է տեղ և ժամանակ ցույց տվող մի քանի անունների վրա, ապա ընդհանրացել ու հաստատվել է ժամանակակից արևելահայերենում: Երկրորդը՝ **-ոջ-ը**, նույնպես վկայված է գրաբարից, սակայն միջին հայերենում առաջինի համեմատությամբ նվազ գործածական լինելով՝ հետագայում էլ տարածում չի գտել:

Կիրակոս Գանձակեցու երկում վկայված ներգոյական հոլովով բառաձևերը հիմնականում կազմված են գրաբարյան օրինաչափություններով: Ներկայացնենք բնագրային օրինակներ:

«Կիրք, որ **ի բնութեան** մարդկան՝ յայս հաստատեալ է խնամօք յարարչէն...» (3): «Խոկասցիս ի սոսա ի տուէ և ի գիշերի ի նստել **ի տան**» (4): «Եւ **յաւուր** միում նստեալ **յեկեղեցւոջն**՝ յուտել և յըմպել կանամբք և մանկտիւք, հուր անկաւ յերկնից» (19): «Բնակէր **ի կղզւոջն** Սևան մեծաւ ճգնութեամբ» (81): «Եւ եղաւ մարմին նորա **ի գերեզմանի** ի Գառնի» (81): «Եւ այսպիսի բարւոք քաղաքաւարութեամբ կեցեալ **յաշխարհի**՝ փոխեցաւ ի Քրիստոս աշխատասէրն ի Հաղբատ» (115): «Դարձեալ **ի թղթի** աստ գրեալ էր և այս ինչ վասն մեր» (132): «Երկաքանչիւրքն **ի սահմանի** են ուղղափառութեան» (134):

Կարող ենք արձանագրել, որ ուսումնասիրվող երկում կան օրինակներ, որոնցում ներգոյականի իմաստը **ի+եզակի տրական** կառույցի փոխարեն արտահայտվում է **ի+եզակի հայցական** կառույցով: Վերը նշված երկույթը նկատվել է նաև այլ երկերում: Այդ մասին Ա. Այտընյանը ասում է. «Բաւական յաճախութեամբ կը գտնուի նաև ընտանեկան ռճոյն մէջ՝ անորոշ հայցական կամ մանաւանդ ուղղական փոխանակ ներգոյականի՝ որոշեալ տեղ կամ ժամանակ ցուցնելու համար»¹:

Ներկայացնենք Կիրակոս Գանձակեցու երկում ներգոյական հոլովի՝ վերը նշված կառույցով մի քանի օրինակ:

«Զնախարարսն արգելուն **ի բանտ** մինչև յաւուրս Պերոզի արքայի» (35): «Սա բազում կարգաւորութիւնս եմոյծ **յեկեղեցի**» (35): «... որ սպան զՍմբատ թագաւորն **ի Դուին**» (83): «Այնուհետև ոչ եղև յարևելս աթոռն հայրապետական, այլ ընդ իշխանութեամբ յունաց՝ երբեմն **ի Մեքաստիա**, երբեմն **ի Ծովքն** կոչեցեալ վայր» (108):

¹ Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, 1987, էջ 109:

Կարևոր ենք համարում արձանագրել, որ ներգոյական հոլովի՝ նման կառույցով ձևերը ուսումնասիրվող երկում շատ չեն:

Պատմիչի երկում վկայված է ներգոյական հոլովի իմաստն արտահայտող մեկ օրինակ հետևյալ կադապարով՝ **ի նախդիր+հոգն. ուղղական**: «Եւ բնակեցաւ նա **ի վանքն**, որ կոչիւր Գետիկ»(209): Ավելորդ ենք համարում նշել, որը վերը նշված կառույցը քերականորեն ոչ մի կերպ չի բացատրվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուղղական հոլովով դրված բառաձևի հետ որևէ նախդիր չի գործածվում:

Ուշագրավ է այն, որ երկում վկայված է նաև նույն բառի՝ ներգոյական հոլովի իմաստն արտահայտող մեկ այլ՝ կանոնական ձև, ինչպես՝ «Եւ բերեալ շինեաց մերձ **ի վանս** այլ գիւղ» (210):

Ներգոյական հոլովով հիմնականում դրվում են տեղի և ժամանակի պարագաները: Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում հանդիպում են ներգոյական հոլովով դրված տեղի պարագաներ:

Գրաբարում կային պարզ և խառն հոլովումներ¹: Միջին հայերենում սակավ դեպքերում են բոլոր թեք հոլովները կազմվում միևնույն հոլովիչով: Միջին հայերենից սկսած՝ յուրաքանչյուր հոլով ստանում է կայուն, միայն իրեն հատուկ վերջավորություն:

Միջին հայերենում դեռևս գործում են գրաբարյան շատ ձևեր, առաջացել են նաև հոլովական նոր ձևեր, վերջավորություններ: Այսինքն՝ կարելի է առանձնացնել գրաբարյան և միջինհայերենյան նորակազմ հոլովումներ: Ըստ Ս. Ղազարյանի՝ միջին հայերենի հոլովվող խոսքի մասերն ունեն ա, ե, ի, ո, ու հոլովիչները²: Որոշ լեզվաբաններ էլ միջին հայերենի անունների համար առանձնացնում են 6 ներքին և 8 արտաքին հոլովումներ³, որոնցից մի քանիսը բնորոշվում են բառերի ձևական կամ իմաստային ընդհանուր հատկանիշներով, մյուսները՝ ոչ:

Հատկանշական է այն, որ պատմիչի երկում վկայված են գրաբարյան տարբեր հոլովումների պատկանող բառաձևեր:

Ներքին հոլովումներ

Ա հոլովում – ազդեցութեան (4), շփոթման (99), արեան (103), սպանման (103), տան (264), առաջնորդութեան (279), մեծութեան (282), ամուսնութեան (293)

Ե հոլովում – կայսեր (69), դստերն (287), ոսկերսն (193), լիտր (386)

Ի-Ա – զանձն (116), հարսն (125)

Արտաքին հոլովումներ

Ա հոլովում – Աղամայ (5), Տրդատայ (6), Վարդանայ (6), Սահակայ (6),

¹ Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., նշվ. աշխ., էջ 51:

² Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 233:

³ Հովսեփյան Լ. և ուրիշներ, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1975, հ. Բ, էջ 14:

Յակոբայ (69), Հռոմայ (74), Սմբատայ (79), Հաղբատայ (99), Գանձակայ (118)

Ի հոլովում – Գրիգորի (6), տոնի (61), եպիսկոպոսիվ (77), բանտի (78), Պետրոսի (117), բանին (124), գիշերի (264), ընծայիւ6 (269), արքայի (285), բերդին (287)

Ո հոլովում – հոգւոյ (29), հաւատոյ (35), որդւոյ (61), գետոյն (69), աստուծոյ (75), համբաւոյ (79), Գառնւոյ (81), աթոռոյ (98), որսոյ (103), խնդրոյ (117), հրոյ (124)

Ու-Ա – եկեղեցւոյ (80), թշնամեաւ (203) մատանեաւ (13)

Ու հոլովում – ժամուն (35), խրատու (60), զարդու (77), Մարիամու (123), վնասու (284), **պապուն** (111)

Ի-Ա – ազգի (6), պատերազմաւ (78), ճանապարհաւ (79), հրամանաւ (84), քաղաքին (117), աւարաւ (280)

Ինչպէս նշված բառաձևերի մեջ, այնպէս էլ ողջ երկում մեծ թիվ են կազմում արտաքին հոլովման ենթարկվող օրինակները: Ներքին հոլովման բառաձևերի շարքն ընդգրկուն են դարձնում հիմնականում **-ութիւն** և **-ումն** վերջածանցներով բազմաթիվ բառերը:

Ուսումնասիրվող երկում գրաբարի անկանոն հոլովման գոյականները պահպանել են հոլովման անկանոնությունները, ինչպէս՝ *հօր* (1235), *աւուր* (131):

Ուշագրավն այն է, որ գրաբարի անկանոն հոլովման **քոյր** գոյականը գրաբարում ուներ սեռական հոլովի երկու ձև՝ **քուեր** և **քեռ**, սակայն առավել գործածական էր վերջինը¹: Հետաքրքիրն այն է, որ երկում ավելի շատ գործածվում է **քուեր** ձևը ոչ միայն առանձին, այլև որպէս բարդությունների բաղադրիչ: Օրինակ՝ *քուեր* (292), *քուերորդւոյ* (287):

Գրաբարն աչքի էր ընկնում հոլովման տիպերի ու նրանց հարացուցային տարբերակների արտակարգ բազմազանությամբ: Բացի այդ համակարգային բազմազանությունից՝ դեռևս դասական գրաբարի շրջանում նկատվում էին հոլովական զուգաձևություններ, երբ միևնույն բառը կարող էր ենթարկվել տարբեր հոլովումների, այսինքն՝ ստանալ տարբեր հոլովիչներ: Ձուգահեռաբար տարբեր հոլովումներով հոլովվելու կամ մի հոլովատիպից մյուսին անցնելու այդ առանձնահատկությունը շարունակվում է նաև հետագա դարերում: Գրաբարի նման հոլովման կայուն համակարգ չունեցող միջին հայերենում ևս մի հոլովման հարացույցի բառերը կարող են հոլովվել մի քանի այլ հոլովումներով:

Վրթանիսի (17) – *Վրթանայ* (17), *Խոսրովայ* (17) – *Խոսրովու* (24, *մահուան* (79) – *մահուն* (79), *քուեր* (292) – *քեռ* (210):

Ամփոփելով մեր դիտարկումները՝ կարող ենք ասել հետևյալը: XIII դարի

¹ Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաջյան Ա., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2017, էջ 309:

պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց» երկում տարբեր հոլովներով գործածված բառաձևերը հիմնականում կազմված են հին հայերենի հոլովման համակարգի առանձնահատկությունների համաձայն: Լինելով միջինհայերենյան ժամանակահատվածում ապրած և ստեղծագործած հեղինակ՝ պատմիչը, այնուամենայնիվ, առաջնորդվել է գրաբարի քերականության օրինաչափություններով: Դա ինչ-որ առումով ունի բացատրություն. չէ՞ որ Կիրակոս Գանձակեցին ներկայացնում է պատմագրություն ուղղությունը և որոշակի ժամանակաշրջանի պատմության անդրադառնալիս պիտի հարազատ մնա այդ շրջանի ոգուն, նաև քերականական համակարգի առանձնահատկություններին:

Ինչ վերաբերում է ուսումնասիրվող երկում վկայված հոլովումներին, պետք է արձանագրենք, որ այստեղ ևս Կիրակոս Գանձակեցին հետևել է գրաբարի հոլովման համակարգի օրինաչափություններին: Ինչպես սեռական-տրականի կազմության՝ վերը նշված օրինակներում, այնպես էլ պատմիչի ողջ երկում գործածված են հինհայերենյան հոլովական վերջավորություններ, որոնց մեծագույն մասը պահպանվել է նաև միջին հայերենի շրջանում, սակայն արձանագրված չեն միջին հայերենի նորակազմ հոլովումները:

Лилит Акопян – *Выражение особенностей систем склонения габара и среднеармянского языка в произведении Киракоса Гандзакеци «История Армении»*

В данной статье рассматриваются особенности системы склонения и ее выражение в произведении выдающегося армянского историка XIII века Киракоса Гандзакеци «История Армении». Прежде чем обратиться к особенностям форм склонения, автор кратко представила общую картину грамматики габара и среднеармянского языка, различия в вышеупомянутых этапах развития языка, а также особенности систем склонения габара и среднеармянского языка. В исследовании подробно рассматриваются особенности выражения склонения среднеармянского языка в вышеуказанном произведении. В «Истории Армении» Киракоса Гандзакеци в основном наблюдаются грамматические закономерности габара, хотя автор жил и творил в период употребления среднеармянского языка. Система склонения не является исключением: в вышеуказанном произведении слова, использованные в различных типах склонения, в основном образованы в соответствии с особенностями системы склонения габара. Будучи автором, жившим и творившим в период употребления среднеармянского языка, Киракос Гандзакеци руководствовался грамматическими закономерностями габара. В некоторой степени этому есть объяснение: Киракос Гандзакеци – представитель исторического направления, и, обращаясь к истории определенного периода, он должен оставаться верным духу, а также особенностям грамматической системы данного периода. Что касается типов склонения, употребленным в исследуемом произведении, то нужно отметить, что Киракос Гандзакеци следовал системе склонения габара. Во всем произведении используются окончания типов склонения габара, большая часть которых сохранилась в среднеармянском языке, однако типы склонения, сформированные в нем, не наблюдаются.

Lilit Hakobyan – *Manifestation of Peculiarities of the Declension Systems of Grabar and Middle Armenian in “History of Armenia” by Kirakos Gandzaketsi*

The paper refers to the peculiarities of the declension system and its expression in “History of Armenia” by the remarkable Armenian historian of the XIII century, Kirakos Gandzaketsi. Before referring to the specifics of the declension system found in Kirakos Gandzaketsi’s work, the overall grammatical picture of Classical Armenian (Grabar) and Middle Armenian (Cilician Armenian) as well as the differences of the language development during the mentioned periods and the peculiarities of the declension systems are presented. The expression of the latter in the mentioned work is discussed in detail. Even though Kirakos Gandzaketsi lived and worked in the period of usage of Middle Armenian, mainly the grammatical patterns of Classical Armenian are observed in his “History of Armenia”. The declension system is not an exception: in the mentioned piece the used words are mainly declined in compliance with the grammatical specifics of Classical Armenian. Being an author who lived and created in the mid-Armenian period, the historian, however, was guided by the grammatical patterns of Classical Armenian. In a certain sense, this has an explanation: Kirakos Gandzaketsi was a historian, and when referring to the specific historic period, should keep his work close to the spirit of the presented period and so to the peculiarities of that grammatical system. What refers to the declension system found in the discussed work, it should be noted that Kirakos Gandzaketsi followed the grammatical patterns of the declension system of Grabar. Throughout the work, the declension suffixes of Classical Armenian, the majority of which are preserved in Middle Armenian, are used. However, the declensions formed in Middle Armenian are not observed.

Ներկայացվել է 20.09.2020

Գրախոսվել է 25.09.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ

1920 թ. ԹՈՒՐԲ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՆՁԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹՎ)

Բանալի բառեր – Ի. Ստալին, Մուստաֆա Քեմալ, Քյազիմ Կարաբեքիր, Կարս, քեմալական Թուրքիա, «Ազգային ուխտ», պատմագրություն, հեղինակներ, պատերազմ

Հոդվածում պատմական զանազան փաստերի հիման վրա հերքվում է օտար և հայ առանձին հեղինակների կողմից հաճախ շրջանառվող պատմական այն թյուր ըմբռնումը, եթե չասենք կեղծիքը, թե 1920 թ. թուրք-հայկական պատերազմը նախաձեռնել են հայերը, իսկ քեմալական Թուրքիան իբր թե հարկադրված է եղել դիմելու կանխարգելիչ գործողության:

Հարկ է արձանագրել, որ նման վարկածը շրջանառության մեջ է դրվել ի սկզբանե՝ 1920-ական թվականներից, առաջին հերթին թուրքական և խորհրդային պատմաբանների կողմից, որին քաղաքական-գաղափարական-քարոզչական նկատառումներով, կուսակցական-կարգապահության պարտադրանքով և այլ հանձնարարականներով կամա թե ակամա տուրք են տվել նաև Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական որոշ գործիչներ, խորհրդահայ առանձին պատմաբաններ, հուշագիր հեղինակներ: Ցավոք, երբեմն նման տեսակետի կարելի է հանդիպել անգամ մեր օրերում, առանձին հեղինակների՝ խնդրին առնչվող աշխատություններում:

Ժամանակին հայ և օտար շատ հեղինակներ պատմական իրողությունները խեղաթյուրում ու նենգափոխում էին, հիմնականում քաղաքական նկատառումներով, այն է՝ դաշնակցական կառավարությունը իբր մղում էր իմպերիալիստական պատերազմ, մինչդեռ քեմալական Թուրքիան՝ ազգային-ազատագրական¹: Թուրք-հայկական պատերազմի նախահարձակ կողմի բացահայտման և դրա հետ կապված մի քանի հանգամանքների պարզաբանման ու պատմական այդ փաստի իրական դրդիչներին ի ցույց դնելու համար անհրաժեշտ է վերանայել մեզանում մինչ օրս տակավին լուսաբանման կարոտ այս տեսակետը:

Պատերազմը հայերի կողմից սկսվելու մասին առաջին ապատեղեկատ-

¹ Տե՛ս **Հարությունյան Շ. Ռ.**, Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1963, Երևան, 1967, էջ 381:

վություն տարածողներից մեկը թուրքական պաշտոնական «Անատոլու» մամուլ գործակալությունն էր: Ալ. Խատիսյանն իր հուշերում գրում է, որ վերջինս 1920 թ. հոկտեմբերի 23-ին Հայաստանի և հայերի մասին իր տարածած կեղծ ու զրպարտչական լուրերից բացի, զետեղել է նաև հետևյալ հաղորդագրությունը. «Սեպտեմբեր 24-ին մեր (թուրքական – Ա. Հ.) սահմանային պահակները անակնկալ կերպով ենթարկվեցան յարձակման: Մեր զորքերը յաղթելով թշնամուն, հալածեցին գայն մինչև Սարըղամիշի շրջանը, որը բնակուած է միայն Թիւրքերով: Մեր ձեռքը ընկած փաստաթուղթերը ցոյց կու տան, որ հայկական յարձակումը պատրաստուած է եղել խնամքով նպատակ ունենալով տիրել Էրզրումին»¹:

Ի պատասխան թուրքական պաշտոնական գործակալության այս հաղորդագրությանը՝ հարկ է արձանագրել, որ հենց թուրքերն էին ամիսներ առաջ մանրամասն ու խնամքով նախապատրաստել Հայաստանի վրա հարձակումը և նրա ջախջախումը, իսկ հայկական կողմի՝ խնամքով հարձակում նախապատրաստելու, առավել ևս հայկական համեստ զինուժով Էրզրումը գրավելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Հանրապետության ղեկավարությունը, ըստ Սևրի պայմանագրի, Միացյալ և Անկախ Հայաստանի խնդրի լուծումը առաջին հերթին կապում էր այդ պայմանագիրը ստորագրած դաշնակից երկրների կողմից դիվանագիտական ճանապարհով, միջազգային իրավունքի ուժով լուծելու հետ: Իսկ մինչ այդ հայկական բանակի առջև ընդամենը խնդիր էր դրված պաշտպանել հանրապետության սահմաններն ու անվտանգությունը: Բայց ինչպես հետո պարզվեց, հայկական բանակն անգամ չկարողացավ իր իսկ պետության սահմանները պաշտպանել: Մինչդեռ թուրք-քեմալական քարոզչամեքենան աշխարհով մեկ տարածում էր համանման կեղծ լուրեր, որպեսզի արդարացնէր իր գավթողական, հայաջինջ քաղաքականությունը:

¹ **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 268-269: Այդ մասին իր հուշերում ակնարկում է նաև Հ. Տեր-Հակոբյանը (տե՛ս **Տեր-Հակոբեան Հ.**, Հայաստանի վերջին աղէտը, Կ. Պոլիս, 1921, էջ 82-84): Իհարկէ մենք չենք բացառում, որ մինչ պատերազմը հայ ազգային-քաղաքական շրջանակներում եղած լինեն մարդիկ և գործիչներ, որոնք Սևրի պայմանագրի ստորագրումից հետո, չսպասելով միջազգային իրավաքաղաքական հետագա գործընթացներին, ակնկալել են այդ պայմանագրի ոգով տիրելու Հայաստանին հասանելիք արևմտահայ տարածքները, այդ թվում Կարինը: Այսպես, օրինակ, մի առիթով հուշագիր Վահե Արծրունին գրում է, որ հոկտեմբերի 13-ի երեկոյան՝ հայկական զորքի հակահարձակման հրամանի նախօրյակին, ժողովրդին ու բանակին միգուցե ոգևորելու նպատակով Կարս գործուղված նախարար Ս. Վրացյանը «Դեպի Կարին» կարգախոսով արտաբերել է. «Դուք համբերութիւն ունեցէք երեք օր եւս, եւ մեր զօրքը կանգ կառնէ Կարնոյ դրան առաջ» (տե՛ս **Արծրունի Վ.**, Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը: Շատախ, Երևան, 2002, էջ 166): Հարկ է արձանագրել, որ հայերի՝ իբրև Էրզրումը գրավելու կեղծ քարոզչությունը, ցավոք, հատուկ միտումով օգտագործել են քեմալականները և նրանց գաղափարական-դաշնակցային գործընկերները համարվող խորհրդային հեղինակները, նաև հայ բոլշևիկները՝ իբրև զենք իրենց հակադաշնակցական գաղափարաքաղաքական պայքարում:

Այժմ փորձենք հարցը ներկայացնել ըստ էության:

Հենց թուրքական փաստական տվյալներով հաստատվում է պատմական այն իրողությունը, որ թուրք միլիիների (ազգայնականների) բարձրագույն ղեկավարությունը տակավին 1920 թ. սկզբներից սկսել էր խնամքով մշակել ու նախապատրաստել Հայաստանի դեմ պատերազմի պլանը: Փաստերը վկայում են, որ դա ծրագրված է եղել հենց Մուստաֆա Քեմալի կողմից, որը դեռևս 1920 թ. փետրվարի 5-ին «Ազգային ուխտ»-ի (Misak-i Milli) շրջանակներում ծածկագիր նամակով արևելյան ճակատում գործող 15-րդ բանակային կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին կարգադրել էր անցկացնել պաշտոնական ու ոչ պաշտոնական զորակոչ և սկսել զորքերի կենտրոնացումը թիկունքից դեպի կովկասյան արգելքը՝ Հայաստանը, ոչնչացնելու համար¹: Եվ այս կապակցությամբ կարծում ենք, որ սխալվում է թուրք-հայկական պատերազմի պատմության հուշագիր հեղինակներից Վահե Արծրունին, երբ պատերազմը սկսելու նախաձեռնությունը վերագրում է արևելյան ճակատի գլխավոր հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային²: Վերջինս ընդամենը կատարել է թուրք ազգայնականների ռամաքաղական բարձրագույն ղեկավարության հրամանը:

Սակայն պարզվում է, որ թուրքական կողմի համար մի շարք աննպաստ հանգամանքների՝ Բարձր Հայքի ձմեռային խստաշունչ բնակլիմայական դժվարությունների, այնուհետև բոլշևիկյան Կարմիր բանակի՝ Հյուսիսային Կովկասից դեպի Ադրբեջան մտնելու դանդաղման, նաև բրիտանական զորքերի՝ Անդրկովկասից էվակուացիայի ուշացման, 1920 թ. մարտ ամսին Անտանտի զորքերը Կ. Պոլիս մտնելու, ինչպես նաև թուրք-հայկական պատերազմի պարագայում Վրաստանի դիրքորոշման անորոշության պատճառներով զորակոչն ու արշավանքը հետաձգվել են³: Այդուհանդերձ, Ք. Կարաբեքիրն առաջարկում է արշավանքն սկսել ապրիլից՝ Էրզրում-Սարիղամիշ հատվածներում ձյան հալչելուն պես: Տեղեկանալով Հյուսիսային Կովկասում Կարմիր բանակի ռազմական հաջողությունների մասին, որ գեներալ Ա. Դենիկինի պարտությունը ճանապարհ էր բացում դեպի Անդրկովկաս, նա մարտի 28-ին զեկուցագրով դիմում է Մուստաֆա Քեմալին՝ առաջարկելով թույլ տալ սկսելու հարձակումը Հայաստանի վրա, գրավելու «Ազգային ուխտ»-ով նախատեսված Կարսի, Արդահանի և Արդվինի սանջակները և

¹ Տե՛ս **Мустафа Кемаль**, *Путь новой Турции*, т. 3, Москва, 1934, с. 313, **Մարգարյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ.**, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 41, **Մարգարյան Ե. Ղ.**, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Երևան, 1994, էջ 137, **Սաֆրաստյան Ռ.**, Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, 2019, էջ 64-65:

² Տե՛ս **Արծրունի Վ.**, նշվ. աշխ., էջ 25:

³ Տե՛ս **Մարգարյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 45-46, **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 64-66:

առաջ ընթանալով՝ հանդիպել Կարմիր բանակին: Թուրքերի նպատակն էր հասնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմաններին, այն է՝ Արաքս գետին: Մուստաֆա Քեմալը հավանություն է տալիս Ք. Կարաբեքիրի առաջարկին՝ խորհուրդ տալով պահպանել մտադրության գաղտնիությունը¹:

Թուրքիայի կողմից պատերազմի սանձազերծման մասին է վկայում նաև այն փաստը, որ անգամ Մուստաֆա Քեմալի քաղաքական հակառակորդ, Բեռլինում ապաստանած երիտթուրք պարագլուխներից Մեհմեդ Թալեաթ փաշան խորհուրդ էր տալիս Ք. Կարաբեքիրին. «Եթե ռազմական պատրաստություններդ լրիվ են, անցի՛ր հարձակման»²: Թուրքերի՝ Հայաստանի դեմ առաջինը պատերազմ ծրագրելու և սկսելու վերաբերյալ մեկ լրացուցիչ փաստ է 1920 թ. ապրիլի կեսերին Ք. Կարաբեքիրի Անգորայի (Անկարա) ղեկավար շրջաններին ուղարկած հետևյալ հեռագիրը. «Մոտ օրերս պիտի ավետեմ, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»³:

Ք. Կարաբեքիրի մարտի 28-ի զեկուցագրից շուրջ մեկ ամիս անց՝ ապրիլի 26-ին, երբ Կարմիր բանակն արդեն մտել էր Ադրբեջան, նա մի նոր զեկուցագիր է ուղարկում Մուստաֆա Քեմալին՝ հայտնելով, որ այժմ թե՛ բնակլիմայական պայմանները և թե՛ քաղաքական հանգամանքները նպաստավոր են Հայաստանի դեմ պատերազմ սկսելու համար: Կարաբեքիրը գտնում էր, որ պետք է արագացնել հարձակումը, որպեսզի հնարավորինս կարողանան կանխել Կարմիր բանակի հետագա առաջխաղացումը դեպի Հայաստան⁴: Դրան ի պատասխան՝ Մուստաֆա Քեմալն առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ Հայաստանի վրա հարձակումից, քանի որ բոլշևիկյան Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններ են հաստատվում նախատեսվում է համատեղ գործողություններ սկսել անգլիական իմպերիալիստների և նրանց դաշնակից Հայաստանի Հանրապետության դեմ, և բացի այդ՝ Ռուսաստանից սպասվում է լայնածավալ օգնություն⁵: Ի դեպ, 1920 թ. օգոստոսին Սյունիք-Նախիջևանով Թուրքիա ուղարկվեց ռուսական օգնության առաջին խմբաքանակը՝ 200,6 կգ ձուլածո ոսկի⁶:

Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման հաջորդ մտադրությունը եղել է մայիս ամսին: Այս կապակցությամբ թուրք զենեռալ, հետագայում

¹ Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 67-68:

² **Սարգսյան Ե. Ղ., Սահակյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 43:

³ Նույն տեղում: Տե՛ս նաև՝ **Սարգսյան Ե. Ղ.**, նշվ. աշխ., էջ 138: Տեղեկացնենք, որ այս քաղվածքները արևելագետ պատմաբաններ Ե. Սարգսյանը և Ռ. Սահակյանը թարգմանաբար բերել են թուրք պատմաբան Ջեմալ Քութայի՝ «Ինչպես Կարաբեքիրը ոչնչացրեց Հայաստանը» գրքից:

⁴ Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 70:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 71-72:

⁶ Տե՛ս **Յակոբեան Ա.**, Բոլշևիկների օգնությունը քեմալականներին 1920 թ. // «Դրօշակ», 2000 (դեկտեմբեր), թիվ 1, էջ 159:

Խորհրդային Ռուսաստանում քեմալական Թուրքիայի առաջին դեսպան Ալի Ֆուադ փաշան (Ջեֆեսոյը) իր հուշերում գրել է, որ մայիս ամսին Հայաստանի վրա հարձակում սկսելը նպաստավոր պահ էր այն իմաստով, որ «հայկական բանակը զբաղված էր բոլշևիկյան ներքին խռովությունները ճնշելով (խոսքը 1920 թ. մայիսյան ապստամբության մասին է – Ա. Հ.) և հյուսիսում ադրբեջանցիների ոսնձգությունները կանգնեցնելով»¹:

Ի դեպ, մինչ 1920 թ. հունիսին կրորդովեր հույն-թուրքական պատերազմը սկզբում թուրքական զորքերի մեծագույն մասը՝ 50 հազար զորք, կենտրոնացած էր արևելյան ճակատում՝ Հայաստանը նվաճելու նպատակով, իսկ արևմտյան ճակատում՝ հույների դեմ՝ ընդամենը 15 հազար²:

Հարկ է նաև արձանագրել, որ ամիսներ շարունակ ինտենսիվ գաղտնի նամակագրական կապ է եղել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱԺՄ) նախագահ Մուստաֆա Քեմալի և Ք. Կարաբեքիրի միջև Հայաստանի դեմ պատերազմը սկսելու ժամանակի վերաբերյալ: Հիշարժան է հատկապես Մուստաֆա Քեմալի՝ 1920 թ. հունիսի 1-ի ծածկագիրը՝ ուղղված 15-րդ կորպուսի հրամանատար Ք. Կարաբեքիրին: Վերջինս արևելյան ճակատի հրամանատար էր նշանակվել հունիսի 15-ին: Ծածկագիր փաստաթղթում նշվում էր. «Ձեր մայիսի 30-ի հեռագիրը քննարկվել է նախարարների խորհրդում և հաշվի առնելով մի քանի հանգամանքներ՝ որոշում է կայացվել հետաձգել Հայաստանի դեմ պատերազմը»³:

Սփյուռքահայ ճանաչված պատմաբան Ռ. Հովհաննիսյանը, հենվելով թուրքական հուշագրությունների և այլ նյութերի վրա, տեղեկացնում է, որ 1920 թ. հունիսի 6-ին Մուստաֆա Քեմալը կառավարության անունից հեռագիր է ուղարկել Ք. Կարաբեքիրին՝ հանձնարարելով պաշտպանական նպատակներով Սարիղամիշի, իսկ հետագայում «Ազգային ուխտ»-ի մեջ մտնող՝ Կարսի, Արդահանի ու Բաթումի գրավումը⁴: Այնուհետև նշվում է, որ Ք. Կարաբեքիր փաշան հունիսի 8-ին արևելյան, այն է՝ արևմտահայ նահանգներում զորահավաքի հրաման է արձակել, իսկ հունիսի 23-ին ծրագրել է սկսել հարձակումը⁵: Հետաքրքիր է, որ թուրքերն արդեն ծրագրել էին Հայաստանի վրա հարձակումը և նախապատրաստվում էին դրան, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի ղեկավարության ուշադրությունը շեղելու նպատակով այդ նույն օրերին, ինչպես հայտնի է, հաշտության բանակցությունների հետավար կապով առաջարկություններ էին անում՝ իբրև հիմք ընդունելով Բրեստ-Լիտով-

¹ Մարգարյան Ե. Ղ., Մահակյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 49, Մարգարյան Ե. Ղ., նշվ. աշխ., էջ 149:

² Տե՛ս Մահակյան Ռ. Գ., Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 23:

³ Տե՛ս Մաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 85:

⁴ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, 2016, էջ 173:

⁵ Տե՛ս նույն տեղում:

սկի ու Բաթումի պայմանագրերը: Այսպես, օրինակ, հայտնի են ԹԱՄԺ-ի արտաքին գործերի կոմիսար Բեքիր Սամի բեյի հունիսի 24-ի հեռագիրը Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը բարիդրացիական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ և Հայաստանի արտաքին գործերի նախարարության քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի հունիսի 30-ի պատասխանը և այլն¹:

Սակայն հայտնի է, որ թուրքերի հունիսյան հարձակումը հետաձգվում է որոշ հանգամանքների և առաջին հերթին Գ. Չիչերինի՝ ԹԱՄԺ-ի նախագահ Մուստաֆա Քեմալին ուղղած՝ 1920 թ. հունիսի 3-ի պատասխան նամակով, որում խորհրդային կողմը առաջարկում էր իր միջնորդությունը Հայկական հարցում, և խորհուրդ էր տրվում շահագրգիռ կողմերի միջև հարաբերությունները չվտանգելու նպատակով առայժմ հայերի դեմ ռազմական գործողություններ չձեռնարկել²: Ի պատասխան այդ նամակի՝ հունիսի 20-ին Մուստաֆա Քեմալը տեղեկացրել է ռուսական կողմին, որ իր կառավարությունն ընդունում է Ռուսաստանի միջնորդությունը և հետաձգում ռազմական գործողությունները Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում³:

Քանի որ Ռուսաստանի միջնորդության առաջարկն ընդունվում է, հունիսի 19-ին Մոսկվա է գործուղվում թուրքական հատուկ մի պատվիրակություն՝ Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ, որպեսզի բարեկամության դաշն կնքվի, և խաղաղ ճանապարհով կարգավորվեն տարածքային վիճելի հարցերը: Այստեղ թեև նախաստորագրվեց խորհրդա-թուրքական օգոստոսի 24-ի պայմանագրի նախագիծը, սակայն կողմերը վերջնական համաձայնության չհանգեցին:

Հայաստանի դեմ պատերազմ սկսելու հարցը պարբերաբար քննության առարկա է եղել ԹԱՄԺ-ի նիստերում: Այսպես, օգոստոսի 14-ի նիստում, երբ հարց է տրվում արևելյան ճակատում տիրող դրության մասին, Մուստաֆա Քեմալը պատասխանում է, որ ինքն արդեն հրաման է տվել արագացնել գործողությունները՝ գրավելու համար Բրեստ-Լիտվսկի պայմանագրով իրենց հանձնված երեք սանջակները՝ Կարսը, Արդահանը և Բաթումը: Սակայն միաժամանակ նա տեղեկացնում է, որ այն բանից հետո, երբ հունիսի 20-ին Կարս է ժամանել ռուսական պատվիրակությունը՝ երգրումում անցկացնելու ռուս-թուրքական բանակցությունները, ինքը հրամայել է ժամանակավորապես դադարեցնել արևելյան բանակի ռազմական գործողությունները, մինչև որ ռուս-թուրքական կողմերի միջև հարաբերությունները հստակեցվեն⁴:

Այն, որ պատերազմը թուրքերն են նախաձեռնել, վկայում է ևս մեկ

¹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, ց. 604, թ. 13, 16: Այդ առաջարկը կրկնվել է հուլիսի 8-ին և 28-ին:

² Տե՛ս Документы внешней политики СССР, т. 2, Москва, 1958, с. 555:

³ Տե՛ս **Տեր-Հակոբյան Հ.**, նշվ. աշխ., էջ 11, **Սարգսյան Ե. Ղ.**, նշվ. աշխ., էջ 139:

⁴ Տե՛ս **Кемаль Ататюрк**, Избранные речи и выступления, Москва, 1966, с. 100:

փաստ: Սեպտեմբերի 8-ին Մուստաֆա Քեմալի նախագահությամբ կայացել է Թուրքիայի ռազմական գերագույն խորհրդի նիստ՝ Ք. Կարաբեքիրի, Իսմեթ բեյի, Ահմեդ Ֆեզիի, Մ. Ալի Ֆուադի և այլոց մասնակցությամբ: Այնտեղ լավել է Ք. Կարաբեքիրի հաղորդումն արևելյան ճակատում հարձակման նախապատրաստությունների վերաբերյալ: Նա վստահեցրել է, որ իր հրամանատարության ներքո գտնվող չորս դիվիզիաները՝ յուրաքանչյուրում 8000-9000 զինվոր և մի քանի հազար բաշիբոզուկներ (չեթեն անկանոն զորախմբեր), լիովին բավարար են իր առջև դրված խնդիրը լուծելու համար¹: Հայաստանի վրա հարձակման նախօրյակին Ք. Կարաբեքիրը նաև հատուկ կոչ է արձակել Հայաստանի բնակչությանը, որում կեղծավորաբար նշվում էր, որ իրենց նպատակն է դաշնակներից փրկել քրիստոնյա և մուսուլման ճնշված բնակչությանը²:

Հայաստանի վրա հարձակման հրամանը, որը կարելի է համարել երկրորդը՝ նկատի ունենալով փետրվարի 5-ինը, տրվել է 1920 թ. սեպտեմբերի 20-ին կառավարության նախագահ Մուստաֆա Քեմալի կողմից, որով խնդիր էր դրվում «ոչնչացնել հայկական զինված ուժերը»³: Առաջնորդվելով Անկարայից ստացված հրահանգով՝ սեպտեմբերի 24-ին Կարաբեքիր փաշան իր հերթին հրամայեց մինչև սեպտեմբերի 26-ի կեսօրն ավարտել զորքի տեխնիկական ու նախապատրաստական բոլոր աշխատանքները և սեպտեմբերի 26-27-ի գիշերն անցնել հարձակման⁴: Այդ նույն ժամանակ թուրքական և ռուսական ստորաբաժանումները պետք է սկսեին հարձակումը նաև Նախիջևանի շրջանում: Մակայն հարձակումը հետաձգվեց մեկ օրով և սկսվեց սեպտեմբերի 28-ին, երբ թուրքական բանակը, Հայաստանի սահմանին կենտրոնացնելով 50-հազարանոց զորք, այդ թվում անկանոն զինված ավազակախմբեր, մի քանի ուղղությամբ դիմեց ընդհանուր հարձակման: Դրանով Մուստաֆա Քեմալի տակավին 1920 թ. փետրվարին Հայաստանի վրա հարձակման ծրագրած պլանը դրվեց գործողության մեջ⁵: Այսպիսով, ավելի քան կես տարվա նախապատրաստություններից և քաղաքական ու դիվանագիտական սակարկումներից ու ձգձգումներից հետո ի վերջո քեմալական

¹ Տե՛ս Մարգարյան Ե. Ղ., նշվ. աշխ., էջ 149:

² Տե՛ս Մարգարյան Ե. Ղ., Մահալյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 62:

³ Մաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 75, Մարգարյան Ե. Ղ., Մահալյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 68: Սեպտեմբերի 20-ը հիշարժան է նաև այն առումով, որ Հայաստանի բանակը քայքայելու ու նրա պարտությունը հեշտացնելու գործում հետ չի մնացել Հայկոմկուսի ԿԿ-ը, որն այդ օրը Բաքվից «հույժ գաղտնի» մի հրահանգ էր իջեցրել Հայաստանի բոլշևիկներին՝ բացատրական աշխատանք ծավալելու ազգաբնակչության ու զինվորականության մեջ, թե «Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է», ուստի պետք է կազմալուծիչ աշխատանքներ տանել ռազմաճակատներում՝ «արագացնելու հանրապետական Հայաստանի պարտությունը և նրա խորհրդայնացումը» (տե՛ս ՀԱՍ, ֆ. 1022, ց. 3, թ. 275, թ. 1):

⁴ Տե՛ս Մաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 75:

⁵ Նույն տեղում, էջ 75-76:

Թուրքիան սկսեց լայնածավալ պատերազմ Հայաստանի Հանրապետության դեմ:

Եվ այսքանից հետո խորհրդային քաղաքական ու պատմագիտական գրականության մեջ տասնամյակներ շարունակ տեղ է գտել մի կեղծիք, թե իբր «ղաշնակների Հայաստանն է պատերազմ սկսել Թուրքիայի դեմ»: Եթե իրենց քաղաքական շահերի թելադրանքով թուրք պատմագիր-հուշագիր հեղինակներն են նման հայտարարություն անում, դա բնական է: Սակայն, ցավոք, ժամանակին դրան տուրք են տվել նաև հայ կոմունիստ առանձին գործիչներ ու պատմաբաններ:

Խորհրդային ղեկավար շրջանակներում այդ կեղծ գաղափարի սկզբնավորողը եղել է «Ժողովուրդների հայր» Ի. Ստալինը, ինչը հետո դարձավ ուղեցույց խորհրդային հասարակական-քաղաքական շրջանակների համար: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Ստալինը «Դրությունը Կովկասում» վերտառությամբ «Պրավդա» կենտրոնական պաշտոնաթերթում 1920 թ. նոյեմբերի 30-ին, երբ Հայաստանն արդեն պարտված էր, տրված հարցազրույցում հայտնում էր այն միտքը, որ «ղաշնակների Հայաստանը ընկավ», քանի որ «Անտանտը զրգռեց Թուրքիայի դեմ»¹: Իսկ ղեկտեմբեր 4-ին Հայաստանի խորհրդայնացման առիթով Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին հասցեագրված պատասխան շնորհավորական ուղերձում նա արդեն անթաքույց գրում էր, որ «ղաշնակները սարքեցին պատերազմ Թուրքիայի դեմ»²: Դա դեռ բավական չէ. «Ժողովուրդների հայրը» այդ նույն ողջույնի հեռագրում թույլ է տալիս մեկ այլ պատմական կեղծիք, թե իբր Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել ժողովրդական ապստամբության միջոցով³: Հարկ է նշել, որ ստալինյան որակվող այդ մտքերը արտացոլվել են 1920 թ. դեկտեմբերի 22-29-ին կայացած ՌՍԴԽՀ Խորհուրդների 8-րդ համագումարի արտաքին գործերի Ժողկոմատի՝ 1919-1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ, որում նշվում էր, թե ղաշնակցական կառավարությունը տարածքային հավակնություններ է ունեցել Փոքր Ասիայի թուրքական մի շարք նահանգների նկատմամբ՝ ընդգրկելով Էրզրումը, Լազիստան-Տրապիզոնից մինչև Սիրիա՝ դեպի ծով ելքով ⁴: Այնուհետև նշված է, որ «**ղաշնակները, հարձակվելով թուրքերի վրա**»⁵ «գորդյան հանգույցը» սրով կտրելու թուրքական կառավարության որոշման պատճառը դարձան⁶:

¹ Ստալին Ի., Երկեր, հ. 4, Երևան, 1948, էջ 455:

² Նույն տեղում, էջ 458:

³ Նույն տեղում, էջ 459:

⁴ Ст' у Документы внешней политики СССР, т. 2, Москва, 1958, с. 726:

⁵ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստափղթեում (1828-1923)», պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, ժողովածուն կազմել են Ջ. Ս. Կիրակոսյանը, Ռ. Գ. Սահակյանը, Երևան, 1972, էջ 482:

⁶ Ст' у նույն տեղում:

Հասկանալի է, որ ստալինյան մեթոդական ուղեցույց համարվող հարևան ձևակերպումներով են առաջնորդվել խորհրդային ու խորհրդահայ պատմաբանները, քաղաքագետները, դիվանագետները՝ պատերազմի սանձազերծման ամբողջ պատասխանատվությունը բարդելով իմպերիալիստական Անտանտի, դաշնակցական կառավարության կամ Մուստաֆա Քեմալի գաղտնի ու բացահայտ քաղաքական հակառակորդների վրա: Այսպես, օրինակ, Թուրքիայում Խորհրդային Միության առաջին դեսպան Ս. Արալովն իր հուշերում գրում է, թե 1920 թ. սեպտեմբերի 24-ին հայկական բուրժուական դաշնակցական կառավարությունը պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ¹: Ակներն է, որ նա հենվել է Մուստաֆա Քեմալի հայտնած այն սուտ տեղեկության վրա, որ հայերը սեպտեմբերի 24-ի առավոտյան հանկարծակի ընդհանուր հարձակում են գործել Բարդիզի (Բարդուս կամ Բերդուս) ճակատում², իսկ թուրքերը, իբր, հարկադրված սեպտեմբերի 28-ին դիմել են հակահարձակման:

Թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ ստալինյան այդ մտքերը քաղաքական, գաղափարական, կուսակցական կարգապահության պարտադրանքով, խորհրդա-թուրքական բարեկամության ամրապնդման ակնկալիքով պետք է ուղեցույց լինեին նաև հայ կոմունիստ ղեկավարների ու պատմաբանների համար: Մեզանում դրանց առաջին արձագանքողներից մեկը եղավ ՀՄԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը: 1922 թ. տպագրված «Դաշնակցական կառավարության դոկումենտներից» բրոշյուրում բացասական գնահատական տալով Սևրի «խայտառակ պայմանագրին», նա գրում է. «Ահարոնյանը 1920 թ. օգոստոսի 10-ին աշխարհի բոլոր հափշտակիչների և կատաղի կեղեքիչների հետ միասին ստորագրեց Սևրի խայտառակ դաշնագիրը, որ իմպերիալիստական պատերազմի ամենաամոթալի հիշատակներից մեկն է մնալու, նույն ժամանակներում **դաշնակցականները ծրագրում էին հարձակվել թուրքերի վրա** (ընդգծումը մերն է – Ա. Հ.) և գրավել նրանց հողամասերը մինչև Միջերկրական ծով»³: Հետագայում այդպիսի կարծիք հայտնեցին խորհրդային հեղինակներ և պատմաբաններ Ա. Կարինյանը, Կ. Ղազարյանը, ավելի ուշ՝ Ա. Հարությունյան-Հարենցը և ուրիշներ⁴:

Խորհրդային երկրի պատմության հետագա տասնամյակներին Ի. Ստալինի և Ալ. Մյասնիկյանի արտահայտած մտքերը գաղափարական-մեթոդական ուղեցույց դարձան խորհրդային ու խորհրդահայ պատմաբանների համար: Սկսած 1950-ական թվականների երկրորդ կեսերից խրուշչովյան այս-

¹ Տե՛ս **Аралов С. И.**, Воспоминание советского дипломата, Москва, 1960, с. 27:

² Տե՛ս **Мустафа Кемаль**, նշվ. աշխ., էջ 117: Տե՛ս նաև՝ **Кадиев А. Б.**, Интервенция и гражданская война в Закавказье, Москва, 1960, с. 321:

³ **Մյասնիկյան Ա. Ֆ. (Մարտունի Ալ.)**, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 387:

⁴ Տե՛ս «Большевик Закавказья», Тифлис, 1929, № 9-10, с. 78, **Ղազարյան Կ.**, «Տեղեկագիր» ՀՄԽՀ ՄԼԻ, 1935, թիվ 1 (5), էջ 74, История СССР, вторая серия, т. 7, Москва, 1967, с. 618:

պէս կոչված քաղաքական-գաղափարական մեղմացումներով՝ «հալոցքով» պայմանավորված, կատարվեցին որոշ խմբագրումներ ու սրբագրումներ ստալինյան-կոմունիստական մի շարք կարծրատիպերի, այդ թվում նաև հայոց պատմության մի շարք հարցերի՝ հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Ուրարտու-Արարատի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, նաև՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի վերաբերյալ:

1960-ական թվականներին պատմագիտական բազմաթիվ այլ հարցերի թվում վերանայվեց և այն ժամանակների համար համեմատաբար ընդունելի մեկնաբանություն տրվեց նաև թուրք-հայկական պատերազմի սկսման հարցին: Պատմաբան արևելագետներ Ե. Սարգսյանը, Ռ. Սահակյանը և ուրիշներ փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտեցին ու մերկացրին այն կեղծիքը, թե իբր Հայաստանն է պատերազմը սկսել, որը կամա թե ակամա ջուր էր լցնում թուրքական զեղծարար պատմագրության ջրաղացին: Մեր ժամանակներում այդ կեղծ վարկածը լիակատար հերքեց արևելագետ, ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանը¹:

Կարելի է նաև արձանագրել, որ խորհրդային պատմաբաններից Շ. Հարությունյանը համարձակություն ունեցավ դեռևս գորբաչովյան վերակառուցման, բացախտության ու հրապարակայնության պայմաններում քննադատական խոսք ուղղել խորհրդային պատմաբաններ Ա. Միլլերի, Յու. Կլուչնիկովի, Ա. Խեյֆեցի և մյուսների հասցեին, որոնք 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնում էին իբրև արկածախնդիր, զավթիչ, իսկ քեմալական շարժումը՝ հեղափոխական, ազգային-ազատագրական²:

Ինչպես արդեն վերը նշվեց, վերջին շրջանում լույս տեսած Ռ. Սաֆրաստանի՝ Մուստաֆա Քեմալի գործունեությանը նվիրված մենագրության մեջ լիովին բացահայտվեց այն ճշմարտությունը, որ Սևրի պայմանագրի ստորագրումից շատ ավելի վաղ՝ տակավին 1920 թ. փետրվարին քեմալական Թուրքիան էր ծրագրել Հայաստանի վրա հարձակումը և հանրապետության ջախջախումը: Այնինչ տասնամյակներ շարունակ խորհրդային և խորհրդահայ առանձին հեղինակներ, մեղանշելով պատմական ճշմարտության առջև ու շարունակելով տուրք տալ քեմալիզմին և իբր նրա առաջադիմական ընթացքին, թուրք-հայկական պատերազմի սանձազերծման ամբողջ մեղքը բարդել են Անտանտի իմպերիալիստների ու հատկապես «նրանց կամակատար» Հայաստանի դաշնակցական կառավարության վրա³: Այս առնչությամբ կա-

¹ Տե՛ս Սարգսյան Ե., Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 68, Սարգսյան Ե. Ղ., նշվ. աշխ., էջ 142, Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 75-76 և ուրիշներ:

² Տե՛ս Հարությունյան Շ. Ռ., Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964-1988, Երևան, 1990, էջ 321:

³ Տե՛ս Всемирная история, отв. ред. И. И. Минц, т. 8, Москва, 1961, с. 452-454, Советская историческая энциклопедия, т. 1, Москва, 1961, с. 751, История СССР, вторая серия, т. 7, Москва, 1967, с. 618 и др.:

րելի է համաձայնվել մեր ժամանակների անգամ կոմունիստ պատմաբան Վլ. Պետրոսյանի այն դիտարկմանը, որ «որքան էլ Հայաստանի դաշնակցական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունն անընդունելի լինի, միևնույն է, դա որևէ մեկի իրավունք չի տալիս փոքրիկ ու բզկտված Հայաստանին ներկայացնել որպես ագրեսոր, իսկ իրական ագրեսոր Թուրքիային պատկերել պաշտպանվող կողմ»¹:

Ներկայումս ազատության, անկախության ու ժողովրդավարական ուղիով ընթացող հայ պատմագիտական միտքը, աստիճանաբար ձեռքագատվելով խորհրդային պատմագրության ծանր ժառանգությունից, վերանայում, սրբագրում, խմբագրում և ազատվում է խորհրդային-կոմունիստական գաղափարական կապանքներից ու կարծրատիպերից, հաղթահարում տասնամյակներ շարունակ մեզանում արմատացած պատմական իրականության խեղաթյուրումներն ու կեղծիքները և դրանով իսկ փորձում ճիշտ ախտորոշմամբ վերականգնել պատմական երևույթների, դեպքերի ու իրադարձությունների իրական և ստույգ պատկերը: Միայն ճշմարիտ պատմությունն իմանալով ու ներկայացնելով է հնարավոր դրանից գիտական հետևությունների հանգել, ուսանելի դասեր քաղել, ճիշտ ուղենիշներ առաջարկել ներկայիս և ապագա սերունդներին:

Արդ, կարելի է ուղիղ 100-ամյա հեռվից պատմական ուսանելի ու դասառատ գուգահեռ անցկացնել 1920 թ. սեպտեմբերի 28-ին, առանց պատերազմ հայտարարելու, քեմալական Թուրքիայի՝ Հայաստանի Հանրապետության հանդեպ սանձազերծած պատերազմի և մեր օրերում՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին, այս անգամ՝ Թուրքիայի համակողմանի հովանավորությամբ ու աջակցությամբ իր ցեղակից Ադրբեջանի՝ դարձյալ առանց պատերազմ հայտարարելու սանձազերծած պատերազմը Արցախի Հանրապետության, և փաստորեն, Հայաստանի Հանրապետության և համայն հայ ժողովրդի դեմ:

Ներկայիս պատերազմը, նույնպես խնամքով նախապատրաստելով ու սկսելով, Էրդողան-Ալիև տանդեմը նպատակ է հետապնդում.

ա/ բռնի ուժով դատարկել Արցախը հայությունից,

բ/ Թուրքիան, ըստ էության, լինելով մասնակից կողմ, հետամուտ է հայտնվելու կովկասյան տարածաշրջանում, իրականացնելու դեպի Անդրկասպյան երկրներ թափանցելու վաղուց ի վեր փայփայած հեռագնա պանթյուրքական ռազմավարական պլանները:

Ինչ վերաբերում է այդ պատերազմական դիմակայությանը շահագրգիռ մեծ տերությունների ու միջազգային հանրության արձագանքներին, ապա երկու դեպքում, ինչպես եղել է մեր ամբողջ պատմության ընթացքում, այն եղել է անատամ, ընդամենը հավասարապես հակամարտող կողմերին

¹ Պետրոսյան Վլ., Հայկական հարց (համառոտ պատմական ակնարկ), հ. 2, Երևան, 2016, էջ 292:

ուղղված՝ կրակը դադարեցնելու և բանակցությունները վերսկսելու կոչեր:

Պատմական զուգահեռի առումով ևս շատ ընդհանրական է թուրքական, դրան հավելելով նաև ադրբեջանական ստահող քարոզչամեթոդային թափած հակահայկական տեղեկատվական պատերազմը:

Եվ վերջապես, ի տարբերություն 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, որը, ցավոք, ընթացավ հայկական կողմի համար ձախողումներով և ավարտվեց Հայաստանի համար ծանր պարտությամբ, Արցախյան ներկայիս չհայտարարված պատերազմում հայ ժողովուրդը «Դեր Զորի ճամփորդը չէ», ավելի քան միակամ ու մարտական է իր հայրենի հողը պաշտպանելու գործում, քանզի այս կովում դրված է ոչ միայն հայրենիքի, այլև հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության, նրա ազատության և անկախության հարցը: Իսկ նման պարագայում հաղթանակը չի կարող այլընտրանք ունենալ:

Արարատ Ակոբյան – *К вопросу о развязывании турецко-армянской войны 1920 г. (к 100-летию войны)*

Турецко-армянская война 1920 года, которая вызвала величайшую катастрофу и фатальные тяжелые последствия как для Армении, так и для армянского народа, была развязана кемалистской Турцией, которая 28 сентября без объявления войны начала широкомасштабные военные действия против Республики Армения, захватив ряд армянских городов и стратегических районов. Армянские, турецкие и другие многочисленные документальные материалы подтверждают, что кемалистская Турция подготовила и разработала план нападения на Армению более чем за полгода до этого, целью нападения был срыв (отмена) Севрского мирного договора, уничтожение армянской армии и независимой Республики Армения. Данная публикация призвана откорректировать имеющие место в турецкой, советской и армянской историографии сугубо политические, идеологические и пропагандистские фальсификации о том, что якобы именно Армения как «орудие империализма» развязала войну. К сожалению, продолжавшаяся около двух месяцев война, произошедшая ровно век назад, имела разрушительные последствия для Армении и армянского народа. В результате Армения потерпела тяжелое поражение, значительная часть республики была оккупирована, требование Севрского мирного договора осталось невыполненным, Армения потеряла независимость и была советизирована.

Ararat Hakobyan – *On the Issue of Unleashing the 1920 Turkish-Armenian War (on the 100th Anniversary of the War)*

The 1920 Turkish-Armenian war that caused the greatest catastrophe and fatal severe consequences for both Armenia and the Armenian people was unleashed by Kemalist Turkey, which launched large-scale military operations against the Republic of Armenia on September 28 without announcing a war, seizing a number of Armenian cities and strategic regions. The Armenian, Turkish and other abundant valid documentary materials come to prove that Kemalist Turkey had planned, prepared and worked out an attack on Armenia more than half a year ago, aimed at the failure (cancellation) of the Treaty of Sèvres, the destruction of the Armenian army and the independent republic of Armenia. This publication comes to proofread

the purely political, ideological, and propaganda falsification (fake) in Turkish, Soviet and Armenian historiography that it was Armenia, as the “tool of imperialism”, who unleashed the war. Unfortunately, the war that took place a century ago, which lasted about two months, had a devastating effect on Armenia and the Armenian people. As a result, Armenia suffered a severe defeat, a significant part of the republic was occupied, the demand of the Treaty of Sèvres remained unfulfilled, Armenia lost its independence and was sovietized.

Ներկայացվել է 04.10.2020

Գրախոսվել է 29.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրիգոր Վանցյան, Հատընտիր, խմբ. խորհուրդ՝ Աշոտ Մելքոնյան և ուրիշներ, կազմ.՝ Վահե Սարգսյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, 580 էջ

Անվանի լեզվաբան, հայագետ և մանկավարժ Գրիգոր Վանցյանը (1870-1908) իր կարճատև կյանքի ընթացքում հեղինակել է լեզվաբանական, գրականագիտական, պատմագիտական, մանկավարժական մեծաթիվ աշխատություններ, մամուլում զետեղել հրապարակախոսական և այլ բնույթի հոդվածներ, գրախոսություններ, ակնարկներ և այլ նյութեր: Նրա գործունեությունն ու վաստակն արժևորել են ժամանակակից շատ գրողներ և արվեստագետներ:

Գ. Վանցյանը բավականին ճանաչված էր ու հարգված իր կենդանության օրոք, սակայն այժմ նրա անունը, ցավոք, քչերին է հայտնի: 2015 և 2016 թթ. լույս ընծայվեց նրա երկերի երկհատորյակը¹, որտեղ զետեղված են նրա գիտական և հրապարակախոսական աշխատանքները, նամակները, թարգմանություններն ու գրքերը: 2016 թ. հրատարակվեց նաև նրա ուսումնասիրություններն ու հրապարակումներն ընդգրկող առանձին հատոր²: Դրանով իսկ գիտական և առհասարակ ընթերցասեր հանրությանը հրամցվեց նրա համապարփակ ժառանգությունը:

Գ. Վանցյանի աշխատությունների հրատարակման կարևոր ու շնորհակալ գործը ձեռնարկել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը և «Ջավախքին աջակցություն» (ՋԱՀ) հիմնադրամը: Այս աշխատանքում կարևոր ներդրում ունի պատմական գիտությունների թեկնածու Վահե Սարգսյանը, որը կազմել ու հրատարակության է պատրաստել գրախոսվող հատընտիրը, որտեղ ներկայացված է Գ. Վանցյանի կյանքի և գործունեության ուղին:

Գրախոսվող հոբելյանական ընտրանին բաղկացած է երեք ծավալուն բաժիններից, որոնք ընդգրկում են Գ. Վանցյանի կյանքին և ստեղծագործա-

¹ Տե՛ս **Վանցյան Գ.**, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Երևան, 2015, հ. 2, Երևան, 2016:

² Տե՛ս **Վանցյան Գ.**, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Երևան, 2016:

կան ուղուն առնչվող նյութերը, տարբեր տարիների՝ նրա հրատարակած գիտական ու հրապարակախոսական հոդվածները և նամակները: Սույն ուսումնասիրությունն իրականացվել է սկզբնաղբյուրների և գրականության քննությամբ. բացահայտվել են թե՛ նրա լեզվաբանական ու գրականագիտական նվաճումների արժեքը և թե՛ դրանց լուրջ դերը հայագիտության զարգացման գործում, ինչպես նաև ընդգծվել է տվյալ դարաշրջանի հայագիտական ընկալումները լուսաբանելու անհրաժեշտությունը: Հարկ է արժևորել Գ. Վանցյանի մանկավարժական գործունեությունը հատկապես հայրենիքի սահմաններից դուրս հայապահպանության, ազգային մշակույթի, մայրենի լեզվի տարածման և քարոզչության ուղղությամբ:

Հատընտիրում հանգամանորեն քննության առարկա է դարձել ժամանակային ընդգրկունությամբ աչքի ընկնող հիմնախնդիրների մի ամբողջ շարք: Ընթերցողի սեղանին է դրվել Գ. Վանցյանի մեծածավալ գործունեությունն ընդգրկող մի աշխատություն, որը նաև ժամանակի հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքը մեկ ամբողջության մեջ դիտարկելու փորձ է: Ծավալուն առաջաբանում Վահե Մարգարյանը հանգամանորեն վերլուծել է նաև ժամանակի հիմնախնդիրները, գիտական ու մանկավարժական մտքի առանձնահատկությունները:

Ժողովածուի առաջին բաժնում գետեղված է անվանի հայագետի 21 հոդված, ամփոփված են կենսագրական բնույթի տեղեկություններ՝ քաղված գանազան սկզբնաղբյուրներից, անգամ «Բազմավեպ» հանդեսից, ինչպես նաև գրախոսություններ, ակնարկներ, նամակներ և թարգմանություններ:

1890-ական թթ. հայոց լեզվի և պատմության ուսուցիչ Գ. Վանցյանը Թիֆլիսի «Մուրճ», Վիեննայի «Հանդես ամսօրյա», Փարիզի «Անահիտ» և այլ հանդեսներում հանդես է եկել լեզվաբանությանը, մանկավարժությանը, մասնավորապես Ջավախքի ուսումնարաններին և ուսուցիչներին, ուսումնական հաստատությունների խնդիրներին, ինչպես նաև ջավախահայության ավանդույթներին ու ծեսերին, Եվրոպայի հայությանն առնչվող, ծագումնաբանական, փիլիսոփայական տարբեր հարցեր բովանդակող հոդվածներով: 1892-1895 թթ. նա իր գործունեությունը ծավալել է Ախալքալաքում, իսկ Եվրոպայից վերադառնալուց հետո՝ ազգանպաստ աշխատանքը շարունակել Երևանի թեմական դպրոցում: Մեկ տարի անց նա հրավիրվել է Թիֆլիսի առևտրական դպրոց՝ հայերեն դասավանդելու: Հարկ է նշել, որ ժամանակին Գ. Վանցյանի աշխատություններն ու գիտական հրապարակումները մշտապես եղել են մամուլի ուշադրության կենտրոնում: Դրանց անդրադարձել, քննադատել և դրվատանքի խոսքեր են նվիրել ժամանակի այնպիսի հանրահայտ պարբերականներ, ինչպիսիք են «Հանդես ամսօրյան», «Արարատը», «Բազմավեպը», «Մուրճը», «Երկիրը», «Մշակը», «Նոր-Դարը»:

Այս բաժնում գետեղված հոդվածները ներառում են Գ. Վանցյանի մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև նրա առնչությունը եվրոպական տարբեր կրթօջախներում ուսանող հայ երիտասարդությանը: Դեռևս

Եվրոպայում ուսանելու տարիներին Գ. Վանցյանն օժանդակել է Թիֆլիսի հայկական մամուլի խմբագրություններին՝ վերջիններիս տեղեկատվություն տրամադրելով եվրոպական տարբեր բուհերի հայ ուսանողների մասին:

«Մատենախոսություններում» ներկայացված են նաև Գ. Վանցյանի գրա-խոսությունները, որոնք ժամանակի գրականության և գիտական մտքի համեստ ու անաչառ արժևորումներ են: Դրանց թվում են Երվանդ Լալայանցի «Ջավախքի բուրմունք» (Թիֆլիս, 1892), Արիստակես Լաստիվերցու «Հայոց պատմություն» (Ալեքսանդրապոլ, 1893), Վ. Հովնանյանի «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ» (Վիեննա, 1897), Գ. Էրեբսի «Մարդ եմ» (Թիֆլիս, 1898), Վ. Փափագյանի «Հայ բոշաներ» (Թիֆլիս, 1899) և այլ աշխատություններին վերաբերող անաչառ գնահատականներ:

Ընտրանու երկրորդ բաժնում առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում Գ. Վանցյանի կենսագրական որոշ տեղեկություններ, մասնավորապես հրապարակվում է Հայաստանի ազգային արխիվի 53-րդ ֆոնդում պահվող թիվ 1671 գործը, որտեղ վեց առանձին փաստաթղթերում ներկայացվում է Խաչատուր Վանցյանի կողմից որդու՝ Գրիգոր Վանցյանի ծննդյան ու մկրտության վկայական ստանալու ամբողջ գործընթացը (1885-1886 թթ.): Նշված բաժնում, բացի տարբեր հանրագիտարաններում տպագրված կենսագրական ակնարկներից, տեղ են գտել նաև Գ. Վանցյանի՝ «Բազմավեպ», «Մուրճ», «Հանդես ամսօրյա», «Արարատ» և այլ հանդեսներում ու առանձին հատորներում տպագրված մատենախոսությունները: Այստեղ ընգրկվել է նաև հայագետի կյանքին ու գործունեությանն առնչվող երկու նյութ: Բաժնում զետեղված են նրա ինքնապանության առիթով մամուլում հրապարակված ցավակցական ուղերձները:

Աշխատության երրորդ բաժինն ամբողջովին նվիրված է Գ. Վանցյանի և Հովհաննես Թումանյանի փոխհարաբերություններին: «Գրիգոր Վանցյան և Հովհաննես Թումանյան» խորագրի ներքո հատորում տեղ են գտել Վանցյանի՝ Թումանյանին հասցեագրած 19 նամակները, ինչպես նաև նրա ընկերների՝ մեծ բանաստեղծի մասին հուշերը, որոնցում հիշատակվում է նրա անունը:

Հ. Թումանյանի ծննդից մեկ տարի և երկու օր անց՝ 1870 թ. փետրվարի 21-ին, Ջավախքի Բեժանո գյուղում ծնված Գ. Վանցյանը հետագայում դարձել է Մեծն լոռեցու մերձավոր ընկերներից մեկը, նրա լավագույն բարեկամը: Նա ավարտել է Ներսիսյան դպրոցը, որտեղ և ծանոթացել ու մտերմացել է Հ. Թումանյանի հետ: Միմյանց գրեթե հասակակից հինգ հայ ներսիսյանականներ՝ Հ. Թումանյանը, Ս. Ղլտճյանը, Թիֆլիսում վերաբնակված ախալցխեցու ընտանիքից սերված Դաթիկո Շահլամյանը և Արամ Առաքելյանն ու Գ. Վանցյանը, սկսած 1888 թ. զարնանից, հաճախ էին հավաքվում Թիֆլիսի Նորաշենի փողոցում գտնվող Դ. Շահլամյանի սենյակում, որը գտնվում էր Հ. Թումանյանի ապրած բնակարանի վերնահարկում: Այս «հնգյակի» կողմից Դ. Շահլամյանի սենյակում ձևավորված գրական-գեղարվեստական խմբակը

հետագայում պետք է «Վերնատան» հիմքը դառնար: Հ. Թումանյանի և Գ. Վանցյանի նամակագրական կապը շարունակվել է նաև հետագայում, երբ վերջինս 1890-ական թթ. արդեն ուսուցիչ էր, այնուհետև՝ ուսանող: Նրանց ներսիսյանական և հետագա տարիների ջերմ հարաբերությունների մասին են վկայում նաև Հ. Թումանյանի «Աղոթք» և «Կանչ» բանաստեղծությունները, որոնք ևս տեղ են գտել սույն աշխատությունում:

Ընտրանու վերջնամասում գետեղված են Գ. Վանցյանի, ինչպես նաև նրա գրքերի կամ նրա գործերը պարունակող հանդեսների ու հրատարակությունների շապիկների ու տիտղոսաթերթերի, նաև Հ. Թումանյանին հասցեագրած նամակների լուսանկարները:

Գրիգոր Վանցյանը թողել է գիտամանկավարժական հարուստ ժառանգություն, որն այսօր արդեն հասու է մեր ժամանակակիցներին: Համոզված ենք՝ վերլուծության սկզբունքով և կուռ կառուցվածքով աչքի ընկնող այս արժեքավոր աշխատությունը կարևոր ներդրում է հայրենաճանաչողական ուսումնասիրությունների շարքում: Այն կարող է զգալի հետաքրքրություն ներկայացնել և ուղղորդիչ արժեք ունենալ պատմության, լեզվաբանության, մանկավարժության հարցերով զբաղվող մասնագետների, ուսանողների, ընթերցող լայն հանրության համար՝ արժանի տեղ գրավելով նրանց պատմաճանաչողական հետաքրքրությունների շրջանակում:

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ներկայացվել է 29.10.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

Միքայել Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, 300 էջ

Հայ ժողովրդի ուշ միջնադարյան շրջանի պատմության ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրությունը, անկասկած, գիտական և քաղաքական կարևոր նշանակություն ունի, իսկ մեր օրերի իրողությունների համատեքստում՝ նաև քաղաքական հրատապություն: Ցավով հարկ է նշել, որ այս իրողությանը վերաբերող աշխատանքները, որոշ բացառություններով, նվազ ուշադրության են արժանացել հայ պատմաբանների կողմից: Ուստի ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Մալխասյանի գրախոսվող մենագրությունն ինչ-որ չափով լրացնում է այդ բացը:

Սույն թեմային հեղինակի անդրադարձը միանգամայն արդարացված է, քանզի նշված ժամանակաշրջանում ժողովրդագրական գործընթացները մեր երկրի էթնոժողովրդագրական պատկերում առաջ են բերել այնպիսի երևույթներ, որոնք հայոց բնօրրանի էթնիկ դիմախելման պատճառ են դարձել: Դրանցից հիշատակության արժանի են մարդկային վիթխարի զանգվածների բռնի տեղահանություններն ու բռնագաղթերը, գերեվարությունները, թուրք-պարսկական գրեթե չդադարող պատերազմները և դրանց անխուսափելի ուղեկից սովը, համաճարակները, մահ տարածամբ, հայկական հողերում թուրքական և քրդական, առհասարակ նոմադական քոչվոր օտար տարրերի բնակեցումը և այլ արհավիրքներ, որոնք, անկասկած, կասեցրել ու արգելակել են հայ ժողովրդի բնականոն զարգացումը և նրա թվաքանակի աճը:

Մ. Մալխասյանի մենագրությունը հերքում է թուրքական պատմագրության հակագիտական և ճշմարտության դեմ մեղանշող այն մտացածին ու կեղծ պնդումը, թե իբր օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում այլադավան միլլեթների, այդ թվում նաև հայերի նկատմամբ ժողովրդագրական քաղաքականության բացասական միտումներ չեն արձանագրվել: Անառարկելի փաստերի հիման վրա հեղինակը հերքում է նաև մերօրյա աղբբեջանական պատմագրության մտավարժանքներն ու պնդումները, ըստ որոնց՝ Արևելյան Հայաստանում հայ տարրն իբր միշտ փոքրամասնություն է կազմել, մանավանդ Սեֆյան պետության գոյության ժամանակաշրջանում, որը նրանք անվանում են աղբբեջանական պետություն, այնինչ այն եղել է իրանական ազգային պետություն:

Մենագրության շահեկան բաժիններից է օտար էթնիկական ներթափան-

ցումները Հայաստան լուսաբանող ենթագլուխը, որտեղ հեղինակը հանգում է սկզբունքային նշանակության եզրահանգման, այն է՝ որքան հախտոն էր օտար տարրերի էթնիկական էքսպանսիան դեպի հայ ժողովրդի բնօրրանը, հայ բնակչությունը, այդուհանդերձ, շարունակում էր լինել գերակշիռ մեծամասնություն: Այս կապակցությամբ հիշատակենք Ն. Ադոնցի այն դիտարկումը, որ «հայոց երկրի մակերևութին կատարված այս փոփոխությունները՝ ֆեոդալական մոդելների առումով, ազդեցիկ արդյոք համապատասխանաբար նրա էթնիկական հիմքի վրա: Ազդեց վերնախավի այս փոփոխությունը ստորին խավերի կազմի վրա: Այն մոնղոլական չղարձավ մոնղոլների տիրապետության ընթացքում, և ոչ էլ թուրքմենական դարձավ թուրքմեն առաջնորդների ժամանակաշրջանում: Եվ այժմ իշխանությունը քրդերի ձեռքը փոխանցումով Հայաստանը նմանապես քրդական չղարձավ: Նստակյաց, աշխատավոր բնակչության հիմնական կորիզը մնաց, ինչպես որ այն միշտ եղել էր, հայկական»¹:

«Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում» բաժնում հարուստ աղբյուրագիտական նյութի հիման վրա ցույց է տրվում, որ Օսմանյան կայսրությունում XV դարում արմատավորված, այսպես կոչված, «սյուրգյունային», այն է՝ բռնագաղթերի, համակարգը վերածվել էր պետական զանգվածային վերաբնակեցման քաղաքականության: Լայն տարածում էր գտել նաև հպատակ քրիստոնյա ժողովուրդներին նվաստացնող մանկահավաքության կամ դեշիրմեի և փենչիքի՝ քրիստոնյա գերիներին հարկադիր աշխատանք պարտադրելու դաժան ու անմարդկային համակարգը:

Համակողմանիորեն քննության ենթարկելով Օսմանյան կայսրության և Մեֆյան Իրանի հարկային քաղաքականությունը՝ Մ. Մալխասյանը միանգամայն հիմնավոր ցույց է տալիս, որ բռնատիրական և իրենց հիմքում աստվածապետական այդ երկու պետություններում ազգային և հարկային քաղաքականությունն ամբողջովին կրոնականացված էր, որի ցայտուն վկայությունը գլխահարկն էր կամ ջիզիեի և խարաջի, այն է՝ այլադավանների համար սահմանված հողային հարկը:

Մ. Մալխասյանը մանրամասն անդրադառնում է այլադավան բնակչության զանգվածային կամ մասնակի իսլամացման քաղաքականության հարցերին թե՛ Օսմանյան կայսրությունում և թե՛ Մեֆյան Իրանում, կատարում վերին աստիճանի ուշագրավ և նորույթ պարունակող դիտարկումներ: Այսպես, նա նկատում է, որ օսմանյան և իրանական իշխող շրջանների բռնի իսլամացման քաղաքականությունը մերթ ուժեղանում էր, մերթ թուլանում՝ կախված ժամանակի այս կամ այն իրադարձությունից: Ուշագրավ է նաև այն, որ հեղինակը հիմնավոր փաստերով ցույց է տալիս, որ XVI դարում Օս-

¹ Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 102: Հմմտ. *նույնի* Քրդերի ներթափանցումը Հայաստան // Ադոնց Ն., Երկեր, հ. 2, Երևան, 2012, էջ 224-225:

մանյան կայսրությունում և Սեֆյան Իրանում այլադավանների նկատմամբ իսլամացման զանգվածային քաղաքականություն դեռևս չէր իրականացվում, որն անշուշտ ուներ իր հիմնավոր պատճառները: Դա, օրինակ, հայ ժողովրդի նկատմամբ տարածում է ստանում սկսած XVII դարից, երբ այն ընդունում է վիթխարի չափեր և իրականացվում կրոնական մոլեռանդության ծայրահեղ շեշտված ձևերով:

Այս միապետություններում հայ բնակչությունը համարվում էր իրավագուրկ զինմի, այն է՝ այլադավան պարտապան, միաժամանակ ռայա, որը բառացիորեն նշանակում էր անասնահոտ, իսկ լայն առումով՝ իրավագուրկ հպատակ: Մ. Մալխասյանը հղում է փաստեր առ այն, թե Հայաստանում այսպես կոչված Իմամ Ջաֆարի տխրահռչակ օրենքը, ըստ որի՝ իսլամ ընդունած անձը տիրում էր քրիստոնյա հարազատների ունեցվածքին, ինչպիսի ավերածություններ է գործել: Նա ցույց է տալիս, որ չնայած կրոնական և իրավական բնույթի սահմանափակումներին, հայերն ամուր էին իրենց կրոնի և ազգային եկեղեցու նկատմամբ, նաև մատնանշում, որ հենց հավատին հավատարիմ լինելու հետ են կապված որոշ նահատակությունների հիշատակումները:

Հեղինակը քննության է ենթարկում նաև Հայաստանի տարբեր շրջաններում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերը, կրոնադավանական փոխակերպումները և այլն, հատկապես անդրադառնում է կաթոլիկ համայնքների առկայությանը, ինչն ինքնին էթնոժողովրդագրության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ըստ մի շարք նոր փաստերի՝ նա ցույց է տալիս, որ հատկապես XVII դարում արևմուտքից սպասվող փրկությանն առնչվող հայ ազգային լեգենդի զարթոնքի պայմաններում Հայաստանի գույգ հատվածների մի շարք շրջաններում մեծ թվով հայեր դավանափոխ են եղել:

Մ. Մալխասյանի եզրահանգումներից մեկն այն է, որ չնայած Օսմանյան կայսրության իրականացրած բռնի մուսուլմանացման և այլադավանների նկատմամբ անհանդուրժողական քաղաքականության զանազան դրսևորումներին՝ նույնիսկ XVII դարի թուրք հեղինակներն ընդունում էին Հայաստանի տարածքում հայ բնակչության մեծամասնության փաստը: Բացի այդ, շրջանառության մեջ դնելով բազմաթիվ սկզբնաղբյուրներ և կատարելով մանրակրկիտ հաշվարկներ, նա համոզիչ ցույց է տալիս, որ XVI-XVII դարերում Հայաստանը շարունակել է բավականին խիտ բնակեցված երկրամաս լինել, թեև ջալալիական շարժումների, ծանր հարկապահանջության, պատերազմների, կրոնական հալածանքների և այլ պատճառներով տեղի է ունեցել հայ բնակչության խոշոր արտագաղթ: Նա նաև նկատում է, որ XVII դարի առաջին կեսին Հայաստանում ժողովրդագրական գործընթացների հետաքրքիր առանձնահատկություններից էր վանականների թվի կտրուկ աճը, ինչը պայմանավորված էր Հայ առաքելական եկեղեցու ակտիվացմամբ և մշակութային կյանքի անօրինակ վերելքով:

Մ. Մալխասյանը մեծ տեղ է հատկացնում շահ Աբբաս Ա-ի կազմակերպած հայերի բռնագաղթին և դրա ժողովրդագրական հետևանքներին: Նախ

նա ցույց է տալիս, որ այդ «մեծ սուրգունը» իր նախադեպը չունեցող բռնագաղթ էր, որն Արևելյան Հայաստանը, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի առանձին շրջաններ իսպառ հայաթափ արեց: Նա հանգամանորեն քննարկում է բռնագաղթն ընդգրկած տարածքի հարցը, անդրադառնում գաղթի ենթարկված հայ բնակչության թվաքանակին և այլն: Թվում է, թե սրանք հանրահայտ իրողություններ են, սակայն Մ. Մալխասյանը հենվում է ուշագրավ փաստերի վրա և կատարում վերին աստիճանի հետաքրքիր եզրահանգումներ: Նա միանգամայն իրավացի է, երբ նշում է, որ Ամիրգունա խանը, որի ղեկավարությամբ իրագործվել էր բռնագաղթին առնչվող շահ Աբբասի հրամանը, Հայաստանի նկատմամբ հետագայում որդեգրել է միանգամայն արդյունավետ ժողովրդագրական քաղաքականություն: Նա գիտակցել է Հայաստանը հայաթափելու քաղաքականության վտանգավոր հետևանքները, ուստի և շահի համաձայնությամբ ձեռնամուխ է եղել Արևելյան Հայաստանում հայ բնակչության վերաբնակեցմանը: Անկասկած, նրա քաղաքականությունը նպաստել է Արևելյան Հայաստանի բնակչության էթնիկական հայեցիկ ազմի պատկերի մասնակի վերականգնմանը: Մ. Մալխասյանը իրավամբ նշում է, որ սահմանամերձ արևմտահայ գավառներն ամայացնելով՝ Ամիրգունա խանը փորձում էր ոչ միայն լուծել իր վարչամիավորում մարդկային ռեսուրսների պակասի խնդիրը, այլև ձգտում էր անվտանգ դարձնել պետության սահմանները՝ արևմտահայ գավառների մի մասը վերածելով յուրօրինակ բուֆերային գոտու: Այդուհանդերձ, հեղինակը գտնում է, որ շահ Աբբասի կազմակերպած հայերի բռնագաղթը հայ ժողովրդի մեծագույն ողբերգություններից է:

Մ. Մալխասյանի մենագրությունը շարադրված է աղբյուրագիտական բացառիկ հարուստ նյութերի հենքի վրա: Ընդ որում, նա սկզբնաղբյուրների ճիշտ ընտրություն է կատարել, կարևորը տարբերակել երկրորդականից, պարզել իր քաղած նյութի հավաստիությունը և պատշաճ ձևով գնահատել դրանց արժեքը: Մենագրության մեջ թեև տեղ են գտել առանձին մասնակի կրկնություններ և անհարկի ձգձգված հատվածներ, սակայն մեզ չի հաջողվել նշմարել հիշատակության արժանի թերություններ:

Մեզ համար հաճելի իրողություն է նաև այն, որ մենագրությունը շարադրված է գրագետ և գեղեցիկ հայերենով, կոտ տրամաբանությամբ, փաստերի ընտրության նկատմամբ գիտական աշխատողին վայել բժախնդրությամբ: Անկասկած, Մ. Մալխասյանն օժտված է վերլուծական կարողություններով, ուստի հայագիտությանը նպաստ բերող նրա արժեքավոր ուսումնասիրությունն արժանի է ամենայն դրվատանքի:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ

Ներկայացվել է 02.11.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամիրջանյան Հասմիկ	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (amirjanyan.hasmik@rambler.ru)
Ավագյան Արծրուն	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (a.avagyan@ysu.am)
Ավետիսյան Յուրի	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (yuriavetisyan@ysu.am)
Արզումանյան Արմենուհի	ԵՊՀ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (armenuhi.arzumanyan@ysu.am)
Բաբլումյան Արփինե	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (arpinebablumyan@rambler.ru)
Բայբուրդյան Վահան	ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բայրամյան Հրաչիկ	ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (hrachik.bayramyan@ysu.am)
Կարապետյան Ռոման	ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի կրտսեր գիտաշխատող, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (rom.karapetyan@gmail.com)
Հակոբյան Արարատ	ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր (ararathakobyan47@gmail.com)
Հակոբյան Լիլիթ	ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի հայցորդ (lilithakobyan@gmail.com)
Հայրունի Աշոտ	ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական

Հովհաննիսյան Հայկ	գիտությունների դոկտոր (ashot.hayruni@ysu.am) Հայաստանի ազգային արխիվի գլխավոր արխիվագետ, ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ (haykhovhannisyan20@yandex.ru)
Հովհաննիսյան Մերի	ԵՊՀ ՀՀԻ գիտաշխատող, Բանասիրական գիտությունների թեկնածու (meri.hovhannisyan@ysu.am)
Ղամբարյան Գոհար	ԵՊՀ տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասիստենտ, ԵՊՀ ՀՀԻ գիտաշխատող, աշխարհագրական գիտությունների թեկնածու (ghambaryan.gg@mail.ru)
Մալկիդիս Թեոֆանիս	Հունաստանի Հելլենիկ միջազգային համալսարանի դոցենտ, պատմական գիտությունների դոկտոր (malkidis@gmail.com)
Մերջանյան Տաթևիկ	ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի դասախոս, Բանասիրական գիտությունների թեկնածու (tatevik.merdzhanyan@ysu.am)
Մխիթարյան Վարդան	ԵՊՀ ՀՀԻ Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու (vardan_gm@yahoo.com)
Մաֆարյան Ալեքսանդր	ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր (alexandr-safaryan@rambler.ru)
Միմոնյան Արամ	ԵՊՀ ՀՀԻ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (rector@ysu.am)
Շահնազարյան Արտաշես	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

Авагян Арцрун	Декан факультета армянской филологии ЕГУ, доктор филологических наук, профессор (a.avagyan@ysu.am)
Аветисян Юрий	Заведующий кафедрой армянского языка ЕГУ, доктор филологических наук, профессор (yurietisyan@ysu.am)
Айруни Ашот	Ведущий научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, профессор кафедры истории армянского народа ЕГУ, доктор исторических наук (ashot.hayruni@ysu.am)
Акопян Арарат	Профессор кафедры философии и армянской истории Армянского государственного экономического университета, ведущий научный сотрудник Института истории НАН Армении, доктор исторических наук (ararathakobyan47@gmail.com)
Акопян Лилит	Соискатель кафедры истории армянского языка ЕГУ (lilithakobyan@gmail.com)
Амирджанян Асмик	Старший научный сотрудник Института истории НАН РА, кандидат исторических наук (amirjanyan.hasmik@rambler.ru)
Арзуманян Арменуи	Доцент кафедры новейшей армянской литературы ЕГУ, кандидат филологических наук (armenuhi.arzumanyan@ysu.am)
Баблумян Арпине	Старший научный сотрудник Института истории НАН РА, кандидат исторических наук (arpinebablumyan@rambler.ru)
Байбурдян Ваан	Заведующий отделом Ирана Института востоковедения НАН РА, доктор исторических наук, профессор
Байрамян Грачик	Заведующий отделом армяно-грузинских отношений Института арменоведческих исследований ЕГУ, кандидат филологических наук, доцент (hrachik.bayramyan@ysu.am)
Гамбарян Гоар	Ассистент кафедры экономической географии ЕГУ, научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, кандидат географических наук (ghambaryan.gg@mail.ru)
Карапетян Роман	Младший научный сотрудник отдела армяно-грузинских отношений Института арменоведческих исследований ЕГУ, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ, кандидат исторических наук (rom.karapetyan@gmail.com)
Малкидис Теофанис	Доктор исторических наук, доцент Международного

	греческого университета Греции (malkidis@gmail.com)
Мерджанян Татевик	Преподаватель кафедры истории армянской литературы ЕГУ, кандидат филологических наук (tatevik.merdzanyan@ysu.am)
Мхитарян Вардан	Заведующий лабораторией исторической географии и картографии имени Б. Арутюняна Института арменоведческих исследований ЕГУ, кандидат исторических наук (vardan_gm@yahoo.com)
Оганисян Айк	Главный архивист Национального архива Армении, аспирант кафедры армянской литературы ЕГУ (haykhovhannisyan20@yandex.ru)
Оганисян Мери	Научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, кандидат филологических наук (Meri.hovhannisyan@ysu.am)
Сафарян Александр	Заведующий кафедрой тюркологии ЕГУ, кандидат исторических наук, профессор (alexandr-safaryan@rambler.ru)
Симонян Арам	Директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Армении, доктор исторических наук, профессор (rector@ysu.am)
Шахназарян Арташес	Заведующий отделом истории средневековья Института истории НАН РА, кандидат исторических наук, доцент

INFORMATION ABOUT THE AUTHORS

Amirjanyan Hasmik	PhD in History, Senior Researcher at the Institute of History of NAS RA (amirjanyan.hasmik@rambler.ru)
Arzumanyan Armenuhi	PhD in Philology, Associate Professor at the Chair of Modern Armenian Literature of YSU (armenuhi.arzumanyan@ysu.am)
Avagyan Artsrun	Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Armenian Philology of YSU (a.avagyan@ysu.am)
Avetisyan Yuri	Doctor of Philology, Professor, Head of the Chair of Armenian Language of YSU (yuriavetisyan@ysu.am)
Bablumyan Arpine	PhD in History, Senior Researcher at the Institute of History of NAS RA (arpinebablumyan@rambler.ru)
Bayburdyan Vahan	Head of the Department of Iranian Studies of the Institute of Oriental Studies of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor
Bayramyan Hrachik	PhD in Philology, Associate Professor, Head of the Department of Armenian-Georgian Relations of the Institute for Armenian Studies of YSU (hrachik.bayramyan@ysu.am)
Ghambaryan Gohar	PhD in Geographic, Assistant Professor at the Chair of Economic Geography of YSU, Research Fellow at Institute for Armenian Studies of YSU (ghambaryan.gg@mail.ru)
Hakobyan Ararat	Doctor of Historical Sciences, Professor of Armenian State University of Economics, Leading Researcher of the Institute of History of NAS RA (ararathakobyan47@gmail.com)
Hakobyan Lilit	PhD student at the Chair of Armenian Language History of YSU (lilithakobyan@gmail.com)
Hayruni Ashot	Doctor of Historical Sciences, Senior Researcher at the Institute for Armenian Studies of YSU, Professor at the Chair of Armenian History of YSU (ashot.hayruni@ysu.am)
Hovhannisyan Hayk	Chief Archivist of the National Archives of Armenia, post-graduate student at the Chair of Armenian Literature of YSU (haykhovhannisyan20@yandex.ru)
Hovhannisyan Meri	PhD in Philology, Researcher at the Institute for Armenian Studies of YSU, (Meri.hovhannisyan@ysu.am)
Karapetyan Roman	PhD in History, Junior researcher at the Department of Armenian-Georgian Relations of the Institute for Armenian Studies of YSU, Associate Professor at the Chair of

	International Relations and Diplomacy of YSU (rom.karapetyan@gmail.com)
Malkidis Theofanis	Doctor of History, Associate Professor, International Hellenic University of Greece (malkidis@gmail.com)
Merdzanyan Tatevik	PhD in Philology, Lecturer at the Chair of Modern Armenian Literature of YSU (tatevik.merdzanyan@ysu.am)
Mkhitaryan Vardan	Head of the Laboratory of Historical Geography and Cartography of Armenia after B. Harutyunyan of the Institute for Armenian Studies of YSU (vardan_gm@yahoo.com)
Safaryan Aleksandr	PhD in History, Professor, Head of the Chair of Turkish Studies of YSU (alexandr-safaryan@rambler.ru)
Simonyan Aram	Director of the Institute for Armenian Studies of YSU, Corresponding Member of the NAS RA, Doctor of Historical Sciences, Professor (rector@ysu.am)
Shahnazaryan Artashes	PhD in History, Associate Professor, Head of the Department of Medieval History of the Institute of History of the NAS RA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արամ Միմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան

Հայաստանի և Ղազախստանի միջև գիտակրթական
համագործակցության մասին. իրողություններ և հեռանկարներ
(ռուսերեն) 3

Վարդան Մխիթարյան, Գոհար Ղամբարյան

Տեղեկատվական պատերազմում օտարերկրյա «հեղինակների»
ներգրավվածության խնդիրների շուրջ 12

Արտաշես Շահնազարյան

Խորանշատի վարդապետարանը 31

Հասմիկ Ամիրջանյան

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու վիրահայոց թեմը
Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք 46

Արփինե Բաբլումյան

Համիդյան կոտորածները Դիարբեքիր քաղաքում 1895 թ. 61

Հրաչիկ Բայրամյան

Ալեքսանդր Խախանովի կյանքը և գործունեությունը 76

Աշոտ Հայրունի

Գերմանական արևելյան առաքելության Ուրֆայի կայանը Մեծ
եղեռնի և Աշխարհամարտի տարիներին (գերմաներեն) 90

Թեոֆանիս Մակիդիս

Ցեղասպանությունը որպես հայ և հույն ժամանակակից
հասարակության և պատմության հիմնական
բաղադրիչ (անգլերեն) 109

Ռոման Կարապետյան

Հայ-վրացական արդի հարաբերությունները Հայաստանի
Հանրապետության անվտանգության քաղաքականության
համատեքստում 121

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արծրուն Ավագյան

Ստեփան Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպը որպես
պատմագեղարվեստական վավերաթուղթ 133

Տաթևիկ Մերջանյան

Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» և Ռափայել Պատկանյանի
«Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմների զուգադրական
վերլուծություն..... 151

Հայկ Հովհաննիսյան

Ժամանակաշրջանը և մարդիկ Զապել Եսայանի «Կրակե շապիկը»
վիպակում 164

Արմենուհի Արզումանյան

Զիապատկերի խորհուրդը Հրանտ Մաթևոսյանի գեղագիտական
համակարգում..... 174

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրա Ավետիսյան

Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները սահմանական
եղանակի համակարգում. անկատար ներկա և անկատար
անցյալ..... 186

Լիլիթ Հակոբյան

Գրաբարի և միջին հայերենի հոլովման համակարգերի
առանձնահատկությունների դրսևորումը Կիրակոս Գանձակեցու
«Պատմութիւն հայոց» երկում 205

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արարատ Հակոբյան

1920 թ. թուրք-հայկական պատերազմի սանձազերծման
հարցի շուրջ..... 215

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մերի Հովհաննիսյան

Գրիգոր Վանցյան, Հատընտիր..... 228

Վահան Բայբուրդյան

Միքայել Մալխասյան, Ժողովրդագրական գործընթացները
Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին 232

Տեղեկություններ հեղինակների մասին..... 236

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Арам Симонян, Александр Сафарян	
О научно-образовательном сотрудничестве между Арменией и Казахстаном: реалии и перспективы (на русском языке).....	3
Вардан Мхитарян, Гоар Гамбарян	
К вопросу о вовлечении иностранных «авторов» в информационную войну	12
Арташес Шахназарян	
Хоранашатский вардапетаран	31
Асмик Амирджанян	
Грузинская епархия Армянской апостольской святой церкви в годы патриаршества Гукаса Карнеци	46
Арпине Баблумян	
Гамидовские истребления в Диарбекире в 1895 г.....	61
Грачик Байрамян	
Жизнь и деятельность Александра Хаханова.....	76
Ашот Айруни	
Немецкая восточная миссия в городе Урфа в годы Геноцида армян и Первой мировой войны (на немецком языке).....	90
Теофанис Малкидис	
Геноцид как основной компонент истории и современного общества армянского и греческого народов (на английском языке)	109
Роман Карапетян	
Современные армяно-грузинские отношения в контексте политики безопасности Республики Армения.....	121

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Арцрун Авагян	
Роман Степана Аладжаджяна «Незажившая рана» как историко-художественный документ	133
Татевик Мерджанян	
Сопоставительный анализ поэмы Гевонда Алишана «Аварайрский соловей» и поэмы Рафаэла Патканяна «Смерть храброго Вардана Мамиконяна»	151
Айк Оганнисян	
Эпоха и люди в романе Забел Есаян «Огненная рубашка».....	164
Арменуи Арзуманян	
Значение образа лошади в эстетической системе Гранта Матевосяна	174

ЯЗЫКОЗНАНИЕ

Юра Аветисян

Связи среднеармянского и западноармянского языков в системе
изъявительного наклонения: настоящее несовершенное и прошедшее
несовершенное.....186

Лилит Акопян

Выражение особенностей систем склонения габара и среднеармянского
языка в произведении Киракоса Гандзакеци «История Армении»205

ИСТОРИОГРАФИЯ

Арарат Акопян

К вопросу о развязывании турецко-армянской войны 1920 г.....215

РЕЦЕНЗИИ

Мери Оганисян

Григор Ванцян, Избранное.....228

Ваган Байбурдян

Микаэл Малхасян, Демократические процессы в Армении в 16-м веке и
первой половине 17-го века.....232

Сведения об авторах238

COTENTS

HISTORY

Aram Simonyan, Alexander Safaryan	
Scientific and Educational Cooperation between Armenia and Kazakhstan: Facts and Prospects (in Russian).....	3
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan	
On the Issues of Involvement of Foreign “Authors” in the Information Warfare.....	12
Artashes Shahnazaryan	
Vardapetaran of Khoranashat.....	31
Hasmik Amirjanyan	
The Diocese of Georgia of the Armenian Apostolic Church during the Reign of Catholicos Ghukas Karneci	46
Arpine Bablumyan	
The Hamidian Massacres in Diarbekir in 1895	61
Hrachik Bayramyan	
Alexander Khakhanov’s Life and Activity	76
Ashot Hayruni	
German Eastern Mission in Urfa during the Genocide and World War I (in German)	90
Theofanis Malkidis	
The Genocide as the Main Component of the Modern Armenian and Greek Society and History (in English).....	109
Roman Karapetyan	
Armenian-Georgian Current Relations in the Context of Security Policy of the Republic of Armenia.....	121

HISTORY OF LITERATURE

Artsrun Avagyan	
Stepan Alajajyan’s Novel “Unhealed Wound” as a Document of Historical and Artistic Value	133
Tatevik Merdzanyan	
The Parallel Study of the Poems “The Nightingale of Avarayr” by Ghevond Alishan and “The Death of Brave Vardan Mamaikonyan” by Raphael Patkanian	151
Hayk Hovhannisyan	
The Era and People in the Novel “Shirt of Fire” by Zabel Yesayan.....	164
Armenuhi Arzumanyan	
The Value of the Image of the Horse in the Aesthetic System of Hrant Matevosyan.....	174

LINGUISTICS

Yura Avetisyan

Middle Armenian-Western Armenian Transitions in Indicative Mood:
the Imperfect Present and Imperfect Past..... 186

Lilit Hakobyan

Manifestation of Peculiarities of the Declension Systems of Grabar and Middle
Armenian in “History of Armenia” by Kirakos Gandzaketsi..... 205

HISTORIOGRAPHY

Ararat Hakobyan

On the Issue of Unleashing the 1920 Turkish-Armenian War 215

REVIEW

Meri Hovhannisyan

Grigor Vantcyan, Selected Works..... 228

Vahan Bayburdyan

Mikael Malkhasyan, Demographic Processes in Armenia in the 16th and the
First Half of the 17th Centuries 232

Information about the Authors 240

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ
3 (21)

Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (գլխատառերով), վերնագիրը (գլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (*hands@armin.am*), հեռ.՝ +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (*hands@armin.am*), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовок, том, место и год издания (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (*hands@armin.am*), тел.: +374 60 710092